Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11.270

3

Գ. ԱԲԵԶՀԱՈՒԶ — Ա. ՊՐՈՏԱՍՈՎ

ԿՈՒՍԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

Ա. ՄԱՍ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ 1928

3(02)
Ա-13

3(02)
Զ-13
25 SEP 2006
1 DEC 2008

Գ. ԱՐԵՋՀԱՈՒԶ յեվ Ս. ՊՐՈՏԱՍՈՎ

ԿՈՒՍԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐՃԱՏ ԴՊՐՈՑՆԵՐԻ,
ՀԱՄ·ԼԿՅԵՄ ՅԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՔԱՂԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ
ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ա· ՄԱՍ

Վերամշակեցին
Զ. ԼԱՎՐԵՆՏՅԵՎ յեվ Դ. ՅԱԿՈԲՍՈՆ

Կոմյերիտմիության յեվ ԿԻՄ-ի մասին Ա. Պ. ՇՈԽԻՆԻ
գրած զրույցների հավելումով

Կ 33956

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1928

11270

.01. 2013

1 DEC 2006

ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

6675-87

Գրանցված № 568 բ.   Հ. 694   Տիրաժ 4000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում — 251

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԻՑ

Ներկա դասագիրքը վերամշակված է քաղգրագիտության քաղաքային դպրոցների կրճատ ծրագրի համաձայն 1927—28 ուսումնական տարվա համար:

Դասագիրքը լրացված է Համամիութենական XV կուսկոնֆերենցիայի, ԿԿ հետագա պլենումների և ԿԻԳԿ պլենումների վճիռներն արտացոլող նյութերով: Նախորդ հրատարակության նման՝ այս դասագիրքը կառուցվում է այն հաշվով, վոր ճշգրիտ յերևան բերի կուսակցության լենինյան գիծը հեղափոխական և սոցիալիստական շինարարության հիմնական հարցերի նկատմամբ: Հեղինակները խիստ կարևոր են համարել ամբողջ կուրսի ընթացքում ընթերցողի ուշադրությունը սևեռել նույնպես այն քննադատության վրա, վոր յենթարկվում է օպպոզիցիոն բլոկի հակալենինյան պլատֆորմը կուսակցության կողմից:

Ամենաշատ վերամշակման յենթարկվել են 5, 6, 7, 8, 13, 14 և 15 գլուխները: Մասնավորապես, հեղինակները ձգտել են օգտագործել այն ամենաթարմ փաստական նյութը, վոր յեղել է դասագրքի վերամշակման պահուն: Սակայն, այս գրքով աշխատող և՛ պրոպագանդիստները, և՛ սովորողները պետք է նկատի ունենան, վոր դասագրքի վորոշ նյութեր անխուսափելիորեն կարող են հնանալ ուսումնական տարվա ընթացքում: Այս պատճառով համապատասխան թեմաները մշակելիս անհրաժեշտ կլինի օգտագործել մի շարք նոր տվյալներ, վորոնք բնութագրում են փոխվող տնտեսական ու քաղաքական պայմանները, կուսակցական ընթացիկ պրակտիկան և այլն:

Մատնանշած փոփոխությունների կողքին գիրքը սովորողների մակարդակին և պահանջներին ավելի մոտեցնելու նպատակով նշանակալի չափով կրճատված է, միաժամանակ ուժեղացված է փաստական նյութը՝ հատկապես տնտեսական շինարարությանը վերաբերող գլուխներում:

Դասագրքում բերած թվանշանները գլխավորապես առնված են Պետպլանից, Ներքգործժողկոմատից և այլ աղբյուրներից, վորոնց մասին բնագրում կան համապատասխան հիշատակություններ:

Դասագրքի վերամշակումը կատարել են ը. ը. Զ. Լավրենտյևը

և Դ. Ցակորոսը: Ընդհանուր խմբագրությունը պատկանում է Ն. Ն. Պոպովին և Լ. Չերնյավսկուն:

Տվյալ դասագրքից օգտվող ընկերների մատնանշումները նրա ամեն տեսակ թերությունների վրա, իհարկե, չափազանց օգտակար կլինեն այդ թերություններն ապագայում վերացնելու համար:

ԻՆՉՊԵՍ ՄՇԱԿԵԼ ԱՅՍ ԳԻՐՔՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԿԵՐՊՈՎ

Դասագրքի նյութն անցնելու համար, մեկ հատվածից մյուսին անցնելիս, ամեն անգամ ուշադրություն դարձրեք այն կապի վրա, որ գոյություն ունի գրքի առանձին հոդվածների միջև:

Ճիշտ այդպես էլ մի զրույցից մյուսին անցնելիս պարտադրաբար ուշադրություն դարձրեք տվյալ զրույցի նախորդ զրույցի հետ ունեցած կապի վրա:

Հետեվյալ զրույցի ընթերցանությանը դիմելուց առաջ՝ մտաբերեք, թե ինչի մասին էր խոսվում նախորդում, և ուշադրությամբ կարդացեք «Ինչի մասին է զրույցը» վերնագիրը կրող ներածությունը:

Առանձին զրույցների և հատվածների կապին հետևելը մեծ նշանակություն ունի, որովհետև այդ օգնում է, որ կարդացածն ավելի գիտակցաբար ու ճիշտ յուրացվի:

Գրքի ընթերցման օգուտը նշանակալի չափով քիչ կլինի, եթե բոլոր զրույցները չմշակվեն այն իսկ կարգով, ինչ կարգով որ շարադրված են: Սիստեմատիկ ընթերցումը, առանց առանձին զրույցները կամ դրանց մասերը բաց թողնելու, հանդիսանում է դասագրքից ճիշտ օգտվելու առաջին անհրաժեշտ պայմանը:

Չպետք է սահմանափակվել միմիայն ընթերցանությամբ: Անհրաժեշտ է **խորամուխ լինել** գրքի բովանդակության, **ինքնուրույն կերպով մշակել այն:** Հարկավոր է ձգտել գիտակցական յուրացման: Իսկ այդ պահանջում է ընթերցողից, որ նա որոշ ինքնուրույն աշխատանք էլ կատարի: Մենք ներքևը մատնանշում ենք այն, թե ինչ աշխատանքներ է անհրաժեշտ կատարել և ինչ կարգով:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ՄԻՆՉԵՎ ԽՄԲԱԿ ԿԱՄ ԴՊՐՈՑ ՄՏՆԵԼԸ

Քաղգրագիտության դպրոցների ունկնդրի համար ամենից ավելի օգտակար է, որ նա զրույցը դասագրքով մշակի առաջուց, **նախ քան այն,** երբ զրույցը քննության է առնվում դպրոցում: Եթե դուք խմբակի պարապմունքին հաճախեք առանց նախօրոք մշակած լինելու զրույցը, ապա՝ 1) դուք նախապատրաստված չեք լինի ակտիվ մասնակցելու խմբակի աշխատանքին. 2) ձեզ հետո կարող է ավելորդ

թվալ դասագրքից օգտվելը՝ երբ թե այդ հարցն արդեն քննության եք առել խմբակում: Դրանից կտուժի թե ձեր աշխատանքը խմբակում և թե ձեր աշխատանքը գրքի վրա: Իսկ եթե դուք առաջուց, մինչև դպրոցի պարապմունքը, մշակեք զրույցը, ապա պարապմունքները ձեզ համար ավելի հետաքրքրական կլինեն, դուք արդեն գործին իրազեկ կլինեք, դուք ավելի ակտիվ կլինեք, դուք կը կարողանաք այստեղ ղեկավարի օգնությամբ պարզել այն, ինչ որ ձեզ համար որևէ պատճառով պարզված չի լինի գրքի վրա աշխատելիս:

Զրույցներից ամեն մեկը բաղկացած է երկու երեք (իսկ որոշ տեղերում էլ չորս) մասից: Օրինակ՝ առաջին զրույցը — «Կուսակցության շինարարությունը և կուսակցության անդամի պարտականությունները» — բաղկացած է երկու մասից. 1) «կուսակցության կանոնադրության նշանակությունը և հիմքերը» և 2) «Համ.ԿԿ(բ) — բանվորական կուսակցություն»: Եթե դուք բավականին սահուն կարդում եք, և ընթերցանությունը ձեզանից չափազանց շատ ժամանակ չի խլում, ապա, ավելի նպատակահարմար է առաջ ամբողջ զրույցը կարդալ, իսկ հետո դիմել նրա առանձին մասերի մշակմանը, բայց այնպես, որպեսզի ամեն մի մասի մշակմանը, եթե հնարավոր է, հատկացվի առանձին պարապմունք: Սրա շնորհիվ, դուք չեք ծանրաբեռնի ձեր հիշողությունը և ավելի լավ կը մշակեք ու կը հիշեք կարդացած նյութը: Եթե դուք բավականին սահուն չեք կարդում, և ընթերցանությունը ձեզանից շատ ժամանակ է խլում, ապա դիմեք զրույցի առանձին մասերի մշակմանը՝ առանց ամբողջ զրույցը նախօրոք կարդալու:

Ամեն մի զրույցի բնագրում ամեն էջի վրա կողքից գրված են առանձին **վերնագրեր:** Ամեն մի վերնագիր ցույց է տալիս, թե ինչի մասին է խոսվում գրքի տվյալ կտորում: Այս պատճառով անհրաժեշտ է ամեն վերնագիր ուշադրությամբ կարդալ ու խորամուխ լինել նրան, որպեսզի կարելի լինի գաղափար կազմել, թե ինչի մասին է խոսվելու և ինչի վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել:

Գիրքը պետք է կարդալ դանդաղ, բարձր և առանձին կտորներով: Կետը կարդալով, պետք է կանգ առնել և անծանոթ բառերի բացատրությունը գտնել: Դժվար բառերի մեծ մասը բացատրված է էջի ներքևը, նկատողությունների մեջ, մնացածը դուք կը գտնեք բառարանում: Դժվար բառերի պարզաբանությունից հետո՝ պետք է քննել ավելի դժվար տեղերը: Երբ քննած կտորում ամեն ինչ պարզ է ձեզ համար, պետք է անցնել հետևյալ կտորին:

Ընթերցանության ժամանակ չպետք է բաց թողնել այն դիտողությունները, որ արված են էջի ներքևը: Բացի այդ, անհրաժեշտ է **ուշադրությամբ դիտել այն աղյուսակները և նկարները,** որոնք

պատահում են բնագրում, վորովհետև դրանք պարզաբանում են գրքույկը։ Հիմնական մտքերը, հարվածային տեղերը և առանձնապես կարևոր արտահայտությունները այս գրքում նշանակված են կուրսիվով (առանձին տառերով)։ Այս պատճառով ընթերցանության ժամանակ հատուկ ուշադրություն դարձրեք այդ տեղերի վրա։ Հաճախ գրքի ընթերցանության ժամանակ կասկածներ են ծագում նրա այս կամ այն տեղի առթիվ։ Այդպիսի դեպքերում հարկավոր է անհապաղ **ընդհատել ընթերցանությունը յեվ կասկածները գրել թղթի վրա**։ Այդ վոչ մի դեպքում չպետք է հետաձգել պարապմունքի վերջը։ Տվյալ կտորի ընթերցանությունը վերջացնելուց հետո՝ պետք է ուշադրությամբ քննեք ձեր կասկածները (ամենից լավ է՝ ընկերների ոգնությամբ) և ապա պարտադրաբար ստուգեք պրոպագանդիստի ոգնությամբ կամ ինքնակրթության բյուրոյի միջոցով։

Ամեն մի գրքույկում կան առաջադրություններ, վոր խիստ անհրաժեշտ է գրավոր կատարել։ Այդ առաջադրությունները, նրա համար են, վորպեսզի զարգացնեն ձեր մեջ ինքնագործունեությունը և ոգնեն ավելի խոր քննելու հարցերը։

Վերևը մատնանշած ամբողջ աշխատանքը դուք պետք է կատարեք **մինչեվ** դպրոցի պարապմունքը։

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ԽՄԲԱԿԻ ԿԱՄ ԴՊՐՈՑԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻՑ ՀԵՏՈ

Ամեն մի գրքույկի վերջը դրված են ընթերցանության նյութեր և հարցեր, վորոնք վերաբերում են արդեն վոչ թե գրքույկի առանձին թեմաներին, այլ ամբողջ գրքույկին։

Ընթերցանության նյութերը Լենինի, Ստալինի, Բուխարինի և ուրիշների հոդվածներից ու գրքերից վերցրած կտորներ են։ Այդ նյութը պետք է ուշադրությամբ կարդալ, վորովհետև դա ակնառու կերպով պարզաբանում է գրքույկի հատկապես կարևոր տեղերը։ Ինչ վերաբերում է ամբողջ գրքույկի վերջը դրած հարցերին, ապա դրանք նրա համար են, վորպեսզի կրկնեք անցածը և սովորեք ճշգրիտ ձևակերպել ձեր մտքերը։

Դուք ընթերցանության կտորները պետք է կարդաք և այնտեղ մատնանշված հարցերի պատասխանները պետք է տաք (ավելի լավ է գրավոր ձևով) արդեն **այն բանից հետո**, յերբ գրքույկը դպրոցում կամ խմբակում մշակված է։

Դասագրքում զետեղված հարցերի պատասխանները և առաջադրությունների կատարումը հանդիսանում են ինքնուրույն աշխատանքի մինիմումը։

Վորպեսզի ձեր մեջ զարգացնեք ինքնուրույն աշխատանքի ունակություններ, շահավետ է ոգտվել նաև այլ ձեռնարկներից։

Դրանից մեկն այն է, վոր ձեր կարդացած «ընթերցանության կտորներից» ընտրեք ձեզ ամենից շատ շահագրգռած կտորը և կարճառոտ ձևակերպեք նրա հիմնական մտքերը։

Իբրև որինակ վերցնենք «Յերկրի ինդուստրացումը—մեր տնտեսական անկախության պայման» վերնագիրը կրող կտորը։

Նախ գտնենք այստեղ **գլխավոր** միտքը. այն կարելի յե այսպես ձևակերպել.

«Յերկրի ինդուստրացումը, իբրև մեր տնտեսական անկախության պայման, պետք է հասկանալ ամենից առաջ իբրև ԽՍՀՄ խոշոր մեքենաշինության զարգացում»։

Այժմ մենք պետք է գտնենք այն մտքերը, վորոնք ապացուցում են և զարգացնում այս գլխավոր միտքը։ Այդ մտքերը հետևյալներն են.

1) Ընդհանրապես արդյունաբերության ամեն տեսակի զարգացումը յերկիրը տնտեսապես անկախ չի դարձնում։

2) Հնդկաստանում արդյունաբերությունը զարգանում է, մինչդեռ Հնդկաստանը գաղութ է. այդտեղ արտադրության գործիքներ չեն արտադրվում, այլ ներմուծվում են Անգլիայից։

3) Յեթե՝ ոպպորտունիստի նման՝ ինդուստրացումը հասկանանք, իբրև ընդհանրապես ամեն տեսակ արդյունաբերության զարգացում, ապա ստիպված կը լինենք Պետրոս Մեծին առաջին ինդուստրիալիստը համարել։

Հանձնարարում ենք՝ այստեղ մատնանշված ձեռնարկին միանգամից չդիմել, այլ այն բանից հետո, յերբ արդեն հարցերին պատասխաններ կազմելու աշխատանքում վորոշ ունակություններ ձեռք բերված են, այսինքն՝ գրքի յերկրորդ կամ յերրորդ հատվածից։ Ընդ սմին սկզբներում ամենից լավ է վարժվել միայն կտորի գլխավոր միտքը գտնելու մեջ։

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ

ՀԱՄ·ԿԿ (Բ·) ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՅՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՄ· ԿԿ (Բ) ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչի մասին է զրույցը

Առաջին զրույցում մենք կը քննենք հետևյալ հարցերը. 1) Ինչու բանվոր դասակարգին իր պայքարում հարկավոր է **կոմմունիստական կուսակցություն**. 2) Ինչ հիմունքներով է կառուցված մեր կուսակցությունը և ինչումն է նրա ուժը: Վորպեսզի յուրացվեն այս հարցերը, պետք է առաջին զրույցում քննել, թե ինչ է **դասակարգն** ու **կուսակցությունը** և, բացի դրանից, ուսումնասիրել Համ. կկ (բ) **կանոնադրության** գլխավոր հիմունքները: Կուսակցության շինարարության հարցին մենք դառնալու ենք նաև հետագա զրույցներում: Առաջին զրույցը պետք է ոգնի ունկնդրին յուրացնելու, թե ինչքան կարևոր են կուսակցական կարգապահությունը և կուսակցության ամուր **միանականությունը**:

1. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՅԵՎ ՆՐԱ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Այն յերկիրը, վորտեղ մենք բոլորս ապրում ենք ու աշխատում, կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, կամ կրճատ—ԽՍՀՄ: Այդ հսկայական յերկրում, վոր բռնում է յերկրագնդի ցամաքի մեկ վեցերորդ մասը, ներկայումս հսկայական, յեռուն աշխատանք է կատարվում:

Աճում և ամրանում է մեր պետական արդյունաբերությունը: Կառուցվում են նոր ֆաբրիկաներ ու գործարաններ,—սկսած է մոտ 400 ձեռնարկության կառուցում: Հին ձեռնարկությունները վերասարքավորվում են: Բացվում են նոր շախտաներ (հանքահորեր): Շինվում են նոր յերկաթուղիներ: Կառուցված են մեկ տասնյակ խոշորագույն

ելեկտրակայաններ.—Վոլխովստրոյը՝ Լենինգրադի մոտ, Շատուրինը և Կաշիրինը՝ Մոսկվայի տակ, Զեմո-Ավճալայինը՝ Կովկասում և ուրիշները: Սկսված է Դնեպրի վրա մեծագույն ջրա-ելեկտրակայանի կառուցումը, վորը թափվող ջրի ուժը կը փոխի մի քանի միլիոն մարդու աշխատանքը փոխարինելու ընդունակ ելեկտրական եներգիայի (Դնեպրոստրոյը): Վոլգան Սև ծովի հետ միացնելու և շուրջվոլգյան ու հարավ-արևելյան հացահատիկի համար համաշխարհային շուկայի ավելի հարմար ճանապարհ բանալու նկատառումով՝ նախապատրաստական աշխատանք է կատարվում փորել Վոլգան Դոնի հետ միացնող ջրանցքը: Այս նոր տեխնիկան մուտք գործելով մեր տնտեսությունը կը բարձրացնի աշխատանքի արտադրողականությունը և աշխատավորների բարեկեցությունը: Նա հիմք կը դնի ապագա սոցիալիստական տնտեսության, վորի մեջ մարդիկ կազատագրվեն ծանր աշխատանքից ու նյութական զրկանքներից:

Այս նոր տեխնիկային աստիճանաբար հաղորդակից է լինում նաև մեր գյուղը: Բազմադաշտի սիստեմը փոխարինում է հին յեռադաշտին, վորից հողը միայն ուժասպառվում եր: Մի շարք ռայոններում տրակտորն սկսում է փոխարինել գյուղացու յարույին: Գյուղացիությունն աստիճանաբար անցնում է տնտեսավարության ավելի լավ յեղանակների, սկսում է կիրառել լավացրած պարարտացում, աստիճանաբար լավացնում է անասունների ցեղը, մաքրում է խոտացանությունը և այլն: Գյուղում աճում է **կոոպերացիան**, վոր միացնում է գյուղացիական բաժան-բաժան ծխերն ու հողաբաժինները և նախապատրաստում է նրանց անցումը դեպի **հասարակական, միասնեղ տնտեսավարություն**:

Խորհրդային լայնածավալ յերկրի ամենահեռավոր խուլ անկյուններում, Կովկասի լեռներում, Կիրգիզիայի տափաստաններում, Սիբիրի հեռավոր տայգաներում,—ամենուրեք կատարվում է նոր կյանքի շինարարության այս աշխատանքը: **Այդ ԽՍՀՄ աշխատավորներն են, վոր կառուցում են** սոցիալիզմ, դնում են հիմքերն այնպիսի մի կյանքի, ուր չի լինելու ստրկություն, տգիտություն, մարդու ճնշումը մարդու ձեռքով:

Իսկ վ՞վ է հանդիսանում այն հիմնական ուժը, վոր նոր հիմունքներով վերակառուցում է մեր յերկրի կյանքը: Ինքը շրջապատի կյանքը պատասխան է տալիս այս հարցին: Այդ ղեկավար ուժը հանդիսանում է **պրոլետարիատը**, բանվոր դասակարգը, վորը կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ բոլոր աշխատավորներին տանում են դեպի սոցիալիզմ:

Մեր պետությունը հենց այն պատճառով է **պրոլետարական** կոչվում, վոր այն ղեկավարում են բանվոր դասակարգը և նրա կուսակցությու-

նը—Համ. ԿԿ (բ)։ Քննենք ուրեմն, թե ինչ ենք հասկանում մենք «դասակարգ» և «կուսակցություն» բառերի տակ։

Ինչ են հասարակական դասակարգերը

Դասակարգերին, դասակարգային կռվին և դասակարգի կողմից իշխանությունը գրավելուն վերաբերող ուսմունքը կազմում է հիմքն այն ավանդների, որ թողել են աշխատավորներին Մարքսն ու Լենինը *)։ Մենք այստեղ պետք է, թեկուզ մի քանի բառով, քննենք այդ հարցը։

Հիշենք մինչհեղափոխական Ռուսաստանը կամ վերցնենք ժամանակակից Գերմանիան, Անգլիան, Ամերիկան կամ մի այլ կապիտալիստական երկիր։ Այնտեղ մենք կտեսնենք այսպիսի դրություն։ Ֆաբրիկանտների, գործարանատերերի, բանկիրի, հողատերերի մի խումբ տիրում է հողերը, ֆաբրիկաները, գործարանները, երկաթուղիները։ Նրանց ձեռքին է հողը, մեքենան, հում նյութը և այլն։ Նրանք տեր են, նրանք իշխում են, նրանք կառավարում են տնտեսությունը։ Նրանք տնօրինում են այն բոլոր բարիքները, որոնք ստեղծվում են մարդկային աշխատանքով։ Նրանք—կապիտալիստներն են, խոշոր սեփականատերերը, խոշոր բուրժուաները։

Իսկ այդ դասակարգի—բուրժուազիայի—կողքին՝ տեսնում ենք արտադրության միջոցներից զուրկ բանվորների ահագին մասսան։ Նրանք հարկադրված են իրենց ուժը վաճառել կապիտալիստներին, որպեսզի սովից չմեռնեն։ Կապիտալիստը գնում է այդ բանվորական ուժը, նա վարձում է բանվորին, որպեսզի յուրացնի հնարավոր չափով ավելի մեծ մասն այն արժեքների, որ բանվորն ստեղծում է իր աշխատանքով։ Ուրիշ խոսքով, արտադրության միջոցների տեր կապիտալիստը **շահագործում է**՝ բացի իր բանվորական ուժից՝ ուրիշ ոչինչ չունեցող բանվորին։ Կապիտալիստների **դասակարգը** շահագործում է բանվորների **դասակարգին**—պրոլետարիատին։

Բուրժուազիան և պրոլետարիատը — կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգեր

Այսպես ուրեմն, ինչ է դասակարգը։ Այժմ մեզ համար հասկանալի է, թե դասակարգերի բաժանումը հետևանք է այն բանի, որ **մարդկանց տարբեր խմբեր տարբեր տեղ են բռնում հասարակական արտադրության մեջ**։ Ոմանք ֆաբրիկաների տեր են, կառավարում են այն (ամենից հաճախ ուրիշ անձերի միջոցով) իրենք չեն աշխատում, այլ յուրացնում են բանվորների աշխատանքով ստեղծվող արժեքները։ Այդ—շահագործողների դասակարգն է, բուրժուազիայի դասակարգը։ Ոմանք էլ ոչ մի բանի տեր չեն, այլ աշխատում են այդ ֆաբրիկաներում, հարստացնելով

*) Կարլ Մարքսը—բանվոր դասակարգի մեծ առաջնորդը և ուսուցիչը ծնվել է 1818 թ. և մեռել 1883 թ.։ Վլադիմիր Իլյիչ Լենինը—Մարքսի գործի շարունակողը մեր կուսակցության և Կոմինտերնի առաջնորդը, ծնվել է 1870 թ. և մեռել է 1924 թ.։

դրանց տերերին։ Այդ—պրոլետարների, բանվորների դասակարգն է։ Կապիտալիստական հասարակության մեջ հիմնական դասակարգերն են **բուրժուազիան և պրոլետարիատը**։ Այս երկու դասակարգերի կռիվն էլ կապիտալիստական երկիրներում կազմում է ամբողջ հասարակական կյանքի հիմքը։ Բայց, բացի բուրժուազիայից ու պրոլետարիատից, կապիտալիստական հասարակության մեջ գոյություն ունեն բնակչության նաև այնպիսի շերտեր, որոնք **միջանկյալ** տեղ են բռնում այս երկու հիմնական դասակարգի միջև։ Այդ, այսպես կոչված, **մանր բուրժուազիան է**—մանր առևտրականները, արհեստավորները, տնայնագործները, իսկ որ գլխավորն է, նաև **գյուղացիների** մեծ մասը։

Գյուղացիությունը

Կապիտալիստական երկիրներում գյուղացիությունը բնակչության նշանակալի մասն է կազմում, և հարկավոր է հատուկ խոսել նրա մասին։ Գյուղացիությունը միջանկյալ դասակարգ է։ Գյուղացին միաժամանակ և՛ սեփականատեր է, և՛ աշխատավոր։ Նա մանր տնտեսատեր է, արտադրության միջոցներ ունեցող **սեփականատեր** (շենքեր, անասուններ, մեքենաներ և գործիքներ, իսկ կապիտալիստական երկիրներում նաև հող)։ Բայց դրա հետ միասին նա—իր մեծամասնությամբ—վարձու բանվոր չշահագործող աշխատավոր է և, ընդհակառակը, կապիտալիզմի ժամանակ շահագործվում է թե կալվածատերերից և թե խոշոր կապիտալից։ Իբրև սեփականատեր գյուղացին հարում է բուրժուազիային, իբրև աշխատավոր—պրոլետարիատին։

Կապիտալիզմի ժամանակ գյուղացիությունը միատեսակ չի մնում, այլ քայքայվում է։ Նրանից զատվում են, մի կողմից՝ գյուղատնտեսական և ֆաբրիկա-գործարանային բանվորները—պրոլետարները, իսկ մյուս կողմից՝ նաև գյուղատնտեսական բուրժուազիան (կուլակությունը), որը շահագործում է վարձու բանվորներին, առևտրի, վաշխառության և այլ միջոցներով կողոպտում է չքավորներին։ Այսպիսով, գյուղացիությունը միջանկյալ տեղ է բռնում բուրժուազիայի և պրոլետարիատի միջև։

Դասակարգերը ԽՍՀ Միության մեջ

Մենք մինչև այժմ շարունակ խոսում էինք կապիտալիստական հասարակության մասին։ Մեզ մոտ ԽՍՀՄ դասակարգերի դասավորումը, ի հարկե, այլ է։ Պրոլետարիատը Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ հաղթեց, իսպառ ոչնչացրեց կալվածատերերի դասակարգը և տապալեց խոշոր բուրժուազիայի տիրապետությունը։ Հողն իր բոլոր ընդերքներով (недро), ֆաբրիկաները, գործարաններն ու երկաթուղիները, բանկերն ու խոշոր առևտուրը—այս բոլորն անցան պրոլետարական պետության ձեռքը։ Որտեղ առաջ տեր էին Մորոզովները, Ռյաբուշինսկիները և Կոնովալովները, այնտեղ այժմ իր պետական ձեռնարկություններ

տերն է բանվոր դասակարգը: Նա այնտեղ աշխատում է ոչ թե կապիտալիստի համար, այլ **իրեն իրեն համար**, իր պրոլետարական պետության համար: Գյուղում՝ կալվածատերերի ջախջախման հետ միասին՝ քայքայված է նաև շահագործող-կուլակը: Գյուղացիության հիմնական մասսան այժմ կազմում են միջակները և չքավորները: Բանվոր դասակարգն իշխող է դարձել մեր յերկրում: Բայց նա իշխում է վոչ թե նրա համար, վորպեսզի շահագործի վորևէ այլ դասակարգի, այլ նրա համար, վորպեսզի ամբողջ հասարակությանն առաջնորդի դեպի սոցիալիզմ: Այլ կերպ ասած, բանվոր դասակարգը բոլոր աշխատավորներին առաջնորդում է դեպի այնպիսի մի կարգ, ուր ամենևին չեն լինի վոչ դասակարգեր, վոչ էլ վորևէ շահագործում:

Մենք այժմ դեռ միայն **կառուցում ենք** այդ սոցիալիստական հասարակությունը: Մեզ մոտ առայժմ դասակարգերը դեռ մնացել են: Բայց այդ արդեն այն դասակարգերը չեն, ինչ վոր կապիտալիզմի ժամանակ: ԽՍՀՄ յերկու գլխավոր դասակարգ կա՝ պրոլետարիատ և աշխատավոր գյուղացիություն: Բացի դրանցից՝ դեռ կա նաև բուրժուազիա, մասնավոր առևտրականներն ու ձեռնարկատերերը — քաղաքում, կուլակները — գյուղում: Բայց մեր տնտեսության մեջ այդ բուրժուազիայի դերը չնչին է: Ըստ էության, նույնիսկ ինքնուրույն դասակարգ չէ այդ: Այդ — նախկին տիրող դասակարգերի մնացորդներն են միայն: Յեվ այդ մնացորդներն ամեն տարի շարունակ կնվազեն, մինչև վոր պետական ու կոոպերատիվ տնտեսությունը բոլորովին դուրս կմղեն դրանց: Իսկ սոցիալիզմի ժամանակ, ինչպես վերևն ասված է, դասակարգերը բոլորովին կը վոչնչանան:

Բանվոր դասակարգի քաղաքական կուսակցությունը

Բուրժուական յերկրներում կապիտալիստների դասակարգի և բանվոր դասակարգի միջև պայքարն անխուսափելի յէ, վորովհետև այդ դասակարգերի շահերն **անհաշտ են**: Կապիտալիստը շահագրգռված է բանվորական օրը յերկարացնելով, բանվորը — այն կրճատելով: Կապիտալիստը շահագրգռված է աշխատավարձը կրճատելով, բանվորի աշխատանքի պայմանները վատացնելով: Բանվորը, ընդհակառակը, շահագրգռված է աշխատավարձը մեծացնելով, աշխատանքի պայմանները լավացնելով: Կապիտալիստը շահագրգռված է իր տիրապետությունը պահելով ու ամրացնելով և բանվորին էլ ավելի շահագործելով: Բանվորը շահագրգռված է այդ տիրապետությունը տապալելով, կապիտալիստական կարգը սոցիալիստական կարգով փոխարինելով:

Բանվոր դասակարգը կարող է կապիտալիստական ճնշումը տապալել պրոլետարական հեղափոխության միջոցով: Բայց վորպեսզի այդ հեղափոխական պայքարում հաղթել կարողանա, բանվոր դասակարգը ղեկավարի կարիք ունի: **Այդպիսի ղեկավար է ահա կոմմունիստական կուսակցությունը:**

Փորձը ցույց է տալիս, վոր բանվոր դասակարգն դատապարտված է պարտության, յեթե նրա գլուխ չի անցել ամուր կոմմունիստական կուսակցություն: Այսպես, օրինակ, ինչը խանգարեց Գերմանիայի բանվոր դասակարգին, վոր 1918—1919 թվականներին կամ 1923 թ. բուրժուազիայի ձեռքից խլե իշխանությունը: Ամենագլխավոր պատճառներից մեկն այն էր, վոր այդ ժամանակ գերմանական պրոլետարիատի գլուխ անցած չէր ռազմունակ, մարտերում յեփված կոմմունիստական կուսակցություն: Ռուսաստանում այդպիսի կուսակցություն կար և նրա ղեկավարությամբ բանվոր դասակարգը հաղթանակ տարավ բուրժուազիայի դեմ:

Բայց բուրժուազիայի ձեռքից իշխանությունը խլելը քիչ է, հարկավոր է այդ իշխանությունը պահել կարողանալ: Ռուսաստանի բանվոր դասակարգն այդ խնդրից էլ գլուխ հանեց: Իսկ ահա Հունգարիայում և Բավարիայում 1919 թ. բանվորներին հաջողվեց իշխանությունը գրավել, բայց չհաջողվեց պահել այն, հեղափոխությունն այնտեղ ջախջախվեց: Սրա գլխավոր պատճառներից մեկն այն էր, վոր Հունգարիայի և Բավարիայի բանվորները ղեկավար չունեյին, ամուր հեղափոխական պրոլետարական կուսակցություն չունեյին: Բայց այն բանից հետո յել, յերբ պրոլետարիատը կարողացել է պաշտպանել իր իշխանությունը, նրան անհրաժեշտ է մի կուսակցություն, վոր ղեկավարեր սոցիալիզմի շինարարության գործը: Այդ հեշտ գործ չէ: Հարկավոր է համարձակություն, տոկունություն, փորձ, վորպեսզի կարելի լինի այդ սոցիալիստական շինարարությունը հաջող վարել, վորպեսզի կարելի լինի հաղթականորեն այն մինչև վերջ հասցնել: Առանց ղեկավարի, առանց կուսակցության բանվոր դասակարգը հաջող կերպով սոցիալիզմ կառուցել չի կարող:

Պրոլետարական կուսակցությունը — բանվոր դասակարգի ավանգարդ

Ինչու՞ այսքան մեծ է պրոլետարիատի քաղաքական կուսակցության նշանակությունը: Վորովհետև ամբողջ բանվոր դասակարգը միասին վերցրած, բոլոր բանվորները չեն կարող միատեսակ անհրաժեշտ վճռականությամբ դասակարգային կռիվ մղել: Կան **հին** բանվորներ, վորոնք տասնյակ տարիներ աշխատում են գործարանային արտադրության մեջ և յերկար տարիներ մասնակցում են կապիտալիստների դեմ մղվող պայքարին: Բայց կան նաև այնպիսիները, վորոնք դեռ բոլորովին նոր են յեկել գյուղից, նրանք պրոլետարական պայքարի փորձ դեռ համարյա չունեն: Կան **խոշոր** ձեռնարկությունների բանվորներ, վորոնց հենց արտադրության պայմանները համախմբում են ու դաստիարակում միասին պայքարելու հանուն ընդհանուր շահերի: Բայց կան նաև **մանր** ձեռնարկությունների բանվորներ, վորոնք բաժան-բաժան են, վատ կազմակերպված, ընդհանուր

առայժմ բավականին չվարժված կապիտալի դեմ մղվող կռվի համար։ Կան **գիտակից** բանվորներ, վորոնք ընդունակ են տոգորվելու ընդհանուր դասակարգային խնդիրների գիտակցությամբ։ Բայց կան նաև այնպիսիները, վորոնք չեն կարող վեր բարձրանալ որվա **մանր** շահերից։

Այս պատճառով բանվոր դասակարգի պայքարում ղեկավարությունը պետք է պատկանի ամենագիտակից, ամենահամարձակ, ամենափորձված, ամենաանձնուրաց բանվորներին։ Կոմունիստների կուսակցությունն ահա այն կազմակերպությունն է, վոր միացնում է բանվոր դասակարգի ամենից ավելի գիտակից, անձնուրաց և հեղափոխական մասը։ Այս պատճառով էլ մենք ասում ենք, վոր **կուսակցությունը պրոլետարիատի առաջավոր ջոկատն է, նրա ավանգարդը, նրա ղեկավարը։**

Ինչու՞ է մեր կուսակցությունը հաջող կերպով ղեկավարում բանվոր դասակարգին։

Առաջին՝ մեր կուսակցությունը վոչ թե խոսքով, այլ իրոք կենսագործում է պրոլետարիատի մեծ առաջնորդների — Մարքսի ու Լենինի ուսմունքը։ Այդ ուսմունքը գիտական հիմքի վրա յե կառուցված, նա յուրացրած ունի պրոլետարական պայքարի յերկարամյա փորձը։ Այդ հեղափոխական ուսմունքն օգնում է կուսակցությանը ճիշտ վարել իր քաղաքականությունը, ընտրել պայքարի հուսալի ուղիներ։

Յերկրորդ՝ մեր կուսակցությունը տասնամյակներով դարբնել է իր ուժերը։ Մեր կուսակցության հիմնական կորիզը կազմված է այն ընկերներից, վորոնք անցել են ընդհատակի, ցարական հետապնդումների, բանտի ու տանջանքի ծանր դպրոցը։ Տասնյակ տարիների ընթացքում տեղի յեր ունենում բանվոր դասակարգի լավագույն, անձնուրաց ուժերի այդ ընտրանքը։ 1905 թ. հեղափոխությունը, նրա պարտությունը, 1914 – 1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմը, 1917 թ. փետրվարյան ու Հոկտեմբերյան հեղափոխությունները, քաղաքացիական կռիվները, սոցիալիստական շինարարությունը — ահա ինչ հարուստ դպրոց է անցել մեր կուսակցությունը։ Այս յերկար ու դժվար պատմական ճանապարհին կուսակցությունը կռեց իր մարտական վոգին, իր պատրաստականությունը մինչև վերջ պայքարելու հանուն սոցիալիզմի հաղթանակի։

Այս բոլորը մեր կուսակցությունը դարձնում է բանվոր դասակարգի հուսալի, հավատարիմ, հաղթական առաջնորդը։

Կոմկուսակցությունը — բանվոր դասակարգի շահերի արտահայտիչ

Մեր կուսակցությունը չունի ինչ-վոր ուրիշ, պրոլետարիատի շահերից առանձին շահեր։ Կոմկուսակցությունը, իբրև բանվոր դասակարգի առաջավոր մասը, միայն ավելի լավ, ավելի պարզ է արտահայտում բանվոր դասակարգի ձգտումները, նրա

[library stamp]

ցանկությունները և մատնանշում է ճանապարհներ նրանց իրագործման համար։ Օրինակ՝ իմպերիալիստական պատերազմի ժամանակ, դեռ շատ առաջ այն բանից, յերբ մեր ամբողջ բանվոր դասակարգը հասկացավ այդ պատերազմի կողոպտիչ բնույթը, Լենինի կուսակցությունը մատնանշում եր պրոլետարիատին ու գյուղացիությանը, վոր հարկավոր է դադարեցնել ժողովուրդների այդ վոճրագործ կոտորածը։ Լենինը և բոլոր բոլշևիկները հենց պատերազմի սկզբից ասում եյին, վոր այդ իմպերիալիստական պատերազմը հարկավոր է վերածել քաղաքացիական պատերազմի ընդդեմ ցարի և բուրժուազիայի։ Կամ վերցնենք ավելի մոտիկ օրինակ. — այժմ ում շահերի համար է, վոր կոմկուսակցությունը կոչ է անում բանվոր դասակարգին բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, խնայողություն անել ամբողջ տնտեսության մեջ։ Ի հարկե, **ամբողջ բանվոր դասակարգի շահերի համար։**

Այսպես ուրեմն, ինչ է մեր կուսակցությունը։

Մեր Համամիութենական Կոմմունիստական Կուսակցությունը (բոլշևիկների) կամավոր մարտական միությունն է գիտակից բանվորների, վորոնք միացել են վոչ թե հանուն իրենց անձնական նպատակների, այլ կռվելու հանուն ամբողջ բանվոր դասակարգի շահերի, այսինքն հանուն պրոլետարիատի յեվ բոլոր աշխատավորների ազատագրության կապիտալիզմի ճնշումից, հանուն կոմմունիստական հասարակության կառուցման։

Կուսակցության կանոնադրությունը յեվ Համ. ԿԿ (բ) անդամի պարտականությունները

Լենինի ուսմունքը — այդ պրոլետարիատի կողմից բուրժուազիայի դեմ մղվող անխնա, կյանքի ու մահվան կռվի, պրոլետարական հեղափոխության ուսմունքն է։ Իսկ յեթե պետք է կռվել, ապա առանց շտաբի, առանց ղեկավարի, առանց առաջավոր ջոկատի, մարտի դուրս գալ չի կարելի։

Ահա ինչու ընկեր Լենինը հսկայական նշանակություն եր տալիս այն բանին, թե ինչպես պետք է կառուցվի բանվոր դասակարգի կուսակցությունը։

Իզուր չէ, վոր այն վեճը, թե ինչպես **պետք է կառուցել կուսակցությունը**, ինչպես կտեսնենք հետագա զրույցներում, առաջին վիճելի հարցն եր, վոր անջատեց բոլշևիկների հեղափոխական լենինյան կուսակցությունը մենշևիկների համաձայնողական կուսակցությունից։ Յեվ այդ պատահական բան չէ։ Մեկ բան է — **հեղափոխական** կուսակցություն կառուցել, վոր ընդունակ լինի գլխավորել բանվորներին պրոլետարական հեղափոխության, կոմմունիզմի համար մղվող անձնազոհ կռվում։ Մեկ այլ բան — կուսակցություն կառուցել կռվելու հանուն **մանր զիջումների**, հանուն մասնակի բարելավումների, հա-

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм.ССР

նուն ռեֆորմների: Համաձայնողական կուսակցության համար բավական է փխրուն, թույլ կարգապահություն ունեցող, չձևավորված կազմակերպությունը: Հեղափոխական կուսակցությունը չի կարող այդպես կառուցվել: Կապիտալի դեմ մղվող վճռական կռիվը, մահու և կյանքի կռիվը, պահանջում է ստեղծել հզոր կազմակերպություն, զոդված **յերկաթե կարգապահությամբ**, միասնական պլանով և համաձայնեցրած ու միաբան գործող: Այլ կերպ չի կարելի հաղթանակ տանել կապիտալի—այդ հզոր ու նենգ թշնամու դեմ:

Թե ինչպես է կառուցված կուսակցությունը, այդ շարադրված է **կուսակցական կանոնադրության** մեջ: Այնտեղ ասվում է, թե վորոնք են կուսակցության անդամների իրավունքները և պարտականությունները, ինչպես են ընտրվում կուսակցական ղեկավար օրգանները, ինչպես են կապված նրանք իրար հետ և այլն:

Մեր կուսակցության կանոնադրության հիմքերը հետևյալներն են.— 1) Չկա կուսակցության անդամ առանց կուսակցության խնդիրների կատարման ակտիվ աշխատանքի. 2) հաստատուն կարգապահությունը կուսակցության ամրության, նրա միասնականության հիմքն է. 3) կուսակցությունը կառուցվում է դեմոկրատական կենտրոնացման սկզբունքներով և 4) արտադրական բջիջը կուսակցական կազմակերպության հիմնական օղակն է, նրա սկզբնական կորիզը:

Կուսակցության անդամի ակտիվությունը

Մեր կուսակցության կանոնադրության առաջին կետն ասում է.«Կուսակցության անդամ համարվում է ամեն վոք, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, աշխատում է նրա կազմակերպություններից մեկում, յենթարկվում է կուսակցության վորոշումներին և վճարում է անդամավճար»:

Առաջին պայմանը, վոր կուսակցությունը ներկայացնում է իր անդամին, այդ կուսակցության ծրագիրն ընդունելն է, այսինքն այն խնդիրները, վոր կուսակցությունը դնում է իր առաջ: Միայն նա կարող է կուսակցության անդամ լինել, ով հաստատ համոզված է, վոր կուսակցությունը կանգնած է ուղիղ ճանապարհի վրա, վոր ճիշտ է պաշտպանում բանվոր դասակարգի շահերը և պրոլետարիատին ու բոլոր աշխատավորներին իրոք տանում է դեպի սոցիալիզմ:

Բայց կուսակցության համակրելը, նրա գիծը ճիշտ համարելը քիչ է: Կուսակցության անդամից պահանջվում է վոչ միայն գիտակցել, վոր կոմունիստների կուսակցությունը իրոք պայքարում է պրոլետարիատի գործի համար, այլև ակտիվ մասնակցել այդ պայքարին: Կուսակցության անդամը նա յե, ով պատրաստ է ամբողջովին իր բոլոր ուժերը նվիրել այն գործին, վորի համար պայքարում է կուսակցությունը: Կուսակցության անդամը նա յե, ով պատրաստ է գործով կատարել կուսակցության վճիռները: Կուսակցության անդամը նա յե,

ով ակտիվ **աշխատում** է կուսակցության կազմակերպության մեջ: Կուսակցությանը համակրել, յերբեմն «ազատ ժամանակ» ոգնել նրան—այս կարող է անել նաև անկուսակցականը: Կուսակցությունը պահանջում է իր **անդամից** այնպիսի վարմունք, վորի ժամանակ նա պատասխանատվություն զգա ամբողջ կուսակցության աշխատանքի համար, իսկ կուսակցությունը կարողանա պատասխանատու լինել նրա համար:

Բայց ինչ է նշանակում ակտիվ աշխատել կուսակցության կազմակերպության մեջ: Այդ նշանակում է, ամենից առաջ, մասնակցել կուսակցության ամբողջ կյանքին—կանոնավոր հաճախել **կուսակցական ժողովները**, մասնակցություն ունենալ կուսակցական հարցերի լուծմանը, կատարել կուսակցական հանձնարարությունները և առաջադրությունները, ուսումնասիրել **կուսակցության պատմությունը, նրա քաղաքականությունը, նրա վճիռները**:

Սակայն, կուսակցության այն անդամը, վորը կատարում է **միայն** այս պարտականությունները, դեռ չի կարող իրոք ակտիվ կուսակցական համարվել: Կուսակցությունը պահանջում է իր անդամից ավելին: Կուսակցությունն ուր էլ վոր նշանակի իր անդամին, ամենուրեք պահանջում է նրանից կուսակցական խնդիրների իրականացման գործում ինքնագործունեյություն, անձնական նախաձեռնություն: Կուսակցականը—անկուսակցական բանվորների և գյուղացիների ղեկավարն է: Նա պետք է շարունակ կապ պահի նրանց հետ, ուշադիր ունկնդրի նրանց, իմանա նրանց կարիքները, աջակցի այդ կարիքների բավարարմանը: Նա պետք է պարզաբանի անկուսակցականներին կուսակցության քաղաքականությունը, պայքարի նրանց նախապաշարմունքների և հետամնացության դեմ, խելացի պատասխան տա նրանց հուզող հարցերին: Կուսակցականը պետք է ոգնի անկուսակցական բանվորներին ու գյուղացիներին, պետք է նրանց ցույց տա կենցաղի ու արտադրության լավացման յեղանակները, բյուրոկրատիզմի դեմ պայքարելու ուղիները և այլն: Այս խնդիրը—մասսաների մեջ կուսակցական աշխատանք կատարելը—միշտ և ամենուրեք կանգնած է կուսակցության ամեն մի անդամի առաջ, ուր էլ վոր լինի նա—գործարանում, գյուղում, Կարմիր բանակում, հիմնարկության մեջ:

Կուսակցության ակտիվ անդամի պարտականությունն է՝ շարունակ մասնակցել այն խնդիրների իրագործմանը, վոր իր առաջ դնում է ամբողջ կուսակցությունը, դրանց կենսագործման մեջ գրավել բանվորների ու գյուղացիների անկուսակցական մասսային:

Կարգապահություն

Վորպեսզի կուսակցության աշխատանքը հաջող լինի, կուսակցությունը ձգտում է այն բանին, վորպեսզի իր բոլոր անդամների աշխատանքը համերաշխ ու համաձայնեցված լինի: Քիչ է մեկ ծրագիր ունենալ, գաղափարակից լինել, հարկավոր է նաև կազմակերպված, միասնական պլանով, միասնական կամքով **գործել**:

Այս պատճառով կուսակցության կանոնադրությունը պահանջում է կարգապահության յենթարկում, այսինքն ամեն մի կուսակցականի կողմից կուսակցության վճիռների խստիվ կատարում։

Կուսակցական կարգապահությունն այն է, վոր մեր անձնական կամքը յենթարկենք կուսակցության մեծամասնության կամքին և այդպիսով նպաստենք ամբողջ կուսակցության գործողությունների միության։ Յեթե մեր կուսակցության մեջ ամեն վոք ազատ լիներ վարվել այնպես, ինչպես իրեն հաճելի է, այն ժամանակ մեզ մոտ միություն, նշանակում է, նաև ուժ չեր լինի։ Կուսակցությունը կփոխվեր քաղաքական հարցերի վերաբերմամբ կարծիքների փոխանակության ինչ-վոր ակումբի և մասսաների աչքում կկորցներ իր մարտական հզորությունը և հեղինակությունը։

Բոլշևիկները,— ասում եր Լենինը,— յերկու ամիս անգամ չեյին դիմանա իշխանության գլխին առանց մեր կուսակցության խստագույն, իսկապես յերկաթե կարգապահության, վորովհետև բուրժուազիայի դեմ մղվող պատերազմը պահանջում է տոկունություն, կարգապահություն, ամրություն և կամքի միություն։

Դեմոկրատական կենտրոնացում.

Ապա, մենք պետք է խոսենք մեր կուսակցության կառուցման մեկ առանձնահատկության մասին ևս։ Այդ—այսպես կոչված **դեմոկրատական կենտրոնացումն** է, վորի վրա հաստատված է մեր ամբողջ կուսակցությունը։ Ի՞նչ է նշանակում այդ։

Մեր կուսակցությունն աշխատում է **ներկուսակցական դեմոկրատիայի** հիմունքներով։ Կուսակցության բոլոր ղեկավար որգանները (բջիջի բյուրո, գավկոմ, ռայկոմ և այլն) **ընտրվում են** կուսժողովներում և կոնֆերենցիաներում։ Բջիջների բյուրոները և կուսկոմները **պատասխանատու յեն** կազմակերպության առաջ և հաշիվ են տալիս նրան։ Տեղական գործերում (աշխատողների բաշխում, և այլն) **կազմակերպությունները գործում են ինքնուրույն կերպով**։ Կուսակցության բոլոր անդամները քննության են առնում կուսակցական կյանքի հարցերը, լուծում են այդ հարցերը կուսակցական ժողովներում, համագումարներում, կոնֆերենցիաներում, ակտիվ մասնակցում են կուսակցության այդ վճիռների կատարմանը։ **Հենց այս է դեմոկրատիան։**

Յերկրորդ՝ **բոլոր կուսակցական որգանները խստագույն կերպով յենթարկվում են իրար.**—ստորադասը—վերադասին (բջիջի բյուրոն յենթարկվում է ռայկոմին կամ գավկոմին, վերջինս—նահանգկոմին և այլն) և, վերջապես, բոլոր ընտրովի որգանները, վողջ կուսակցությունն ամբողջությամբ առած, յենթարկվում են «կենտրոնին», այսինքն՝ կուսակցության համագումարին, իսկ համագումարների արանքներում—Կենտրոնական Կոմիտեյին։ Հենց այս է կենտրոնացումը։ (Տես № 1 սխեման)։



Սխեմա № 1. Ինչպես է կառուցված Համ. ԿԿ (բ)

Ահա հենց ներկուսակցական դեմոկրատիայի այս զուգակցումը կենտրոնացման հետ (դեմոկրատական կենտրոնացումը) ապահովում է այնպիսի դրություն, որի ժամանակ կուսակցության բոլոր անդամները կարող են հայտաբերել իրենց ակտիվությունը և միևնույն ժամանակ գործել համաձայնեցրած ու համերաշխ կերպով:

Բոլշևիկյան կուսակցությունը կառուցված է այնպես, որ կուսակցական օրգանները հանդիսանում են կուսակցության ամբողջ աշխատանքի ոչ միայն **գործադրողները**, այլև **ղեկավարները**: Կոնֆերենցիաներում, համագումարներում կոմունիստներն ընտրում են լավագույններից լավագույններին, այդ պատճառով էլ այնտեղ ընտրված կոմիտեները մինչև հետևյալ կոնֆերենցիաները կամ համագումարները հանդիսանում են **կուսակցության** ոչ միայն գործադիր, **այլև ղեկավար օրգանները**: Նրանք ընդունում են կարևորագույն վճիռներ, ցուցումներ են տալիս բոլոր կուսակցական կազմակերպություններին և կուսակցության անդամներին, և նրանց բոլոր վճիռներն ու ցուցումները կուսակցության բոլոր անդամները պարտավոր են կատարել:

Բջիջ Կուսակցական հիմնական կազմակերպությունը հանդիսանում է ձեռնարկության, գյուղի, հիմնարկության, կարմիր բանակային զորամասի բջիջը: Ֆաբրիկա-գործարանային բջիջը մեր կուսակցության ամրոցն է: Այնտեղ, ֆաբրիկայում ու գործարանում, ուր բանվորներին միացնում է հենց արտադրությունը, կոփվում է բանվոր դասակարգի հզորությունը. Այնտեղ նա կազմակերպվում է կուսակցության մեջ: «Ամեն մի գործարան պետք է մեր ամրոցը լինի»,— ասում էր Լենինը, Ձեռնարկության մեջ բջիջը հենց նրա համար էլ ստեղծվում է, որպեսզի բանվոր դասակարգի առաջավոր ջոկատը— նրա կուսակցությունը—ավելի սերտ կերպով կապի բանվորների ամբողջ մասսայի հետ: Բջիջը պարզաբանում է տվյալ ձեռնարկության բանվորներին կուսակցական լոզունգները: Նա հավաքագրում է կուսակցության նոր անդամներ: Նա հետևում է, որպեսզի ամենուրեք ճիշտ իրականացվի կուսակցության գիծը: Նա ղեկավարում է անկուսակցական մասսաներին և նրանց մասնակցության գրավում արտադրության լավացման, բանվորների կենցաղի լավացման, կուլտուրական շինարարության ընդհանուր աշխատանքին:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ բանվոր դասակարգն իր ամբողջությամբ չի կարող փոխարինել կոմունիստական կուսակցությանը:

2. Ի՞նչպես եք հասկանում դուք կուսակցության անդամի պարտականությունները:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կուսակցությունը կարող է ամուր և մարտունակ լինել միայն այն ժամանակ, երբ նրա անդամների փոքրամասնությունը չենթարկվում է մեծամասնությանը: Կուսակցության ամեն մի անդամ կարող է կուսակցության ներսում իր կարծիքն արտահայտել, այն պաշտպանել: Բայց հենց որ կուսակցությունը վճիռ ընդունեց, նրա անդամները պարտավոր են բոլորը մի մարդու նման **այնպես** գործել, **ինչպես վճռել է կուսակցությունը:**

Կուսակցության մեծամասնությանը չենթարկվելը Վերցնենք մի օրինակ: Բջիջը նշում է այն թեկնածուներին, որոնց հանձնարարելու է գործարկոմի համար: Այստեղ կուսակցության ամեն մի անդամ բջիջի ժողովում կարող է և պետք է մասնակցի այդ թեկնածուների քննությանը. Նա կարող է այդ հարցի մասին հայտնել իր կարծիքը, քվեարկել այնպես, ինչպես այդ նրան ճիշտ է թվում: Բայց ահա բջիջն արդեն քննեց ու քվեարկեց հարցը, նա վերջնական վճիռ ընդունեց: Այն ժամանակ դու պարտավոր ես կենսագործել այդ վճիռը, թեկուզ և կուսակցության ներսում հարցի քննության ժամանակ դու այդ վճռին համաձայն չեյիր:

Առանց մեծամասնությանն այսպես չենթարկվելու բոլորովին անհնար կլիներ կուսակցության աշխատանքը: Ցեխի բանվորների ընդհանուր ժողովում կուսակցության մեկ անդամ բջիջի անունից մի բան առաջարկի, իսկ յերկրորդը—մի ուրիշ բան, այն ժամանակ կուսակցական բջիջը չի կարողանա ղեկավարել անկուսակցականներին, նա կը կորցնի նրանց աչքում իր ամբողջ հեղինակությունը:

Ասենք, պետական գործարանում որևե կոնֆլիկտի պատճառով խռովություն է ծագում: Կուսակցության բջիջը ջանում է հարցն այնպես լուծել, որպեսզի արտադրությունը չվնասվի, որպեսզի կազմակերպված ձևով արհմիության, միջնորդ դատարանի և այլն միջոցով լուծվեն բոլոր հիվանդ հարցերը: Բանվորների ամենահետամնաց մասը յերբեմն հրաժարվում է այսպիսի, միակ նպատակահարմար, ուղիից և դադարեցնում է աշխատանքը: Արդյոք կարո՞ղ է կուսակցության անդամը հարել այդ խռովությանը: Իհարկե ոչ. որովհետև իր այդպիսի վարմունքով նա կը խափաներ կուսակցության աշխատանքը, կը գնար կուսակցության գծի դեմ: Թե ինչ դուրս կը գար դրանից, հասկանալի յե ամենքի համար:

Կուսակցությունը դիսցիպլինի ամենաչարաչար խախտում է համարում իր անդամի այնպիսի վարմունքները, որոնք սպանում են հենց կուսակցության **միասնականությանն ու ամբողջությանը:**

Միլիոնից ավելի անդամ ունեցող հսկայական կուսակցության մեջ առանձին դեպքերում անխուսափելի յեն վորոշ տարաձայնություններ ու կարծիքների տարբերություններ այս կամ այն հարցի լուծման ժամանակ։ Առանձին ընկերներ կարող են այս դեպքում փոքրամասնության մեջ մնալ։ Այս դեռ դժբախտություն չէ, յեթե փոքրամասնությունը **յենթարկվում ե** *կուսակցության* **մեծամասնության վճռին** *և* **իրոք** *կատարում ե այդ վճիռը։ Բայց մեր կուսակցության պատմության մեջ յեղել են դեպքեր, յերբ գործն այլ ընթացք ե բռնել.— փոքրամասնության մեջ մնացած ընկերները վոչ միայն չեն ընդունել իրենց սխալները, այլև փորձել են* **խափանել** *կուսակցության վճիռը։ Կուսակցության վճիռներից դժգոհ և նրան յենթարկվել չցանկացող փոքրամասնության այսպիսի փորձերը հասցնում են ներկուսակցական սուր պայքարի։ Ակնառու օրինակ կարող ե ծառայել այն պայքարը, վոր ը. ը. Տրոցկու, Զինովյեվի, Կամենյեվի գլխավորած ոպպոզիցիոն բլոկը մղում եր կուսակցության դեմ 1926 թ.։*

Ինչպես Տրոցկու-Զինովյեվի Ֆրակցիան խախտեց կուսակցության վճիռները

Այս ընկերները և նրանց կողմնակիցները մի խմբակ կանգնած եյին մի դիրքի վրա, վորը Համ. Կկ (բ) XIV համագումարը մերժեց։ Ամբողջ կուսակցության հետ քայլելու փոխարեն, նրանք պայքար սկսեցին կուսակցության այդ վճիռների դեմ։ Նրանք կուսակցության ներսում ստեղծեցին **իրենց Ֆրակցիան։** *Ի՞նչ ե նշանակում կուսակցության ներսում ֆրակցիա ստեղծել։ Այս նշանակում ե կուսակցության ներսում ընդհանուր կուսակցական քաղաքականությունից դժգոհ ընկերներից հատուկ կազմակերպություն ստեղծել։ Այդ կազմակերպությունը կապում ե իր մասնակիցներին իր ֆրակցիոն դիսցիպլինով։ Նրանք այնպես չեն գործում, ինչպես հրամայում ե կուսակցական դիսցիպլինը, այլ այնպես, ինչպես վորոշում ե նրանց ֆրակցիան, վոր կուսակցության մեջ կազմում ե մի աննշան փոքրամասնություն։*

Բոլորը հիշում են, թե ինչպես ոպպոզիցիոներները 1926 թ. սկսեցին գումարել իրենց անլեգալ ժողովները, ինչպես Զինովյեվ-Տրոցկու ֆրակցիան կազմեց նույնիսկ իր առանձին անլեգալ կոմիտեները, վորոնք ընդունում եյին ֆրակցիոն վորոշումներ, ինչպես և սահմանում նույնիսկ իրենց ֆրակցիոն անդամավճարները։ Ոպպոզիցիոն բլոկն ամենուրեք ուղարկում եր իր ագիտատորները, տարածում եր իր գրականությունը, կողմնակիցներ եր հավաքագրում իր շարքերը,— մի խոսքով, գործում եր ինչպես առանձին կուսակցություն։ Ոպպոզիցիայի այսպիսի պառակտողական գործունեությունն առաջ բերեց ամբողջ կուսակցության վրդովմունքը։ Կուսակցությունը վճռականորեն ու հաստատապես հարկադրեց ոպպոզիցիայի առաջնորդներին հրաժարվել պայքարի ֆրակցիոն յեղանակներից։

Ինչու մեր կուսակցությունը իր շարքերում չի հանդուրժում Ֆրակցիաներ ու խմբավորումներ

Ի՞նչ կը լիներ **պրոլետարիատի դիկտատուրայի** *դրությունը, յեթե մեր կուսակցության մեջ յերևան գային զանազան ֆրակցիաներ։*

Մեր կուսակցությունը—կառավարող կուսակցություն ե։ Նա ղեկավարում ե պետական խորհրդային ապարատը։ Նա ուղղություն ե տալիս ԽՍՀՄ տնտեսական շինարարության ամբողջ գործին։ Նա հետևում ե **Կարմիր բանակի** *ռազմունակությանը։ Նա ղեկավարում ե այն բոլոր հարցերի լուծումը, վորոնք վերաբերում են ԽՍՀՄ շրջապատող* **իմպերիալիստական պետությունների** *հետ ունեցած մեր հարաբերություններին։ Մեր կուսակցությունը ղեկավարում ե* **արհեստակցական միությունների, կոոպերացիայի** *և բանվորների ու գյուղացիների այլ մասսայական կազմակերպությունների աշխատանքը։* **Յեթե** *կուսակցության մեջ դիսցիպլին չկա, յեթե կուսակցությունը բաժանվում ե ֆրակցիաների, այն ժամանակ պառակտումն անխուսափելի յե և խորհրդային ապարատում, և բանակում, և արհմիություններում։ Այն ժամանակ պրոլետարիատի դիկտատուրային կործանում ե սպառնում։*

Մեր պայմաններում ֆրակցիաների գոյությունը վտանգավոր ե ահա և վոր կողմից։ Մենք ԽՍՀՄ չենք թույլատրում բուրժուական ու համաձայնողական **կուսակցությունների** *գոյությունը։* **Մենք** *պրոլետարիատի դասակարգային թշնամիներին զրկել ենք իրենց քաղաքական կուսակցություններն ունենալու իրավունքից։ Նեպմանները, կուլակները, բուրժուական ինտելիգենտները—դրանք բոլորը, սակայն, ձգտում են իրենց ձեռվ ուղղություն տալ ԽՍՀՄ կյանքին, սոցիալիզմից այն շրջել դեպի հինը, դեպի կապիտալիզմը։ Յերբ մեր կուսակցությունը միասնական ե ու համախմբված, այն ժամանակ այս մանր-բուրժուական ու բուրժուական ուժերը վտանգավոր չեն մեզ համար։ Բայց ահա, յերբ կուսակցության մեջ յերևան են գալիս պառակտումներ, այն ժամանակ մեր թշնամիները ջանում են օգտվել այդ ճեղքը, վորպեսզի հասնեն իրենց նպատակներին։ Բավական ե միայն, վոր կուսակցության ներսում ծագած ֆրակցիան պայքար վարի կուսակցության վճիռների դեմ, անխուսափելիորեն (նույնիսկ այդ ֆրակցիայի ընկերների կամքին իսկ հակառակ) նրա շուրջն սկսում են խմբվել, նրան սկսում են հարմարվել մեզ թշնամի բուրժուական ուժերը։*

Յերբ Տրոցկու-Զինովյեվի ֆրակցիան պայքար սկսեց մեր կուսակցության դեմ, արտասահմանում աշխուժացան նաև բոլոր համաձայնողականներն ու սպիտակ-գվարդիականները։ Նրանք հասկացան, վոր նա, ով ճեղքում ե Համ Կկ (բ), **գործում ե նրանց ոգտին,** *թեկուզ և ինքն*

այդ չուզենա չէր: Այս պատճառով բոլոր հակահեղափոխականները վողջունում եյին Համ. Կկ (բ) օպպոզիցիային, նրա վրա մեծ հույսեր դնում, համարում եյին, վոր նա իրենց գործն ե անում:

Իսկ մեզ շրջապատող ոտարերկրյա իմպերիալիստները նույնպես ուշադրությամբ դիտում եյին այն, ինչ տեղի եր ունենում Համ. Կկ(բ) ներսում.— Նրանք անհամբեր սպասում եյին այն մոմենտին, յերբ բոլշևիկների կուսակցությունը կը թուլանա և նրանք կկարողանան կառուցվող սոցիալիզմի յերկիրը խեղդելու նոր փորձ անել:

Ահա ինչու մեր կուսակցությունը ֆրակցիաներ չի հանդուրժում իր շարքերում: X համագումարում Լենինը, յերբ առաջարկեց արգելել ֆրակցիաները կուսակցության ներսում, այսպես եր խոսում «հարյուրավոր ու հազարավոր բերանների լուրի մասին; վոր մեր բուրժուական ու մանր-բուրժուական թշնամիները տարածում են այստեղ. խորհրդային հանրապետության ներսում, այն ե՝ **յերբ դիսկուսիա նշանակում ե վեճեր, յերբ վեճեր—նշանակում ե պառակտումներ, յերբ պառակտումներ—նշանակում ե կոմունիստները թուլացել են. հրում տո՛ւր, վորսա՛ մոմենտը, ոգտվի՛ր նրանց թուլությունից:** Այս դարձել ե մեր թշնամի աշխարհի լոզունգը: Այս վո՛չ մի վայրկյան չպետք ե մոռանանք մենք»: Յեվ X համագումարը Լենինի առաջարկությամբ ընդունեց «Կուսակցության միության մասին» նրա խիստ կազմած հատուկ բանաձևը, վորի մեջ մենք կարդում ենք.

«Անհրաժեշտ ե, վորպեսզի գիտակից բանվորները պարզ գիտակցեն ամեն տեսակ ֆրակցիոնականության վնասն ու անթույլատրելիությունը... համագումարը հրահանգում ե առանց բացառության անհապաղ ցրել այս կամ այն պլատֆորմայով կազմված բոլոր խմբակները և հանձնարարում ե բոլոր կազմակերպություններին ամենախիստ կերպով հետևել և չը թույլատրել վորևե ֆրակցիոն ելույթ: Համագումարի այս վորոշումը չկատարելու հետևանքը պետք ե լինի կուսակցությունից անպայման ու անհապաղ հեռացումը»:

Կուսակցությանն իր միասնականության ամրացման գործում աջակցելու, կուսակցական կարգապահության խախտման դեմ պայքարելու (նույնպես և պետապարատը լավացնելու համար) ընկեր Լենինի առաջարկով ստեղծված են **վերահսկիչ հանձնաժողովները**: Այդ հանձնաժողովները վճռական պայքար են մղում կուսակցության շարքերում կուսակցական վճիռները չկատարելու, կուսակցական գիծը խեղաթյուրելու դեմ, ֆրակցիոնականության դեմ:

Մեր կուսակցությունը լավ ե հիշում Լենինի ավանդները և կուսակցական համագումարների վճիռները, և այդ պատճառով նա այնպես համերաշխ կերպով ընդիմացավ օպպոզիցիոն բլոկի ֆրակցիոն գործունեյությանը: Մեր կուսակցությունը **միասնականության** ու կարգապա-

հության **օրինակ** ե ծառայում մյուս յերկրների կոմունիստական կուսակցությունների համար: Կուսակցության առանձին, անկայուն ելեմենտները յերբեմն յենթարկվում են ամեն տեսակ տատանումների, բայց կուսակցությունն իր ամբողջությամբ ամուր պահում ե իր լենինյան միասնականությունը:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւմն ե Համ. Կկ (բ) ներսում ֆրակցիաներ յեվ խմբավորումներ կազմելու վնասը յեվ վտանգը:

2. Ի՞նչ վճռեց կուսակցության X համագումարը ֆրակցիաների ու խմբավորումների մասին:

ԿՏՈՐՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ—ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՄՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

«Փոքրամասնության մեծամասնությանը յենթարկվելու սկզբունքը, կենտրոնից կուսակցական աշխատանքը ղեկավարելու սկզբունքը սակավ չե, վոր հարձակումներ ե առաջ բերում անկայուն տարրերի կողմից, մեղադրանքներ «բյուրոկրատիզմի», «ֆորմալիզմի» մեջ և այլն: Հազիվ թե հարկավոր լինի ապացուցել, վոր կուսակցության, իբրև ամբողջության, պլանաչափ աշխատանքը և բանվոր դասակարգի պայքարի ղեկավարությունն անհնար կլինեյին առանց այս սկզբունքների իրագործման:

Կուսակցության մեջ յերկաթե կարգապահությունն անհնար ե առանց կուսակցության բոլոր անդամների կամքի միության, առանց լիակատար ու անպայման գործողության միության: Այս, ի հարկե, չի նշանակում, վոր հենց դրանով վերանում ե կուսակցության ներսում կարծիքների պայքարի հնարավորությունը: Այս մանավանդ չի նշանակում, վոր կարգապահությունը պետք ե «կույր» լինի: Ընդհակառակը, յերկաթե կարգապահությունը չի բացառում, այլ յենթադրում ե յենթարկման գիտակցականություն և կամավորություն, վորովհետև միայն գիտակցական կարգապահությունը կարող ե իրոք յերկաթե կարգապահություն լինել: Բայց այն բանից հետո, յերբ կարծիքների պայքարը վերջացած ե, քննադատությունն սպառված և վճիռն ընդունված, կուսակցության բոլոր անդամների կամքի միությունը և գործողության միությունը հանդիսանում ե այն անհրաժեշտ պայմանը, առանց վորի անհնար ե վո՛չ միասնական կուսակցություն, վո՛չ էլ կուսակցության մեջ յերկաթե կարգապահություն...»

Բայց սրանից հետևում է, որ ֆրակցիաների գոյությունն անմիասնելի չէ (несовместимо) թե՛ կուսակցության միասնականության և թե՛ նրա յերկաթե կարգապահության հետ։ Հազիվ թե հարկավոր լինի ապացուցել, որ ֆրակցիաների առկայությունը (наличие) հասցնում է մի քանի կենտրոնների գոյության, իսկ մի քանի կենտրոնների գոյությունը նշանակում է կուսակցության ընդհանուր կենտրոնի բացակայություն, միասնական կամքի բաժանում, կարգապահության թուլացում և քայքայում, դիկտատուրայի թուլացում և քայքայում...»։

(Ստալին.—Լենինիզմի հիմունքների մասին, «Լենինիզմի հարցերի առթիվ» ժողովածուի մեջ, եջ 156—161, ռուսերեն)։

2. ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՆԼԵԳԱԼ ՏՊԱՐԱՆԸ—ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՄՈՒՇ

«Մոսկվայում կուսակցություն կազմակերպելու իդեան սերտ կապված է 1902—1904 թ. թ. հեղափոխական շարժման զարգացման հետ, յերբ կուսակցական գրականության կարիքը հատկապես ուժեղ կերպով եր զգացվում։

Տպարան կազմակերպելու համար (այդ 1904 թ. վերջին եր, բռնկված գործադուլների շրջանում) ընկեր Լ. Բ. Կրասինը Բաքու կանչեց մեր «մասնագետներին»՝ Սիմոն Յենուկիձեյին (այժմ Гознак-ի պետ) ինձ և դարձյալ մի քանի ընկերոջ, վորոնք յեռանդագին սկսեցին համապատասխան շենք վորոնել, ընկերներ ընտրել և այլն։ Վորպեսզի ծածկենք մեր «հանցավոր» արարքը, Լեոնով փողոցում, № 55 տանը բնակարան վարձեցինք, վոր ուներ յերեք բաժանմունք՝ խանութ, բնակելի շենք և խոհանոց։ Աչք խաբելու համար կպցրինք «Ալիևյան չոր մրգերի առևտուր» ցուցանակը։ Արտաքուստ ամեն ինչ ձևակերպված եր հիանալի.—դերերը բաշխեցինք՝ խանութի տեր, գործակատար, գրասենյակի պաշտոնյա և ծառայողներ։ Տպարանը պետք է գտնվեր հատուկ գետնափորում, ուր զետեղված եյին ամերիկյան մեքենան և շարվածքի կասսաները։ Գետնափորն իջնում եյինք հորի միջով, վոր փորել եյինք խանութի նկուղում՝ դուրս յեկած ջուրը լցնելու համար, յեթե բան է ջուր դուրս գար այդտեղ։ Այդ հորի պատի մեջ, բերանից յերեք արշին ցած, մի հատուկ հարմարանք բաց եր անում մուտքը կամ ավելի ճիշտ անցքը դեպի տպարան։ Անցքով, վոր իսկույն վորևե մեկը փակում եր, յերկու-յերեք արշին սողալով կարելի յեր ուղիղ կանգնել և այդտեղ հատուկ հարմարեցրած ելեկտրական ճրագի լույսի տակ աշխատել։ Յեվ կարելի յեր բոլորովին հանգիստ լինել՝ վոչ մի աղմուկ չեր հասնում վոչ գետնի յերեսը, վոչ ել ամենամոտիկ կենողներին։

Կեղծ անձի միջոցով տպարանը բերել տվեցինք Պետերբուրգից Բաքու և միայն այդտեղից, մաս-մաս և փոքրիկ արկղներում, ուղարկեցինք Մոսկվա Լեոնով փողոցը։

Նկուղում հավաքված հողը, կասկածներից խուսափելու համար, արկղներով ուղարկում եյինք Խարկով, Տուլա և այլ քաղաքներ ցպահանջ։ Թե ով եր ստանում այդ արկղները, յես մինչև հիմա ել չը գիտեմ։

Գետնափոր-տպարանում կարող եյին աշխատել յերկու-յերեք մարդ շարվածքի վրա և մեկ մարդ՝ տպագրական մամուլի։ Աշխատանքի պայմանները, ի հարկե, սարսափելի եյին։ Ամենադաժան կոնսպիրացիա, վոր հարկադրեց ինձ ամիսներով նստել նկուղում, առանց բաց ոդ դուրս գալու, այն աստիճան խոնավություն, վոր մի ժամ աշխատելուց հետո՝ մարդու յերեսը ծածկվում եր թացությամբ, աշխատանք միայն աղոտ լույսի տակ,—և այս բոլորն որ ու գիշեր, անընդհատ յերկու հերթափոխով յերեքական մարդով։

Մեր տպարանն իր գոյությունը պահեց մոտ յերկու տարի, մինչև 1905 թ. դեկտեմբերյան հեղափոխությունը, յերբ այն տեղափոխեցինք ինչ վոր պահեստ՝ Ռյազանի կայարանի մոտ, ուր մնաց մինչև 1917 թվականը»։

(Գեորգի Ստուրուա, զեկուցումից)։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մտածեք, թե ինչ դեր է խաղում ձեր բջիջը ձեռնարկության մեջ։ Յեզրակացություններ արեք այդ դերի մասին և այն համառոտ գրեք տետրակում։

2. Բերեք կուսակցական կարգապահության կոպիտ խախտման որինակներ ձեր բջիջից կամ կազմակերպությունից և բացատրեցեք, թե ինչից եյին առաջ յեկել դրանք և ինչպես պայքարեց դրանց դեմ բջիջը, կազմակերպությունը։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչու՞ յե անհրաժեշտ, վոր բանվոր դասակարգն իր քաղաքական կուսակցությունն ունենա։

2. Վորո՞նք են կուսակցության անդամի գլխավորագույն պարտականությունները, և ինչու՞ յե անհրաժեշտ այդ պարտականությունների խստագույն կատարումը։

3. Ինչու՞ կոմմունիստական կուսակցությունը չի կարող թույլատրել, վոր իր շարքերում խախտվի կարգապահությունը և միությունը։

ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ՀԱՄ ԿԿ (Բ)—ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ինչի մասին է զրույցը

Մենք անցյալ զրույցում ցույց տվեցինք, թե ինչպես է կառուցվում Համ. կկ (բ): Այստեղ մենք կպարզենք՝ 1) թե ինչու մեր կուսակցությունը **բանվորական** կուսակցություն է և 2) թե ինչպես մեր կուսակցությունը պաշտպանելով **պրոլետարիատի** շահերը, դրա հետ միասին հանդիսանում է բոլոր **աշխատավոր մասսաների**, առաջին հերթին—չքավոր ու միջակ գյուղացիության, ղեկավարը: Վորպեսզի ըմբռնենք այս հարցերը, մենք կդիտենք, թե ինչ դեր է խաղում կուսակցության մեջ նրա **բանվորական կորիզը** և թե ինչպես է կուսակցությունը կանոնավորում (ընտրում) իր կազմը, վորպեսզի նրա մեջ ապահովի բանվորների գերակշռությունը:

1. Համ կկ (Բ)—ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համ. կկ (բ) գլխավոր նպատակն է՝ կապիտալիստական ճնշումը տապալելով, ամբողջ կյանքը վերակառուցել կոմմունիստական սկզբունքներով: Համ. կկ (բ), մյուս յերկրների կոմմունիստական կուսակցությունների հետ միասին, ձգտում է ստեղծել այնպիսի կարգ, վորի մեջ բոլոր ֆաբրիկաները, գործարանները, շախտաները (հանքասրահները) յերկաթուղիները, հողը—**արտադրության** բոլոր **միջոցները** պատկանեն ամբողջ հասարակությանը: Այդ հասարակակարգում դասակարգեր չեն լինի—բոլորը կլինեն հասարակական տնտեսության աշխատողներ: Արտադրության միջոցների մասնավոր սեփականություն չի լինի—տնտեսությունը հասարակական կլինի: Այդ հասարակարգում շահագործում և անհավասարություն չի լինի: Այդ կլինի կոմմունիստական կարգ: Կոմմունիզմն ստրկությունից ու աղքատությունից, տաժանելի աշխատանքից կազատի բոլոր աշխատավորներին:

Իսկ ով է հանդիսանում աշխատավորների առաջնորդն այս նոր կարգի համար մղվող կռվում: **Կոմմունիզմի համար ամենավճռական ու մինչև վերջ հետևողականորեն մարտնչողը հանդիսանում է բանվոր դասակարգը:**

Բանվորը **սեփականություն** չունի և այդ պատճառով նա կապիտալիստական սեփականության թշնամին է: Նա շահագրգռված է, վորպեսզի բոլոր հարստությունները պատկանեն ամբողջ հասարակությանը: Կապիտալիզմի ժամանակ բանվորն իր ամբողջ կյանքով յերես առ յերես կանգնած է իր դասակարգային թշնամու—կապիտալիստի դեմ: Նրանց շահերն անհաշտելի յեն, նրանց անհաշտ կռիվը մինչև վերջ՝ անխուսափելի:

Ապա, խոշոր ձեռնարկությունները, ուր միասին աշխատում են հարյուրավոր ու հազարավոր բանվորներ, համախմբում են ու կազմակերպում բանվորներին իբրև միասնական **դասակարգային ուժի**: Մեկ բանվոր աշխատանքում սերտ կապված է մյուսի հետ հենց արտադրության մեջ—մեկ համքարությունը (ցեխը) չի կարող աշխատել առանց մյուս համքարության: Այդպես էլ հեղափոխական պայքարում՝ բանվորները պայքարում են կապիտալիստների դեմ միասին, ամբողջ մասսայով—մենակ չի կարելի հաղթել կապիտալիստներին: Բանվոր դասակարգը ահագին մասսաներով կենտրոնացած է խոշոր քաղաքներում և արդյունաբերական ռայոններում: Բանվորը գործ ունի մեքենայի, բարձր տեխնիկայի հետ, նա աշխատավորների բոլոր շերտերից ամենակուլտուրական, ամենահասկացական շերտն է:

Բուրժուազիայի դեմ միասին մղվող պայքարի փորձը բանվոր դասակարգին դարձնում է **ամենակազմակերպված** մարտիկը կապիտալիզմի դեմ: Այս պատճառով էլ բանվոր դասակարգն ազատագրության համար մղվող կռվում դառնում է **բոլոր աշխատավորների առաջնորդը:**

Կարող են ասել՝ չէ՞ վոր կապիտալիզմի ժամանակ գյուղացին նույնպես աղքատ վիճակում է, նույնպես շահագործված է, նույնպես պայքարում է շահագործողների դեմ: Ինչ է պատճառը վոր **բանվորներն** են իրենց վրա վերցնում հեղափոխական պայքարի ղեկավարությունը: Այդ բացատրվում է ահա թե ինչով: Գյուղացին վոչ միայն **աշխատավոր** է, նա նաև **մանր սեփականատեր** է: Ճիշտ է, նրա սեփականությունն այնքան փոքր է, վոր նույնիսկ հաճախ միջակը հազիվ ծայրը ծայրին է հասցնում, հազիվ իր գոյությունը քարշ տալիս: Բայց այնուամենայնիվ գյուղացին կպած է իր հողի կտորին և հույս ունի կարիքից յելք գտնել իր **մանր միանձնյա տնտեսությունը** լավացնելու միջոցով: Սովորաբար այս հաջողվում է հարյուր գյուղացուց միայն յերեք-չորսին, իսկ մնացածները **կապիտալիզմի ժամանակ** անխուսափելիորեն ցած են գլորվում, քայքայվում, չքավոր, կիսագյուղացի, կիսաբանվոր դառնում, իսկ հետո յել ստիպված են լինում տնտեսությունը թողնել և գործարան, քաղաք աշխատելու գնալ, բատրակ մտնել: Բայց քանի դեռ գյուղացին իր տնտեսությունն ունի, նա յերազում է «մարդկանց շարքն անցնել», ունևոր դառնալ: Ահա հենց այդ մանր սեփականությունն էլ գյուղացիությանը միջանկյալ շերտ է դարձնում պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև: Պրոլետարիատին ամենից մոտ է չքավորների շերտը—դա գյուղում պրոլետարիատի ամենահուսալի **դաշնակիցն** է: Մյուս կողմից՝ կուլակությունը պրոլետարական հեղափոխության **թշնամին** է: Իսկ միջակը **տատանվում** է նրանց միջև: Նա հեղափոխության սկզբին՝ ընդհանրապես ու ամբողջությամբ առած՝ պաշտպանում է բանվորներին բուրժուազիայի դեմ, բայց յերբեմն էլ

թեքվում է բուրժուազիայի կողմը պրոլետարիատի դեմ։ Յեվ միայն այն բանից հետո, յերբ բանվոր դասակարգը հաղթում է և գործով ցույց տալիս մանր գյուղացուն, թե ինչումն են պրոլետարական իշխանության առավելությունները, միայն դրանից հետո է, որ միջակը դառնում է բանվոր դասակարգի **հաստատուն դաշնակիցը**։

Գյուղացիությունը փոշիացած է և անկազմակերպ։ Ամեն մեկն աշխատում է իր միանձնյա տնտեսության մեջ ինքն իր համար, առանց սերտ աշխատակցության ուրիշների հետ։ Գյուղացիությունը ցրված է հսկայական տարածությունների վրա։ Կապիտալիզմը գյուղից բոլոր հյութերը ծծելով՝ նրան թողնում է հետամնացության, տգիտության և լքման մեջ։ Այս բոլոր հանգամանքներն էլ հասցնում են այն բանին, որ գյուղացիությունը չի կարող ինքնուրույն պայքար մղել ազատագրության համար։ Նա չի կարող կառավարվել առանց ամուր և հուսալի ղեկավարի։ Աշխատավոր գյուղացիության այդպիսի ղեկավարը կարող է լինել միայն **պրոլետարիատը**։

Մեր կուսակցության բանվորական կորիզը

Ահա թե ինչու մեր կուսակցությունը, որ գլխավորում է կոմմունիզմի համար մղվող պայքարը, հանդիսանում է պրոլետարիատի կուսակցություն, **բանվորական** կուսակցություն։ Այդ պատճառով էլ կուսակցության հիմնական ղեկավար **կորիզը** կազմված է բանվորներից։ Նրանց միջոցով կուսակցությունն ամուր կապ է պահում իր դասակարգի հետ և ղեկավարում է նրան։ Բանվորների գերակշռությունը կուսակցության մեջ դրա հետ միասին ապահովում է ամբողջ կուսակցության **պրոլետարական** ճիշտ քաղաքականությունը, նաև գյուղացիական մասսաների ճիշտ ղեկավարությունը։

Հատկապես ակնառու աչքի է ընկնում մեր կուսակցության բանվորական կորիզի առանձին նշանակությունը նրա ծանր ցնցումների, տատանումների և ներքին վեճերի բոպեներին։

Հիշենք, օրինակ, 1923 թ. վերջին և 1924 թ. սկզբին կուսակցության մեջ յեղած դիսկուսիան։ Այն ժամանակ ը. ը. Տրոցկին և ուրիշները փորձում եյին ապացուցել, որ կուսակցական մասսայի տրամադրությունների մասին հարկավոր է դատել այն բանի համաձայն, թե ինչպես է իրեն պահում կուսակցական սովորող յերիտասարդությունը։ Նրանք ասում եյին, որ հենց սովորող յերիտասարդությունը, նրանց կարծիքով, իբրև ՀամԿԿ (բ) ամենազգայուն մասը, արտահայտում է բանվոր դասակարգի և ամբողջ կուսակցական մասսայի տրամադրությունը, և նա պետք է գլխավոր դերը խաղա կուսակցության մեջ։ Արդյոք ճիշտ է այս։ Իհարկե, ոչ։ Բանվորների (ֆաբրիկա-գործարանային) բջիջների ահագին մեծամասնությունն ոպպոզիցիայի հայացքների դեմ գնաց։ Այդ էլ կուսակցության իսկական ձայնն եր, նրա

լավագույն անդամների ձայնը, նրա բանվորական կորիզի ձայնը։ Յեվ կուսակցության XIII համագումարը (1924 թ. մայիսին) մատնանշեց, որ «կուսակցությունը պետք է համալրվի ըստ իր հիմնական բանվորական միջուկի»։

Ով ամենահաստատուն դիմադրություն ցույց տվեց ոպպոզիցիոն բլոկին 1926 թ. վերջին դիսկուսիայում։ Կուսակցության **Ֆաբրիկա-գործարանային բջիջները**։ Կուսակցությունը նրանցից է քաղում իր ուժը, նրանց վրա է հենվում առաջին հերթին, նրանց ձայնին է ունկնդրում ամենից առաջ։

Գյուղացիները յեվ կուսակցությունը

Սակայն բոլորին հայտնի է, որ մենակ բանվորները չեն, որ մտնում են մեր կուսակցություն, կուսակցություն մտնում են նաև գյուղացիները, ծառայողները և ինտելլիգենցիան։ Արդյոք այս հակասում է այն բանին, որ մեր կուսակցությունը **բանվորական** կուսակցություն է։ Ոչ, ամենևին չի հակասում։

Համ. ԿԿ (բ) սոցիալիզմ է կառուցում ծանր պայմաններում, մի յերկրում, ուր գերակշռում է մանր ցաք ու ցրիվ գյուղացիությունը։ Գյուղացիությունը կազմում է մեր յերկրի աշխատավոր բնակչության ահագին մեծամասնությունը։ Կուսակցության մեջ չունենալ գյուղացիության լավագույն ներկայացուցիչներին, կապ չունենալ գյուղացիության հետ — այդ կընշանակեր առաջուց անհաջողության մատնել սոցիալիզմի համար մղվող ամբողջ պայքարը։ Մենակ բանվորների ուժերով անհնար է սոցիալիստական ուղիի վրա դնել մեր հետամնաց ու քիչ կուլտուրական յերկիրը։ Հարկավոր է, որպեսզի գյուղացիության հիմնական մասսան էլ — չքավորն ու միջակը — մասնակցի նոր կյանքի շինարարությանը բանվոր դասակարգի ղեկավարությամբ։ Ահա ինչու կուսակցությունն իր շարքերն է գրավում նաև գյուղացիներին։ Մեր կուսակցություն ընդունվում են այն չքավոր ու միջակ գյուղացիները, որոնք յուրացրել են բանվոր դասակարգի հայացքները։ Միայն այն գյուղացիները կարող են պրոլետարական կուսակցության անդամ լինել, որոնք հասկացել են, թե մանր փոշիացած տնտեսությունն արգելակում է սոցիալիզմի շինարարության, թե գյուղացու համար յելքը սոցիալիստական, արտելային տնտեսությունն է, թե սոցիալիզմի համար մղվող պայքարը ոչ միայն բանվորների գործն է, այլև գյուղացիների իրենց։

Համ. ԿԿ (բ), հաշվի առնելով գյուղացիության դասակարգային առանձնահատկությունները, գյուղացիների վերաբերմամբ ավելի խիստ ընտրանք է կատարում կուսակցություն մտնելիս, քան այդ անում է բանվորների վերաբերմամբ։ Գյուղացիներ կուսակցության մեջ նշանակալի չափով քիչ կան, քան բանվորներ։ (Տես դիագրամմա № 1, եջ 34)։

Ինտելլիգենցիան յեվ կուսակցությունը

Կուսակցությունն էլ ավելի խիստ ընտրանք է կատարում իր շարքերը մտնել ցանկացող ինտելլիգենտների նկատմամբ: Այս բացատրվում է այն բանով, որ ինտելլիգենցիան կապիտալիզմի ժամանակ հազարավոր թելերով կապված էր բուրժուազիայի հետ: Նա սպասարկում էր բուրժուազիային և նրանից վարձատրություն ստանում: Կուսակցություն մտնող ինտելլիգենտի նկատմամբ հարկավոր է լուրջ ստուգում, թե արդյոք իսկապես պատրաստ է նա իր բոլոր ուժերը տալու բանվոր դասակարգի գործին: Յեվ կուսակցությունը խիստ ընտրանքով ընդունում է իր կազմի մեջ ինտելլիգենցիայի լավագույն ներկայացուցիչներին, վորոնք բոլորովին ամեն տեսակ

Դիագրամմա № 1. Ինչպես է աճում Համ. ԿԿ (բ) անդամների և թեկնածուների թիվը.

կապ խզել են բուրժուական և մանր-բուրժուական հայացքների հետ, ամբողջովին ընդունում են պրոլետարիատի ծրագիրը և գործով ապացուցում են իրենց նվիրվածությունը կուսակցության գործին: Հարկավոր է հիշել, վոր միջազգային պրոլետարիատի առաջնորդներն էլ Մարքսն ու Լենինը—ինտելլիգենցիայի միջավայրից են դուրս յեկել: Ծագումով պրոլետարներ չլինելով, նրանք իրենց ամբողջ կյանքով ու աշխատանքով **պրոլետարական** հաստատակամության, անձնուրացության և հավատարմության օրինակ ցույց տվեցին աշխատավորների ազատագրության գործին:

Վոչ-պրոլետարական տարրերի հոսանքի կանոնավորումը կուսակցության մեջ (կանոնադրության § 2):

Պետությունը կառավարող մեր կուսակցության մեջ, հատկապես նրա հաջողությունների կապակցությամբ և ԽՍՀՄ զորության ամրացման հետ, իհարկե, մեծ քանակությամբ փորձում են թափանցել **պրոլետարիատին խորթ տարրեր**: Այս պատճառով կուսակցությունը ձգտում է կանոնավորել (լավացնել, ջոկել) իր սոցիալական կազմն այնպես, վորպեսզի **մեծամասնությունը** նրա մեջ բանվորներ լինեն: Կուսակցության մեջ բանվորների գերակշռությունը բնակչության վոչ պրոլետարական շերտերից դուրս յեկածների (գյուղացիներ և հատկապես մանր-բուրժուական ինտելլիգենցիա, ծառայողներ) վերաբերմամբ պահպանելու այս ձգտումն արտահայտված է կանոնադրության § 2, վորի համաձայն կուսակցության մեջ բոլոր մտնողները յերեք կարգի յեն բաժանվում.

1. Բանվորներ, բանվորներից և գյուղացիներից յելած կարմիր բանակայիններ և բատրակներ:

2. Գյուղացիներ (բացի կարմիր բանակայիններից), ուրիշի աշխատանքը չշահագործող տնայնագործներ:

3. Մյուսները (ծառայողներ և այլք):

Ուղղակի արդյունաբերական բանվորին (I կարգի 1 խմբակ) կուսակցությունն անդամ է ընդունում առանց հատուկ ձևականությունների: Յեթե այդպիսի բանվորը գիտակից է, հասկանում է դիսցիպլինի անհրաժեշտությունը կուսակցության մեջ, ապա բնական է, վոր նա ներկայացնի միամյա ստաժ ունեցող կուսակցության անդամների յերկու հանձնարարական և նա կարող է ընդունվել կուսակցության մեջ:

Վոչ-արդյունաբերական բանվորները, բանվորներից և գյուղացիներից յելած կարմիր բանակայինները և բատրակները ներկայացնում են յերկու հանձնարարական յերկամյա ստաժով (I կարգ. 2 խմբակ):

Գյուղացիները և տնայնագործները պատկանում են յերկրորդ կատեգորիային, և կուսակցություն մտնելու համար նրանցից պահանջվում է ներկայացնել կուսակցության յերկամյա ստաժ ունեցող անդամների յ ե ր ե ք հանձնարարական:

Ծառայողները, ինտելլիգենտները յերրորդ կարգում են դրված և կուսակցության մեջ մտնելու համար նրանցից պահանջվում է հնգամյա **ստաժ ունեցող կուսակցականների հինգ հանձնարարական:**

Հեշտացնելով բանվորների մուտքն իր շարքերը, կուսակցությունը, սակայն, չի մոռանում, վոր ամենևին էլ դեռ բոլոր բանվորներն այնքան գիտակից չեն, վոր կարողանան ամբողջ մասսայով կուսակցու-

թյան մեջ լցվել։ Դեռ չի հասել այն ժամանակը, յերբ վոչնչանում ե կուսակցության և դասակարգի միջև յեղած սահմանը։ Բանվոր դասակարգի մեջ դեռ շատ կան այնպիսի առանձին խմբակներ, վորոնք բավականաչափ չեն հասունացել, վորպեսզի կուսակցության մեջ մտնեն։ Բանվոր դասակարգի մեջ կան և այնպիսի շերտեր, վորոնք բոլորովին նոր են յեկել գյուղից, նրանք դեռ չեն անցել դասակարգային դաստիարակության դպրոցը, դեռ չեն յեփվել գործարանային կաթսայում։ Ահա ինչու կուսակցությունն զգուշությամբ ե վերաբերվում նույնիսկ բանվորների կուսակցության մեջ մտնելուն։ Ոպպոզիցիան XIV համագումարում առաջարկ մտցրեց, վոր մոտակա տարվա ընթացքում կուսակցության մեջ գրավենք **մի քանի միլիոն** բանվոր։ Յեթե մենք այս հարցում ոպպոզիցիայի յետևից գնայինք, մեր կուսակցությունը կփքվեր անկայուն տարրերի հաշվին—նա չեր կարողանա միանգամից մարսել ու դաստիարակել նոր կուսակցականների ահագին մասսան։

Ինչու յե սահմանվում թեկնածուական ստաժը

Մեր կուսակցության կանոնադրության § 2 սկզբում ասվում ե, վոր **կուսակցության մեջ ընդունվելը կատարվում ե թեկնածուական ստաժն անցնելուց յեվ քաղաքական գրագիտության հիմքերը յուրացնելուց հետո։**

Կուսակցության անդամ լինելու համար, նախ պետք ե վորոշ փորձից անցնել—պետք ե վորոշ ժամանակ Համ. ԿԿ (բ) անդամության **թեկնածու** լինել։ Այս դատարկ ձևականություն չե։ Կուսակցության մեջ ընդունելու այլ յեղանակի ժամանակ, առանց թեկնածուական ստաժի, կարող ե կրկնակի սխալ ստացվել։ Առաջին՝ բջիջի բյուրոն, ընդհանուր ժողովն իսկ, կամ նույնիսկ կուսակցական կոմիտեն կարող են սխալվել այն անձի վերաբերմամբ, վորն ընդունվում ե կուսակցության մեջ։ Յերկրորդ՝ կարող ե պատահել, վոր մեկը հայտարարություն ե տալիս կուսակցության մեջ ընդունվելու մասին, լավ խորամուխ չլինելով, թե ինչու յե մտնում, կամ թե կուսակցության մեջ մտնում ե հենց ուղղակի շահադիտական նպատակներով։

Թեկնածուական ստաժի ժամանակաընթացքում կուսակցությունն ստուգում ե Համ. ԿԿ. (բ) ապագա անդամին—նրա կարգապահությունը, հեղափոխական կռվի պատրաստականությունը, Բացի սրանից թեկնածուական ստաժի ժամանակաընթացքում թեկնածուն պետք ե թեկուզ համառոտ ուսումնասիրե իր կուսակցության պատմությունը, հասկանա և հաստատ յուրացնի կուսակցության նպատակը և խնդիրները, ծանոթանա կանոնադրությանը, Թափանցի խորհրդային պետական ու տնտեսական շինարարության եյությունը, շինարարության, վորի ղեկավարն ե կուսակցությունը։ Նա պետք ե հասկանա,

թե ինչպես ե կազմված մեր բանվորագյուղացիական պետությունը, ինչպես ե աշխատում նա, ինչպես ե կառուցվում նոր սոցիալիստական տնտեսությունը, ինչ ե արվում և ինչ պետք ե անել դրա համար արդյունաբերության մեջ, գյուղատնտեսության մեջ և այլն։

Համ. ԼԿՅԵՄ կուսակցությունը շարունակ նոր ու նոր ուժեր քաղելով բանվոր դասակարգի շարքերից, իրեն հաշիվ ե տալիս այն բանում, վոր ԽՍՀՄ սոցիալիզմի և կապիտալիզմի միջև մղվող կռիվը միջազգային բուրժուազիայի դեմ մղվող կռիվը դեռ շատ տարիներ, գուցե և տասնամյակներ, կպահանջի։ Սոցիալիստական հասարակությունը վերջնականապես կկառուցվի վոչ միայն այժմյան հասակավոր բանվորների ձեռքով, այլև հասունացող յերիտասարդության ձեռքով։

Ահա ինչու անհրաժեշտ ե, վոր կուսակցությունը կոմունիստական վոգով դաստիարակի հասունացող յերիտասարդությանը, ահա ինչու կուսակցությունը կոմսոմոլում տեսնում ե իր ռեզերվը (նոր ուժերի պահեստը) և իր փոխը (смена)։

Ներկայումս կոմսոմոլն ընդգրկում ե յերկու միլիոնից ավելի քաղաքային և գյուղական յերիտասարդություն։ Նրա ամենամեծ խումբը կազմում են գյուղացիները (47%), իսկ բանվորները կազմում են 37%։ Սրանից են բղխում կոմսոմոլի ղեկավարության դժվարությունները։ Պետք ե նրան դաստիարակել պրոլետարական, կոմունիստական վոգով հատկապես այն պատճառով, նա հանդիսանում ե մեզ գյուղացիության ամենալայն շերտերի հետ կապող կազմակերպությունը։

Այս պատճառով չափազանց կարևոր ե ամրացնել ու մեծացնել կոմսոմոլի բանվորական կորիզը։ Ինչպես կուսակցության իրեն առանցքը հանդիսանում են բանվորները, այնպես ել կոմսոմոլի մեջ առաջնակարգ նշանակություն պետք ե ունենա նրա բանվորական խումբը։ Ի հարկե այս չի նշանակում, վոր կոմսոմոլը պետք ե իր կազմը այնպես կանոնավորի, ինչպես կուսակցությունը, այսինքն ձգտի վորպեսզի իր մեջ մեծամասնությունը բանվորներ լինեն։ Զի՞ վոր կոմյերիտմիությունը պրոլետարական պետություն չի ղեկավարում, ինչպես այդ անում ե կուսակցությունը։ Կոմյերիտմիությունն ամենից առաջ դաստիարակչական կազմակերպություն ե։ Այդ կազմակերպության ոգնությամբ մեր կուսակցությունը ձգտում ե վերադաստիարակել չքավոր-միջակ յերիտասարդության ահագին մասսան և նրան դարձնել սոցիալիզմի համար մղվող կռվի գիտակից և ակտիվ մասնակից։ Ահա թե ինչու մեր յերկրում, վորտեղ բնակչության մեծամասնությունը գյուղացիությունն ե, կոմսոմոլում այժմ մեծամասնությունն ե հետագայում կլինի գյուղական յերիտասարդությունը։ Բայց կոմսոմոլը պետք ե այնպես աշխատի, վորպեսզի նրա մեջ ղեկավարող միշտ բանվորական կորիզը լինի։

Կոմսոմոլիստներից ամուր բոլշևիկ լենինյաններ դաստիարակելը ավելի դժվար է այն պատճառով, վոր կոմսոմոլի անդամների մեծամասնությունը չի կրել կապիտալիստական շահագործության ծանրությունը: Հաճախ կոմսոմոլիստը բոլորովին ծանոթ չէ կապիտալիստական կարգին ու նույնիսկ կոմսոմոլիստներից շատերը գիտակցաբար չեն ապրել քաղաքացիական պատերազմի փորձը: Այս պատճառով պետք է ամեն կերպ ամրացնել ու լայնացնել կուսակցական կորիզի ազդեցությունը կոմսոմոլում և ամենասերտ կապ պահպանել Համ. ԼԿՅԵՄ ու Համ. ԿԿ (բ) միջև: Համ. ԿԿ. (բ) կոմսոմոլիստ-կուսակցականների միջոցով իրականացնում է իր ազդեցությունը կոմսոմոլի վրա, ղեկավարում է նրան:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ սխալ է մեր կուսակցությունը բանվորա-գյուղացիական կուսակցություն անվանելը:
2. Ինչո՞ւ Համ. ԿԿ (բ) հարկավոր է ամուր պրոլետարական կորիզ:

2. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՆՈՒՄ ԻՐ ՅԵՏԵՎԻՑ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Պրոլետարիատը — բոլոր աշխատավորների ազատարար

Մենք պարզեցինք, վոր Համ. ԿԿ (բ) բանվորական կուսակցություն է: Նա ամենաառաջավոր դասակարգի — պրոլետարիատի առաջավոր ջոկատն է: Բայց դրա հետ միաժամանակ Համ. ԿԿ (բ) հանդիսանում է բոլոր աշխատավորների առաջնորդը, վոչ միայն բանվորների, այլև աշխատավոր գյուղացիների, տնայնագործների, արհեստավորների և այլն:

Կարող են հարցնել — իսկ ինչպես կարող է լինել այդ: Չէ վոր ամեն մի դասակարգ ունի իր շահերը, վոր տարբեր են մյուս դասակարգերի շահերից: Իսկ ինչպես է, վոր բանվորական կուսակցությունը բանվոր դասակարգի շահերը պաշտպանելով, միևնույն ժամանակ կարող է աշխատավորների՝ վոչ-պրոլետարական շերտերի, ինչպես որինակ գյուղացիության, առաջնորդը լինել:

Սրա լավագույն պատասխանը կարող է լինել **Հոկտեմբերյան հեղափոխության որինակը**: Մեր կուսակցությունն այդ հեղափոխության գլուխ էր անցած, նրա առաջնագույն ուժը պրոլետարիատն էր: Կարող էր արդյոք բանվոր դասակարգը խլել կապիտալիստների ձեռքից իշխանությունը, ֆաբրիկաներն ու գործարանները և տապալել նրանց իշխանությունը, դրա հետ միասին չտապալելով նաև կալվածատերերի տիրապետությունը, նրանցից չխլելով հողը՝ գյուղացիներին տալու համար: Իհարկե, վոչ: Հոկտեմբերը հարվածեց միաժա-

մանակ թե կապիտալիստական բուրժուազիային և թե կալվածատերերին: Կապիտալի դեմ ապստամբված բանվորների յետևից գնաց կալվածատերերի դեմ վոտքի յելած բազմամիլիոն գյուղը: Յեվ հոկտեմբերի հաղթանակից հետո խորհրդային իշխանության առաջին դեկրետներից մեկն ամբողջ հողը գյուղացիներին տալու դեկրետն էր:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր բանվոր դասակարգն իրեն կապիտալի ճնշումից ազատելով, ազատում է նաև բոլոր աշխատավորներին: Բանվոր դասակարգը թշնամի է ամեն տեսակ շահագործման, ամեն տեսակ ճնշման, այս պատճառով էլ նա ղեկավարում է բոլոր շահագործվողներին:

Բայց ահա կալվածատերերն ու կապիտալիստները տապալված են: Հարկավոր է խորտակված բուրժուա-կալվածատիրական կարգերի փոխարեն նոր հասարակություն կառուցել: Արդյոք այստեղ էլ համամիտում են բանվորների ու չքավոր և միջակ գյուղացիների ամենակարևոր, վերջնական շահերը: Արդյոք այստեղ էլ կարող են բանվոր դասակարգը և նրա կուսակցությունը բոլոր աշխատավորների գլուխ անցնել: Կարող են և պետք է անցնեն ու ահա թե ինչու:

Յերբ գյուղացիները գրավեցին կալվածատիրական հողը, նրանք վոչ մի կոմմունիզմի մասին չեյին էլ յերազում: Դեռ ավելին — բացի չքավորներից, գյուղացիներից շատ քչերն եյին, վոր չեյին զգուշանում «կոմմունից»: Յեվ այնուամենայնիվ, չնայած սրան, հենց կոմմունիստների կուսակցությունն է պաշտպանում չքավոր գյուղացիների և միջակների ահագին մեծամասնության իսկական կենսական շահերը: Վորպեսզի հասկանանք, թե բանն ինչումն է, հարկավոր է քննել, թե ինչ են տալիս գյուղացուն կապիտալիստները և ինչ է տալիս նրան բանվոր դասակարգը:

Ի՞նչ է տեղի ունենում կապիտալիզմի ժամանակ: Բոլոր յերկրների և ժողովրդների փորձը, դրա թվում նաև մինչհեղափոխական Ռուսաստանինը, ցույց է տալիս, վոր կապիտալի տիրապետության ժամանակ գյուղը շերտավորվում է, զանազան մասերի յե բաժանվում: Մեկ կողմից՝ գտնվում է գյուղական բուրժուազիան, մյուս կողմից՝ գտնվում են չքավորները և պրոլետարները: Արդյոք ոգտակար է այդպիսի կարգը գյուղացիների մեծամասնության համար: Իհարկե, վոչ, վորովհետև միջակներից միայն անհատներին է հաջողվում ամուր կուլակային տնտեսության հասնել, իսկ գյուղացիների ամբողջ մասսան քայքայվում է, պրոլետարանում (դառնում է վարձու բանվոր): Կապիտալիզմը գյուղի ահագին մեծամասնության համար բերում է քայքայում, աղքատություն, հավիտենական կիսաքաղց գոյություն: Այլ է դրությունը պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ: Պրոլետարիատը սոցիալիզմ կառուցելով, չի կարող այն

կառուցել միայն քաղաքում: Սոցիալիզմն այնպիսի կարգ է, վորի ժամանակ քաղաքն ու գյուղը միանում են և կազմում մեկ ամբողջություն, միասնական հասարակական տնտեսություն: Իսկ գյուղը կարելի չէ սոցիալիզմի հասցնել միայն այն ժամանակ, յերբ ամբողջ **գյուղացիական մասսան** կբարձրացնի իր տնտեսությունը, կլավացնի տնտեսություն վարելու յեղանակները, ավելի կուլտուրական կդառնա: Ահա ինչու բանվոր դասակարգը և նրա կուսակցությունը վարում են աշխատավոր գյուղացիության հետ կապ հաստատելու քաղաքականություն և ջանում են բարձրացնել գյուղացիական տնտեսությունը, ոգնել չքավորին, թեթևացնել միջակի դրությունը: Ահա ինչու գյուղացիությունն էլ շահագրգռված է վոչ թե կապիտալիզմի գոյությամբ, այլ տապալումով և այն սոցիալիստական կարգով փոխարինելով: Համ. Կ. Կ. (բ) պրոլետարիատի խնդիրներն իրականացնելով, դրա հետ միասին պաշտպանում է նաև գյուղացիների ահագին մեծամասնության իսկական, արմատական շահերը: Գյուղացիությունը դեռ այս լիովին չի հասկանում, վորովհետև մանր, ամենօրյա շահերը նրանից ծածկում են այն մեծ ոգուտները, վոր սոցիալիզմը բերում է մարդկությանը: Բայց ամեն մի գիտակից կուսակցականի համար պետք է պարզ լինի, վոր գյուղացիությունն աստիճանաբար այս բոլորը կհասկանա ու կյուրացնի պրոլետարիատի ու նրա կուսակցության ղեկավարությամբ, վորովհետև սոցիալիզմի շինարարությունը վոչ միայն բանվորների, այլև գյուղացիական չքավորների ու միջակների հարազատ գործն է:

Իսկ ինչ է հետևում այստեղից: Այն, վոր բոլոր աշխատավոր մասսաները միայն բանվոր դասակարգի ու նրա կուսակցության ղեկավարությամբ կարող են հասնել իրենց վերջնական ազատագրությանը: Այս նշանակում է նաև, վոր պրոլետարիատի դիկտատուրան բոլոր աշխատավորների համար միակ ուղին է նոր, լավագույն կյանքի համար մղվող պայքարում:

Պրոլետարիատի դիկտատուրա նշանակում է, թե յերկրում իշխանությունը պատկանում է **մեկ** դասակարգի—պրոլետարիատին: Բայց պրոլետարիատն այդ իշխանությունը կոգտագործի վոչ թե նրա համար, վոր բուրժուազիայի նման շահագործի մյուս դասակարգերին, այլ նրա համար, վոր բոլորովին վոչնչացնի հասարակության բաժանումը դասակարգերի, վոչնչացնի մարդու ձեռքով մարդուն շահագործելու բոլոր տեսակները:

Կուսակցությունը — մասսաների առաջնորդ և ուսուցիչ

Մենք արդեն առաջին գլուխում պարզեցինք, վոր կուսակցությունը ղեկավարում է իր սեփական դասակարգի—պրոլետարիատի մասսաները: Բայց դրա հետ միասին մենք տեսանք, վոր պրոլետարիատն իր յետևից տանում է աշխատավորների վոչ-պրոլետարական մասսաները:

Այս նշանակում է, վոր մեր յերկրի ամբողջ բազմամիլիոն աշխատավոր բնակչությունը՝ հանձինս պրոլետարական կուսակցության՝ հուսալի առաջնորդ ունի: Պրոլետարիատի կուսակցությունը—կոմմունիստական կուսակցությունը—մտածում է պայքարի ու շինարարության խնդիրների վրա, մտածում է ԽՍՀՄ բոլոր աշխատավորներին այդ խնդիրների լուծման ուղիների վրա: Վորպեսզի պարզենք, թե ինչպես է ղեկավարում կուսակցությունը բանվոր դասակարգին, մի որինակ վերցնենք: Մեր առաջ արդեն վաղուց է կանգնած մեր սոցիալիստական արդյունաբերության զարգացման խնդիրը: Կուսակցությունն ուսումնասիրում է արդյունաբերության դրությունը և ասում է՝ հարկավոր է վերակառուցել այն, վերասարքավորել, ավելի լավ կազմակերպել աշխատանքը, եժանացնել պրոդուկցիան (արտադրանքը), սկսել նոր ձեռնարկություններ շինել, ապահովել խորհրդային յերկրում սեփական մեքենաշինությունը և այլն: Այս խնդիրները կարող են լուծվել միայն **բոլոր բանվորների** ակտիվ մասնակցությամբ: Բայց կուսակցությունը գլխավորում է ուղղություն է տալիս այդ ամբողջ աշխատանքին—նա առաջ է քաշում խնդիրները՝ նա այդ պարզաբանում է բոլոր բանվորներին, նա բոլոր բանվորներին քաշում է այդ խնդիրների իրականացման աշխատանքի մեջ:

Բայց յե՞րբ կարող է կուսակցությունը հաջող կերպով ղեկավարել իր դասակարգը: Միայն այն ժամանակ, յերբ կուսակցությունն իր բոլոր արմատներով **կապված է բանվորների մասսայի հետ**: Կուսակցությունը վոչ մի դեպքում չպետք է ինքն իր մեջ փակվի, մասսաներից կտրվի, չպետք է մոռանա, վոր նա դասակարգի մի մասն է: Կուսակցության ղեկավարությունը կարող է հաջող լինել միայն այն ժամանակ, յերբ մասսաները **վստահում են** կուսակցությանը, վստահում են նրա ղեկավարությանը, նրան համարում են **իրենց** կուսակցությունը: Ահա թե ինչու կուսակցության ղեկավարությունը բանվոր և գյուղացի մասսաների նկատմամբ հնարավոր է վոչ թե **հրամայելու միջոցով**, այլ ամենից առաջ **համոզելու** միջոցով: Վորպեսզի մասսաներից չկտրվի, կուսակցությունը պետք է վոչ միայն սովորեցնի մասսաներին, այլև սովորի նրանցից, մասսաների փորձի վրա ստուգի իր քաղաքականության ճշտությունը: Կուսակցությունը պետք է զգայուն կերպով ունկնդրի և ուշադրությամբ հաշվառի մասսաների պահանջները և կարիքները: Կուսակցությունը պետք է իմանա, թե ինչ յեն պահանջում նրանից բանվորները, վորոնք են նրա կարիքները, ինչպես կարելի է բավարարել այն:

Ահա այժմ բանվորական կյանքի ամենակարևոր հարցերն են՝ բնակարանային կարիքը, գործազրկությունը, թանկությունը: Մեր կուսակցությունն էլ ամեն ջանք գործադրում է, վորպեսզի զարգացնի բնակարանային շինարարությունը, զարգացնի արդյունաբերությունը

մեղմացնի գործազրկությունը, ցածացնի շուկայի գները: Կուսակցության ամեն մի բջիջ ամեն մի ձեռնարկության մեջ պետք է շարունակ հիշե, թե ինչ կարիք ունեն բանվորները, ինչից են դժգոհ, և ջանա մեղմացնել այդ կարիքը:

Միևնույնը կարելի չէ ասել նաև կուսակցության ղեկավարության մասին **գյուղացիական մասսայի** նկատմամբ: Լենինը և նրա կուսակցությունը միշտ զգայուն կերպով ունկնդրել են չքավորի ու միջակի ձայնը: 1918 թ. Լենինը պնդեց, վորպեսզի Գերմանիայի հետ հաշտություն կնքենք, չնայած վոր այն շատ ծանր եր մեզ համար, բայց անհրաժեշտ եր այն պատճառով, վոր գյուղացիությունն իմպերիալիստական պատերազմի շնորհիվ հյուծված եր, վերջնականապես քայքայված: Մեր կուսակցությունը՝ հաշտություն կնքելով՝ ուզում եր հողագործին վերադարձնել իր արորին և դադար ապահովել ամբողջ յերկրի համար: Կամ մի ուրիշ օրինակ,—Լենինի համար 1921 թ. սկզբին՝ գյուղիկյանքի մի ամբողջ շարք փաստերի հիման վրա՝ պարզվեց, վոր ռազմական կոմմունիզմի քաղաքականությունից պետք է անցնել նոր տնտեսական քաղաքականության: Այդ անցումը, ինչպես հայտնի յե ամեն մի բանվորի ու գյուղացու, մեր կուսակցությանը հնարավորություն ավեց ամրացնել բանվոր դասակարգի միությունը գյուղացիության հետ և ծավալել մեր տնտեսությունը: Կամ, օրինակ, 1926 թ. խորհրդային կառավարության վորոշումները գյուղատնտեսական հարկի մասին ընդունված են գյուղացիների ամենակենդանի մասնակցությամբ և նրանց կարիքների հաշվառման հիման վրա,—հարկը համաչափ ընդգրկելով ամենից ուժեղ տնտեսությունները, միևնույն ժամանակ հարկ վճարելուց ազատում են ծխերի մի նշանակալի մասը—ամենաաղքատ գյուղացիական տնտեսությունները:

Հաշվառելով մասսաների պահանջները, կուսակցությունը հաստատուն կերպով ղեկավարում է նրանց

Բայց մասսաների ձայնն ունկնդրել—այդ բոլորովին չի նշանակում **հետ գալ մասսայի պոչից**, զիջող լինել բանվորների կամ գյուղացիների այս կամ այն խմբակի ամեն տեսակ, նույնիսկ անմիտ ու անհեթեթ, պահանջի հանդեպ: Չե՞ վոր բոլոր բանվորները և գյուղացիները շարունակ չե, վոր ճիշտ են հասկանում իրենց խնդիրները: Չե՞ վոր աշխատավորների այս կամ այն խմբակի շահերն ամենևին էլ միշտ չեն զուգադիպում պրոլետարական պետության ընդհանուր շահերին, սոցիալիզմի շինարարության շահերին:

Վերցնենք թեկուզ **աշխատավարձի** հարցը: Յեթե լսենք վորոշ, ամենահետամնաց, բանվորների, ապա հարկավոր կլիներ միանգամից աշխատավարձը բարձրացնել յերկու անգամ, գուցե և ավելի: Իսկ ինչ դուրս կը գար դրանից: Դրանից վոչ մի լավ բան չեր ստացվի: Բո-

լոր ապրանքները կը թանկանային, ռուբլին ցած կը գլորվեր և կարժեզրկվեր, աշխատավարձն իրոք չեր մեծանա, իսկ գյուղացիության հետ կապ ստեղծելու փոխարեն, անջատում կստացվեր:

Մեր կուսակցության ուղին մասսաների պոչից քաշ գալը չէ, իր քաղաքականությունը բանվորների հետամնաց մասի մակարդակին հարմարեցնելը չէ, այլ ընդհակառակը, մասսաներին ղեկավարելը, նրանց գիտակցությունը մինչև նրանց առաջավոր ջոկատի գիտակցականության մակարդակը բարձրացնելը:

Կոմֆրակցիան անկուսակցական օրգաններում

Վորպեսզի ղեկավարեն աշխատանքի բոլոր ճյուղերը և բանվորների ու գյուղացիների բոլոր մասսայական կազմակերպությունները, կոմմունիստները պետք է գործեն կազմակերպված ու համախմբված: Նրանք պետք է հաստատուն վարեն իրենց գիծը, վոչ մի տատանման չենթարկվելով: Կուսակցությունը կուսակցական գիծն անց է կացնում այն կոմմունիստների միջոցով, վորոնք աշխատում են այս կամ այն կազմակերպության մեջ: Ամենուրեք—և՛ խորհրդում, և՛ կոոպերացիայում, և՛ գործարանի վարչության մեջ, և՛ փոխադարձ օգնության կոմիտեյում—աշխատող կոմմունիստներն իրենց **կոմմունիստական ֆրակցիան** են ստեղծում: Այդ ֆրակցիաները կազմվում են նաև այն բոլոր համագումարներում, կոնֆերենցիաներում, խորհրդակցություններում, վորոնց կոմմունիստները մասնակցում են անկուսակցականների հետ միասին: Ֆրակցիան առաջուց քննում է ամենակարևոր հարցերը և ջանում է իր վճիռները կենսագործել անկուսակցականների հետ միասին: Ամեն մի կոմմունիստ պարտավոր է պաշտպանել և ամենուրեք անցկացնել կուսակցական ֆրակցիայի վճիռը:

Յեթե կուսակցությունը նախորոք քննության չառներ որակարգի հարցերը, յեթե նա ֆրակցիայի նիստում այդ հարցերի առթիվ վորոշ վճիռ չընդուներ, ապա ժողովում, համագումարում, կոնֆերենցիայում և այլն կոմմունիստները հանդես կգային, ինչպես ասում են, «մեկը մեկից բեխաբար»: Կոմմունիստների այսպիսի պառակտումը կարող եր այն բանին հասցնել, վոր անկուսակցականները կդադարեին կուսակցության մեջ իրենց առաջնորդը տեսնելուց: Ընդհակառակը. Համ. ԿԿ (բ) անդամների յելույթների միությունն ու համերաշխությունն ամեն անգամ ընդգծում է, վոր **կուսակցությունը կարողանում է ամուր կերպով ղեկավարել** աշխատավորներին սոցիալիզմի համար մղվող պայքարում:

Այսպիսով կուսակցության ուժը և հեղինակությունը նրա մեջ է, վոր նա ունկնդրելով մասսաների ձայնը, խնամքով կշռադատելով նրանց պահանջները, միևնույն ժամանակ վարում է իր քաղաքակա-

նության ամուր գիծը հոգում ամբողջ բանվոր դասակարգի։ Բայց վերին աստիճանի սխալ կլիներ, յեթե կուսակցությունն ուղղակի իր վճիռներն անկուսակցական մասսայի վզին **փաթաթեր**, չհոգալով այն մասին՝ արդյոք այդ վճիռը **հասկանալի՞** յե անկուսակցականներին, թե՞ վոչ։

Կուսակցությունը ձգտում է այնպես ղեկավարել մասսաներին, վորպեսզի նրանք իրենց **սեփական փորձով** համոզվեն կուսակցական գծի ճշտության մեջ։ Այսպես, որինակ, կուսակցությունը 1917 թ. բանվորներին առաջնորդեց դեպի իշխանության գրավումը միայն այն ժամանակ, յերբ բանվորների մասսան իր սեփական աչքերով տեսավ, վոր պատերազմից, սովից, քայքայումից և բուրժուական ճնշումից փրկվելու այլ ճանապարհ չկա։ Կուսակցությունը պահանջում է, վորպեսզի ֆրակցիան, կոմբջիջները, կուսակցության առանձին անդամները չբռնադատեն անկուսակցականների կամքը, այլ համոզեն, ապացուցեն նրանց, վոր նրանց շահերին, աշխատավորների շահերին, ծառայում է հենց այն վորոշումը, վոր առաջարկվում է կուսակցության անունից։

Արհմիությունները յեվ խորհուրդները իբրեվ շարժաբեր փոկեր կուսակցությունից դեպի մասսաները

Մենակ կոմկուսակցությունը, վոր կազմում է բանվոր դասակարգի փոքրամասնությունը, բավական չէ մասսաների հաջող ղեկավարության համար։ Կուսակցությունը պետք է հենվի աշխատավորների մի ամբողջ շարք մասսայական կազմակերպությունների վրա, վորպեսզի ավելի սերտ կապվի նրանց հետ։

Այսպիսի համեմատություն ունենք։ Ամեն մի բանվորի հայտնի յե, վոր ամեն մի ֆաբրիկայում քիչ է միայն շարժիչ ունենալը, վորպեսզի դազգահները բանեն։ Շարժիչից դեպի դազգահները հարկավոր են շարժաբեր փոկեր։ Ինչպես հայտնի յե, այդ փոկերը շարժիչի ուժը փոխանցում են ամենատարբեր դազգահների, ինչպես՝ խառատի, ջուլհակի, մանածագործական դազգահներին, տպագրական մեքենային և այլն։ Առանց շարժիչների ու դազգահների այս կապի, առանց շարժաբեր փոկերի, գործարանի կամ ֆաբրիկայի աշխատելն անկարելի յե։

Ահա հենց այդպիսի «շարժաբեր փոկեր» ՀամԿԿ (բ.) «շարժիչից» դեպի մասսաները հանդիսանում են առաջին հերթին **արհմիությունները** ու **խորհուրդները**։

Արհմիությունները համարյա ամբողջապես միացնում են վողջ պրոլետարիատը արտադրական գծով։ Նրանք հանդիսանում են կոմմունիզմի սկզբնական դպրոցը, վորտեղ բանվորները սովորում են վարել արտադրությունը և մեր պետության կառավարման մյուս կողմերը։

Նրանք կապում են դասակարգի ավանգարդը (կուսակցությունը) ամբողջ դասակարգի հետ, պրոլետարական վոգով դաստիարակում են հետամնաց և հենց նոր գործարան յեկած բանվորներին։

Բանվորների, գյուղացիների ու կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդները հանդիսանում են էլ ավելի լայն մասսայական կազմակերպություն, վորը միացնում է քաղաքի ու գյուղի միլիոնավոր աշխատավորներին։ Խորհուրդները հանդիսանում են պետական իշխանության օրգաններ, պրոլետարիատի դիկտատուրայի օրգաններ։ Պրոլետարիատը կուսակցության ղեկավարությամբ խորհուրդների միջոցով իրականացնում է իր ղեկավարությունը ԽՍՀՄ աշխատավորների միլիոնավոր մասսաների նկատմամբ։ Այն մասին, թե ինչպես արհմիությունների ու խորհուրդների միջոցով կուսակցությունը կապվում է մասսաների հետ ու ղեկավարում նրանց, մենք մանրամասն կպատմենք հետևյալ յերկու զրույցում։

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչու մեր կուսակցությունը պրոլետարական կուսակցություն լինելով, ղեկավարում է նաև աշխատավորների վոչ պրոլետարական մասսաները։
2. Ինչ է «պոչիզմը» և ինչումն է նրա վնասը։
3. Ինչումն է ներկուսակցական ֆրակցիայի զանազանությունը Խորհրդի արհմիության և այլն կուսակցական ֆրակցիայից։

ԿՏՈՐՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ—ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ

«Պրոլետարիատի դիկտատուրան, յեթե թարգմանենք այս լատինական, գիտական... արտահայտությունն ավելի հասարակ լեզվի, հա ինչ է նշանակում.—միայն վորոշ դասակարգ, այն է՝ քաղաքային և ընդհանրապես ֆաբրիկա-գործարանային արդյունաբերական բանվորները, ի վիճակի յե ղեկավարելու աշխատավորների ու շահագործվողների ամբողջ մասսան կապիտալի լծի տապալման համար մղվող կռվում, հենց տապալման ընթացքում, հաղթանակը ձեռքում պահելու և ամրապնդելու համար մղվող կռվում, նոր սոցիալիստական հասարակարգ ստեղծելու գործում, դասակարգերի լրիվ վոչնչացման համար մղվող ամբողջ կռվում»։

(Վ. Ի. Լենին. Աշխ. ժող. հ. XVI եջ 248, ռուս. հրատ.)

2. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ — ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

«Խոշոր կապիտալի հաղթանակն արհեստավորի, առևտրականի, գյուղացու քայքայումն է. դա շարունակ մեծացնում է վարձու բանվորների շարքերը: Կապիտալիստական զարգացման ամեն մի քայլի հետ մեծանում է պրոլետարիատի թիվը: Նա նման է բազմագլուխ հիդրա հրեշին.—կտրում ես մեկ գլուխը—աճում է ուրիշ տասը: Երբ բուրժուազիան ճնշում էր բանվորական ապստամբությունը, նա ամրացնում էր կապիտալիստական կարգը: Բայց այդ կապիտալիստական կարգի զարգացումը քայքայում էր տասնյակ հազարավոր, միլիոնավոր մանր տնտեսատերերի և գյուղացիների. այդ զարգացումը նրանց գցում էր կապիտալիստների կրնկի տակ: Դրանով իսկ դա մեծացնում էր պրոլետարների, կապիտալիստական կարգի թշնամիների թիվը: Բայց միայն թվով չէ, որ ուժեղանում է բանվոր դասակարգը: Բացի այդ, նա շարունակ ավելի ու ավելի համախմբվում է: Ինչու: Այն իսկ պատճառով, որ կապիտալիզմի զարգացման հետ աճում են խոշոր գործարանները: Իսկ ամեն մի խոշոր գործարան հավաքում է իր պատերի ներսում հազարավոր բանվորների, երբեմն տասնյակ հազարավոր բանվորների: Այդ բանվորներն աշխատում են կողք-կողքի: Նրանք տեսնում են, թե ինչպես տնտեսատեր կապիտալիստը շահագործում է իրանց: Նրանք տեսնում են, որ բանվորը բանվորի բարեկամն ու ընկերն է: Գործարանի միջոցով միացած պրոլետարներն հենց աշխատանքում ընտելանում են միասին գործել: Նրանց համար ավելի հեշտ է համաձայնության գալ: Ահա թե ինչու կապիտալիզմի զարգացման հետ աճում է բանվոր դասակարգի ոչ միայն թիվը, այլև համախմբվածությունը:

Ինչքան ավելի արագ են աճում խոշոր գործարանները, ինչքան ավելի արագ է զարգանում կապիտալիզմը, այնքան ավելի արագ են քայքայվում արհեստավորները, գյուղի տնայնագործ-գյուղացիները, այնքան ավելի արագ են աճում հրեշավոր բազմամիլիոն քաղաքները: Վերջ ի վերջո համեմատաբար մի փոքրիկ տարածության վրա—խոշոր քաղաքներում—կուտակվում է ժողովրդի հսկայական մասսա, և այդ ամբողջ ժողովրդի մեջ հսկայական մեծամասնությունը կազմում է գործարանային պրոլետարիատը: Նա լցնում է ցեխոտ, մրոտած թաղերը, իսկ ամեն բանի տեր հանդիսացող մի բուռն տնտեսատերերն ապրում են շքեղ տներում: Այդ մի բուռն մարդիկ շարունակ ավելի ու ավելի քչանում են: Բանվորները շարունակ ավելի ու ավելի շատանում են, նրանք շարունակ ավելի ու ավելի սերտ են համախմբվում:

Այսպիսի պայմաններում պայքարի անխուսափելի սրումը պետք

է վերջանա բանվոր դասակարգի հաղթանակով: Վաղ թե ուշ, չնայած բուրժուազիայի բոլոր խարդախություններին, բանվոր դասակարգը կտրուկ կերպով ընդհարվում է բուրժուազիայի հետ, նրան դեն է շպրտում գահից, ավերում է նրա ավազակային պետությունը և կառուցում է իր նոր աշխատանքային, կոմունիստական կարգը: Այսպիսով կապիտալիզմն իր զարգացմամբ անխուսափելիորեն հասցնում պրոլետարիատի կոմունիստական հեղափոխությանը»:

(Բուխարին և Պրեոբրաժենսկի, «Կոմունիզմի Այբուբենը», էջ 41, ռուսերեն):

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ցույց տվեք ձեր ձեռնարկության կյանքից վերցրած փաստերով, թե կուսակցության բջիջն ինչպես է իրականացնում կապը մասսաների հետ և ինչպես է ղեկավարում նրանց:
2. Պարզեցեք այն բջիջի սոցիալական կազմը, որի անդամ եք: Ընդամենը քանի կուսակցության անդամ և թեկնածու կա նրա մեջ և նրանցից քանիսն են բանվոր, ծառայող կամ այլ կատեգորիաների պատկանող:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Պատմեցեք, թե ինչու Համ. ԿԿ (բ.) բանվորական և ոչ թե բանվորա-գյուղացիական կուսակցություն է:
2. Բացատրեցեք, թե ինչու հարկավոր է խիստ կանոնավորել կուսակցության սոցիալական կազմը:
3. Ինչու պրոլետարիատի դիկտատուրան պատկանում է ոչ միայն բանվոր դասակարգը, այլև բոլոր աշխատավորներին:
4. Ինչու Համ. ԿԿ (բ.) պետք է հաշվառի աշխատավոր մասսաների պահանջները և ինչումն է պոչիզմի վտանգը:

ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՅԵՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչի մասին է զրույցը

Նախորդ գլխում մենք տեսանք, վոր Կոմունիստական կուսակցության դերն այն է, վորպեսզի ղեկավարի պրոլետարիատին՝ 1) իր թշնամիների դեմ մղվող կռվում, 2) աշխատավոր մասսաներին իր կողմը գրավելու գործում, 3) սոցիալիստական շինարարության գործում։

Այժմ մենք պետք է քննենք, թե կուսակցությունն **ինչպես** է ղեկավարում պրոլետարիատին ու աշխատավորներին, **ինչ կազմակերպությունների օգնությամբ է անցկացվում յեվ իրականացվում այդ ղեկավարությունը**։ Կուսակցության կապը բանվոր դասակարգի ու աշխատավորների հետ և նրանց ղեկավարությունը իրականացվում է բանվորների ու գյուղացիների մասսայական կազմակերպությունների և առաջին հերթին արհմիությունների ու խորհուրդների միջոցով։ Այս զրույցում մենք ցույց կտանք, թե ինչպես է այդ կապը և ղեկավարությունն իրականացվում արհմիությունների միջոցով։ Մենք ցույց կտանք, թե ինչպես ԽՍՀՄ արհմիությունների միջոցով՝ Համ. ԿԿ (բ) ղեկավարությամբ՝ պրոլետարիատի միլիոնավոր մասսաները մասնակցում են սոցիալիզմի շինարարությանը։

1. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արհմիությունները— պրոլետարիատի մասսայական կազմակերպություններ

«Ինչպես հիանալի շարժիչ և առաջնակարգ մեքենաներ ունեցող լավագույն գործարանն անգործուն կմնա, յեթե փչացած է հաղորդիչ մեխանիզմը շարժիչից դեպի մեքենան, այնպես էլ անխուսափելի յէ մեր սոցիալիստական շինարարության կատաստրոֆան, յեթե սխալ է կառուցված կամ սխալ է աշխատում

հաղորդիչ մեխանիզմը կուսակցությունից դեպի մասսաները-արհմիությունները»։ Ահա թե ընկ. Լենինի առաջարկած բանաձևում կուսակցության XI համագումարն ինչպես սահմանեց արհմիությունների դերը և նշանակությունը մեր պայմաններում։

Իրոք, բանվոր դասակարգի՝ սոցիալիզմի համար մղվող ամբողջ պայքարում՝ արհմիությունների դերն ահագին է։ Արհմիությունները բանվոր դասակարգի ամենալայն, **ամենամասսայական կազմակերպություններն են**։ Նրանք կուսակցությունից տարբերվում են հենց նրանով, վոր նրանց մեջ **համարյա գլխովին մտնում են** բոլոր բանվորները։ Արհմիություն մտնող բանվորի համար միակ պայմանն այն է, վոր չենթարկվի միութենական ընկերական կարգապահության և պատրաստ լինի մասնակցելու բանվոր դասակարգի սոցիալիզմի համար մղվող ընդհանուր պայքարին։

Յեթե կուսակցությունը չհենվեր բանվորների այդպիսի մասսայական կազմակերպության վրա, վորը համարյա գլխովին ընդգրկում է նրանց, այն ժամանակ խոսք էլ չէր կարող լինել կուսակցության ղեկավարության մասին ամբողջ բանվոր դասակարգի նկատմամբ։ Այն ժամանակ կոմունիստները թողնված կլինեյին իրենք իրենց, իսկ ամբողջ բանվորական մասսան — ինքն իրեն։ Կեռիք (зацепка) չէր լինի, վորպեսզի կուսակցությունը տաներ իր յետևից և շարունակ բարձրացներ բոլոր բանվորների քաղաքական գիտակցությունը։

Վերցնենք վոր ձեռնարկությունը կուզեք։ Վո՞ր կազմակերպությունն է ամենից ավելի մոտիկ կանգնած բանվորին, նրա ամենօրյա կարիքներին, նրա հոգսերին։ Ամեն վոք գիտե, վոր այդպիսի կազմակերպությունն արհմիությունն է հանձինս իր ստորին մարմնի — ֆաբրիկա-գործարանային կոմիտեյի։ Արդյոք գնահատումն է սխալ հաստատված, թե դասումը սխալ վճարված, կամ արտադրական հագուստը չի տրված, թե վենտիլացիան է փչացած,—բանվորը գիտե, վոր նրան բոլոր դեպքերում նա պետք է օգնություն և աջակցություն վորոնի իր **արհեստակցական կազմակերպության** մոտ։ **Բանվորի կյանքի լավացման հոգատարությունը** — ահա թե ամենից առաջ ինչով է զբաղվում արհմիությունն իր գործնական աշխատանքում։ Նա պաշտպանում է բանվորների շահերը տնտեսական մարմինների հետ հավաքական պայմանագիր կնքելիս։ Նա հետևում է, վորպեսզի այդ պայմանները վոչ վոք չխախտի։ Նա հոգում է, վոր բանվորները և նրանց յերեխաները ապահովվեն դպրոցներով, ակումբներով, մսուրներով և այլն։ Նա հոգում է, վոր լավացվի բանվորների բնակարանային շինարարությունը, եժանացվեն ապրանքները կոոպերատիվում, նա օգնություն է ցույց տալիս իր գործազուրկ անդամներին և այլն։ Մի խոսքով, չկա բանվորի վորևե կարիք, վոր լավ աշխատող արհմիությունը չձգտի այս կամ այն կերպ բավարարել։

Այս պատճառով պարզ է, թե ինչ մեծ ոգուտ է բերում բանվորներին նրա արհմիությունը։ Այս իսկ պատճառով արհմիություն են մտնում վոչ միայն առաջավոր բանվորները, այլ և պրոլետարիատի ամբողջ մասսան։ Այսպես, ԽՍՀՄ արհմիությունների մեջ այժմ կազմակերպված են ավելի քան տասն ու կես միլիոն բանվոր ու ծառայող։ Այս նշանակում է, վոր մեր յերկրում վարձու աշխատանքով զբաղվող մարդկանց ամեն մի հարյուրից 95-ը կազմակերպված է արհմիության շարքերում։

Արհմիությունները բուրժուական հասարակության մեջ

Այժմ տեսնենք, թե ինչումն է մեր արհմիությունների և **բուրժուական** յերկրների արհմիությունների տարբերությունը։

Այն յերկրներում, ուր իշխում է կապիտալը, միությունները նույնպես միացնում են բանվորներին, կազմակերպում են նրանց իրենց շահերի պաշտպանության համար։ Այնտեղ բանվորը գործ ունի ձեռնարկատերի, շահագործողի հետ, այնտեղ արհմիության խնդիրն է — **դասակարգային կռիվ** մղել բուրժուազիայի դեմ։ Այդ կռիվն սկսվում է բանվորների ամենորյա կարիքներից՝ բանվորները միության միջոցով հասնում են ավելի բարձր **աշխատավարձի**, ավելի կարճ բանվորական օրվա, ավելի տանելի **աշխատանքի պայմանների**։ Սակայն, աստիճանաբար, բանվորն սկսում է հասկանալ, վոր մենակ տնտեսական պայքարով, մենակ գործադուլներով շատ բանի հասնել չի կարելի։ Նա տեսնում է, վոր շահագործողներին պաշտպանում է բուրժուական պետության ամբողջ ապարատն իր վոստիկանությամբ, դատարանով, բանտերով։ Բանվորն իր պայքարի փորձի հիման վրա այն յեզրակացությանն է հանգում, վոր տաժանակիր աշխատանքից և մուրացիկի կյանքից իսկական ազատագրության հասնել կարելի յե միայն մեկ ճանապարհով՝ **ամբողջ կապիտալիստական կարգի տապալման ճանապարհով**։ Այսպիսով կազմակերպված բանվորներն աստիճանաբար «կոպեկի» համար մղվող պայքարից՝ **կոմմունիստական կուսակցության** ղեկավարությամբ՝ անցնում են լայն դասակարգային կռվի։

Այսպիսով, կապիտալիստական յերկրներում արհմիությունները հանդիսանում են այն դպրոցը, վորը բանվորներին սովորեցնում է միասին պայքար մղել կապիտալի դեմ և նրանց բերում է այն գիտակցության, վոր անհրաժեշտ է վճռական պայքար մղել կապիտալիստական ճնշման տապալման համար։

Բանվորական պետության մեջ արհմիությունները — կոմմունիզմի դպրոց

Այլ է արհմիությունների գործը մեզ մոտ, **խորհրդային իշխանության ժամանակ**։ Մեր յերկրում իշխանության գլուխ են կանգնած իրենք բանվորները։ Պետական ապարատն այստեղ ծառայում է վոչ թե շահագործողների պաշտպանության գործին, այլ նրանց դեմ մղվող պայքարին։ Ամբողջ խոշոր արդյունաբերությունը և առևտրի մեծ մասը, ամբողջ յերկաթուղային և ջրային տրանսպորտը պատկանում են բանվորական պետությանը, այսինքն ամբողջ բանվոր դասակարգին։ Այդ պետական ձեռնարկություններում կապիտալիստ չկա, այդ պատճառով այստեղ չի կարող լինել նաև դասակարգային պայքար։ Վորովհետև ո՞վ է ինքն իր դեմ պայքարում։

Խորհրդային պայմաններում արհմիություններն արդեն բոլորովին այլ դեր են խաղում։ **Կապիտալիզմի դեմ մղվող պայքարի դպրոցից նրանք փոխվում են կոմմունիզմի դպրոցի**։ Այս մասին Լենինն այսպես էր ասում.

«Գլխովին ընդգրկելով, կազմակերպության շարքերը ներառելով ինդուստրիալ (արդյունաբերական) բանվորներին, արհմիությունները հանդիսանում են վարող, տիրող, կառավարող դասակարգի կազմակերպությունը... Բայց այդ պետական կազմակերպություն չէ, այդ հարկադրանքի կազմակերպություն չէ, այդ դաստիարակչական կազմակերպություն է, գրավման, ուսուցման կազմակերպություն, այդ դպրոց է, կառավարման դպրոց, տնտեսավարության դպրոց, կոմմունիզմի դպրոց»։ Յեվ ապա Լենինը բացատրում է, թե ինչ իմաստով միությունները հանդիսանում են յուրատեսակ դպրոց։ Այդ այնպիսի դպրոց չէ, ուր ուսուցիչը սովորեցնում է աշակերտներին։ Այդ դպրոց է, ուր մասսաներն իրենց կյանքի ու ամենորյա գործնական աշխատանքի պրակտիկայով աստիճանաբար մասնակից են դառնում սոցիալիզմի շինարարության։

Յերբ գյուղից գործարան է գալիս մի նոր բանվոր, նա դեռ հասկացողություն չունի վոչ այն մասին, թե ինչ է խորհրդային գործարանը, վոչ էլ այն մասին, թե ինչ է սոցիալիստական տնտեսությունն ընդհանրապես։ Բայց այդ բանվորը մտնում է արհմիություն, վորպեսզի այդ կազմակերպության մեջ կարողանա իր շահերը պաշտպանել։ Այդպիսի բանվորը դեռ ընդհանուր դասակարգային շահի գիտակցություն չունի, նա դեռ պրոլետարական ունակություն, գիտակցականություն, դասակարգային փորձ չունի։ Բայց աստիճանաբար, ընդհանուր բանվորական կազմակերպության — արհմիության միջոցով այդպիսի բանվորը կապվում է բանվորների ամբողջ մասսայի հետ, սկսում է հասկանալ ամբողջ բանվոր դասակարգի ընդհանուր շահերը, սկըսում է մասնակցել տնտեսության կառավարմանը, նրա լավացմանը։ Այդպիսով նա աստիճանաբար դառնում է շարունակ ավելի ու ավելի գիտակից պրոլետար, կոմմունիզմի համար մղվող ընդհանուր դասակարգային պայքարի մասնակից։

Մի խոսքով, ԽՍՀՄ արհմիություններն այնպիսի կազմակերպություն են, վորի միջոցով բանվորների ամբողջ մասսան քաշվում սոցիալիստական տնտեսության շինարարության մեջ։

ԽՍՀՄ տնտեսության ամեն մի լավացում տանում է նաև դեպի բանվորների կյանքի լավացումը։ Ամեն մի նոր գործարան կրճատում է գործազրկությունը։ Արտադրության տեխնիկայի լավացման ամեն մի քայլ տանում է դեպի շուկայի ապրանքների էժանացումը, աշխատավարձի բարձրացումը։ Ինչքան ավելի հարուստ է ԽՍՀՄ, այնքան ավելի լրիվ են բավարարվում բանվորների բնակարանային, կուլտուրական և այլ կարիքները։

Այս պատճառով, աշխատելով ԽՍՀՄ տնտեսության լավացման և կուլտուրայի բարձրացման վրա, արհմիությունները դրանով իսկ հասնում են բանվորների կյանքի լավացման։

Սակայն արհմիությունները պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ էլ չեն հրաժարվում **բանվորների նյութական ու կուլտուրական շահերի** անմիջական **պաշտպանությունից**։ Մեզ մոտ արհմիությունները,— ասում էր Լենինը— գոյություն ունեն «բանվորներին իրենց պետությունից պաշտպանելու և բանվորների միջոցով իրենց պետությունը պաշտպանելու համար»։ Որ բանվորները պետք է պաշտպանեն իրենց պետությունը— այդ հասկանալի է։ Բայց ինչպես կարելի է պաշտպանել բանվորներին իրենց իսկ պրոլետարական պետությունից։

Արհմիությունը պաշտպանում է բանվորներին պետապարատի բյուրոկրատական խեղաթյուրումներից

Մեր պետությունը **բանվորական** է։ Սակայն, նա դեռ չի վերացրել այն հիվանդությունը, որ Վլադիմիր Իլյիչն անվանում էր «բյուրոկրատական խեղաթյուրում»։ Ի՞նչ է նշանակում այդ։ Մեր պետական ապարատում դեռևս շատ կան հնի, մինչհեղափոխական ժամանակի, չինովնիկական մնացորդներ։ Մեր պետապարատում դեռ ևս հաճախ հանդիպում են կամայականություն, քաշքշուք, անսիրտ վերաբերմունք դեպի բնակչությունը և դեպի նրա կարիքները։ Ահա պետապարատի այդ հիվանդության պատճառով մեր քաղաքականությունը, մեր օրենքները հաճախ սխալ են գործադրվում կամ խեղդվում են դիվանների քաշքշուքում։

Դեռ հարկավոր են համառ աշխատանքի շատ տարիներ, որպեսզի պետապարատը բուժենք բյուրոկրատական հիվանդությունից։ Իսկ այժմ այդ խեղաթյուրումներից բանվորներին պաշտպանելու լավագույն միջոցն այն է, որ դրանց դեմ իրենք, կազմակերպված բանվորները, պայքար մղեն արհմիությունների միջոցով։

Մեր պետապարատի անկատարությունը հատկապես սուր կերպարանք ստացավ, յերբ մեր ձեռնարկությունները **տնտեսական հաշվարկի** փոխվեցին։ Տրեստները, գործարանի վարչությունը, դիրեկտորները կանգնեցին մի խնդրի առաջ՝ շահավետ արտադրել, առավել

ավելի շահույթ կուտակել, արտադրությունը լայնացնել։ Այս պայմաններում անխուսափելի չէ, որ ամենամեծ շահութաբերության ձգտելով տնտեսավարը հաճախ չափից անցնում է, չի հաշվառում բանվորների շահերը, սկսում է այնպես գործել, որ արտադրության լավացումը կատարվում է բանվորների նյութական դրության վատացման հաշվին։

Այսպիսի անմիտ տնտեսավարության վառ օրինակ մենք ունեցինք խնայողության ռեժիմի համար մղվող կամպանիայի սկզբում։ Տրեստների և ֆաբրիկա-գործարանային վարչության առաջ խնդիր էր դրված—ծախսերը քչացնել, ապրանքների ինքնարժեքն էժանացնել, անտնտեսավարությունը վերացնել։ Որոշ ադմինիստրատորներ այս այնպես հասկացան, որ սկսեցին խնայողություն անել բանվորների հաշվին, սկսեցին կրճատել աշխատանքի պաշտպանության ծախսերը, սեղմել աշխատավարձը և այլն։ Բոլորովին պարզ է, որ խնայողության ռեժիմին այսպես մոտենալը նրա բյուրոկրատական խեղաթյուրումն է, խնայողության համար մղվող պայքարի իմաստի անհասկացողությունը։

Պետական ձեռնարկության շահութաբերության չափից ընկած՝ հեռատեսությամբ կարող է այդպիսի խեղաթյուրումների ուղին ընկնել նույնիսկ կարմիր դիրեկտորը, նույնիսկ նախկին բանվորը, նույնիսկ լավ կոմունիստը։ Մեկ կջանա ավելի քիչ միջոցներ հատկացնել տեխնիքական անվտանգության գործին՝ դազգահների փակոցներին, շարժաբեր փոկերի վահաններին և այլն. մեկ կփորձի սահմանել ուժից վեր մշակման նորմաներ, մեկ կսկսի խնայողություն անել արտադրական հագուստի, բանվորներին տրվող յեռած ջրի հաշվին և այլն։ Այսպիսի խեղաթյուրումների դեմ է, որ դուրս է գալիս արհմիությունը, իբրև իր անդամների շահերը պաշտպանող բանվորական կազմակերպություն։

Այս դասակարգային պայքար չէ, որովհետև դասակարգային թշնամի չկա, այլ կա իր իսկ բանվորական պետությունը։ Այս պայքար է խորհրդային պետության ապարատի բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ։

Այդ խեղաթյուրումների դեմ պայքարելով, իր անդամների շահերը պաշտպանելով, արհմիությունը դրանով իսկ համախմբում է բանվորներին և նրանց համար հանդիսանում է **միացման յեվ պրոլետարական կազմակերպվածության դպրոց**։

Ընդ սմին, հարկավ, չպետք է մոռանալ, որ ԽՍՀՄ մեջ էլ արհմիությունը շարունակում է դասակարգային կռիվ մղել այնտեղ, որտեղ դեռ կապիտալիստ կա՝ **մասնավոր ձեռնարկության, կոնցեսիայի մեջ**։ Այնտեղ կապիտալիստը դեռ շահագործում է բանվորներին, և այնտեղ այդ շահագործման դեմ պայքար է մղվում և պետք է մղվի։

Այնտեղ արհմիությունը պետք է շարունակ հսկի, վորպեսզի նրա առաջ կապիտալիստն է, բանվորի **դասակարգային թշնամին**, թեկուզ և բռնադատված պրոլետարական դիկտատուրայի միջոցով։

Արհմիությունը բանվորներին տանում է տնտեսական շինարարության մեջ

Իր ամենօրյա շահերը պաշտպանելով, բանվորը սեփական փորձով համոզվում է, վոր նա ամենից առաջ շահագրգռված է ԽՍՀՄ ամբողջ տնտեսության լավացումով։ Կապիտալիզմի ժամանակ է, վոր բանվորը շահագրգռված չէ տնտեսության վերելքով, նա գիտե, վոր ամեն մի լավացում ծառայում է վոչ թե պրոլետարի, այլ կապիտալիստի օգտին։ Այլ բան է մեզ մոտ։ Ինչքան ավելի բարձր է աշխատանքի արտադրողականությունը, ինչքան ավելի լավ արտադրության տեխնիկան, ինչքան ավելի եժան արժե ապրանքի մշակումը, ինչքան ավելի շատ է պատրաստվում այդ ապրանքից, այնքան ավելի արագ է լավանում նաև բանվորի կյանքը։ Այստեղ ամեն մի առանձին բանվորի, բանվորների ամեն մի խմբակի **անձնական շահն** ամբողջովին բավարարվում է **ամբողջ արդյունաբերության**, ամբողջ ժողովրդական տնտեսության ընդհանուր շահերի հետ միասին։

Վերցնենք, օրինակ, **աշխատանքի արտադրողականության բարձրացնելու** աշխատանքը։ Յերբ մեր կուսակցությունը բանվոր դասակարգի առաջ դրեց այդ խնդիրը, արհմիությունները բանվորական մասսաների ամբողջ յեռանդն ուղղեցին այդ կողմը։ Նրանք պարզաբանեցին բանվորներին, թե ինչու և ինչ նպատակի համար է հարկավոր այդ լարված աշխատանքը պրոլետարիատի կողմից։ Նրանք կոչ արեցին բանվորներին աջակցել աշխատանքի արտադրողականության բարձրացման բոլոր միջոցառումներին։ Արհմիությունների շնորհիվ բանվորները վոչ միայն լարված աշխատանքի դիմեցին ու ամեն մեկն իր դազգահի վրա, այլև համերաշխ կերպով սկսեցին արտադրության տեխնիկայի լավացման, արտադրության կազմակերպման լավացման աշխատանքը, հայկատակության և դատարկապորտության դեմ մղվող պայքարը։ Առանց արհմիությունների, այսինքն հենց բանվորների օգնության ու մասնակցության, այդ խնդիրը չեր կարելի լուծել։

Կամ մի այլ օրինակ՝ **գների իջեցման** համար մղվող պայքարը։ Այս աշխատանքում հատկապես պարզ է ամեն մի բանվորի շահերի կախումն ամբողջ պրոլետարական պետության շահերից։

Արհմիությունները մասնակցում են այդ աշխատանքին—նրանք ստուգում են գների իջեցումը կոոպերատիվներում, օգնում բանվորա-գյուղացիական տեսչությանն առևտրական ապարատի թերությունների դեմ մղվող պայքարում։

Արհմիությունների միջոցով հազարավոր բանվորներ առաջ են քաշվում **տնտեսության կառավարման** ղեկավար պաշտոնների, գործարանների կառավարման, տրեստների վարչությունների և խորհրդային ապարատի աշխատանքի համար։

Իսկ այս հենց նշանակում է, վոր արհմիությունները միլիոնավոր բանվորների համար դառնում են կոմունիզմի դպրոց։

Կոմունիստական կուսակցությունը ղեկավարում է արհմիությունները

Բոլոր յերկրների բանվորների փորձը ցույց է տալիս, վոր արհմիությունները միայն այն ժամանակ են դառնում պրոլետարիատի հաջող դասակարգային կռվի գործիք, յերբ նրանց ղեկավարում է **հեղափոխական պրոլետարական կուսակցությունը**։ Այդպիսի կուսակցություն հանդիսանում է Կոմունիստական կուսակցությունը։ Առանց այդ ղեկավարության՝ արհմիություններն անխուսափելիորեն ընկնում են ուրիշների փշրանքները հավաքելու, մանըր զիջումների, վողորմությունների համար պայքարելու յետևից.—Արևմուտքի համաձայնողական, մենշևիկյան արհմիությունների աշխատանքը հաստատում է այս։ Առանց կոմկուսակցության ղեկավարության արհմիությունները փոխվում են նեղ համքարային կազմակերպության։ Կուսակցությունը—արհմիությունների առաջնորդը և ղեկավարն է, առանց նրան բանվորների ամեն մի խմբակ համաձայնողական առաջնորդների ազդեցության տակ կը հոգա միայն իր մանըր շահերի մասին, իսկ դասակարգային կռվի մեծ շահերը կը զոհաբերվեն այսօրվա պահանջներին։ Իսկ կապիտալիստներին հենց այդ էլ հարկավոր է՝ այդպիսի դրության ժամանակ նրանք բանվորներին մասերի կը բաժանեն, վոմանց վողորմությունով կը հանգստացնեն, մյուսներին խիստ նեղը կը գցեն և դրանով կամրացնեն իրենց ուժերը։

Մեր հեղափոխության ամբողջ պրակտիկան նույնպես այն է ասում, վոր արհմիությունները հենց վոր կտրվում են կուսակցությունից, իսկույն ուղիղ ճանապարհից դուրս են գալիս։ Իսկ սրա բացատրությունը պարզ է՝ չէ՞ վոր հենց պրոլետարիատի կուսակցությունն է, վոր պարզ տեսնում է ամբողջ պրոլետարիատի վողջ ուղին, չի սարսափում դժվարություններից, չի յենթարկվում տատանումների։ Իսկ այս առայժմ չի կարելի ասել բոլոր բանվորների մասին։

Ամեն մեկը, իրենց գործարանում իր շուրջը դիտելով, կը մատնանշի շատ բանվորների վրա, վորոնք դեռ հոգում են միայն իրենց մասին, ձգտում են, ինչքան կարելի յե, շատ պոկեն իրենց համար, թեկուզ ուրիշների հաշվին։ Քիչ չեն և այնպիսի բանվորներ, վորոնք չեն հասկանում, թե խորհրդային տնտեսության և ամբողջ խորհրդային պետության շահերը—այդ իրենց շահերն են։ Յեթե արհմիությու-

նը կտրվեր պրոլետարիատի առաջավոր ջոկատից—նրա կուսակցությունից, այն ժամանակ նա անմ բանվորների այս հետամնաց խմբակների ուղին կընկներ: Առանց կուսակցության ղեկավարության՝ առանձին, ամենից հզոր ու կազմակերպված արհմիություններն իրենց շահերի համար կսկսեին անտեսել ավելի թույլ արհեստակցական միացումների շահերը: Այս պատակում կառաջացներ բանվոր դասակարգի միջավայրում, կը թուլացներ նրան:

Առանց կոմկուսակցության՝ արհմիությունները չեն կարող ղեկավարել բանվոր դասակարգի պայքարը և առաջնորդել նրան դեպի կոմմունիզմ: Կուսակցության ղեկավարությունից զրկվելը կամ նրա պակասը ծանր հարված է հասցնում բանվոր դասակարգի գործին, թուլացնում է և՛ կուսակցությունը, և՛ արհմիությունները:

Հ Ա Ր Ց

Ինչո՞ւ չենք մենք արհմիությունները անվանում «կոմմունիզմի դպրոց»:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Պրոլետարիատի թվի և ակտիվության աճումը Վերջին տարիների ընթացքում արագ աճեց մեր արդյունաբերությունը, իսկ դրա հետ եւ բանվոր դասակարգը: Բանվորների ընդհանուր թիվն ամբողջ արդյունաբերության մեջ, յերկաթուղային տրանսպորտում և շինարարության մեջ կազմում եր՝ 1923—24 թ.—3,421 հազար, 1926—27 թ.—5,410 հազար:

Այժմ արդեն բանվորները ֆաբրիկաներից ու գործարաններից գյուղ չեն փախչում, ինչպես այդ լինում եր սովի ու քայքայման տարիներում: Ընդհակառակը, շարունակ բանվորների ավելի ու ավելի մեծ մասսաներ են հավաքվում ֆաբրիկաներում և գործարաններում, վերադարձել են նրանք, ովքեր առաջ հեռացել եյին ձեռնարկություններից. գյուղից, հասունացող յերիտասարդ բանվորներից, գալիս են բանվորների նոր շերտեր:

Լավացել է բանվորների նյութական դրությունը: Աճել է նրանց կուլտուրական մակարդակը: Բարձրացել է ակտիվությունը: Աճել է հետաքրքրությունը դեպի իրենց միությունների աշխատանքը: Բանվորը ջանում է այդ աշխատանքին մեծ մասնակցություն ունենալ, լավացնել այն, առուգել այն: Բոլորին հայտնի յե, թե ինչպիսի ուշադրությամբ են մոտենում միությունների աշխատանքին անկուսակցական առաջավոր բանվորները, ինչպես ակտիվ կերպով հանդես են գալիս ժողովներում, քննադատում են գործարկոմը, գնահատիչ-կոնֆլիկտային հանձնաժողովը, ակումբի վարչությունը: Արդեն բանվորների պահանջներն եւ ավելի բարձր են առաջվանից.— հեղափոխությունը խիստ մեծացրել է այդ պահանջները, և մարդիկ ուզում են մարդավարի ապրել և վոչ թե այնպես, ինչպես ապրում եյին կապիտալիստների ժամանակ:

Ահա առաջին պատճառը, վոր դրդեց մեր կուսակցությանն արհմիությունների առաջ դնել իրենց աշխատանքի աշխուժացման խնդիրը. դրդել այդ աշխատանքն ավելի մոտեցնել միության ամեն մի շարքային անդամին, ավելի լավ սպասարկել նրա կարիքները:

Բանվորների նոր շերտերը Այս խնդիրներն արհմիությունների առաջ կանգնեցին հատկապես սուր կերպով նաև այն պատճառով, վոր վերջերս (1925—27 թվականներին) գործարաններում և ֆաբրիկաներում յերևան յեկավ կուլտուրապես հետամնաց, գյուղի հետ ամուր կապված բանվորների նոր մեծ շերտը: Նրանց մեծամասնությունը կազմված է նախկին գյուղացիներից և տնայնագործներից կամ նրանց զավակներից: Նրանք յերեկվա բանվորներ են, նրանք առաջ յերբեք գործարանում չեն աշխատել: Նրանք առայժմ գործարանին չեն նայում իբրև իրենցը, նրանք ձգտում են դեպի իրենց մանր տնտեսությունը, դեպի գյուղը: Նրանք կես գյուղացիներ են, կես բանվորներ:

Այդ բանվորները ներկայացնում են պրոլետարիատի ամենահետամնաց մասը: Նրանց հարկավոր է յեփել գործարանի կաթսայում, ընտելացնել պրոլետարական կարգապահության, մասնակից դարձնել ամբողջ բանվոր դասակարգի շահերին: Այլապես այդ հետամնաց բանվորները քարի նման կը կախվեն պրոլետարիատի վոտքերից, կարգելակեն նրա ամբողջ աշխատանքը: Հարկավոր է նրանց քաշել միության մեջ, բարձրացնել նրանց կուլտուրական մակարդակը, գրավել հասարակական աշխատանքի մեջ և նրանց դարձնել մեր շինարարության գիտակից մասնակիցներ:

Իսկ եւ մի, չեթե վոչ արհմիությունները պետք է առաջին հերթին զբաղվեն նոր բանվորների այս ամբողջ մասսայի վերադաստիարակությունով:

Արհմիության կապը մասսաների հետ և նրանց շահերի պաշտպանությունը Ահա թե ինչու մեր կուսակցության XIV համագումարը և XV կոնֆերենցիան այնքան շատ ուշադրություն նվիրեցին միությունների աշխատանքին: Կուսակցության գլխավոր ցուցմունքերն արհմիություններին հանգում են հետևյալ յերկու խնդրին.

Առաջին՝ միությունները պետք է իրենց գլխավոր ուշադրությունը և ամենամեծ ուժերը նվիրեն իրենց անդամների ամենօրյա տնտեսական շահերի պաշտպանությանը:

Յերկրորդ՝ միությունները պետք ե իրենց աշխատանքն այնպես դնեն, վորպեսզի ավելի լավ ճանաչեն իրենց անդամների կարիքները, ե՛լ ավելի մոտեցնեն իրենց ապարատը բանվոր մասսային, ավելի լայն չափով գրավեն շարքային բանվորներին ակտիվ աշխատանքի մեջ, ավելի ամուր պահեն արհմիությունների ղեկավար որգանների և բանվորների ամբողջ մասսայի կապը:

Արհմիությունները պետք ե մոտենան բանվոր մասսային, ճիշտ լուծելով այնպիսի հրատապ հարցերը, ինչպես՝ նորմերի, գնահատումների մշակումը, հավաքական պայմանագրերի կնքումը, աշխատանքի պաշտպանությունը, բնակարանային հարցի լուծումը, կոոպերատիվի աշխատանքի լավացումը: Արհմիությունները պետք ե սպասարկեն նաև բանվոր դասակարգի կուլտուրական պահանջները և վոչ թե միայն նյութականը: Ակումբներ, կարմիր անկյուններ, դպրոցներ, դասընթացներ—այս բոլորը պետք ե հարմարեցվի մասսային, շարքային բանվորին շատ ավելի մեծ չափով, քան այդ յեղել ե մինչև այժմ:

Արհմիությունը յեվ արտադրությունը Ինքնին հասկանալի յե, վոր բանվորների շահերը պաշտպանելով, արհմիությունը չի կարող մոռանալ նաև այն, վոր իր առաջ կապիտալիստական ձեռնարկություն չե, այլ խորհրդային, վոր պատկանում ե հենց իրեն բանվոր դասակարգին: Տնտեսարարը յերբեմն պատրաստ ե շահույթի յետևից ընկնելով չափն անցնել: Քիչ չեն նաև այն բանվորները, վորոնք գիտակցաբար չեն վերաբերվում աշխատանքին, ջանում են քիչ ու վատ աշխատանք կատարել, իսկ գործարանից շատ պոկել: Այդպիսի բանվորները դեռ չեն մոռացել, վոր տնտեսատիրոջ համար չեն աշխատում, նրանք դեռ չեն գիտակցում, վոր խորհրդային ձեռնարկությունների տնտեսատերն ինքը բանվոր դասակարգն ե: Այստեղից ել առաջ են գալիս թե աշխատանքից բացակայելը, թե խոտանի (брак) բարձր տոկոսը և թե աշխատավարձի բարձրացման անմիտ պահանջների դեպքերը:

Արդյոք արհմիությունը կարող ե ներողամիտ լինել այդպիսի պահանջների նկատմամբ, արդյոք նա կարող ե հաշտվել արտադրության նկատմամբ յեղած այսպիսի վերաբերմունքի հետ: Իհարկե, վոչ: Ահա թե ինչու բանվորների տվյալ խմբակի շահերը պաշտպանելով, արհմիությունը միևնույն ժամանակ հիշում ե **ամբողջ բանվոր դասակարգի** արմատական խնդիրները, սոցիալիստական արդյունաբերության շահերը: Նա չի կարող ներկայացնել տնտեսական որգաններին նրանց ուժից վեր պահանջներ: Նա պարտավոր ե շարունակ հաշվի առնել, թե ինչպես ե ձեռնարկության դրությունը: Աշխատավարձի բարձրացման ձգտելով, միությունը չի կարող մոռանալ, վոր մեր արդյունաբերությունը պետք ե կուտակումներ անի և միջոցներ կուտակի,

վորպեսզի լայնացնի արտադրությունը, կառուցի նոր ֆաբրիկաներ ու գործարաններ, նորոգի հին ձեռնարկությունների սարքավորումը: Այս պատճառով միությունն ոգնում ե տնտեսարարներին ամրացնել աշխատանքի կարգապահությունը: Նա պարզաբանում ե բանվորներին նրանց անելիքներն արտադրության մեջ, նրանցից ել պահանջում ե, վոր խստիվ կատարեն հավաքական պայմանագրով իրենց վրա վերցրած պարտավորությունները: Այդպիսով միությունը դաստիարակում ե բանվորի մեջ գիտակցական կոմմունիստական վերաբերմունք դեպի աշխատանքը:

Բայց սրա հետ միասին, իհարկե, միությունը յերբեք չպետք ե ձուլվի տնտեսական որգանի հետ. չպետք ե այնպես աշխատի, վոր միայն իր ստորագրությամբ հաստատի այն բոլորը, ինչ վոր առաջարկում ե տնտեսավարը: Միությունը պետք ե քննի, թե ինչում տնտեսական որգանի առաջարկներն ու պլաններն իրավացի յեն և ինչում նա իրավացի չե: Յեվ արդեն վոչ մի դեպքում միությունը չպետք ե իր վրա վերցնի վարչական պարտավորություններ ձեռնարկության նկատմամբ: Թե չե լինում եյին դեպքեր, յերբ միությունն այնպես եր կատարում իր աշխատանքը, վոր բանվորը չեր ել ջոկում վորն ե վարչությունը և վորը միությունը:

Այսպիսի դեպքերում անխուսափելիորեն այնպես ե լինում, վոր բանվորների այս կամ այն դժգոհությունը յերևան ե գալիս առանց միության գիտության,—ծագում ե «ղալմաղալ», ընդհարում և այլն: Լավ աշխատող միությունը գործը չի հասցնի դժգոհության, այսպիսի տարերային ընդվզումների: Նա պարտավոր ե ժամանակին իմանալ, թե ինչից են դժգոհ բանվորները, առաջուց համաձայնության գալ և՛ վարչության, և՛ բանվորների հետ, վորպեսզի և՛ արտադրությունը չտուժի, և՛ բանվորների շահերը պաշտպանված լինեն:

Արհմիութենական դեմոկրատիա Միությունը պետք ե իսկապես ընտրովի կազմակերպություն լինի: Արհմիության բոլոր որգանների ընտրությունները պետք ե կատարվեն իսկական բանվորական դեմոկրատիայի հիման վրա—առանց ճնշումի, թեկնածուներին համքարություններում (ցեխերում), բանվորական ժողովներում և կոնֆերենցիաներում լայնորեն քննելով: Միութենական որգանները պետք ե կազմվեն այնպիսի մարդկանցից, վորոնց բանվորական մասսան ճանաչում ե, վորոնց նա վստահում ե:

Միությունը պետք ե կանոնավոր կերպով **հաշիվ տա** իր աշխատանքի մասին, հաշիվ տա այն մասին, թե ինչի վրա յեն ծախսվում հավաքվող անդամավճարները: Միության կյանքի կարևորագույն հարցերը պետք ե քննվեն բանվորական ժողովներում, կարմիր անկյուններում: Այս հատկապես կարևոր ե հավաքական պայմանագրերի

վերաբերմամբ։ Բոլորին անհանդուրժելի չեն այնպիսի դեպքերը, երբ միությունը հավաքական պայմանագիր է ստորագրում բանվորների անունից, իսկ բանվորները չգիտեն այդ հավաքական պայմանագրի բովանդակությունը, չեն քննում այն, իրենք չեն մասնակցում նրա մշակմանը։

Միությունների կարևորագույն աշխատանքն այն է, որ իրենց անդամներին գրավեն ակտիվ աշխատանքի մեջ։ Ամեն մի միութենական կազմակերպություն պետք է ծածկվի **բանվորական ակտիվի** լայն շերտով։

Արհեստակցական պատգամավորներ, զանազան հանձնաժողովների անդամներ (աշխատանքի պաշտպանության, կուլտուրական աշխատանքի, արտադրության լավացման), անդամավճար հավաքողներ, արտադրական խորհրդակցությունների ակտիվ մասնակիցներ, ակումբի և կարմիր անկյունների աշխատողներ և այլն,— այս ամբողջ շերտը պետք է գործնական աշխատանքի մեջ գրավվի, պետք է այս աշխատանքում դաստիարակվի։ Միությունները պետք է մասսայից առաջ քաշեն նոր աշխատողներ, որպեսզի անընդհատ թարմացնեն արհեստակցական օրգանների կազմը։

Այդպիսով իրագործելով միութենական դեմոկրատիան, միությունները բանվորների միջավայրից առաջ են քաշում ակտիվ աշխատողներ—սոցիալիզմի կառուցողների ել ավելի լայն շերտ։ Միութենական դեմոկրատիայի միջոցով ամբողջ բանվորական մասսան զարգացնում է իր գիտակցականությունը և ակտիվությունը։

Արտադրական խորհրդակցությունները— ձեռնարկության ամրացման գործոց

Բանվորների շահերը պաշտպանելով, միությունը միևնույն ժամանակ նրանց գրավում է մասնակցելու մեր տնտեսության շինարարությանը։

Ինչպես է կատարում միությունն իր այս խնդիրը։ Արհմիությունները նշում են և քննում ղեկավար տնտեսական պաշտոնների (ձեռնարկության դիրեկտոր, տրեստի վարչություն և այլն) թեկնածուներին։ Արհմիությունները քննում են տնտեսական օրգանների աշխատանքը, մատնանշում են նրա թերությունները, մտցնում են իրենց առաջարկությունները։ Բայց հատկապես կարևոր է արտադրական խորհրդակցությունների աշխատանքը։

Արտադրական խորհրդակցությունները դարձել են բանվորների արդյունաբերական ձեռնարկությունների կառավարմանը մասնակցելու լավագույն ձևը։ Այդ խորհրդակցությունների միջոցով յուրաքան֊չյուր բանվորի նախաձեռնությունը և ինքնուրույնությունն արտադրության լավացման գործում։ Այդ խորհրդակցությունների միջոցով դաստիարակվում են գործնական-բանվորների կադրերը, որոնք սո-

վորում են արտադրությունը կառավարել և առաջ են քաշվում աշխատելու կառավարման ասպարեզում։ Այդ խորհրդակցություններում բանվորը շարունակ ավելի մեծ չափով է գիտակցում աշխատավորների շահերի կախումը մեր տնտեսական հաջողությունների աստիճանից։

Խորհրդակցությունների աշխատանքում ամենագլխավորն այն է, որ նրանց մեջ դրվեն բանվորներին խիստ շահագրգռող հարցերը։ Տվյալ համքարության կյանքի մանրունքներից սկսելով, հարկավոր է նաև աստիճանաբար անցնել ձեռնարկության տնտեսական կյանքի ավելի բարդ հարցերին։ Ինչպես ավելի լավ օգտագործել հում նյութը, խնայողաբար վառել վառելիքը, ավելի լավ կազմակերպել աշխատանքը, փչացնել խոտանը (բրակը), լավացնել տեխնիկան, թեթևացնել աշխատանքի պայմանները,— այսպիսի շատ հարցեր են մտնում խորհրդակցությունների աշխատանքի շրջանը։

Որպեսզի ոգևենք բանվորներին ինչպես հարկն է ըմբռնել արտադրության հարցերը, մի շարք ձեռնարկությունների արտադրական խորհրդակցությունների, իբրև փորձ, թույլատրված է ընտրել **ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ**։ Նախ քան դիրեկտորը կամ խումբները խորհրդակցության մեջ զեկուցի այս կամ այն հարցի մասին, այդ հանձնաժողովը տեղում ստուգում է գործերի դրությունը և պարզում, թե ինչ բարվոքումներ են հարկավոր, ինչը հարկավոր է և կարելի չէ ուղղել։ Արտադրական խորհրդակցությունները— այդ արհմիությունների, իբրև «կառավարման դպրոցի, տնտեսավարության դպրոցի, կոմմունիզմի դպրոցի» (Լենին) աշխատանքի ամենակարևոր ճյուղերից մեկն են։

Ինչպես է կուսակցությունը ղեկավարում միությունները

Արհմիությունների աշխատանքը կախված է այն բանից, թե **ինչպես է կուսակցությունը ղեկավարում** այդ աշխատանքը և ուղղություն տալիս նրան։ ԲԿԿ-ը ղեկավարում է փարգործարկոմի աշխատանքն այն կոմմունիստների միջոցով, որոնք աշխատում են նրա մեջ, ֆրակցիայի միջոցով։ Գործարկոմի կամ տեղկոմի աշխատանքի այն բոլոր կարևորագույն հարցերի մասին, որոնք վերաբերում են ամբողջ ձեռնարկության և բոլոր բանվորների կյանքին, կուսակցական կազմակերպությունը ցուցումներ է տալիս գործարկոմի ֆրակցիային։ Ֆրակցիան կանոնավոր կերպով հաշիվ է տալիս ԲԿԿ-ին և պատասխանատու չէ գործարկոմի աշխատանքում կուսակցական հաստատուն գիծ անցկացնելու համար։ Այն բոլորը, ինչ նշում է ԲԿԿ-ը, ֆրակցիան պետք է պաշտպանի գործարկոմում, նրա անկուսակցական անդամներին համոզելով ԲԿԿ-ի վճիռների ճշտության մեջ։ Նման թիվ ձևով ղեկավարում են արհեստակցական աշխատանքը նաև բոլոր վերադաս կուսակցական կազմակերպությունները (նահանգկոմները — նահանգական արհխորհուրդները, գավկոմները — գավարհբյուրոները և այլն)։

Ուժմիությունների կուսակցական ղեկավարության թերությունները և նրանց վերացման անհրաժեշտությունը

Բայց վորպեսզի կուսակցական ղեկավարությունը հասնի իր նպատակին, անհրաժեշտ է **վերացնել այն թերությունները**, *վոր պատահում են մեր պրակտիկայում։*

Կուսակցական ղեկավարությունը հաստատուն է անկուսակցական մասսայի վստահության շնորհիվ, նրա համոզմունքով, վոր կոմմունիստներն ընդունակ են վարել արհմիութենական կազմակերպության գործերը։ Հարկավոր է ղեկավարել համոզելով և վոչ թե հարկադրանքով։ Չի կարելի խախտել արհեստակցական օրգանների ընտրականությունը, չի կարելի բանվորների վզին փաթաթել նրանց համար անցանկալի ղեկավարներ։ Թե չէ—մեղքներս ինչ թաքցնենք—լինում է, վոր բջիջը գալիս է բանվորների մոտ, նրանց առաջարկում է գործարկոմի և միութենական կոնֆերենցիայի թեկնածուների ցուցակը, շատ քվեարկում—և ցուցակն անցնում է։ Իհարկե, այսպիսի կարգը վոչ թե ամրացնում է միության հեղինակությունը, այլ խախտում է բանվորների վստահությունը և՛ դեպի միությունը, և՛ դեպի կուսակցությունը։

Յերկրորդ՝ չի կարելի ղեկավարությունը դարձնել հրաման, խնամակալություն։ Սխալ կը լինի, օրինակ, յեթե բջիջն սկսի ամբողջ գործարկոմին հրահանգներ տալ՝ «այս արա», կամ «այսպես արա»։ Անկուսակցականներն այդ կը հասկանան իբրև հրաման.—նրանք կը տեսնեն, վոր իրենց ուզում են վոչ թե համոզել, այլ հարկադրել, վոր վարվեն բջիջի ցանկությամբ։ Գործողության այսպիսի յեղանակը բացի ջղայնությունից, այլ բան առաջ բերել չի կարող։ Բջիջն իր առաջարկությունները պետք է անցկացնի բացառապես **Ֆրակցիայի** *միջոցով, յեթե չի ուզում խախտել միության հեղինակությունը և թուլացնել իր կապը մասսայի հետ։*

Յերրորդ՝ չի կարելի գործարկոմի աշխատանքը բոլոր հարցերի վերաբերմամբ փոխարինել բջիջի կամ նույնիսկ Ֆրակցիայի վճիռներով։

Յեթե բջիջն ինքն անմիջականորեն վճռում է այն հարցերի մեծ մասը, վորոնք վերաբերում են բանվորների նյութական շահերի պաշտպանությանը, ապա նա դրանով իսկ վոչնչացնում է և խախտում արհեստակցական կազմակերպությունների հեղինակությունը։ Ե՛լ վոչ վոք միության օգնությանը չի դիմի, յեթե գիտե, վոր նրա փոխարեն բոլոր հարցերը լուծում է բջիջը։

Կուսակցական կազմակերպությունների կողմից արհեստակցական աշխատանքը ղեկավարելու այս բոլոր թերությունները—մանրակրկիտ միջամտությունը, ընտրականության խախտումը և արհմիու-

թենական օրգանների աշխատանքն իրենց վճիռներով փոխարինելու ձգտումը դատապարտված են կուսակցության կողմից։

Կուսակցությունը ձգտում է այն բանին, վորպեսզի բանվոր դասակարգի և խորհրդային պետության ամեն մի կազմակերպություն իր գործն անի։

Տնտեսական օրգանները պետք է բարձրացնեն արտադրությունը, դրա հետ չմոռանալով բանվորների շահերը։

Արհմիությունները պետք է կազմակերպեն, համախմբեն և դաստիարակեն բանվորների մասսան, պաշտպանելով նրանց նյութական ու կուլտուրական շահերը և քաշելով նրանց սոցիալիզմի շինարարության աշխատանքի մեջ։

Իսկ կուսակցությունը, իբրև պրոլետարիատի ղեկավար կազմակերպություն, ուղղություն է տալիս և՛ տնտեսական օրգանների, և՛ արհմիությունների աշխատանքին՝ այն չենթարկելով ընդհանուր նպատակին՝ սոցիալիզմի շինարարությանը։

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչպես պետք է գործեն արհմիությունները, վորպեսզի իրենց անդամների մասսաներին գրավեն ակտիվ աշխատանքի մեջ։

2. Վորո՞նք են արտադրական խորհրդակցությունների խնդիրները։

ԿՏՈՐՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ—ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ԴՊՐՈՑ

«Խորհրդային Ռուսաստանում արհեստակցական միությունների կարևորագույն դերը մնում է նրանց դերն իբրև **կոմմունիզմի դպրոց**։

Միայն արհեստակցական միությունը, վոր ինչպես գործարանում, այնպես էլ գյուղից դուրս սիստեմատիկաբար հոգում է բանվորի կյանքի ու կենցաղի բոլոր կողմերի մասին, կարող է հանդիսանալ կազմակերպչական ունակությունների և քաղաքական դաստիարակության սկզբնական դպրոց աշխատավորների ամենալայն ու նույնիսկ հետամնաց մասսաների համար։

*Արհեստակցական միությունների անդամների գլխավոր մասսան հանդիսանում են անկուսակցականները (6,970,000 անդամ, վորոնցից կուսակցության անդամ են միայն մոտ կես միլիոնը) *)։ Կոմ-*

**) Այս թվանշանները վերաբերում են Համ. ԿԿ (բ.) X համագումարի ժամանակներին։ 1927 թ. սկզբին ԽՍՀՄ արհմիություններն ունեյին 9,5 միլիոն անդամ։*

Ծանոթ. խմբ.

մունիզմը կառուցվում է այն մարդկային նյութից, որ մեզ ժառանգություն է մնացել կապիտալիզմից: Արհեստակցական միությունները Խորհրդային Ռուսաստանում աստիճանաբար դառնում են գլխովին բոլոր բանվորներին ընդգրկող մի կազմակերպություն: Արհեստակցական միությունները կազմակերպում են աշխատավորների այն տարրերը, վորոնք կապիտալիզմի ժամանակ, ամբողջությամբ առած, հաճախ խորթ էին պրոլետարական ընտանիքին (նախկին առևտրական ծառայողները, հիվանդանոցների պերսոնալը, արվեստի աշխատավորները և այլն): Այդ բոլոր տարրերը վերամշակել, նրանց մոտեցնել պրոլետարիատի առաջավոր շերտերին, նրանց հարմարեցնել կոմմունիստական հասարակության շինարարության գործին,—այս է արհեստակցական միությունների, իբրև կոմմունիզմի դպրոցի, կարեվորագույն խնդիրը:

Իրենց այս խնդիրների հաջող կատարման համար արհմիությունները պետք է ամենից առաջ այնպիսի կազմակերպություններ դառնան, վորոնց մեջ ամեն մի առանձին անդամ հանդիսանում է իր միության ընդհանուր կյանքի գիտակից ու ակտիվ մասնակից: Արհեստակցական միությունները, իբրև կոմմունիզմի դպրոց, պետք է բացատրեն աշխատավոր մասսաների ամենօրյա կյանքի բոլոր կողմերը, աստիճանաբար աշխատավորների ամենալայն շերտերը պետական շինարարության գործի մեջ գրավելով, շարունակ նրանց ուղին լուսավորելով մեր գաղափարներով, նրանց տանելով մասնավորից դեպի ընդհանուրը, աստիճանաբար նրանց բարձրացնելով անկուսակցականությունից դեպի կոմմունիզմ:

Տվյալ շրջանում արհմիություններն իրենց կոմմունիզմի դպրոցի դերն իրոք կկատարեն այնքան, վորքան նրանք հանդիսանում են պրոլետարական մասսաների ղեկավարները կոմմունիստական պրակտիկայի, այսինքն կոմմունիստական սկզբունքներով տնտեսությունը գործնականորեն վերակազմելու և կառուցելու ասպարեզում: Խորհրդային Ռուսաստանում միայն այն միությունն է հանդիսանում իսկական կոմմունիզմի դպրոց, վոր կարողանում է աստիճանաբար աշխատավորների ամենահետամնաց շերտերը քաշել խորհրդային ժողովրդական տնտեսության գիտակցական լավացման աշխատանքի մեջ»:

(Համ. Կկ (բ) X համագումարի արհմիությունների դերին և խնդիրներին վերաբերող բանաձևից):

2. ԻՆՉՈՎ ՊԵՏՔ Է ԶԲԱՂՎԵՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Անօգուտ է արտադրական խորհրդակցություններում բանվորների առաջ դնել ընդհանրապես համաշխարհային տնտեսության դրու-

թյան, մասնավորապես ԽՍՀՄ տնտեսության, հատկապես քիմիական արդյունաբերության և առանձնապես մեր տրեստի դրության հարցերն այն ժամանակ, յերբ ծակ կարից ջուրը կաթում է բանվորների քթին: Դրանք շատ լավ, ուսանելի հարցեր են, բայց հարկավոր է ուրիշից սկսել.—ինչպես անել, վոր բանվորը չսայթաքի աղբի կույտի մեջ, յերբ գնում է բակով, ինչ պետք է ձեռնարկել, վոր հազարավոր բանվորներ արհեստանոցից արհեստանոց անցնելիս պտույտներ չգործեն բակում լցված յերկաթի անպետք կույտերի ու ցեխի շուրջը. ինչպես անել, վոր վերանան այն անկարգություններից ամենատարրականները, վորոնք հատկապես հիվանդագին կերպով է զգում ամեն վոք և վորոնք ամենից հեշտ է ուղղել: Թե չէ գնում են արտադրական խորհրդակցություն, խոսում են համաշխարհային հարցերի, ֆորդիզմի, աշխատանքի ռացիոնալիզացիայի մասին և այլն, և այլն, իսկ այդտեղից դուրս գալով սայթաքում են՝ դիպչելով բակում ընկած յերկաթե լինգին, կամ ընկնելով սղոցուքի մեջ և այլն: Ջուրը կաթում է քթներին, իսկ նրանք դատում են ֆորդիզմի մասին: Յես կարծում եմ, արտադրական խորհրդակցությունների պրակտիկան ամբողջովին ու լիովին հաստատեց իմ մտքի ճշտությունը, թե պետք է փոքրից սկսել, այն ժամանակ հետագայում կարելի յե շատ բան անել…

Իբրև օրինակ, վոր մանրունքները չեն վերացված, ինձ մատնանշում են, վոր վերջերս մի արտադրական կոնֆերենցիայում խոսում էին այն մասին, թե ամանեղենի խոտան (բրակ) շատ է լինում այն պատճառով, վոր յերբ ամանեղենը տանում են, հին զամբյուղները պոկ են գալիս, ամանեղենն ընկնում է ու ջարդվում: Բայց յես կարծում եմ, վոր յերբ ընդհանուր ձևով խոտանի հարցը դնեն, կհասնեն և այդ մանրունքներին, վորովհետև այդ կարևոր է խոտանի վոչնչացման հարցը պարզաբանելու, այդպիսի յերևույթների դեմ պայքարելու համար: Յես այդ կոնֆերենցիայում գիտեցի ու տեսա, վոր միայն այն բանից չեն զանգատվում, թե ամանեղենը կոտրվում է վատ զամբյուղների պատճառով, այլև այն բանից, վոր զամբյուղները լիֆտով բարձրացնելիս ներքև են գցվում, փոխանակ վերև բարձրացվելու: Մանրունքներ դեռ շատ են մնացել, դրանից հրաժարվել չի կարելի, դրանց պետք է հաղթահարել, բայց միևնույն ժամանակ հարկավոր է տեսնել, վոր այժմ մի քիչ այլ շրջան է յեկել, այժմ հարկավոր է արտադրական խորհրդակցությունները հասցնել ավելի բարձր աստիճանի և նրանց մեջ ավելի ընդհանուր հարցերի անցնել: Այս չի նշանակում, վոր արտադրական խորհրդակցությունները պետք է զբաղվեն համաշխարհային տնտեսության հարցերով, և այլն: Նրանք պետք է զբաղվեն ընդհանուր բնույթ կրող այնպիսի հարցերով, ինչպիսին են խոտանի դեմ պայքարելը, արտադրության դրությունը, հումնյութի կայությունը, աշխատանքի լավացման յեղանակները և այլն, և այլն»:

(XV Կուսկոնֆերենցիայում ընկ. Տոմսկու արած զեկուցումից):

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ձեր ձեռնարկության գործարկոմում իմացեք, ինչպես է աճել ձեր ձեռնարկության բանվորների թիվը վերջին յերեք տարվա մեջ և ստացած թվանշաններից դիագրամմա կազմեցեք (գրքում յեղած դիագրամաների նմուշով): 2) Դիտեցեք ձեր համքարության (ցեխի) նոր բանվորներին, պարզեցեք, թե նրանք վորտեղից են յեկել գործարան, իմացեք, արդյոք բոլորը գրավված են միության մեջ, հիշողության համար թղթի վրա նկատողություններ արեք և այդ բոլորի մասին պատմեցեք քաղգրագիտության դպրոցի կամ խմբակի պարապմունքների ժամանակ:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչու անհրաժեշտ է արհմիությունների նկատմամբ կուսակցական ղեկավարությունը և ինչպես պետք է իրագործել այն:

2. Ինչ թերություններ և նվաճումներ կարելի յե նշել ձեր կուսակցական բջիջի կողմից գործարկոմի աշխատանքը ղեկավարելու մեջ (օրինակներ բերեք):

3. Ինչպես է իրագործվում ձեզ մոտ պրակտիկայում արհմիութենական դեմոկրատիան. (օրինակներ բերեք նրա իրականացման և խախտման մասին ընտրականության, հաշվետվության, մասսաների արհմիության աշխատանքի մեջ գրավելու հարցերում):

4. Ճիշտ են արդյոք արհմիության և տնտեսական օրգանների փոխհարաբերությունները ձեր ձեռնարկության մեջ:

5. Ինչպես է հոգում ձեր միությունն իր անդամների նյութական և կուլտուրական պահանջների բավարարման մասին: (Նշեք միության աշխատանքի նվաճումները և թերություններն այս ասպարեզում):

ՉՈՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչի մասին է զրույցը

Յերրորդ զրույցում մենք իմացանք, թե ինչպես է իրականացվում կուսակցության կապը բանվոր դասակարգի հետ և ինչպես **արհմիությունների** միջոցով կուսակցությունը ղեկավարում է նրան:

Ներկա զրույցի նպատակն է ցույց տալ, թե ինչպես է իրականացվում կուսակցության կապը բանվոր դասակարգի և աշխատավորների հետ և ինչպես **խորհուրդների** միջոցով կուսակցությունը ղեկավարում է նրանց:

Դրա համար հարկավոր է քննել՝ 1) ինչումն է Խորհրդային իշխանության **էությունը**. 2) ինչպես են քաղաքի ու գյուղի **աշխատավորների բոլոր շերտերը** խորհուրդների միջոցով մասնակցում սոցիալիզմի շինարարությանը. 3) ինչու խորհրդային շինարարության մեջ ղեկավարությունը պատկանում է **պրոլետարիատին** և 4) ինչպես է կուսակցությունը ղեկավարում **խորհուրդները**:

1. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱ

Ինչ է պետությունը

Մեր պետությունը, ԽՍՀՄ—**բանվորական** պետություն է: Նրա մեջ ամբողջ իշխանությունը պատկանում է **պրոլետարիատին**—այն դասակարգին, վորը սոցիալիզմի համար մղվող պայքարում բոլոր աշխատավորների գլուխ է անցած: Բանվոր դասակարգն իր այս դիկտատուրան իրականացնում է **բանվորների յեվ գյուղացիների պատգամավորների խորհուրդների միջոցով**:

Ամեն մի պետություն, ամեն մի պետական իշխանություն վոչ այլ ինչ է, բայց յեթե մի մեքենա տիրող դասակարգի ձեռքում իր շահերը պաշտպանելու և մյուս, իրեն թշնամի դասակարգերին ճնշելու համար: **Բուրժուական** պետությունը—այդ մի գործիք է բուրժուազիայի ձեռքում բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դեմ պայքարելու համար: **Բանվորական** պետությունը—այդ մի գործիք է շահագործողներին ճնշելու համար, կապիտալիստների և կալվածատերերի տիրապետությունը վոչնչացնելու համար: Յեվ այլ կերպ էլ չի կարող լինել—պետությունը չի կարող միաժամանակ պաշտպանել թե շահագործողների և թե շահագործվողների շահերը, վորովհետև այդ շահերը բոլորովին **անհաշտելի յեն**:

Վերցնենք բուրժուական պետություններից վորը կուզեք՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, կամ Անգլիան, կամ Գերմանիան: Միայն տխմարները և բանվորներին գիտակցաբար խաբողները կարող են պնդել, վոր իբր թե այնտեղ իշխանությունը պատկանում է «ամբողջ ժողովրդին»: Ճիշտ է, թղթի վրա այնտեղ «դեմոկրատիա» յե—պարլամենտ ընդհանուր ընտրություններ, ազատություններ, բոլոր քաղաքացիների հավասարություն օրենքի առաջ և այլն: Բայց տեսնենք, ով է **իրոք** իշխանության գլուխ կանգնած այնտեղ:

Բուրժուական պետությունը ծառայում է կապիտալիստների դասակարգին

Այնտեղ բանակում—գեներալները և սպայությունը կալվածատերերից, բուրժուազիայի զավակներից, հարուստներից են. պարլամենտում—մեծամասնությունը խոշոր կապիտալիստներից ու հողատերերից է. այնտեղ մինիստրներն ու բարձր չինովնիկները—հարուստներից և նրանց լավ վարձատրվող

ծառաներից են։ Այնտեղ օրենքներն ամենից առաջ նպատակ ունեն պաշտպանելու բուրժուազիայի «սրբազան սեփականությունը» և ապահովելու բանվորների ու չքավորների հյութերի խաղաղ ու հանգիստ քամելը։ Իսկ այդ օրենքների պահպանման համար կանգնած է բուրժուական պետության ամբողջ ապպարատը՝ բանակը և ոստիկանությունը, պրովոկատորներն ու շտրեյկբրեխերները, դատարաններն ու բանտերը, տաժանակիր աշխատանքները և գնդակահարությունները։ Երբ, 1926 թ. Անգլիայում ընդհանուր գործադուլի և հանքափորների գործադուլի ժամանակ բանվորները պայքար էին մղում իրենց շահերի պաշտպանության համար ընդդեմ կապիտալիստների հարձակման, այն ժամանակ բանվորների դեմ մենակ հանքահորերի տերերը, գործարանատերերը և բանկիրները չէին կանգնած։ «Դեմոկրատական» պետության ամբողջ ապպարատը ոտքի հանվեց բանվորներին ջախջախելու—բանվորական շրջաններն ուղարկվեցին զորքեր ու ոստիկանական ջոկատներ, կազմակերպվեցին շտրեյկբրեխերների ջոկատներ, առաջավոր բանվորները ձերբակալվում էին ու դատապարտվում բանտարկության, բանվորական ցույցերը ցրվում էին զորքերով։ «Դեմոկրատական» պարլամենտը անցկացրեց հանքափորների համար ութժամյա բանվորական օրվա օրենքը, և դրանով օրինականացրեց հանքահորերի տերերի պահանջը։ Իսկ բուրժուազիայի կառավարությունը լարեց իր բոլոր ուժերը, որպեսզի բանվորներին սովի դատապարտի և ուժասպառությունով հաղթի նրանց։

Առանց բացառության բոլոր բուրժուական երկրներում կառավարությունները հետամտում են պրոլետարական հեղափոխական կուսակցությանը, կոմունիստական կուսակցությանը՝ գաղտնի վիճակի յեն դատապարտում նրան, ձերբակալում են նրա առաջնորդներին, գրավում են նրա թերթերն ու կոչերը, ցրում են նրա ժողովները և ցույցերը։

Այսպես իրականում բուրժուական պետության ապպարատը ծառայում է տիրող, շահագործող դասակարգերին։ Երբ տվյալ երկրի կապիտալիստներին հարկավոր են նոր երկրներ, որպեսզի վաճառահանեն իրենց ապրանքները, գնեն էժան հում նյութ, շահույթով դետեղեն այնտեղ իրենց կապիտալները, շահագործեն էժան բանվորական ուժը, այն ժամանակ բուրժուական պետությունն իր հարևանների դեմ իմպերիալիստական պատերազմներ է սարքում։ Երբ կապիտալի իշխանության տակ գտնվող երկրներում—գաղութներում—բանվորներն ու գյուղացիները փորձում են ազատագրվել օտարերկրյա ստրկությունից, ինչպես, օրինակ, այս տեղի յե ունենում այժմ Չինաստանում, այն ժամանակ բուրժուական պետություններն ուղարկում են այնտեղ իրենց նավատորմը, զորքերը, ռազմական այերոպլանները և տանկերը, որպեսզի պաշտպանեն իրենց կապիտալիստների շահերը։ Իսկ երբ հենց բուրժուական պետության ներսում սկսվում են բանվորների ու գյուղացիների խռովություններ, այն ժամանակ նրանց դեմ ռազմավորվում է ամբողջ պետական ապպարատը՝ զորքերը գնդակահարում են ապստամբվող բանվորներին, դատարանները դատապարտում են բանվորների առաջնորդներին տասնյակ տարիների տաժանակրության, վարձկան սևհարյուրակայինների, սպաների և ժանդարմների ավազակախմբերը գազանաբար պատժում են հեղափոխականներին։ Այդպես էր Գերմանիայում 1919 թ. Կարլ Լիբկնեխտի և Ռոզա Լյուքսեմբուրգի սպանության օրերին, այդպես էր ամենուրեք, որտեղ բուրժուազիային սպառնում էր բանվոր դասակարգի ապստամբությունը։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ բուրժուական պետությունը ոչ այլ ինչ է, բայց եթե հարուստների, ձեռնարկատերերի, յունկերների և կալվածատերերի միություն իրենց դասակարգային շահերը պաշտպանելու համար։

Բուրժուական դեմոկրատիայի խորամանկ մեխանիկան

Բայց բուրժուազիայի այսպիսի տիրապետությունը չի կարող գոյություն ունենալ ակներև կերպով, աշխատավորների մասսաները չեյին հանդուրժի մի բուռն շահագործողների ճընշումը։

Հարկավոր է բուրժուազիայի այդ դասակարգային դիկտատուրան մի կերպ քողարկել, թաքցնել նրա իսկական բնույթը։ Սրա համար բուրժուազիան այնպես է պատկերացնում իր իշխանությունը, որ իբր թե, այդ դեմոկրատական «համաժողովրդական» իշխանություն է։ Տեսնենք, որն է բուրժուական դեմոկրատիայի այդ խորամանկ մեխանիկան։

Թղթի վրա այնպես է, որ բուրժուական-դեմոկրատական երկրներում գոյություն ունի «մամուլի ազատություն»։ Այդպե՞ս է արդյոք իրականում։ Չէ՞ որ կապիտալիզմի ժամանակ տպարան, թուղթ, թերթ հրատարակելու միջոցներ միայն կապիտալիստներն ունեն։ Այս պատճառով թերթերի ճնշող մեծամասնությունը գտնվում է բուրժուազիայի ձեռքին։ Այդ թերթերը հրատարակվում են միլիոնավոր օրինակներով, ամեն օր թունավորում են աշխատավոր մասսաների գիտակցությունը, տարածում են բուրժուական սուտը, զրպարտում են, խաբում, ճշմարտությունը թաքցնում, պաշտպանում բուրժուական շահերը։ Խոշոր բանկերը և տրեստները հսկայական փողով ուղղակի գնում են մեծ թերթեր, որպեսզի նրանց միջոցով ազդեն բանվորների և մանր բուրժուազիայի վրա։ Յեվ այս ծախու, բայց հիանալի հիմքերի վրա դրված ու հարուստ թերթերի դեմ, որ

տպագրվում են հարյուրավոր միլլիոն օրինակներով, բանվորները կարող են դուրս բերել փոքր տիրաժ ունեցող մեկ-յերկու թերթ։

Թղթի վրա այնպես է, վոր այնտեղ գոյություն ունի «ժողովների ազատություն»։ Բայց ժողովների համար հարկավոր են շենքեր, իսկ դրանք գտնվում են բուրժուազիայի ձեռքին։ Յեվ յերբ այդ հարկավոր է (օրինակ՝ ընտրություններից առաջ), բուրժուազիայի քաղաքական կուսակցությունները բոլոր լավագույն շենքերը վերցնում են իրենց համար։

Նույնն է դրությունը նաև մյուս «ազատությունների» վերաբերմամբ։ Բուրժուազիան, հենվելով իր հարստության, այդ ազատություններն օգտագործում է իր համար։ Բուրժուական ազատությունները— այդ հարուստների ազատությունն է չքավորներին խաբելու, հիմարեցնելու և ճնշելու համար։

Թղթի վրա այնպես է, վոր բուրժուական-դեմոկրատական յերկրներում իշխանությունն ընտրվում է բոլոր ժողովրդի կողմից։ Իսկ իրականում այնտեղ բանվորն ու գյուղացին մոտ էլ չեն թողնվում կառավարման գործին։ Բուրժուազիան, օգտվելով իր հարստություններից, ընտրությունների ժամանակ-կատաղի ագիտացիա յե ծավալում՝ գործադրվում են խաբեբայություն, կաշառման ու պրովոկացիայի բոլոր միջոցները, վորպեսզի ապահովվի բուրժուազիայի հաղթանակը։ Թերթերը հիմարացնում են իրենց ընթերցողներին, միլլիոնավոր կոչեր ու թռուցիկներ են տարածվում ընտրողների մասսայում, հազարավոր վարձկան ագիտատորներ վխտում են բանվորական թաղերում, բուրժուական կուսակցությունների անունից ընտրողներին խոստանալով բոլոր բարիքները՝ բոլոր դավանանքի տերտերները քարոզներ են տալիս բուրժուազիայի օգտին։ Գործադրվում է նաև կաշառումը՝ Ամերիկայում բուրժուական կուսակցություններն ուղղակի «գնում են» ամեն տեսակ սրիկաների, մուրացկանների և ուրիշների «ձայները»։ Այսպիսով բուրժուական կուսակցությունները շարունակ ապահովում են իրենց հաղթանակն ընտրությունների մեջ՝ բուրժուազիան շարունակ ունի **իր** պարլամենտը և **իր** կառավարությունը։ Այս բոլոր խորամանկ մեխանիկան հիմնված է այն բանի վրա, վոր իսկական քաղաքական հավասարություն և քաղաքական ազատություններ չեն կարող լինել այնտեղ, վորտեղ կան հարուստ և աղքատ, կուշտ և քաղցած։ Այնտեղ «ազատությունը» փոխվում է կուշտի ազատության քաղցածին կողոպտելու համար։ Իսկ կուշտի ու քաղցածի «հավասարությունն» այնտեղ փոխվում է քաղցածի խաբվելուն կուշտի կողմից։

Այդ թղթի վրա յեղած ազատություններն էլ բուրժուազիան պահում է մինչև այն ժամանակ, քանի դրանք չեն խանգարում նր-

րան։ Հենց վոր կոմմունիստներն սպառնում են շահագործողների հանգստությանը, նրանց թերթերը գրավվում են, նրանց ժողովները ցրվում, նրանց պարլամենտի անդամներին կալանավորում։ Սրա համար «օրինական» առիթ միշտ կը գտնվի, իսկ յեթե չգտնվի, ապա կարելի յե այն հնարել պրովոկացիայի միջոցով։

Այսպես է ահա, վոր կապիտալիստները, օգտվելով բոլոր «ազատություններից» կամ խախտելով այդ «ազատությունները», յերբ այդ հարկավոր է, այսպես կոչված դեմոկրատական յերկրներում իշխանությունն ամուր պահում են իրենց ձեռքում։ **Բուրժուական ազատությունները — այդ միայն մի շիրմա յե, վորը թաքցնում է կապիտալիստների բացարձակ իշխանությունը, բուրժուազիայի դիկտատուրան։**

Պրոլետարիատի դիկտատուրան — աշխատավորների դեմոկրատիա

Այսպես է բուրժուական դիկտատուրայի ապպարատը։ Բոլորովին պարզ է, վոր բանվոր դասակարգը կարող է ազատագրվել միայն այն ժամանակ, յերբ **կը ջախջախի** բուրժուազիայի այդ պետական ապպարատը և բուրժուական դիկտատուրայի փոխարեն կհաստատի պրոլետարիատի դիկտատուրա։

Ի՞նչ է պրոլետարիատի դիկտատուրան։ Ամենից առաջ «նա բռնական ճնշում է շահագործողների դիմադրության, այսինքն բնակչության աննշան փոքրամասնության—խոշոր կալվածատերերի ու կապիտալիստների» (Լենին)։ Բանվոր դասակարգը կարիք չունի իր դիկտատուրան թաքցնել «համաժողովրդական» իշխանության դիմակի տակ, նա կարիք չունի իր իշխանությունը ներկայացնել իբրև «բոլոր դասակարգերի» իշխանություն։ Նա բացահայտ կերպով հայտարարում է **մեկ** դասակարգի—պրոլետարիատի, կապիտալիզմից ճնշված բոլոր աշխատավոր մասսաների առաջնորդի ու ղեկավարի, դիկտատուրա։ Պրոլետարիատի այս դիկտատուրան մեզ մոտ հաստատված է Հոկտեմբերյան հեղափոխությամբ։

Մեզ մոտ բուրժուազիան ճնշվում է։

Շահագործողներն իրավունք չունեն Խորհուրդներում ընտրել և ընտրվել, բուրժուական կուսակցությունները և նրանց ձայնակիցները—մենշևիկները և եսերները—մեզ մոտ չեն կարող բացահայտ հանդես գալ ու աշխատավորներին խաբել։ Նրանց թերթերն արգելված են։ Բուրժուազիայից խլված են տպարանները, ժողովների շենքերը և տրված են աշխատավորներին օգտվելու համար։ Նրա հզորությունն արմատում խախտված է հողի, ֆաբրիկաների, գործարանների, հանքերի և մյուս խոշոր ձեռնարկությունների ազգայնացումով։ Մենք այս անում ենք բացահայտ կերպով։ «Դեմոկրատիա» և ազատություն հարուստների համար, շահագործողների համար՝ մեզ մոտ չկա։ Հարուստների և աղքատների, շահագործողների ու շահագործվողների

«հավասարություն» մենք չենք ճանաչում: Մեզ մոտ—ազատությունն աշխատավորության համար է: Մեզ մոտ—պրոլետարիատի բացահայտ դիկտատուրա յե:

Պրոլետարիատը պետության կառավարման մեջ է գրավում բոլոր աշխատավորներին

Ջարդելով բուրժուական պետության մեքենան իր կեղծավոր ու սուտ «դեմոկրատիայով», բանվոր դասակարգը կառուցում է իր պետությունը՝ աշխատավորների մասսաներն իսկապես գրավելով պետության կառավարման, հասարակական կյանքի մասնակցության և սոցիալիստական շինարարության մեջ:

ԽՍՀՄ աշխատավորները պետք չունեն պատահական շենքեր վորոնելու ժողովների համար, ինքը պետությունը բուրժուազիայից խլել ու բանվորներին և գյուղացիներին է տրամադրել այդ նպատակի համար լավագույն շենքերը:

Նույնը և մամուլի վերաբերմամբ: Բոլոր տպարանները պատկանում են բանվորական պետությանը: Բոլոր թերթերը հրատարակում են բանվորական կազմակերպությունները կամ Կոմունիստական Կուսակցությունը: Հարյուր հազարավոր բանվորներ ու գյուղացիներ մասնակցում են այդ թերթերին իրենց նկատողություններով, նամակներով, հոդվածներով: Պատի լրագրեր կան համարյա բոլոր ձեռնարկություններում և գավառակներում (волость): Բանթղթակիցները, գյուղթղթակիցների, զինթղթակիցների և չերխաթղթակիցների բանակը սերտ կապում է մամուլի հետ աշխատավորների ամենալայն շերտերը:

Յեվ այսպես ամեն բանում.—վոչ միայն ստորին, այլև բարձրագույն դպրոցը—համալսարանները—լայն բաց է աշխատավորների առաջ, դատարանն աշխատում է բանվոր, գյուղացի և կարմիր բանակային ժողովրդական ատենակալների մասնակցությամբ:

ԽՍՀՄ ամբողջ հասարակական կյանքը մեզ համոզում է, վոր «**Խորհրդային հեղաշրջումն աշխարհում չտեսնված զարկ տվեց դեմոկրատիայի զարգացմանը խորությամբ ու լայնությամբ, ընդ վորում այնպիսի դեմոկրատիայի, վոր հենց աշխատավորների ու կապիտալիզմից ճնշված մասսաների դեմոկրատիան է**, հետևապես դեմոկրատիա ժողովրդի ահագին մեծամասնության համար, հետևաբար սոցիալիստական դեմոկրատիա (աշխատավորների համար), ի զանազանություն բուրժուական դեմոկրատիայի (շահագործողների համար, կապիտալիստների համար, հարուստների համար)»: (ԼԵՆԻՆ)

2. ԽՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Բանվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդներ — ահա այն կազմակերպությունը, վորի միջոցով բանվոր դասակարգն իրականացնում է իր դիկտատուրան և վորի միջոցով սոցիալիզմի շինարարության մեջ են գրավվում վոչ միայն բանվորները, այլև աշխատավորների ամբողջ մասսան—չքավոր գյուղացիները, միջակները, տնայնագործները և այլն:

Խորհուրդների միջոցով ամենալայն մասսաների գրավումը սոցիալիզմի շինարարության մեջ

Իբրև օրինակ վերցնենք **Բաքխորհուրդը**: Բաքվի բոլոր աշխատավորներն ուղարկում են իրենց պատգամավորները քաղխորհուրդ: Անաշխատ տարրերը և պրոլետարիատի թշնամիները—ցարական նախկին վոստիկանները, պահնորդական բաժանմունքի ծառայողները և ժանդարմները, նույնպես և բոլոր կրոնների հոգևորականությունը խորհուրդների ընտրությանը մասնակցելու իրավունքից զրկված են: Խորհրդի պատգամավորները կանոնավոր կերպով ընդհանուր ժողովներ (պլենումներ) են գումարում խորհրդի բաժինների զեկուցումները լսելու, նրանց գործունեությունը քննելու և գործնականորեն քննադատելու համար: Խորհրդի անդամները հետազոտում են և ստուգում պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների աշխատանքը, կատարում են խորհրդի առանձին հանձնարարությունները, առաջ են քաշվում ղեկավար աշխատանք կատարելու խորհրդային հիմնարկություններում: Այսպես օրինակ, Մոսկվայում 1927 թ. Խորհուրդների սեկցիաներում աշխատում եր 9,300 մարդ, վորոնք ստուգում եյին արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունների, խորհրդային հիմնարկությունների աշխատանքը, աշխատում եյին խորհրդային ապարատի և այլն կրճատման ու պարզացման վրա:

Խորհրդի ընտրության, ընտրողների առաջ պատգամավորների արած հաշվետվության ժամանակ աշխատավոր մասսաներն իրենց պատգամավորներին ցուցումներ են տալիս, թե ինչպես պետք է լավացնել խորհրդային աշխատանքը, բարվոքել բնակչության կարիքները և այլն:

Բայց, ի հարկե, հաճախ չի պատահում, վոր խորհուրդների աշխատանքն այնպես լինի, ինչպես հարկավոր է: Հաճախ խորհուրդների սեկցիաները չեն աշխատում, իսկ պլենումները սակավ են գումարվում, վոչ թե գործնական, այլ հանդիսավոր բնույթ են կրում և խորհրդի անդամներին գործնական աշխատանքի մեջ չեն գրավում: Քաղխորհրդի անդամների հաշվետվությունը յերբեմն շատ անկանոն է կատարվում: Յերբեմն բանվոր ընտրողները նույնիսկ չեն ճանաչում իրենց պատգամավորներին և այլն:

Վերջին տարիները մեր կուսակցությունը քիչ չի աշխատել այն բանի վրա, վորպեսզի աշխուժացնի խորհուրդները, նրանց մոտեցնի բնակչությանը։ Խորհուրդների վերջին վերընտրությունները ցույց տվեցին, վոր այս գործում լուրջ հաջողությունների յենք հասել։ 1927 թ. քաղաքներում խորհուրդների ընտրություններին մասնակցեց ընտրողների 58%, 8% ավելի, քան 1926 թ.։ Իսկ արհմիությունների անդամներից ընտրություններին մասնակցեց 72%։

Ամենուրեք բանվոր ընտրողներն ակտիվ քննում եյին իրենց պատգամավորների հաշվետվությունները, Խորհուրդների նոր կազմին տրվող հրահանգները, խորհուրդների թեկնածուների ցուցակները։

Մասսաների ակտիվությունը և խորհրդային աշխատանքին մասնակցելու ցանկությունն աճում է։ Կուսակցությունը ձգտում է օգտագործել այդ ակտիվությունը սոցիալիստական շինարարության նպատակների համար։

Կանանց գրավումը խորհրդային յեվ սոցիալիստական շինարարության մեջ

Կանայք մեր յերկրի բնակչության կեսից ավելին են։ Մինչդեռ նրանք առայժմ դեռ շատ թույլ մասնակցություն ունեն խորհուրդների աշխատանքին, չնայած տարեց-տարի խորհուրդներում ու գործկոմներում կանանց թիվն ավելանում է։

Ի հարկե մենք իրավունք ունենք հպարտանալու այն բանով, վոր ԽՍՀՄ աշխարհում միակ յերկիրն է, ուր լրիվ, առանց վերապահությունների, իրագործված է կնոջ ու տղամարդու հավասարությունն ընտանիքում, քաղաքական ու հասարակական կյանքում։ Բայց կնոջ ճնշման ու ստրկական ստորացման դարերը նրան ավելի հետամնաց, ավելի պասսիվ (անգործունյա) են դարձրել, քան տղամարդուն։ Դրան ավելանում է և այն, վոր աշխատավոր կինը դեռ մինչև այժմ շղթայված է խոհանոցին, տնային տնտեսությանը, յերեխաների հոգատարությանը։ Իսկ չի կարելի սոցիալիզմ կառուցել այնպես, վոր աշխատավորների կեսը գերի մնա կերակրի կաթսաներին, վոր կինը մասնակցություն չունենա այդ շինարարությանը։ Կուսակցությունը և խորհրդային իշխանությունը **բոլոր միջոցները ձեռք են առնում, վորպեսզի ազատագրեն կնոջը տնային տնտեսությունից։** Այս նպատակով կազմակերպվում են հասարակական ճաշարաններ, լվացքատներ, մանկական մսուրներ ու տներ։ **Կուսակցությունը յեվ խորհուրդները բոլոր միջոցներով բարձրացնում են կանանց ընդհանուր ու քաղաքական գրագիտությունը**, նրանց գրավում են հասարակական աշխատանքի, խորհուրդների, սոցիալիստական շինարարության մեջ։ Այս նպատակով կուսակցությունը մեծ աշխատանք է կատարում աշխատավոր կանանց մեջ։ Նա կազմակերպում է ժողովներ, վորտեղ բան-

վորուհիները, ծառայողները, բանվորների կանայք և գեղջկուհիները ընտրում են իրենց **պատգամավորուհիներին։** Պատգամավորական ժողովները նրանց տալիս են քաղաքական դաստիարակություն և ունակություններ աշխատանք կատարելու Խորհուրդներում, կոոպերատիվներում, արհմիություններում։ Այս ճանապարհով պատգամավորուհիները գրավվում են նաև կուսակցության մեջ։

Խորհուրդները յեվ պրոլետարիատի դաշինքը գյուղացիության հիմնական մասսայի հետ

Բանվոր դասակարգը Խորհուրդների միջոցով սոցիալիստական շինարարությանը մասնակցելու է գրավում միլիոնավոր աշխատավոր չքավոր գյուղացիների ու միջակների։ Մասնակցելով գյուղական խորհուրդների աշխատանքին, մասնակցելով խորհրդային իշխանության որգանների ստեղծմանը, գյուղացիները հենց դրանով մոտենում են բանվոր դասակարգին, իրենց առաջնորդին ու ղեկավարին։ Այսպիսով խորհուրդների միջոցով ամրանում է պրոլետարիատի դաշինքը չքավոր գյուղացիների և միջակների հետ։

Խորհուրդների բոլոր համագումարներին գյուղացիական պատգամավորները մասնակցում են բանվորների հետ միասին, միատեղ ընտրում են գործկոմներ։ Գործկոմներում դարձյալ կողք-կողքի աշխատում են պրոլետարներն ու գյուղացիները։ Գործն այսպես է դրված վերևից մինչև ներքև։

Բայց չպետք է կարծել, վոր խորհրդային իշխանության սոսկ այսպիսի կառուցվածքն արդեն ապահովում է խորհուրդների կանոնավոր աշխատանքը և բանվոր դասակարգի միությունն աշխատավոր գյուղացիության հետ։ Կուսակցությունը գյուղում պետք է ունենա **անկուսակցական ակտիվ** առաջավոր գյուղացիներից, չքավորներից ու միջակներից։ Այդպիսի ակտիվն ստեղծվում է խորհուրդների շուրջը։

Հենց խորհուրդներն են, վոր գյուղացիական կարիքների բավարարման գործնական աշխատանքում գյուղացիներին համոզում են կոմմունիստական կուսակցության արդարացի լինելու մեջ։ Խորհրդային աշխատանքով գյուղում աճում է չունևորների ու միջակների բազմաթիվ ակտիվը, վոր գյուղում ստեղծում է կուսակցության հենարանը և ապահովում այնտեղ սոցիալիստական շինարարության հաջողությունը։ **Ահա ինչու այնպես կարևոր է «խորհուրդների աշխուժացում» լոզունգը կուսակցության գյուղի աշխատանքի համար, նրա դաշինքի համար աշխատավոր գյուղացիական մասսայի հետ, գյուղական չքավորների ու միջակի հետ պրոլետարիատի դաշինքի ամրապնդման համար, գյուղում սոցիալիզմի շինարարության համար։**

Բանվոր դասակարգի ղեկավար դերն այս դաշինքում յեվ այդ դերի իրականացումը ԽՍՀՄ սահմանադրության մեջ

Քաղաքային խորհուրդները միաժամանակ իրենց պատգամավորներն են ուղարկում խորհուրդների գավառական ու նահանգական համագումարները, իսկ գյուղական վայրերում գտնվող գործարանները — գավառակային ու գավառական համագումարները։ Այսպիսով բանվորներն ավելի շատ պատգամավորներ են ուղարկում, յեթե հաշվենք ըստ ընտրողների թվի (օրինակ՝ ամեն մի հազար մարդուց), քան գյուղացիները։ Քաղխորհուրդների ընտրության ժամանակ էլ սովորաբար բանվորները նույնպիսի առավելություն են ստանում աշխատավորների մյուս շերտերի հանդեպ (տնայնագործների, ծառայողների, տնտեսուհիների և այլն)։

Խորհրդային պետության սահմանադրությամբ բանվորներին այս առավելությունները տրվում են հենց նրա համար, վորպեսզի ապահովվի բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության առաջնորդի, ղեկավար դերը պետության մեջ։

Այս առավելությունները ընդմիշտ չեն սահմանված։ Ժամանակի ընթացքում գյուղացիական մասսան — գյուղական չքավորները և միջակ գյուղացիները — ամբողջովին կկազմակերպվի կոոպերացիայի մեջ։ Նա կը բարձրացնի իր կուլտուրական և քաղաքական մակարդակը, կընտելանա **կոլլեկտիվ (ընդհանուր) տնտեսության**։ Գյուղացիությունը բանվոր դասակարգի հետ միասին կը դաստիարակվի խորհրդային պետական ու տնտեսական շինարարության մասնակցելու աշխատանքում։ Դրա հետ միասին գյուղացիական մասսայի ու բանվոր դասակարգի զանազանությունը հետզհետե կը հարթվի։ Աստիճանաբար կը վերանան նաև այն առավելությունները, վոր մեր սահմանադրությունը հաստատել է բանվոր դասակարգի համար գյուղացիության համեմատությամբ։

Բանվոր դասակարգը ղեկավարում է գյուղի խորհուրդները, ամենից առաջ հենվելով գյուղացիության բատրակ-չքավոր շերտերին — գյուղում բանվոր դասակարգի այս ամենահաստատուն հենարանին։ Մեր կուսակցությունը կազմակերպում է գյուղական չքավորներին ու բատրակներին կուլակների դեմ՝ գումարում է չքավորների ժողովներ և կազմակերպում խորհուրդներում, կոոպերատիվներում և այլն աշխատող չքավորների խմբակներ։ Կազմակերպված չքավորները պայքարում են կուլակների շահագործման դեմ և դիմադրում են կուլակների խորհուրդները թափանցելու փորձերին։ Չքավորները, դաշինք կնքելով միջակների հետ, ձգտում են հասնել այն բանին, վորպեսզի կուլակները մենակ մնան, պաշտպանություն չգտնեն միջակներից։ Այսպես, բանվոր դասակարգը և գյուղական չքավորները խորհուրդների միջոցով ամրացնում են իրենց դաշինքը միջակ գյուղացիության հետ։

Խորհրդային իշխանության կազմակերպական կառուցվածքը

Դիտենք այժմ խորհրդային իշխանության կազմակերպությունը, քննենք, թե ինչպես է կառուցված այն ներքևից, գյուղական ու քաղաքային խորհրդներից մինչև վերև, մինչև ԽՍՀՄ իշխանության գերագույն օրգանները։

Բարձրագույն իշխանությունը յերկրի ամեն մի առանձին մասում պատկանում է խորհրդների համագումարներին։ Գավառակում (շրջանում) բարձրագույն իշխանությունը խորհրդների գավառակային (շրջանային) համագումարն է, գավառում — գավառական համագումարը, նահանգում (ինքնորեն մարզում) նահանգական (մարզային) համագումարը։

Խորհրդների համագումարներն ինքնուրույն կերպով վճռում են տեղական բոլոր տնտեսական, ֆինանսական գործերը, առողջապահության, ժողովրդական կրթության և այլ հարցերը։ Նրանք լսում են համապատասխան գործկոմների և նրանց բաժինների հաշվետվությունները և քննության են առնում բոլոր քաղաքական հարցերը։ Համագումարների արանքում նրանց իշխանությունը պատկանում է իրենց կողմից ընտրված գործադիր կոմիտեներին։ Բացի խորհրդներից, նրանց համագումարներից ու գործկոմներից, տեղերում ուրիշ վոչ մի իշխանություն չկա։ Ավելի բարձր կանգնած իշխանությունն իր բոլոր միջոցառումները անց է կացնում տեղական խորհրդների և գործկոմների միջոցով։

Գործկոմների աշխատանքը կատարվում է նրանց բաժինների միջոցով։ Գործկոմի ամեն մի բաժին վարում է մի գործ, առողջապահություն, արդարադատություն (դատական գործ), քաղաքային տնտեսություն, տեղական արդյունաբերություն, ժողովրդական կրթություն, զինվորական գործ, առևտուր, ներքին վարչություն և միլիցիա, հողային գործեր և գյուղատնտեսություն, ֆինանսներ, աշխատանքի հարցեր, սոցիալական ապահովություն, տեսչություն (բան.-գյուղ. տեսչություն), վիճակագրություն։ Իհարկե այս բոլոր բաժիններն ունեն միայն բարձրագույն գործկոմները (նահանգական ու մարզային)։ Ինչքան ցած է գործկոմը, այնքան նրա աշխատանքը նեղանում է, այնքան քիչ բաժիններ ունի նա։

ԽՍՀՄ մեջ մտնում են վեց դաշնակից խորհրդային հանրապետություն՝ ՌՍՖԽՀ, Ուկրայնական, Բելոռուսական, Անդրկովկասյան, Ուզբեկստանի և Թուրքմենստանի հանրապետությունները։ Դաշնակից հանրապետություններից ամեն մեկն ունի իր կենտգործկոմը, ժողկոմխորհը և ժողովրդական կոմիսարիատները։

Այս դաշնակից հանրապետությունների ներսում կան նաև ավտոնոմ հանրապետություններ (օրինակ՝ ՌՍՖԽՀ մեջ — Թաթարական,

Ղրիմի, Բաշկիրիայի և այլ հանրապետությունները)։ Այս ավտոնոմ հանրապետություններն էլ գումարում են իրենց հանրապետական Խորհուրդների համագումարները, նրանցից ամեն մեկն ունի իր կենտգործկոմը, Ժողկոմխորհը, ժողովրդական կոմիսարիատները։ Վերջիններիս իրավունքներն ավելի քիչ են, քան դաշնակից հանրապետությունների համապատասխան օրգաններինը, բայց ավելի մեծ են, քան նահանգական օրգաններինը։ Այսպիսի կառուցվածքի նպատակն այն է, վորպեսզի Միության ամեն մի խոշոր ազգության աշխատավորներ հնար ունենան մասնակցելու տեղական հարցերի լուծմանը տեղական կյանքի առանձնահատկություններին համապատասխան։

Բայց յերկրի տնտեսությունը միասին վարելու անհրաժեշտությունը, օրինակ՝ Միության բոլոր ժողովուրդների համար միասին օգտագործելու Ուկրայինական ածուխով, Ադրբեջանի (Բագվի) նավթով, Թուրքմենստանի և Ուզբեկստանի բամբակով աշխատող ռուսական տեքստիլ արդյունաբերությունը—ահա այդ անհրաժեշտությունը հասցնում է այն բանին, վոր բոլոր ազգային հանրապետությունները միանում են մեկ ընդհանուր համամիութենական կենտրոնական իշխանության տակ։ Նույն նպատակին է ծառայում ոտարերկրյա բուրժուազիայի գրոհից պաշտպանվելու, կապիտալիստական աշխարհի հետ ընդհանուր բանակցություններ ու առևտուր ունենալու համար միանալու անհրաժեշտությունը։

Միության մեջ իշխանության բարձրագույն օրգանն է ԽՍՀՄ **Խորհուրդների համագումարը։** Համագումարների արանքում բարձրագույն իշխանությունը հանդիսանում է ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն (ԿԳԿ)։ ԿԳԿ կազմված է յերկու ինքնուրույն, իրավահավասար մասից.—Միութենական խորհրդից (450 անդամ, վորոնք ընտրվում են համագումարում) և Ազգությունների խորհրդից (135 անդամ—առանձին ազգային մարզերի ու հանրապետությունների ներկայացուցիչներ, վորոնք հաստատվում են համագումարի կողմից)։

ԿԳԿ յերկու մասը միաժամանակ են նիստեր ունենում, բայց ամեն մեկն առանձին է աշխատում։ Վորպեսզի ապահովվի Միության օրենսդրության համաձայնեցումը նրա մեջ բնակվող բոլոր ժողովուրդների շահերին, ամեն մի օրենք ուժ է ստանում միայն այն ժամանակ, յերբ այն հաստատված է և՛ Միութենական Խորհրդի և՛ Ազգությունների Խորհրդի կողմից։

ԿԳԿ սեսիաների արանքում նրա աշխատանքը կատարում է ընդհանուր ու միասնական նախագահությունը, վոր կազմված է Միութենական Խորհրդի ու Ազգությունների Խորհրդի նախագահություններից։

ԿԳԿ ընտրում է Միութենական Ժողկոմխորհ, վոր կազմված է Ժողկոմխորհի նախագահից, նրա տեղակալներից, 9 ժողովրդական

կոմիսարներից և Կենտրոնական վիճակագրական վարչության վարիչից (ժողկոմի իրավունքներով)։ Միության ժողկոմատներից 6-ը (Աշխատանքի, ֆինանսների, առևտրի, բանվորա-գյուղացիական տեսչության, Ժող. Տնտ. Գեր. Խորհրդի և Կենտվիճվարչության) միացյալ են կոչվում։ Նրանց խնդիրն է—միացնել և ուղղություն տալ միութենական ամեն մի հանրապետության համապատասխան ժողկոմատների աշխատանքին։ Մնացած չորսը (Ռազմժողկոմատ, Արտգործժողկոմատ, Ճանապարհների ժողկոմատ, Կապի ժողովրդական կոմիսարիատ) ընդհանուր են ամբողջ Միության համար և ԽՍՀՄ Ժողկոմխորհը դրանց լիազորներն է նշանակում բոլոր միութենական հանրապետություններում։ Ռազմական գործի կենտրոնացումն անհրաժեշտ է Կարմիր բանակի միության ու հրամանատարության համար, համամիութենական Արտգործժողկոմատն անհրաժեշտ է կապիտալիստական յերկրների առաջ միացած լինելու համար, վորպեսզի ընդհանուր թշնամու առաջ խառնաշփոթություն ու տարաձայնություն չը լինի։ Վոր յերկաթուղիները, հեռագիրն ու փոստը պետք է մեկ ձեռքում լինեն, մեկ վարչության տակ, նույնպես պարզ է.—միևնույն յերկաթուղիները և հեռագրային ցանցը կապում են Միության բոլոր հանրապետությունները և նրանց կապում միմյանց հետ։

Այսպես է Խորհրդային իշխանության կառուցվածքը։ Պետության միայն այսպիսի կառուցվածքն է, վոր միատեղ տնտեսական շինարարության և համաշխարհային կապիտալի դեմ ունեցած միասնական ֆրոնտի պայմաններում ԽՍՀՄ բոլոր ազգերին զարգացման ամենամեծ ազատություն է տալիս։

Միայն այդ կառուցվածքն է ստեղծում ԽՍՀՄ ժողովուրդների հավասարությունը յեվ յեղբայրությունը, այդ ժողովուրդների աշխատավորների միությունը, բանվոր դասակարգի դաշինքը Միության մեջ մտնող բոլոր ազգությունների աշխատավոր գյուղացիության հետ սոցիալիզմի կառուցման գործում՝ բանվոր դասակարգի ղեկավարությամբ։

Չի կարող խորհրդային իշխանություն լինել առանց Համ. ԿԿ(բ) ղեկավարության

Իսկ ո՞վ է հանդիսանում բանվոր դասակարգի ավանգարդը խորհրդային շինարարության մեջ։ Ինչպես աշխատանքի ու պայքարի բոլոր ճյուղերում, այնպես էլ այստեղ այդ ավանգարդը հանդիսանում է **կոմմունիստական կուսակցությունը։** Համ. ԿԿ(բ) ղեկավարում է խորհուրդները, սահմանում է նրանց աշխատանքի ընդհանուր գիծը, խորհուրդների շինարարության մեջ է գրավում անկուսակցական լայն մասսաներին։ Ինչու՞ է այսպես։ Այն պատճառով, վոր պրոլետարական իշխանության այնպիսի օրգանների, ինչպիսին են խորհուրդները, շինարարության համար անհրաժեշտ են քաղաքական փորձ, հաստատա-

կամություն և վճռականություն, վորոնցով օժտված է՝ առաջին հերթին պրոլետարական կուսակցությունը, իբրև բանվորական և գյուղացիական բոլոր մասսաների առաջնորդ:

Բանվոր դասակարգի թշնամիները հիանալի հասկանում են, վոր բավական է կոմունիստներին հեռացնել խորհուրդներից, վորպեսզի նրանք զրկվեն վորևէ ուժից, վորևէ նշանակությունից, վորից հետո դժվար չէ նաև բոլորովին վերացնել խորհուրդները:

Նրանք հասկանում են, վոր խորհուրդներն առանց կոմունիստների չեն կարողանա անողոք կռիվ մղել բուրժուազիայի դեմ, վորովհետև կընկնեն ուրիշ, վոչ-բանվորական, համաձայնողական կուսակցությունների ձեռքը: Հենց այս էլ հարկավոր է բուրժուազիային նրան հենց այն է հարկավոր, վոր իշխանությունից հեռացնի կոմունիստներին: Այն ժամանակ նա մերկ ձեռքերով կը տիրանա խորհուրդներին և մասսաներին ցույց կը տա բուրժուական «դեմոկրատիայի» բոլոր հրաշալիքները: Ահա թե ինչու Խորհրդային Ռուսաստանում էլ 1920—21 թ. թ. հակահեղափոխականները հանդես յեկան հանուն «Խորհուրդների, բայց առանց կոմունիստների» լոզունգով:

Սխալ է կուսակցության ղեկավար դերը հասկանալ իբրեվ նրա դիկտատուրա

Խորհուրդներն առանց կոմունիստական կուսակցության ղեկավարության չեն կարող հեղափոխական իշխանություն լինել, վորովհետև չեն կարող իրենց շուրջը կազմակերպել բանվորներին ու գյուղացիներին կապիտալիզմի դեմ պայքարելու համար: Բայց չի կարելի կուսակցության ղեկավարությունն այնպես հասկանալ, վոր կուսակցությունը կարող է ուժով **հարկադրել** Խորհուրդներին և աշխատավորների մյուս բոլոր կազմակերպություններին իր ցուցմունքներով վարվել: Այստեղ բանն այլ է, վորովհետև կուսակցությունը փոքրամասնություն է աշխատավոր մասսաների մեջ: Բանն այստեղ այն հեղինակությունն ու վստահությունն է, վոր կուսակցությունն ունի մասսաներում և վորը նրան օգնում է պարզաբանել իր գծի ճշտությունը և դրա շնորհիվ նրանց տանել իր յետևից: Մեզ մոտ կուսակցության բռնական իշխանություն (դիկտատուրա) չե՝ մեզ մոտ **բանվոր դասակարգի դիկտատուրա չե յեվ վոչ թե կուսակցության:** Կուսակցությունը ղեկավարում է վոչ թե այն պատճառով, վոր բռնի գրավել է իշխանությունը (ինչպես այդ ասում են Կաուցկու*) նման սոցիալ-դավաճանները) և տիրում է աշխատավորներին, այլ այն պատճառով, վոր նրա յետևից գնում նրան վստահանում են միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ:

*) Կաուցկի—գերմանական սոցիալ-դեմոկրատ: Մի ժամանակ նա հեղափոխական մարքսիստ էր: Իմպերիալիստական պատերազմի ժամանակից իվեր թեքվեց ով՝ բուրժուազիայի կողմը: Այժմ կոմունիստների ու խորհրդային իշխանության ամենաչարաժետ թշնամին է, II Ինտերնացիոնալի առաջնորդներից մեկը, բուրժուազիայի հավատարիմ ծառան:

Հ Ա Ր Ց

Ի՞նչպես են ստեղծվում խորհրդային իշխանության օրգանները ներքևից (գյուղի յեվ քաղաքի խորհուրդներից) մինչեվ վերեվ (մինչեվ Միության բարձրագույն իշխանությունները):

3. ԽՍՀ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ—ՋԱՆԱԶԱՆ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ազգային թշնամության քարոզումը յեվ մանր ժողովուրդների ճնշումը—հին կարգի հիմքերից մեկը

Համամիութենական ԿԳԿ կառուցվածքը քըննելով, մենք տեսանք, վոր խորհրդային իշխանությունն աշխատում է խուսափել ԽՍՀՄ մեջ բնակվող բազմաթիվ ազգերից ու ժողովուրդներից վորևէ մեկի իրավունքները և շահերը ամենափոքր չափով խախտելուց:

Ամեն վոք կյանքում տեսնում է, վոր զանազան ազգերի միջև թշնամության մնացորդները դեռ մինչև այժմ էլ կան մեզ մոտ: Իսկ վորտեղից է ծագում այդ թշնամությունը, ժողովուրդների այդ անվստահությունն իրար վերաբերմամբ: Ինքնակալությունը, կալվածատերերը և կապիտալիստները—ահա ովքեր են թողել մեզ այդ անիծյալ ժառանգությունը: **Ցարական կառավարությունը նրանով էլ գիմանում էր, վոր թաթարներին գրգռում էր հայերի դեմ, ռուսներին հրեաների դեմ, բելոռուսներին լեհերի դեմ—մի ազգին մյուսի դեմ: Ու միևնույն ժամանակ նա ավելի շատ, քան ռուս ազգության աշխատավորներին, ճնշում էր ցարական Ռուսաստանում բնակվող հրեաներին, լեհերին, կիրգիզներին, վրացիներին, օսերին յեվ ուրիշ, մանավանդ թույլ ու հետամնաց ազգերին:**

Այդ յեղանակով ինքնակալ կառավարությունը կռվում էր բոլոր ազգերի աշխատավորների միացման դեմ, միացում, վորի նպատակն էր հեղափոխական կռիվ մղել ինքնակալության դեմ: Օրինակ՝ յերբ մոտենում էր 1905 թվի հեղափոխությունը, ցարի ծառաներն սկսեցին համառ յեռանդով ազգային դժգոհություն բորբոքել: Այն ժամանակ կառավարությունը, պահնորդական բաժինը, վոստիկանությունը և ժանդարմերիան ամբողջ Ռուսաստանում կազմակերպում էին հրեաների ջարդեր (հրեական պոգրոմներ), աջակցում էին Կովկասում հայերի ու թաթարների կոտորածին և այլն:

Բուրժուազիային հարկավոր է ազգային թշնամությունը յեվ թույլ ժողովուրդների ճնշումը

Ու վոչ միայն ցարական կառավարությունը, այլ միշտ ու ամենուրեք կառավարող դասակարգերին—կապիտալիստներին ու կալվածատերերին—ձեռնտու չէ թշնամություն հրահրել ժողովուրդների մեջ: Ամեն մի ազգի բուրժուազիա աշխատում է իր կողմը գրավել «իր» բանվորներին ու գյուղացիներին, գրգռելով նրանց մյուս ազգերի բանվորների ու գյուղացիների դեմ:

Այս քաղաքականությունը բուրժուազիան վարում է ամեն տեղ և ամենուրեք: Ազգերի թշնամությունն իրար հետ, թույլ ժողովուրդների ճնշումն ուժեղներից — այս նրա հենարանն է, նրա իշխանության ամրապնդելու միջոցը: Նա չի չել կարող այլ կերպ վարվել: Վերցնենք, օրինակ, անգլիական բուրժուազիան: Ինչի՞ շնորհիվ էր շարունակ դիմանում նա, ինչի՞ շնորհիվ է դիմանում մինչև այժմ: Նրա շնորհիվ, որ ճնշում է Յեգիպտոսը, Հնդկաստանը, Աֆրիկայի մեծ մասը, Իրլանդիա, Չինաստանը: Նա շահագործում է այդ գաղութները, որ բնակված են թույլ, հետամնաց ազգերով, ղարհուրելի օգուտներ ստանալով այնտեղ: Իսկ անգլիական բանվորներին բուրժուազիան մինչև վերջին ժամանակները համոզում էր, որ չինացիները, նեգրերն առոր ցեղի մարդիկ են, հարկավոր չէ նրանց հաշվի առնել: Անգլիական կապիտալիստները, ինչպես և մյուս բոլորը, սարսափելի վախենում են, չը լինի թե անգլիական բանվորները միանան չինական, հնդկական, յեգիպտական բանվորների ու գյուղացիների հետ: Այս նպատակով էլ նրանք ազգային թշնամություն են հրահրում:

Ազգային թշնամության յեվ փոքր, հետամնաց ու թույլ ժողովուրդների ճնշման շնորհիվ է, որ դիմանում է իմպերիալիզմը: Առանց այդ ճնշման դեմ կռվելու չի կարելի դեն շպրտել բուրժուազիայի իշխանությունը: Այս պատճառով կոմմունիստական կուսակցությունն ամեն տեղ կռվում է դրա դեմ: Ազգային ճնշման ու թշնամության մնացորդների դեմ կռվելը խորհրդային իշխանության ու Համ. ԿԿ (բ) ամենակարևոր խնդիրներից մեկն է:

ԽՍՀՄ աշխարհում միակ պետությունն է, որ ուղիղ է լուծել ազգային հարցը

Աշխատավորները չպետք է ճնշեն իրար, դրանից նրանք ոչ մի օգուտ չունեն: Նրանք պետք է միասին կոմմունիզմ կառուցեն, և ոչ թե զանազան ազգերի բանվորների պառակտումներով ու թշնամությամբ թուլացնեն իրենց: Այս պատճառով էլ միայն խորհրդային բանվորական իշխանությունը կարողացավ ազգային թշնամությունը և ճնշումը վճռական հարված հասցնել: Կապիտալիստական պետությունների մեջ ազգային թշնամությունը շարունակ չեռում է: Իսկ ԽՍՀՄ մեջ գոյություն ունի յեղբայրություն և հաշտություն բոլոր ազգությունների միջև: ԽՍՀՄ մեջ չկա առաջվա ազգային թշնամությունը, անմիաբանությունը, այլ ընդհակառակը, ամրանում է ժողովուրդների աշխատակցությունը բանվորագյուղացիական յերկրի տնտեսության վերականգնման գործում, ամրանում է ռուս պրոլետարիատի միությունը մյուս ազգությունների աշխատավորների հետ, այսինքն, գլխավորապես, Խորհրդային Միության հետամնաց ծայրամասերի գյուղացիության հետ:

Ինչպես հայտնի յէ, ԽՍՀՄ պրոլետարիատի մեծ մասը վելիկո-

ռուսներ են: Իսկ ԽՍՀՄ մեջ բնակվող մյուս ազգերը համարյա ամբողջովին գյուղացիությունից են կազմված: Այս պատճառով խորհրդային իշխանության ճիշտ ազգային քաղաքականությունը, որ առաջարկեց առաջներում ճնշված ազգություններին, դրա հետ միասին ամրացնում է բանվորների և գյուղացիների դաշինքը: Վորպեսզի պարզաբանենք Ուկրայնայի, Ղրիմի, Թուրքմենստանի, Վրաստանի և այլն գյուղացուն կուսակցության և խորհուրդների քաղաքականությունը, հարկավոր է նրան մոտենալ իր **մայրենի** լեզվով, նրան տալ իր համար հասկանալի լեզվով թերթ, գիրք, դպրոց, ակումբ: Վորպեսզի կարելի լինի գյուղացուն գրավել դեպի խորհրդային շինարարությունը, գյուղում անկուսակցական ակտիվ ստեղծել կուսակցության շուրջը, մի խոսքով՝ աշխատավոր գյուղացիությանը քաշել սոցիալիզմի շինարարության մեջ,—իշխանությունը բնակչության հետ պետք է խոսի նրան հասկանալի լեզվով: Այլապես գյուղացին չի կարող հաղորդակցվել իշխանության հետ ու ինքը չի կարողանա մասնակցել այդ իշխանության շինարարությանը, ակտիվ աշխատել խորհուրդներում: Վորպեսզի բավարարենք գյուղացու կարիքները, պետք է որենքները, դպրոցը, հողային կարգերը, դատարանը և այլն այնպես կառուցենք, որ այդ հարմարեցրած լինի առանձին ազգությունների տնտեսական ու կենցաղային առանձնահատկություններին:

Ճանաչելով ԽՍՀՄ մեջ մտնող բոլոր հանրապետությունների իրավահավասարությունը, խորհրդային իշխանությունը չի սահմանափակվում իր յերկրում բնակվող ազգերի ազատության ու իրավունքների լոկ ճանաչումով, այլ ձգտում է, ինչքան թույլ են տալիս պետության գեռ առայժմ անբավարար միջոցները, Միության հետամնաց հանրապետությունների տնտեսական ու կուլտուրական մակարդակը բարձրացնել:

Վերջին ժամանակները Միության օգնությունը հետամնաց ագգերին արտահայտվեց այն բանով, որ մեծ ելեկտրական կայարաններ շինվեցին Վրաստանում, Հայաստանում, Ղրիմի, Կարելի ու Թաթարական հանրապետություններում: Նույն տեղերում շինված են նաև մեծ գործարաններ: Դաղստանի հանրապետության մեջ շինված է ապակու գործարան: Ադրբեջանում զարգանում են ու վերասարքավորվում նավթահանքերը, նավթատար խողովակներ անցկացվում (Գրոզնում նավթահանքերը, նավթատար խողովակներ անցկացվում (Գրոզնույց Տուապսե և Բաքվից Բաթում՝ ամբողջ Կովկասի միջով): Նույն տեղերում մի քանի գործարաններ են շինվում նավթի վերամշակման համար: Հայաստանում ու Թուրքմենստանում, ուր բամբակ է աճում, կառուցվում են մեծ մանածային տեկստիլ ֆաբրիկաներ: Սեմիրեչիեյից յերկաթուղի յե գցվում դեպի Սիբիր:

Խորհրդային իշխանությունը մեծ օգնություն է ցույց տալիս

հետամնաց հանրապետություններին նրանց կուլտուրական մակարդակը ու ընդհանուր գրագիտության զարգացումը բարձրացնելու գործում: Այդ հանրապետություններում ու մարզերում բացված են բանֆակներ, տեխնիկումներ, խորհրդային-կուսակցական դպրոցներ ու հազարավոր տարրական դպրոցներ:

Ազգային հանրապետություններում պետական օրգանների բոլոր գործավարությունը սկսում են մայրենի լեզվով կատարել: Ազգային լեզուներով լույս են տեսնում թերթեր, գրքեր, հանդեսներ:

ԽՍՀՄ ազգային քաղաքականությունն արթնացնում է արևելքի ժողովուրդներին

ԽՍՀՄ հազարավոր վերստերով սահմանակից լինելով Արևելքի ժողովուրդներին (Մոնղոլիա, Չինաստան, Աֆղանիստան, Պարսկաստան), իր ազգային քաղաքականությամբ շարունակ ավելի ու ավելի յե գրավում այդ ժողովուրդների համակրությունը: Արևմտաեվրոպական բուրժուազիան, և ամենից ավելի անգլիականը, աշխարհով մեկ աղաղակում ե, վոր մենք այդ յերկրներում ագիտացիա յենք մղում յեվրոպական հզորության դեմ: Բայց մեզ հարկավոր չե ավելի լավ ագիտացիա, քան բոլոր ազգերի իսկական հավասարության ու ազատության կենսագործումը: Մեր ազգային քաղաքականությունը, վորի մեջ փոքր ժողովուրդների ճնշման ստվերն իսկ չկա, հիանալի ագիտացիա յե հանդիսանում, վորովհետև մեզ մոտ «փոքր» ու «մեծ» ժողովուրդներ չկան՝ մեզ մոտ բոլոր ժողովուրդները հավասար են: Յեվ Արևելքի ժողովուրդները տեսնելով վոր ԽՍՀՄ գոյություն ունի հավասարություն, ու շարունակ ավելի յե ամրանում բոլոր ազգերի յեղբայրությունը, վոտքի յեն յելնում հեղափոխական-ազգային ազատագրական մեծ կռիվ մղելու ընդդեմ իմպերիալիստների:

ՀԱՐՑ

Ինչո՞ւ բուրժուական յերկրներում ազգային թշնամությունն ե տիրում, իսկ Խորհրդային Միության մեջ համարյա չքացել ե այն:

ԿՏՈՐՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ—ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

«Կապիտալիստական պետությունը բուրժուազիայի վոչ միայն ամենամեծ ու ամենահզոր կազմակերպությունն ե, դա միևնույն ժամանակ ամենաբարդ կազմակերպությունն ե, վոր ունի բազմաթիվ բաժիններ. վորոնցից շոշափուկներ են տարածվում բոլոր կողմերը: Յեվ այս բոլորի գլխավոր նպատակն ե պահպանել, ամրացնել ու լայնացնել բանվոր դասակարգի շահագործումը: Բանվոր դասակարգի դեմ կան և կոպիտ հարկադրանքի միջոցներ, և՛ հոգևոր ստրկացման միջոցներ. դրանք կազմում են կապիտալիստական պետության կարևորագույն օրգանները:

Կոպիտ հարկադրանքի միջոցներից անհրաժեշտ ե ամենից առաջ նշել բանակը, վոստիկանությունը և ժանդարմերիան, բանտը և դատարանը, նույնպես և դրանց օժանդակ օրգանները՝ լրտեսները, պրովոկատորները, շտրեյկբրեխերների ու վարձկան մարդասպանների կազմակերպությունները և այլն:

Կապիտալիստական պետության մեջ բանակը հատուկ ձևով ե կառուցված: Դրա գլուխ ե կանգնած սպայակույտը, «վոսկե ուսնոցավորները»: Նրանք ժողովվում են ազնվական-կալվածատերերի, խոշոր բուրժուազիայի և մասամբ ինտելիգենցիայի զավակներից: Նրանք—պրոլետարիատի կատաղի դասակարգային թշնամիներն են, վոր դեռ մանուկ հասակից հատուկ դպրոցներում (մեզ մոտ—կադետական և յունկերական դպրոցներում) վարժվում եյին, թե ինչպես ջարդեն զինվորների դունչը, պաշտպանեն «համազգեստի պատիվը», այսինքն լիակատար ստրկության մեջ պահեն զինվորներին և նրանց հլու արարածներ դարձնեն: Ազնվականների, կալվածատերերի և խոշոր բուրժուազիայի ամենաբարձր խավերը գեներալներ, ծովակալներ են և չիներ, շքանշաններ ու ժապավեններ ունեցողներ:

Սպաները—նույնպես աղքատներից չեն: Նրանք իրենց ձեռքում են պահում զինվորների ամբողջ մասսան: Իսկ զինվորներին այնպես են մշակում, վորպեսզի նրանք չհարցնեն էլ, թե ինչու համար են կռվում, այլ բավական ե, վոր «հրամանատարությունը նշան անի»: Այսպիսի բանակը նախանշված ե առաջին հերթին բանվորներին խաղաղացնելու համար»:

(Ն. Բուխարին և Յե. Պրեոբրաժենսկի.—«Կոմմունիզմի Այբբենը»):

2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊԱՐԱՏԸ ՁՈՒԼՎՈՒՄ Ե ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԵՏ

«Պրոլետարիատի դիկտատուրան ինքնանպատակ չե: Դիկտատուրան միջոց ե, ուղի դեպի սոցիալիզմը: Իսկ ինչ ե սոցիալիզմը: Սոցիալիզմը պրոլետարիատի դիկտատուրայի հասարակությունից անցումն ե դեպի պետություն չունեցող հասարակությունը: Բայց, վորպեսզի այդ անցումն իրականացվի, անհրաժեշտ ե նախապատրաստել պետական ապարատի վերակառուցումն այնպիսի ուղղությամբ ու այնպիսի ճանապարհով, վորոնց ոգնությամբ իրոք կարելի լինի ապահովել դիկտատուրա ունեցող հասարակության փոխարկումն պետություն չունեցող հասարակության, կոմմունիստական հասարակության: Այս նպատակին

ել ծառայում ե խորհուրդների աշխուժացման լոզունգը, խորհրդային դեմոկրատիան քաղաքում ու գյուղում հաստատելու լոզունգը, քանի վոր դասակարգի ու գյուղացիության լավագույն տարրերին երկրի անմիջական կառավարմանը մասնակից դարձնելու լոզունգը։ Բարելավել պետական ապարատը, վերակառուցել այն իսկական ձևով, վտարել նրա միջից բյուրոկրատիզմի ու քայքայման տարրերը, այն մոտիկ ու հարազատ դարձնել լայն մասսաներին — այս բոլորն անհնար ե առանց այն բանի, վոր մասսաներն իսկ մշտական ու ակտիվ ոգնություն ցույց տան պետական ապարատին։ Բայց, իր հերթին, մասսաների ակտիվ ու անընդհատ ոգնությունն անհնար ե առանց բանվորների ու գյուղացիների լավագույն տարրերին կառավարման որգանների մեջ գրավելու, առանց աշխատավոր մասսաների ամենից «ստորին» խավերի հետ պետական ապարատի ուղղակի ու անմիջական կապն իրականացնելու։

Ինչով ե տարբերվում խորհրդային պետական ապարատը բուրժուական պետական ապարատից։

Ամենից առաջ այն բանով, վոր բուրժուական պետական ապարատը կանգնած ե մասսաներից վեր, վորի շնորհիվ բնակչությունից բաժանված ե անանցանելի փակոցով և հենց իր վոգով խորթ ե ժողովրդական մասսաներին։ Մինչդեռ խորհրդային պետական ապարատը ձուլվում ե մասսաների հետ, վորովհետև այն չի կարող և չպետք ե կանգնի մասսաներից վեր, եթե ցանկանում ե իրեն պահել հենց իբրև խորհրդային պետական ապարատ, վորովհետև այն չի կարող խորթ լինել այդ մասսաներին, եթե իրոք ուզում ե ընդգրկել աշխատավորների միլիոնավոր մասսաները։ Սրա մեջ ե խորհրդային պետական ապարատի սկզբունքային տարբերություններից մեկը բուրժուական պետության ապարատից»։

(Ի. Ստալին. — «Լենինիզմի հարցերը», եջ 283—284, ռուսերեն)։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խնդրեցեք խորհրդի ձեր պատգամավորներին, վոր պատմեն խորհրդի աշխատանքների մասին դպրոցի պարապմունքների ժամանակ։ Թող նրանք հատուկ ուշադրություն դարձնեն հետևյալ հարցերի վրա. ինչպես ե դրված սեկցիաների աշխատանքը, արդյոք հաճախ են գումարվում նրանք, ինչ հարցերով են զբաղվում, ինչ հանձնաժողովներ կան նրանց կից, ինչ մասնակցություն ունեն այդ աշխատանքին անկուսակցականները և վորոնք են սեկցիաների աշխատանքի արդյունքները։ Խնդրեցեք պատգամավորներին պատմել նույնպես այն մասին, թե ինչ են արել նրանք սեկցիայի կողմից իրենց հանձնարարված աշխատանքի ասպարեզում։

2. ԽՍՀՄ քարտեզի վրա գտեք այն դաշնակից հանրապետությունը,

վորտեղ դուք ապրում եք, և տետրակում արտագրեցեք նրա կազմի մեջ մտնող ավտոնոմ հանրապետությունները, մարզերը, նահանգները և այլն։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչպես ե բուրժուազիան դեմոկրատական հանրապետությունների մեջ իր ձեռքում պահում պետական իշխանությունը։

2. Ինչու խորհուրդների աշխուժացման լոզունգը չի հակասում պրոլետարիատի դիկտատուրայի ամրացման շահերին, այլ, ընդհակառակը, զուգադիպում ե դրանց։

3. Ինչու պետք ե պայքարել «խորհուրդներ, բայց առանց կոմունիստների» լոզունգի դեմ։

4. Ինչու սխալ կլինի ասել, վոր մեզ մոտ կոմունիստական կուսակցության դիկտատուրան ե։

5. Ինչպես պետք ե մոտենա կոմունիստն ազգային հարցի լուծմանը։

ՅԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԽՍՀՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ինչի մասին է զրույցը

Նախորդ զրույցներում խոսվում էր, թե ինչ ձևով է կառուցվում մեր կուսակցությունը, ինչումն է նրա ուժը և հզորությունը, ինչից է կախված նրա համախմբվածությունը (1 և 2 զրույց), ինչպես է նա կապվում բանվոր դասակարգի ու բոլոր աշխատավորների հետ (3 և 4 զրույց):

Հետագա զրույցներում մենք պետք է հաշիվ տանք մեզ, թե կուսակցությունը, ղեկավարելով մասսաները, ինչպիսի ճանապարհներով է տանում նրանց դեպի սոցիալիստական կարգը:

Մասնավորապես, ներկա զրույցի նպատակն է ցույց տալ, թե դեպի սոցիալիզմ տանող ինչպիսի ուղի չե նշել մեր կուսակցությունը այն պարագաներում, որոնց մեջ այժմ ստիպված է գործանալ ԽՍՀՄ (ԽՍՀՄ կապիտալիստական յերկիրներով շրջապատված լինելը և սոցիալիզմի շինարարության համար սեփական ուժերով միջոցներ կուտակելու անհրաժեշտությունը):

Քննելով Լենինի հայացքները և կուսակցության ցուցումներն այս հարցի վերաբերմամբ և պարզաբանելով նոր տնտեսական քաղաքականության, իբրև ԽՍՀՄ տնտեսության սոցիալիզմի ուղիի, էությունն ու նշանակությունը մենք միաժամանակ կքննենք, թե ինչումն է մեր կուսակցության ոպպոզիցիոն բլոկի հայացքների սխալն ու վնասն այս հարցերի վերաբերմամբ:

1. ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՑՈՒՄԸ—ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՈՒՂԻ

Բանվոր դասակարգը, տապալելով բուրժուազիայի տիրապետությունը և հաստատելով իր դիկտատուրան, անհապաղ դիմեց տնտեսության սոցիալիստական շինարարությանը: Ամբողջ խոշոր արդյունաբերությունը և տրանսպորտը, ամբողջ հողը և նրա մեջ գտնվող հարըս-

տությունները խլվեցին կապիտալիստների ու կալվածատերերի ձեռքից և **անցան բանվորական պետության ձեռքը**: Դրանով հիմք դրվեց ամբողջ ժողովրդական տնտեսության հետագա շարժմանը դեպի սոցիալիզմ:

Այլ կերպ ասած, սկսվեց կապիտալիզմից դեպի կոմմունիզմ անցնելու շրջանը, ամբողջ տնտեսությունը նոր հիմունքներով վերակառուցելու շրջանը:

Մեր յերկրում այդ սոցիալիստական վերակառուցումը քիչ դըժվարությունների չի հանդիպում: Մենք սոցիալիզմ ենք կառուցում Յեվրոպայի ամենահետամնաց յերկրներից մեկում: Մեր արդյունաբերությունը բավականաչափ զարգացած չէ: ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ գերիշխում է գյուղատնտեսությունը, որ կազմված է 22 միլիոն գյուղացիական մանր ծխերից: Ամեն մի առանձին գյուղացիական ծուխ աշխատում է իր հողի կտորի վրա՝ ամենահետամնաց գործիքների ու հողի մշակման ամենահետամնաց յեղանակների օգնությամբ: Մեզ մոտ մեծ տեղ է բռնում նաև մանր արտադրությունը, որը, գըլխավորապես, սպասարկում է գյուղը:

Իմպերիալիստական պատերազմը և քաղաքացիական կռիվը խիստ վնասեցին մեր յերկրի տնտեսությունը: Մենք դրանցից դուրս յեկանք խիստ քայքայված—1921 թ. դեմ արդյունաբերության արտադրությունը մինչպատերազմական մակարդակի համեմատությամբ՝ կրճատվել էր **հինգ անգամ**, գյուղատնտեսությունն անկման էր հասել, տրանսպորտը համարյա կանգ առել: Հոկտեմբերյան հեղափոխության թշնամիներին չհաջողվեց քաղաքացիական կռվում զենքի ուժով վերականգնել կապիտալիստների ու կալվածատերերի տապալված իշխանությունը, բայց դրա փոխարեն նրանք ավերեցին մեր յերկիրը և դրանով առավել դըժվարություններ ստեղծեցին սոցիալիզմի շինարարության համար:

Մեր կուսակցության առաջ կանգնեց մի դժվար խնդիր՝ այնպես կառուցել մեր տնտեսական քաղաքականությունը, որպեսզի այս հետամնաց, ավերված գյուղացիական յերկիրը հնարավոր լինի քայքայումից դուրս բերել ու հասցնել նոր, սոցիալիստական կարգին: Մեր կուսակցությունը՝ Լենինի ղեկավարությամբ՝ այդպիսի քաղաքականություն ել նշեց, հենց որ մեր յերկիրը խաղաղ շինարարության անցավ:

«Ռազմական կոմմունիզմի» քաղաքականությունից, որ ստիպված էինք վարել ներքին ու արտաքին հակահեղափոխության դեմ մղած կատաղի քաղաքացիական կռվի ժամանակ, բանվոր դասակարգը՝ Համ. ԿԿ (բ.) ղեկավարությամբ՝ անցավ «Նոր տնտեսական քաղաքականության», որ (ռուսերեն) կրճատ կոչվում է «ՆԵՊ»: Քննենք, թե որոնք են լենինյան այս քաղաքականության հիմքերը, որ մինչև այժմ էլ վարում է մեր կուսակցությունը:

Մենք պետք է վերակառուցենք գյուղացիական մանր տնտեսությունը

Ինչպես արդեն ասված է, մենք մեր շինարարության մեջ ձգտում ենք **սոցիալիստական տնտեսության** հաստատման։ Կարճ պարզաբանենք, թե ինչ է սոցիալիզմը։ Սոցիալիզմը—այդ մի կարգ է, վոր հիմնված է **խոշոր հասարակական արտադրության** վրա։ Հսկայական ֆաբրիկաներ ու գործարաններ, խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, զարգացած տրանսպորտ—ահա սոցիալիստական տնտեսության հիմքը։ Սոցիալիզմի ժամանակ չեն լինի մասնավոր սեփականատերեր—շահագործողներ, **չեն լինի միանձնյա մանր տնտեսություններ**—ամբողջ ժողովրդական տնտեսությունը կը վարի ամբողջ հասարակությունը միասնական տնտեսական պլանով և առաջավոր մեքենային տեխնիկայի հիման վրա։

Յեվ այս պատճառով,—այն բանից հետո, յերբ հողը, խոշոր արդյունաբերությունն անցել են բանվորական պետության ձեռքը,—դեպի սոցիալիզմը տանող ուղիի վրա ամենադժվար խնդիրը հանդիսանում է **գյուղական մանր տնտեսության վերակազմությունը, նրա սոցիալիստական վերակառուցումը**։ Մենք պետք է միացնենք միլիոնավոր գյուղացիների մանր, փոշիացած տնտեսությունը, ստեղծենք հասարակական խոշոր գյուղատնտեսական արտադրություն, միասնական պլանի մեջ առնենք թե՛ արդյունաբերությունը և թե գյուղատնտեսությունը իբրև միասնական հասարակական պլանային տնտեսության մասեր։

Գյուղացիության տնտեսական ձևը (уклад) սոցիալիստական ձևով վերակառուցել—նշանակում է ամենից առաջ գյուղացիական տնտեսությունն ավելի բարձր աստիճանի հասցնել։ Մի օրինակով պարզենք այս։ Յեթե համեմատենք տնայնագործի մանր արհեստանոցը խոշոր գործարանի հետ, կը տեսնենք, վոր ֆաբրիկա-գործարանային արտադրությունը հսկայական չափով բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և հսկայական չափով ավելացնում արտադրվող արդյունքները։ Այդպես էլ գյուղացիական մանր տնտեսությունից խոշորին անցնելը հսկայական առավելություններ ունի։ Միայն **խոշոր** տնտեսության մեջ կարող են լայնորեն ու օգտակար կերպով կիրառվել ամենակատարելագործված **գյուղատնտեսական գործիքները յեվ մեքենաները**։ Տրակտորը, ելեքտրական գութանը, շոգու ուժով աշխատող կալսելու և հնձելու մեքենաները մատչելի ու կիրառելի յեն միայն խոշոր տնտեսության մեջ։ Առանձին գյուղացու ուժից վեր է տրակտոր կամ կալսելու մեքենա ձեռք բերել։ Դրանց կիրառումը օգտակար էլ չէ առանձին մանր տնտեսության մեջ, վորովհետև դրանք այնտեղ լրիվին չեն բեռնվի։ Այս պատճառով գյուղացիները խոշոր գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բերելու և օգտագործելու համար պետք է միանան և կազմեն արտելներ, մեքենային ընկերություններ, հավաքական տըն-

տեսություններ։ **Հավաքականի** սիստեմը լավ արդյունքներ է տալիս վոչ թե մանր հողաշերտի վրա, այլ խոշոր գյուղատնտեսական ձեռնարկության մեջ։ **Պարարտանյութերի** լայն կիրառումը, գյուղատնտեսական պրոդուկցիայի վերամշակումը (կաթը—յուղի, միսը—կոնսերվի և այլն), **բանվորական ուժի** լիակատար օգտագործումը, գիտական հիմունքներով **հողի մշակումը**, անասունների հոգատարությունը և այլն—այս բոլորը հնարավոր է վոչ թե մանր, այլ խոշոր տնտեսության մեջ։

Կոմունիստական կուսակցությունն էլ պայքարում է այն բանի համար, վորպեսզի մեր հետամնաց գյուղը վերակառուցելով, այն խոշոր հասարակական արտադրության ռելսերի վրա փոխադրի, գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը ձուլե, կազմելով միասնական սոցիալիստական տնտեսություն։

Գյուղը սոցիալիզմի կը հասնի խոշոր արդյունաբերության օգնությամբ

Այս խնդիրը կարելի չե իրականացնել միայն հզոր, զարգացած **խոշոր արդյունաբերության** օգնությամբ։ Գյուղը հրամանով չի կարելի սոցիալիզմի հասցնել։ Գյուղը, միացնելով իր մանր տնտեսությունները կոոպերացիայի մեջ, սոցիալիզմի կանցնի ելեքտրական եներգիայի, տրակտորների, կատարելագործված գյուղատնտեսական մեքենաների, հանքային պարարտացման նյութերի և այլն օգնությամբ։ Այսպիսի խոշոր գյուղատնտեսական արտադրություն ստեղծվում է նաև կապիտալիզմի պայմաններում, բայց այնտեղ այդ կենտրոնացած է մի բուռն կապիտալիստների, կալվածատերերի, հարուստ-կուլակների, խոշոր տնտեսատերերի ձեռքում։ Այդ խոշոր գյուղատնտեսական արտադրությունը կապիտալիզմի ժամանակ ճնշում ու դուրս է մղում մանրին, քայքայում ու պրոլետարիատի շարքերն է նետում բազմաթիվ մանր գյուղացիներին։

Մեր պայմաններում, սոցիալիզմի-շինարարության պայմաններում, գործությունն այլ է։ Այստեղ խոշոր արտադրությունը հաղթում է այն բանով, վոր աստիճանաբար գյուղացիական տնտեսությունների ամբողջ մասսան միանում է տնտեսությունը միասին վարելու, մեքենաները միասին կիրառելու, ինվենտարը, բանվորական ուժը լավագույն ձևով օգտագործելու և այլն համար։ Վորպեսզի հնարավոր լինի գյուղացիական մանր տնտեսությունների միացումը, պահանջվում է սոցիալիստական արդյունաբերության այնպիսի հզոր զարգացում, վորի ժամանակ գյուղը նրանից ստանար գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ, պարարտանյութեր, ելեքտրական եներգիա։

Մենք արդեն տեսանք, վոր հենց պրոլետարիատն է ղեկավարում բոլոր աշխատավորներին սոցիալիզմի համար մղվող կռվում։ Այժմ տեսնում ենք, վոր հենց **խոշոր արդյունաբերությունն** է ղեկավարում գյուղատնտեսությունը, յերբ այն անցնում է խոշոր սոցիալիստական

արտադրության ռելսերի վրա: Ահա թե ինչու պրոլետարիատը, սոցիալիզմ կառուցելով, իր տնտեսական քաղաքականության գլխավոր խնդիրը համարում ե յերկրի **ինդուստրիացումը**:

Այս նշանակում ե, վոր բանվոր դասակարգը լարում ե իր բոլոր ուժերը, վորպեսզի զարգացնի արդյունաբերությունը, մեր յերկիրը հետամնաց հողագործական յերկրից առաջավոր արդյունաբերական յերկիր դարձնի: Մենք ցանկանում ենք սեփական ուժերով, արտադրել վոչ միայն սպառման առարկաներ (մանուֆակտուրա, կոշիկ, շաքար և այլն), այլ և արտադրության միջոցներ, այսինքն մեքենաներ ու սարքավորում հենց արդյունաբերության և գյուղատնտեսության համար: Մենք ցանկանում ենք ծածկել ամբողջ յերկիրը հզոր ելեկտրակայանների ցանցով, վորոնք եներգիա տան վոչ միայն ֆաբրիկաներին ու գործարաններին, այլև գյուղին: Մենք ցանկանում ենք յերկաթով ու պղնձով, ածուխով ու նավթով, մարգանեցով ու հանքային պարարտանյութերով հարուստ մեր յերկրում կառուցել տեխնիքապես բարձր զարգացած արդյունաբերություն: Այն ժամանակ գյուղատնտեսությունն էլ արդյունաբերության ղեկավարությամբ ելեկտրականության, մեքենաների և այլն օգնությամբ կանցնի խոշոր արտադրության:

Ինդուստրիացումը — յերկրի արտադրողական ուժերի աճման հիմք

Սոցիալիստական կարգը, վորին մենք ձգտում ենք, կը վերացնի ժողովրդի լայն մասսաների կարիքն ու աղքատությունը: Յերբ սոցիալիստական կարգերը կը հասնեն իրենց զարգացման բարձրագույն կետին *), այն ժամանակ լիակատար հավասարություն կը հաստատվի մարդկանց միջև: Բայց կոմմունիզմի ժամանակ հավասարությունն «աղքատության հավասարություն» չե: Այդ բանվոր դասակարգի թշնամիներն են բանն այնպես ներկայացնում, վոր իբր թե կոմմունիզմը կը հասցնի ընդհանուր աղքատացման: Զրպարտություն և անհեթեթություն: Մեր խնդիրն ե՝ չեղած բարձրության հասցնել խորհրդային յերկրի հարստությունը, հասնել արտադրողական ուժերի այնպիսի բարձր զարգացման, վորպեսզի կարելի լինի լիովին բավարարել աշխատավորների ամբողջ մասսայի պահանջները: Կոմմունիստական կարգն իրականացնել և տալ «ամեն մեկին ըստ իր պահանջների» կարելի յե միայն ծաղկած արդյունաբերության, զարգացած հողագործության, աշխատանքի բարձր արտադրողականության հիման վրա, վորովհետև այդ բոլորը հնարավորություն կտա արտադրել շատ ու շատ անգամ ավելի հաց և միս, կոշիկ ու մահուդ, գիրք ու թերթ, շատ ավելի **մեքենաներ**, վորոնք կը խնայեն ու կը հեշտացնեն մարդու աշխատանքը:

*) Սոցիալիզմի զարգացման այդ բարձրագույն ետապը կոչվում ե կոմմունիզմ:

Կառուցել նոր, շարունակ ավելի խոշոր ու ավելի սարքավորված գործարաններ, կառուցել հզոր ելեկտրակայաններ՝ անցնել պապերից մնացած արորից ու յեռադաշտից տրակտորի ու բազմադաշտի, հանքային պարարտանյութերի,— ահա մեր տնտեսության վերելքի և սոցիալիզմի ուղղությամբ աճելու ուղին: Արդյունաբերությունը—այդ աճման հիմքն ե, վորովհետև հենց արդյունաբերությունն ե իր հետ բերում լավագույն տեխնիկա, լավագույն մեքենաներ, աշխատանքի բարձր արտադրողականություն:

Յերկրի ինդուստրիացումը խիստ կը բարձրացնի մեր արդյունաբերությունը յեվ դրա հետ էլ մեր յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսությունը:

Յերկրի ինդուստրիացումը միևնույն ժամանակ կը վոչնչացնի մեր տնտեսական կախումն ոտարերկրյա կապիտալից:

Ցարական Ռուսաստանն արտասահմանից ներմուծում եր ամենապարզ մեքենաներ և արդյունաբերական սարքավորում, քիմիական արդյունքներ, արդյունաբերության հում նյութ, կատարելագործված գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ և այլն:

Մինչհեղափոխական տնտեսության այս ժառանգությունը յերևան ե գալիս նաև ԽՍՀՄ տնտեսության մեջ: Այսպիսի դրությունը մեզ կախման մեջ ե դնում ոտարերկրյա կապիտալիստներից: Առաջին իսկ ընդհարման ժամանակ՝ նրանք կարող են նորից ԽՍՀՄ շրջափակել և դրանով արգելակել մեր տնտեսական շինարարությունը: **Արդյունաբերության յեվ գյուղատնտեսության համար մեքենաներ ու սարքավորման սեփական արտադրության** կազմակերպությունը—այս ե ԽՍՀՄ ազատագրման ուղին ոտարերկրյա կախումից: Իսկ այս էլ հենց ինդուստրիացումն ե:

Ի հարկե, վորպեսզի կարողանանք մեզ մոտ սկսել սեփական մեքենաշինություն, հզոր մետաղագործություն, քիմիական արդյունաբերություն և այլն,—մենք դեռ ստիպված ենք ներմուծել արտասահմանից մեքենաներ ու սարքավորում: Բայց ամբողջ բանն այն ե, վոր մենք արտասահմանյան այդ մեքենաներն ոգտագործում ենք **սեփական** մեքենաշինություն կազմակերպելու համար, վորպեսզի ամեն մի նոր տարում շարունակ ավելի քիչ կարիք զգանք արտասահմանից մեքենաներ ներմուծելու:

Տնտեսական անկախության հասնել ԽՍՀՄ համար, ի հարկե, ամենևին չի նշանակում փակվել իր տնտեսության ներսում և դադարեցնել առևտուրը կապիտալիստական յերկրների հետ: Ընդհակառակը, տնտեսության աճման հետ կաճի նաև մեր արտաքին առևտուրը: Բայց մենք այն ժամանակ արդեն այլ կերպ առևտուր կանենք: Այժմ մենք արտահանում ենք գլխավորապես հաց, վուշ, յուղ և գյուղատնտեսու-

թյան այլ արդյունքներ, իսկ ներմուծում ենք մեքենաներ, մետաղագործական շինվածքներ և արդյունաբերական արտադրության այլ առարկաներ։ ԽՍՀՄ ինդուստրիացումը կը փոխի այս դրությունը—մենք համաշխարհային շուկայում հանդես կը գանք վոչ միայն իբրև գյուղատնտեսական յերկիր, այլ իբրև արդյունաբերական։ Իսկ այս արդեն բոլորովին փոխում է դրությունը, վորովհետև մենք կախված չենք լինի համաշխարհային շուկայից տնտեսության այնպիսի մի **հիմնական** ճյուղում, ինչպիսին մեքենաների արտադրությունն է։

Նշանակում է, թե յերկրի տնտեսությունը բարձրացնելու, թե գյուղացիական մանր տնտեսությունը սոցիալիստական յեղանակով վերակառուցելու, և թե ոտարերկրյա կապիտալին ստրուկ չդառնալու համար մենք պետք է ավելի լայն զարգացնենք մեր արդյունաբերությունը և նրա համար սարքավորում արտադրելը, պետք է ինդուստրիացնենք մեր յերկիրը։

ՀԱՐՑ

Վորոնք են կուսակցության տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրները սոցիալիզմ տանող ճանապարհի վրա։

2. ՆԵՊ-ը ՄԻԱԿ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Հինգ ձեվ (уклад) Խոսելով սոցիալիզմին անցնելու մասին, **մեր եկոնոմիկայում** հարկավոր է ամենից առաջ հաշվառել, թե **ինչից** ենք անցնում, ինչպիսի տնտեսություն ունենք մենք այժմ։ Մեր այժմյան տնտեսությունը կապիտալիզմից սոցիալիզմի **անցման** տնտեսություն է։ Իսկ այդ նշանակում է, վոր մեզ մոտ խառնված են **զանազան** տնտեսական **ձեվեր**, այսինքն տնտեսության տարբեր տեսակներ։

Վորոնք են այդ ձեվերը։ Ընկեր Լենինը Նեպին անցնելիս կուսակցությանը հիշեցրեց մեր տնտեսության այս բազմերանգությունը։ Մեզ մոտ ստեղծված է և տարեց-տարի զարգանում է տնտեսության **սոցիալիստական** մասը։ Այս մեր տնտեսության մի ձեվն է։ Սրան են վերաբերում պետական արդյունաբերությունը և տրանսպորտը, նույնպես և պետական առեվտուրը—ներքին ու արտաքին—պետական դրամական ու վարկային սիստեմը (բանկերը), վորոշ չափով նաև կոոպերացիան։ Այստեղ կապիտալիստները վերացված են։ Պետական ձեռնարկություններում յերկու դասակարգ չկա, պայքար չկա պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև։ Պետական տնտեսությունը վարվում է միասնական պլանով։

Մեր տնտեսության մյուս մասը 22 միլիոն գյուղացիական մանր

տնտեսություններն են։ Գյուղացիները կազմում են ԽՍՀՄ բնակչության հինգ վեցերորդը։ Գյուղատնտեսությունը, վոր համարյա ամբողջովին գյուղացիական է, վերջին տարիներում (1926—1927 թ. թ.) մատակարարում է յերկրի ամբողջ արտադրության կեսից ավելին (ըստ արժեքի)։ Իսկ գյուղացիական տնտեսության և դրա նման միլիոնավոր տնայնագործների ու արհեստավորների տնտեսության ձեվը, հարկավ, հեռու չե սոցիալիզմից։ Միլիոնավոր մանր տնտեսություններ, ցրված ամբողջ յերկրում, հետամնաց, վորոնք տնտեսավարում են ու վաճառահանում իրենց արդյունքը համարյա բացառապես մենակ,—ահա ինչպես է ԽՍՀՄ տնտեսության այս յերկրորդ ձեվը։

Սակայն, այս տնտեսության կապիտալիստական ձեվ ել չե, վորովհետև այստեղ, իբրև կանոն, ամեն մեկն աշխատում է իր սեփական մանր տնտեսության մեջ՝ առանց վարձու աշխատանքի։ Այս—**մանր ապրանքային** (այսինքն շուկայի համար աշխատող) **արտադրություն** է։

Մեզ մոտ կան նույնիսկ այնպիսի խուլ անկյուններ ել, վորտեղ գյուղացիները շուկայի հետ կապված չեն և ամեն ինչ իրենք են պատրաստում իրենց համար։ Այսպիսի տնտեսությունը կոչվում է **բնական** (Նատուրալ)։ Բնատնտեսություն գոյություն ունի, գլխավորապես, մեր անծայր յերկրի ծայրամասերում—հեռավոր Հյուսիսում, Կիրգիզիայում, Կազակստանում, Յակուտիայում և այլն։ Այս յերրորդ ձեվը, սակայն, մահանում է և մեր յերկրի տնտեսության մեջ մեծ դեր չի խաղում։

Մեր տնտեսության մի մասն ել **մասնավոր կապիտալիզմն** է։ Այս մեզ մոտ դեռ բավական շատ է մնացել։ 1926—27 թ. մասնավոր առեվտուրն ուներ բոլոր առևտրական կապիտալների համարյա մի յերրորդը (յերեք տասերորդը)։ ԽՍՀՄ ամբողջ առևտրական շրջաբերության (оборот) մոտ մեկ հինգերորդը նրա ձեռքին եր։ Մասնավոր արդյունաբերողները տնայնագործների հետ միասին արտադրում եյին բոլոր արդյունաբերական շինվածքների մեկ վեցերորդ մասը։ Գյուղական կուլակները շուկա եյին հանում ամբողջ հացի մեկ իններորդ մասը։ Այս է **մասնավոր կապիտալիզմը**—մեր տնտեսության չորրորդ ձեվը։

Բանվորական պետությունը ձգտում է **վերահսկողության տակ առնել** այն կապիտալիստական տնտեսությունները, վորոնք դեռ գոյություն ունեն մեզ մոտ։ Վերահսկողության տակ առնել—նշանակում է հաշվառել այդ տնտեսությունները, կանոնավորել, կախման մեջ դնել բանվորական պետությունից, ուղղել դրանց այն ճանապարհով, վոր ոգտակար է պրոլետարիատին։ Այսպիսի կապիտալիզմը, վոր մեր պետական վերահսկողության տակ է դրված, Լենինը կոչում եր **պետական կապիտալիզմ** պրոլետարական պետության մեջ։

Պետական կապիտալիզմի ամենապարզ օրինակը պրոլետարական պետությունից կոնցեսիայով վերցրած ու վարձակալած ձեռնարկություններն են։ Կոնցեսիաները Խորհրդային իշխանության պայմանագրերն են օտարերկրյա կապիտալիստների հետ, պայմանագրեր, որոնցով կապիտալիստները պետությունից որոշ ժամկետով իրավունք են ստանում մշակել հողը, անտառները կամ հողի ընդերքը, կառուցել իրենց ձեռնարկությունները և այլն։ Խորհրդային իշխանությունը համաձայնվում է կոնցեսիաներ տալ այն ժամանակ, երբ մոտակա տարիներում մեր ուժերից վեր է օգտագործել այդ հողերը, ընդերքը կամ անտառները։ Մեզանից կոնցեսիա ստացած կապիտալիստները ենթարկվում են որոշ պայմանների՝ աշխատում են որոշ արտադրական ծրագրով, կառուցում են պայմանագրով որոշված շենքերը, ենթարկվում են մեր աշխատանքի օրենքներին, վճարում են տուրքեր, մուծում են պետական գանձարկղն իրենց արտադրության և իրենց շահույթների մասնաբաժինները։ Իսկ պայմանագրի ժամկետը լրանալուց հետո կոնցեսիաների ամբողջ ձեռնարկությունը անցնում է Խորհրդային իշխանության։ Այսպիսի կոնցեսիան ձեռնարկությունը — **կապիտալիստական** ձեռնարկություն է։ Բայց սովորական մասնավոր կապիտալիզմից դա տարբերվում է այն բանով, որ մեր վերահսկողության տակ է, մեր կողմից հաշվառվում է, մեր միջոցով որոշ չափով կանոնավորվում է, այնպես որ մենք կարող ենք սահմանափակել այդ կապիտալիզմը, կարող ենք այդ ուղղել տնտեսության հենց այն ճյուղերը, որը հատկացնում ենք դրան և այլն։ Մեզ մոտ պետական կապիտալիզմը չնչին չափով է զարգացած։ Այսպես, առ մեկն հոկտեմբերի 1926 թ. կոնցեսիաներում կար ընդամենը մոտ 50,000 բանվոր։ Եթե հիշենք, որ 1926/27 թ. պետական սոցիալիստական արդյունաբերության մեջ կար մոտ 2 $^1/_2$ միլիոն մարդ, այն ժամանակ պարզ կլինի, թե ինչ չնչին տեղ է բռնում մեզ մոտ պետական կապիտալիզմը։ Այսպես է մեր տնտեսության հինգերորդ ձևը — պետական կապիտալիզմը։

Այսպես ուրեմն, սոցիալիզմին անցնող մեր յերկրում խառնըված են իրար հինգ տարբեր տնտեսական ձևեր՝ սոցիալիզմ, պետական կապիտալիզմ, մասնավոր կապիտալիզմ, մանր ապրանքային տնտեսություն, ու տեղ-տեղ էլ դեռ մնացել է նաև բնատնտեսությունը։

Մեր յերկրում սոցիալիստական շինարարության դժվարությունը հենց այն է, որ մենք պետք է հաղթենք, դուրս մղենք տնտեսության կապիտալիստական և պետկապիտալիստական ձևերը և դեպի սոցիալիզմ առաջնորդենք մանր տնտեսությունը։ **Մեզ մոտ գերիշխող գյուղացիական մանր տնտեսությունից մենք պետք է անցնենք**

խոշոր հասարակական արտադրության։ Մենք արդեն տեսանք, որ այս խնդիրը կարելի չէ լուծել միայն ամբողջ յերկրի, հատկապես գյուղի, տնտեսական ձևն աստիճանաբար վերակառուցող հզոր սոցիալիստական արդյունաբերություն ստեղծելով։

Պետական արդյունաբերության կապը գյուղացիական տնտեսության հետ

Մեր պետական արդյունաբերության աճումն անհնար է առանց նրա արդյունքները գյուղատնտեսության արդյունքների հետ փոխանակելու։ Առանց վուշի և բրդի կանգ կառնեն մանածագործական ֆաբրիկաները, առանց ճակնդեղի կանգ կառնեն շաքարի գործարանները և այլն։ Արդյունաբերությունը չի կարող աշխատել առանց գյուղացիական հում նյութի և պարենի։ Գյուղացիական տնտեսությունը նույնպես չի կարող զարգանալ առանց իր արդյունքները փոխանակելու արդյունաբերության արդյունքների հետ։ Գյուղացին, արդյունաբերությունից շինվածքներ չստանալով, կը վերադառնա անդրջրհեղեղյան ձեռքի արտադրության, տանը կտոր գործելուն, մարխին և ծխոտ խրճիթին։ Առանց գութանների, առանց գյուղատնտեսական մեքենաների գյուղացիական տնտեսությունը չի կարող բարձրանալ։ Եթե աճի գյուղացիական տնտեսությունը, այն ժամանակ խոշոր պետական արդյունաբերությունը կունենա վաճառահանության լայն շուկա և կը կարողանա ընդարձակվել։ Եթե լայնանում է պետական արդյունաբերությունը, գյուղացին ստանում է անհրաժեշտ գործվածքներ և մեքենաներ, բարձրացնում է իր տնտեսությունը, կարող է անցնել խոշոր արտադրության։ **Յերկրի հարստության աճումը, արտադրողական ուժերի զարգացումը յեվ խոշոր արտադրության հաղթանակը կախված է պետական արդյունաբերության կապից գյուղացիական տնտեսության հետ։**

Մեր կուսակցության տնտեսական քաղաքականությունն ուղղված է այն բանին, որպեսզի ամրացնի այդ կապը, քաղաքի ու գյուղի, սոցիալիստական արդյունաբերության ու գյուղացիական մանր տնտեսության տնտեսական այդ միությունը։

Գնալ դեպի սոցիալիզմ ամբողջ գյուղացիական մասսայի հետ **միասին** — ահա մեր տնտեսական քաղաքականության հիմնական խընդիրը, որ կտակել է Լենինը և որն իրականացնում է մեր կուսակցությունը։ Իսկ գնալ գյուղացիության հետ — նշանակում է գյուղատնտեսության վերելքի կուրսը բռնել, այն տեղափոխելով սոցիալիստական ռելսերի վրա՝ նրա տնտեսական ու կուլտուրական վերելքի հետ միասին։

Մեր գյուղացիական տնտեսությունը դեռ շատ աղքատ է։ Չխոսելով չքավորի մասին, նույնիսկ միջակի համար յերբեմն ծանր է գնել ոչ միայն բարդ և թանկ մեքենա, այլև ուղղակի լավ գութան։ Արոր,

լավագույն դեպքում գութան և չարու, յեռադաշտ և վատ բերք, թույլ (лебеда) և հարդի մեջ սովի տարիներում, տարեց տարի գարնանը ցորենի պակաս,— ահա մեր գյուղացիական սովորական տնտեսությունների պատկերը: Գյուղացիների մեկ յերրորդից ավելին ձի չունի: Մոտ 8 միլիոն չքավոր գյուղացի հազիվ են իրենց գոյությունը պահում մի կտոր հողի վրա:

Առանց գյուղատնտեսության վերելքի՝ մեր գյուղը չի անցնի հողի մեքենայական մշակման, խոշոր արտադրության: Առանց գյուղատնտեսության վերելքի անհնար է նաև յերկրի ինդուստրիացումը, վորովհետև միայն շատ հաց ու հում նյութ արտադրող, շատ արդյունաբերական ապրանքներ գնող և աճող գյուղատնտեսության հիման վրա կարող է աճել նաև արդյունաբերությունը:

Ահա թե ինչու կուսակցության տնտեսական քաղաքականությունն այնպես է կառուցված, վոր պրոլետարական արդյունաբերությունը կապվի գյուղացիական տնտեսության հետ և նրա հետ միասին առաջ շարժվի: Քաղաքի այս կապն էլ գյուղի հետ ամենից առաջ հնարավոր է նրանց մեջ փոխանակությունը զարգացնելով:

Առևտուրը — քաղաքի յեվ գյուղի կապի գործիք

Արդյունաբերության և գյուղատնտեսության միջև փոխանակության ամենապարզ ձևը կը լիներ քաղաքի և գյուղի կազմակերպված արդյունափոխանակությունը: Բայց մենք չենք կարող միանգամից կազմակերպել այդպիսի արդյունափոխանակություն: Մեր արդյունաբերության աղքատության, գյուղացիական տնտեսության փոշիացած, մեր վոչ-բավականաչափ կազմակերպված լինելու պայմաններում մենք չենք կարող գործն այնպես դնել, վորպեսզի ստանայինք գյուղացիական ամեն մի ծուխ:

Առայժմ պետությունը չի կարող մտնել 22 միլիոն գյուղացիական ծխերից ամեն մեկին առանձին-առանձին, նրանից վերցնել հաց, վուշ և այլն ու նրան տալ արդյունաբերական արտադրության ապրանքներ:

Չէ՞ վոր այն ամենը, ինչ հարկավոր է գյուղացուն, մեր արդյունաբերությունը դեռ չի պատրաստում: Ցաքանը, սայլը, ամանեղենը, խամուտը, փոցխը, բահը, կոշիկները, դանակները — այս բոլորը գյուղացուն հաճախ մատակարարում է վոչ թե պետական գործարանը, այլ տնայնագործը:

Վոլոգդայի նահանգի գյուղացուն մի բան է հարկավոր, իսկ Ղրիմի գյուղացուն՝ մի այլ բան: Նրանց սովորությունները, կարիքները և տնտեսությունը զանազան են: Հեշտ չե մեր արդյունաբերությունը և առևտուրը հարմարեցնել նրանց, հաշվառել և բավարարել այդ բոլոր բազմատեսակ պահանջները:

Ամենից ավելի հեշտ այդ կարելի յե անել առևտրի օգնությամբ:

Գյուղացին սեփականատեր է: Նա ընդարձակում է ցանքերը, բարձրացնում է բերքատվությունը, մեծացնում է կովերի, ձիերի և խոզերի թիվը միայն այն պայմանով, յեթե անմիջապես օգուտ է ստանում իր տնտեսությունից: Ինչքան ավելի արտադրի նա, այնքան ավելի կը վաճառի շուկայում, այնքան ավելի դրամ ու ապրանքներ կը ստանա: Այսպիսով գյուղացին կարիք ունի շուկայի, իր սեփական արդյունքը վաճառելու ազատության, վորպեսզի դրա փոխարեն ձեռք բերի հարկավոր արդյունաբերական ապրանքներ: Առևտրի ազատություն—ահա ինչ է անհրաժեշտ գյուղացուն, վորպեսզի նա կարողանա վարել իր միանձնյա տնտեսությունը և զարգացնել այն: Մենք էլ 1921 թ. թույլատրեցինք այդ ազատ առևտուրը:

Յերբ մենք թույլատրեցինք ազատ առևտուրը, մտածված հաշիվ եյինք արել, վոր առևտրի ազատության ժամանակ գյուղացիական տնտեսությունը կամրանա, ավելի շատ հացահատիկ, հում նյութ, պարեն կտա, կսկսի ավելի շատ արդյունաբերական գործվածքներ գնել. ամբողջ յերկիրը կկարողանա ավելի շատ հարկ վճարել. պետությունը միջոցներ կը կուտակի մեր պետական արդյունաբերության զարգացման և ընդլայնման համար, իսկ պետական արդյունաբերությունը, բարձրանալով ու ամրանալով, իր հերթին կսկսի բավարարել գյուղացիության կարիքները, անհրաժեշտ ապրանքներ կը տա, նրան կօգնի իր տնտեսությունը բարձրացնել. կուսակցությունը և խորհրդային իշխանությունը կոոպերացիայի միջոցով գյուղը կը տանեն դեպի խոշոր հասարակական արտադրություն, նրան կը գրավեն սոցիալիստական շինարարության մեջ և դրանով իսկ կը հաղթեն մասնավոր կապիտալին, վոր ստիպված եյինք թույլատրել առևտրի ու արդյունաբերության մեջ: Այսպես եր կուսակցության պլանը:

Կապիտալիզմի աճման հնարավորությունը նեպի ժամանակ

Մեր կուսակցությունը հիանալի գիտեր, վոր այդ պլանը կապված է վորոշ վտանգների հետ: Չէ՞ վոր նեպի պայմաններում անխուսափելիորեն աճում է վոչ միայն մեր արդյունաբերությունը, վոչ միայն գյուղացիական տնտեսությունը, այլև մասնավոր կապիտալը:

Առևտրի ազատության ժամանակ անկազմակերպ մանր տնտեսությունը կապիտալիզմ է ծնում:

Մանր տնայնագործների և գյուղացիների միջավայրում տեղի յե ունենում պայքար, մրցություն: Ով ավելի հարուստ է և ավելի մեծ շրջանառություն է անում, նա իրեն է յենթարկում մյուսներին, գնում է հարևանների հացահատիկը, վուշը, անասունները, տնայնագործական շինվածքները: Հարստացած տնայնագործն ուրիշներին

պատվերներ է տալիս, բանվորներ վարձում, կապիտալիստ դառնում: Հարստացած գյուղացին կուլակ է դառնում: Յերբ միլիոնավոր մանր գյուղացիները և տնայնագործները մենակ, անկազմակերպ են առևտուր անում և վոչ կոոպերացիայի միջոցով, այն ժամանակ յերևան է գալիս նրանց և քաղաքի միջև մասնավոր միջնորդը, աճում է մասնավոր առևտուրը:

Բայց արգելել մասնավոր առևտուրը, վերացնել մասնավոր արտադրությունը դեռ անհնար է: Փակել մասնավոր ձեռնարկությունները—կը նշանակեր էլ ավելի ուժեղացնել ապրանքի պակասը, հաճախ այնպիսի ապրանքի, վորը հարկավոր է գյուղացուն:

Կուսակցությունը հասկանում է, վոր նեպի ժամանակ, առևտրի ազատության յեվ մանր տնտեսության ժամանակ կապիտալի գոյությունն ու նույնիսկ վորոշ աճումն անխուսափելի յե:

Արդյոք վտանգավոր է այդ կապիտալիզմը

Բայց յեթե մենք կապիտալիզմի զարգացման սահմաններ չդնեյինք, նա կարող կը լիներ այնքան ամրանալ, վոր վտանգավոր կը դառնար մեր յերկրի սոցիալիզմի շինարարության ամբողջ գործի համար: Մենք տեսանք, թե ինչ բարենպաստ հող կա մեր գյուղատնտեսության մեջ կուլակի, մասնավոր առևտրականի ու ձեռնարկատերի աճման համար: Այս պայմաններում մասնավոր կապիտալն ամեն կերպ ջանում է նվաճել իր համար ամենահարմար դիրքեր, վորպեսզի իր «կապը» հաստատի գյուղացիության հետ, սպասարկի նրան և դրանից շահ ստանա, ճարպակալի ու հարստանա: Կապիտալիստները ջանում են մոտենալ գյուղացուն, համոզել նրան, վոր կապիտալիզմն ավելի օգտակար է, ավելի աժան և ավելի լավ ապրանք է տալիս: Պրոլետարական պետությունը մրցում է նրանց հետ, հակառակն է ապացուցում: Տեղի յե ունենում լուրջ և դաժան պայքար գյուղացիության համար: Յեթե գյուղացիական մասսան ընկնի կուլակների և բուրժուազիայի ձեռքը, այն ժամանակ գյուղի ճանապարհը դեպի սոցիալիզմ կը փակվի: Յեթե կարողացանք միջակին ու չքավորին կոոպերացիայի մեջ գրավել, նրան ավելի աժան և ավելի լավ ապրանքներ ու մեքենաներ տալ, քան մասնավորը, պետական արդյունաբերությունը զարգացնել, արտադրությունն ուժեղացնել,—այն ժամանակ հաղթանակը մերն է, պրոլետարական պետությանը, վորը յերկիրը տանում է դեպի սոցիալիզմ:

Մեզ մոտ մասնավոր կապիտալի դեմ մղվող պայքարը տեղի յե ունենում շուկայում: Շուկայում հաղթում է նա, ով ավելի լավ ու ավելի աժան է արտադրում և առևտուր անում, ով ավելի ամուր, ավելի հարուստ է և ավելի լավ կազմակերպված: Բանվորական պետությունն իր համար ապահովել է այն բոլոր դիրքերը, վորոնք հար-

կավոր են այդ հաղթանակի համար: Պրոլետարիատի քաղաքական իշխանությունը, խոշոր պետական արդյունաբերությունն և տրանսպորտը, ազգայնացված հող, արտաքին առևտրի մոնոպոլիա, ներքին պետական առևտուր, կոոպերացիա, հարկային և վարկային ապարատ,—ահա այն դիրքերը կամ «հրամայող բարձունքները», վոր գտնվում են բանվոր դասակարգի ձեռքին: Յեվ ինչքան ավելի յե ամրանում մեր տնտեսությունը, ինչքան ավելի յենք սովորում տիրել մեր հրամայող բարձունքները, այնքան ավելի հեշտությամբ ենք յենթարկում մեզ մասնավոր կապիտալը:

Աճում է կուլակը, բայց նրա աճմանը սահման է դրված՝ նա չի կարող հող գնել, չի կարող կալվածատեր դառնալ: Դրա փոխարեն չքավորների ու միջակների կոոպերացիան պետությունից ստանում է ամեն տեսակ օգնություն՝ և՛ լավագույն հողեր, և՛ վարկեր, և՛ տրակտորներ:

Աճում է նաև մասնավոր առևտրականը, բայց ապրանք նա մեզանից է գնում, հարկեր մեզ է տալիս, ապրանքի փոխադրության գործում մեզանից է կախված: Յեթե կոոպերացիան և պետական առևտուրն ավելի աժան են առևտուր անում, այն ժամանակ մասնավորն ստիպված է իր տեղը մաքրել նրանց համար, կամ նրանց տեղ տալու համար՝ սեղմվել: Յեթե մեզ համար այս կամ այն մոմենտում օգտակար չէ մասնավորին այս կամ այն շուկան թողնել—չենք էլ թողնի, նրան ապրանք չենք վաճառի, նրա ապրանքը յերկաթուղով չենք փոխադրի, հարկերի միջոցով կզզենք և այլն:

Աճում է նաև մասնավոր ձեռնարկատերը: Բայց նա ունի մանր ու միայն մասամբ մեքենա արտադրություն: Նա իր տեխնիկայով վոչ մի կերպ չի կարող համեմատվել մեր խոշոր արդյունաբերության հետ: Մենք նրան հանդուրժում ենք, քանի դեռ ինքներս չենք կարող շուկան լիովին հագեցնել ապրանքներով, ձեռնարկությունները գրավել բոլոր գործազուրկներին և այլն: Բայց դրա փոխարեն այդ մասնավոր ձեռնարկատերն ամբողջովին մեր ձեռքում է՝ առանց Խորհրդային իշխանության թույլտվության, առանց նրան հող հատկացնելու՝ նա չի կարող ձեռնարկություն կառուցել, հում նյութը նա մեծ մասամբ մեզնից է գնում, հարկերը մեզ է վճարում, մեր աշխատանքի օրենքներին է յենթարկվում և այլն:

Յերբ «հրամայող բարձունքներն» ամուր են, արդյունաբերությունն ու տրանսպորտը լիովին ու շահույթով աշխատում են, ներքին ու արտաքին առևտուրը լավ են կազմակերպված, այն ժամանակ մասնավոր կապիտալը սարսափելի չէ մեզ համար: **Խորհրդային իշխանությունը «հրամայող բարձունքներին» հենվելով, գյուղը գրավում է սոցիալիստական շինարարության մեջ, դուրս է քշում մասնավոր կապիտալը յեվ շարժվում է հառաջ, դեպի սոցիալիզմ:**

Նեպի պայմաններում խաղաղ տնտեսական շինարարության վեց տարվա փորձը ցույց տվեց, վոր մեր յերկրում սոցիալիզմի շինարարության այս լենինյան պլանն իրականանում է, վոր այս ուղին ճիշտ է։

Լենինի դրած հարցը՝ ««ո՞վ ում»—արդյոք մասնավոր կապիտալը կհաղթի մեզ, թե մենք կօգտագործենք նրան մեր շահերի համար, —այս հարցն ակներև կերպով լուծվում է սոցիալիզմի հաղթանակի օգտին։

Նեպի տարիներում մենք կարողացանք կապիտալիստներից առաջ ընկնել, բարձրացնել մեր տնտեսության սոցիալիստական մասը, զարգացնել խոշոր պետական արտադրությունը և առևտուրն ավելի արագ, քան նրանք իրենցը։ Պետական արդյունաբերության բաժինը գործվածքների արտադրության մեջ և պետական ու կոոպերատիվ առևտրի տեսակարար կշիռը տարեց տարի մեծանում է։

Սոցիալիզմը ԽՍՀՄ ավելի արագ է աճում, քան կապիտալիզմն է զարգանում։ Մենք այժմ ավելի մոտ ենք լիակատար սոցիալիստական հասարակության, քան Նեպի սկզբին։ *Այն ժամանակ մեր տնտեսության սոցիալիստական մասն անկման վիճակում եր։ Արդյունաբերությունը տալիս եր մինչպատերազմական արտադրության միայն մեկ վեցերորդականը, տրանսպորտը կիսով չափ ավերված եր, մասնավոր տնտեսությունը մեծ չափով գերակշռում եր խոշոր պետական տնտեսությանը, պետական արդյունաբերության կապը գյուղի հետ համարյա խզվել եր։ Այժմ մենք ընթանում ենք դեպի խոշոր հասարակական արտադրության գերակշռությունը, սկսում ենք միացնել գյուղացիական մանր տնտեսությունը գյուղացիական կոոպերացիայի մեջ։ Այս բոլորն այն է ասում, վոր կուսակցությունը, Նեպին անցնելով, միակ ուղիղ ճանապարհով յերկիրը տարավ դեպի սոցիալիզմ։*

ՀԱՐՑ.

Նեպի ժամանակ ինչի՞ համար յեվ ի՞նչպես է տեղի ունենում պրոլետարական տնտեսության ու կապիտալիստական տնտեսության պայքարը։

3. ՆԵՊ-ի ՍԽԱԼ ԸՄԲՌՆՈՒՄՆ ՕՊՊՈԶԻՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ

Ասածից հետո պարզ է օպպոզիցիայի սխալը ՀամԿԿ (բ.) XIV համագումարում, վոր պնդում եր, թե Նեպ-ը միայն նահանջ է։ Օպպոզիցիայի կարծիքով Նեպ-ի էությունն այն է, վոր մենք 1921 թ. հետո մի շարք տարիների ընթացքում նահանջել ենք կապիտալիզմի առաջ և իբր թե այդ նահանջը շարունակվում է մինչև այժմ։

Վոր մենք Նեպ-ի սկզբում նահանջում եյինք, մոտավորապես մինչև 1922 թ.—այդ ճիշտ է։ Մենք այն ժամանակ առևտրի ազատություն մտցրինք, առևտրի ազատությունից հետո թույլատրեցինք մասնավոր փոքրիկ ձեռնարկությունների բացումը և այլն։ Այդ նահանջն անհրաժեշտ եր, ինչպես արդեն ասված է վերևը, արդյունաբերության կապը գյուղացիական տնտեսության հետ ամրացնելու համար։ Վլադիմիր Իլյիչն այն ժամանակ յեռանդագին սովորեցնում եր կուսակցությանը, վոր նահանջն անխուսափելի յե ու անհրաժեշտ՝ Հոկտեմբերի նվաճումներն ամրացնելու համար։ Բայց արդեն 1922 թ. մարտի 6-ին մետալիստների համագումարի ֆրակցիայում արտասանած ճառի մեջ Վ. Ի. Լենինն ասաց. «Մեր տնտեսական նահանջը մենք այժմ կարող ենք կանգնեցնել։ Բավական է։ Մենք ավելի հեռուն յետ չենք գնա, այլ կզբաղվենք այն բանով, վորպեսզի ուղիղ ծավալենք ու խըմբավորենք ուժերը»։ Նեպ-ի սկզբում կուսակցությունը կարծեք թե վերաշինում է տնտեսական ֆրոնտը, այլ կերպ է կազմակերպում տնտեսության կառավարումը, բոլոր ուժերն ուղղում է գյուղատնտեսության ու արդյունաբերության բարձրացմանը, այդ բանում հաջողություն ունենում և պայքար է սկսում առևտրին տիրանալու համար։ Այդ շրջանում բոլոր տնտեսավարներն ստիպված եյին առևտուր սովորել, վորպեսզի ավելի լավ սպասարկեն գյուղը, հաղթեն մասնավոր առևտրականներին շուկայի կռվում։ Տարեց տարի պետառևտուրը և պետարդյունաբերությունը շարունակ ավելի լավ եյին աշխատում և, ինչպես հայտնի յե, 1923 թվից մեզ մոտ հարձակումը մասնավոր կապիտալի վրա արդեն լայն ֆրոնտով եր տեղի ունենում։

Նշանակում է, չի կարելի ասել, թե Նեպ-ը նահանջ է և ուրիշ վոչինչ։ Նեպ-ը նահանջ է, ապա շարքերի վերաշինում մանր տնտեսության հետ կապ հաստատելու համար ու վերջապես հարձակում ամբողջ ֆրոնտում սոցիալիզմի ուղղությամբ։ Նեպ-ի ժամանակ մենք մասնավոր առևտրականի ձեռքը զենք տվեցինք—առևտրի ազատություն։ Այս նահանջ է։ Ապա մենք սովորեցինք այդ զենքը հմտորեն գործածել, առևտրի ազատությունից օգտվել պետարդյունաբերությունը, պետառևտուրը և կոոպերացիան զարգացնելու համար։ Այս—շարքերի վերաշինումն է։ Յեվ վերջապես, մենք սովորեցինք հենց նույն առևտրի ազատության ժամանակ հարվածել մասնավոր կապիտալը, ուժեղացնել հրամանատարական բարձունքները, զարգացնել կոոպերացիան, նրա օգնությամբ միացնել շարունակ ավելի ու ավելի շատ գյուղացիական տնտեսություններ, իսկ այս էլ սոցիալիզմ կառուցել է նշանակում, այս էլ Նեպ-ի ռելսերով հարձակվել և առաջ շարժվել է նշանակում դեպի սոցիալիզմ՝ գյուղացիության հետ միասին։

Ահա ինչու սխալ ու վնասակար են օպպոզիցիայի դատողություններն այն մասին, թե Նեպ-ը միայն նահանջ է։

Նեպի սխալ վորոշումը իբրև պետկապիտալիզմ

Օպպոզիցիան Նեպ-ի էության վերաբերող իր սխալներում էլ ավելի հեռու գնաց։ Նա հայտարարեց, վոր մեր Խորհրդային Միության տնտեսական կարգն այլ բան չէ, բայց յեթե պետական կապիտալիզմի կարգ։ Օպպոզիցիայի այս պնդումն արդեն Նեպ-ի վերաբերյալ լենինյան ուսմունքի ուղղակի աղավաղումն է։

1921 թ., Նեպ-ին անցնելու ժամանակ, մեր տնտեսության սոցիալիստական մասը մեծ անկման մեջ եր։ Այն ժամանակ խնդիրներից մեկն եր մասնավոր կապիտալը թույլատրել առևտրի ու մասամբ արդյունաբերության մեջ, այն դնելով պետական վերահսկողության տակ։ Այն ժամանակ կարելի յեր ու հարկավոր եր ընդգծել, ինչպես այդ անում էլ եր Վ. Ի. Լենինը, պետական կապիտալիզմի նշանակությունը մեր տնտեսության մեջ։ Բայց այն ժամանակից դրությունն արմատապես փոխվել է։ Ինչպես մենք տեսանք, պետական կապիտալիզմը մեզ մոտ քիչ շատ նշանակալի զարգացման չհասավ։ Կոնցեսիաները և արենդը շատ համեստ չափեր ընդունեցին։ Պետարդյունաբերությունը, պետառևտուրը և կոոպերացիան գերիշխող ուժ դարձան ԽՍՀՄ տնտեսության մեջ։

Հենվելով նրանց աճման վրա, մենք սովորեցինք ինքներս կապ հաստատել գյուղի հետ, կազմակերպել մանր տնտեսությունը։

Նեպ-ի էությունն այնտեղ չէ, վորտեղ ոպպոզիցիան է վորոնում այն, պետկապիտալիզմի մեջ չէ։

«Նեպ-ը,—ասում է ընկեր Ստալինը, հենվելով Լենինի ուսմունքին—**պրոլետարական պետության հատուկ քաղաքականությունն է, վոր թույլատրում է կապիտալիզմի գոյությունը, պայմանով, վոր պրոլետարական պետության ձեռքին են գտնվում իշխող բարձունքները, վոր հիմնված է կապիտալիստական յեվ սոցիալիստական տարրերի պայքարի վրա, հիմնված է սոցիալիստական տարրերի դերի՝ ի վնաս կապիտալիստական տարրերի՝ աճման վրա, հիմնված է կապիտալիստական տարրերի նկատմամբ սոցիալիստական տարրերի հաղթանակի վրա, հիմնված է դասակարգերի վերացման, սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման վրա**»։ (Ի. Ստալին, ՀամԿԿ (բ.) Կենտկոմի քաղաքական հաշվետվությունը XIV կուս. համագումարին. հայերեն հրատ. եջ 83)։

Կարելի յե սոցիալիզմ կառուցել ԽՍՀՄ

ՀամԿԿ (բ.) XIV համագումարում ոպպոզիցիան վոչ միայն այլ կերպ եր նայում Նեպ-ին, քան ամբողջ կուսակցությունը, այլև անհնար եր համարում մենակ մեր յերկրում, վոր շրջապատված է բոլոր կողմերից կապիտալիստական պետություններով, սոցիալիստական հասարակության կառուցումը։

Մեր արդյունաբերության հետամնացությունը, նրա թուլությունը,—պնդում եյին ոպպոզիցիայի առաջնորդները,—մեզ հնարավորություն չի տա սոցիալիզմ կառուցելու, թույլ չի տա գյուղացիությանը միացնելու խոշոր մեքենայական տնտեսության մեջ։ Մենակ մեր ուժն ու միջոցները,—ասում եր ոպպոզիցիան,—բավական չեն այդ բանի համար։

Օպպոզիցիայի այս հայացքը նույնպես սխալ է։ Շրջապատված բոլոր կողմերից կապիտալիստական յերկրներով, ճիշտ է, մենք միշտ պիտի յերկյուղ կրենք նրանց հարձակումից։ Մենք ստիպված ենք կռվել նրանցից տնտեսական կախում ունենալու դեմ։ Բայց յերկրի ներսում սոցիալիզմ տանող ճանապարհի վրա անհաղթահարելի դժվարություններ չկան։ Բանվոր դասակարգը հաստատ պահում է իշխանությունը, ամրացնելով միությունը գյուղացիության հետ։ Խորհրդային իշխանությունը գյուղատնտեսությունն աճում է ու ընդունակ է բավարարելու գյուղարդյունաբերությունն աճում է ու ընդունակ է բավարարելու գյուղատնտեսական պահանջը։ Գյուղում աճում է կոոպերացիան, վոր ստեղծում է գյուղացիական միլիոնավոր տնտեսությունները։ Կարելի չէ զարգացնել սարքերի հարստությունները անսպառ են։ Կարելի չէ զարգացնել արտադրությունը։ Բոքավորման ու գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը։ Նրանք ամրանում լոր «հրամայող բարձունքները» մեր ձեռքին են։ Նրանք ամրանում են ու աճում։ Գյուղացիների վստահությունը դեպի խորհրդային իշխանությունն ամրացված է ու գրավված։ Մասնավոր կապիտալը դուրս է մղվում ու յետ մնում մեր տնտեսության սոցիալիստական մասի աճումից։

Այսպիսով, մեզ մոտ առկա չեն բոլոր տնտեսական ու քաղաքական պայմանները սոցիալիզմի շինարարության, խոշոր հասարակական տնտեսության աճման համար։ Վոչ մի հիմք չկա կասկածելու, վոր մեզ մոտ սոցիալիզմի այս աճումը շարունակվելու չէ, վոր կապիտալիստական ու մանր ապրանքային տնտեսությունները շարունակ ավելի նահանջելու յեվ կրճատվելու չեն։

Մենակ մեր յերկրի ուժերով մենք կարող ենք շինել ու կառուցել լրիվ սոցիալիստական հասարակություն։

Մեզ միայն կարող է խանգարել միջազգային գիշատիչների, կապիտալիստական յերկիրների բուրժուազիայի հարձակումը մեր յերկրի վրա։ Միայն այդ հարձակումից է, վոր մենք ապահովված չենք։ Մենք այդպիսի հարձակման ժամանակ կարող ենք ավելի թույլ լինել, քան բուրժուազիան։ Մենք այդտեղ դեռ հաստատ յերաշխիք չունենք։ Բայց դա ստեղծվում է միջազգային բանվորական շարժման աճումով, մյուս յերկիրների պրոլետարների համակրանքի աճումով, դեպի ԽՍՀՄ և նրան պաշտպանելու նրանց պատրաստակամության աճումով, իսկ դրա հետ միասին նաև մեր ռազմական ուժի աճումով։

Բայց լրիվ յերաշխիք, վոր մենք անհաղթելի կլինենք համաշխարհային բուրժուազիայի համար, մեզ կարող է տալ միայն պրոլետարական հեղափոխությունը, գոնե, Յեվրոպայի գլխավոր յերկրներում։

ՀԱՐՑ

Ինչու է սխալ ոպպոզիցիայի այն հայացքը, թե Նեպ-ը պետական կապիտալիզմ է։

ԿՏՈՐՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՑՈՒՄԸ—ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ

Վորոշ ընկերներ կարծում են, վոր ինդուստրիացումն ընդհանրապես ամեն տեսակ արդյունաբերության զարգացումն է։ Նույնիսկ կան այնպիսի պարզամիտներ, վորոնք յենթադրում են, վոր մի ժամանակ արդյունաբերության վորոշ սաղմ ստեղծող Իվան Ահեղն ինդուստրիալիստ եր։ Յեթե այս ճանապարհով գնանք, այն ժամանակ (ցար) Պետրոս Մեծին պետք է անվանենք առաջին ինդուստրիալիստը։ Այս, ի հարկե, սխալ է։ Արդյունաբերության ամեն տեսակ զարգացումն ինդուստրիացում չէ։ Ինդուստրիացման կենտրոնը, նրա հիմքը ծանր արդյունաբերության (վառելիք, մետաղ և այլն) զարգացումն է, վերջիվերջո արտադրության միջոցների արտադրության զարգացումը, իր սեփական մեքենաշինության զարգացումը։

Վերցրեք Հնդկաստանը։ Ձեզ հայտնի է, վոր Հնդկաստանը գաղութ է։ Վերցրեք Ջինաստանում Անգլիայի կոնցեսիաները, վորոնք գաղութների իրավունքներով են ոժտված։ Արդյոք արդյունաբերություն կա այդ կոնցեսիաներում ու Հնդկաստանում։ Անպայման կա։ Արդյոք զարգանում է դա։—Այո, զարգանում է։ Բայց այնտեղ զարգանում է այնպիսի արդյունաբերություն, վոր արտադրության գործիքներ ու միջոցներ չի արտադրում։ Այնտեղ արտադրության գործիքները ներմուծվում են Անգլիայից։ Այս պատճառով (չնայած, ի հարկե, վոչ միայն այս պատճառով) այնտեղ արդյունաբերությունն ամբողջովին յենթարկված է անգլիական ինդուստրիային... Բայց սրանից հետևում է, վոր մեր յերկրի ինդուստրիացումը չի կարող սահմափակվել ամեն տեսակ արդյունաբերության զարգացումով, չնայած թեթև արդյունաբերությունն ու նրա զարգացումը մեզ բացարձակորեն անհրաժեշտ են։ Սրանից հետևում է, վոր ամենից առաջ ինդուստրիացում պետք է հասկացվի իբրև զարգացում մեր ծանր արդյունաբերության և հատկապես զարգացում մեր սեփական մեքենաշինության, վոր ընդհանրապես ինդուստրիայի հիմնական նյարդն է կազմում։ Առանց այս բանի, խոսելն իսկ ավելորդ է մեր յերկրի տնտեսական ինքնուրույնության ապահովման մասին։

(Ի. Ստալին, Խորհրդային Միության տնտեսական դրության մասին, եջ 8—10, ռուսերեն)։

2. ՊԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ—ՆԵՊ-Ի ՅԵԼԱԿԵՏ

Մենք կառուցում ենք մեր էկոնոմիկան՝ կապված գյուղացիության հետ։ Մենք պետք է բազմիցս վերաշինենք այն և կառուցենք այնպես, վորպեսզի խոշոր արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառում կապ լինի մեր սոցիալիստական աշխատանքի ու այն աշխատանքի միջև, վորով զբաղված է ամեն մի գյուղացի, և վորը նա վարում է այնպես, ինչպես կարող է, մի կերպ գլուխ հանելով կարիքից, առանց խելքին զոռ տալու (վորովհետև ինչ հնար ունի նա խելքին զոռ տալ այն բանի համար, վոր դուրս պրծնի ու փրկվի ամենաանտանելի սովամահության ուղղակի վտանգից)։ Հարկավոր է ցույց տալ այդ կապը, վորպեսզի պարզ տեսնենք այդ, վորպեսզի ամբողջ գյուղացիական մասսան տեսնի, վոր նրա այժմյան ծանր, անլուր կերպով քայքայված, անլուր կերպով աղքատիկ, տանջալի կյանքի և այն աշխատանքի միջև, վոր վարում են հանուն հեռավոր սոցիալիստական իդեալների, կապ կա...։ Մեր նպատակն է՝ վերականգնել կապը, գործով ապացուցել գյուղացուն, վոր մենք սկսում ենք այն բանից, ինչ նրան հասկանալի է, ծանոթ և այժմ մատչելի, ինչքան էլ վոր նա աղքատ է, և վոչ թե, գյուղացու տեսակետից, ինչ վոր հեռավոր, ցերեկայական (մտացածին) բանից,—ապացուցել, վոր մենք կարողանում ենք նրան ոգնել, վոր կոմունիստները, քայքայված, աղքատացած, տանջալի կերպով սովից մանր գյուղացիության ծանր դրության ժամանակ, այժմ գործով ոգնում են նրան։ Կամ մենք կապացուցենք այս, կամ նա մեզ սատանի լաճերն կանի։ Այս բոլորովին անխուսափելի է։

Ահա ինչումն է նոր տնտեսական քաղաքականության էությունը-ահա ինչումն է մեր ամբողջ քաղաքականության հիմքը։

(Վ. Ի. Լենին, Աշխատությունների ժողովածու, I հրատ. հատոր XVIII մասն 2, եջ 28—29, ռուս. հրատ.)։

3. XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՈՊՊՈԶԻՑԻԱՅԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՍԽԱԼԸ ՄԵՐ ՅԵՐԿՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ինձ թվում է, արդարացի չեն այն բանվորները, վորոնց հետ յես այսոր զրուցում եյի, վորոնք ասում եյին. «Յեթե այդ այնպես լի-

ներ», ինչպես ասում են նրանք (ոպպոզիցիայի առաջնորդները), վոր մենք անպատճառ փոշնչանալու յենք տեխնիքական ու տնտեսական հետամնացության շնորհիվ, ապա ել ի՞նչ պետք կար Հոկտեմբերյան հեղափոխությունն անելու, ի՞նչ պետք կար այսպիսի ծանր գնով խաթաբալայի մեջ ընկնելու»։ Նրանք արդարացի չեն, յերբ ասում են. «Լավ, մենք այժմ առաջ ենք շարժվում։ Մինիմում (առնվազն) յերկու տարի չե, մենք արդեն առաջ ենք գնում, ինչու՞ յեկող տարի չել չենք կարողանա առաջ գնալ։ Ինչու՞ անպատճառ փոշնչանալու յենք յեկող տարի։ Ի՞նչ հիմունքներ կան, վոր հետևյալ տարվա ընթացքում չենք ուժեղանալու։ Յեթե ավելի ծանր ժամանակ ուժեղանում եյինք, ինչու՞ չենք կարողանա հետո չել ուժեղանալ, ինչու՞ հետագա տարին մեզ համար փակված ե։ Իսկ յեթե հետագան փակված չե, ապա ինչու՞ նրան հետևող տարին մեր առաջ փակված ե։ Յեվ վորտեղ ե այստեղ վերջը, վորտեղ ե վրա հասնելու իբր թե «անհրաժեշտ» տապալումը։

Մեր տեխնիկան մենք այնուամենայնիվ շարունակ լավացնում ենք։ Յեթե թույլ, անպետք տեխնիկայի ժամանակ, լիակատար քայքայման ժամանակ, յերբ մետաղագործները կայծահան (зажигалки) եյին շինում,—չոչնացանք, ինչու՞ պիտի այժմ փոշնչանանք, յերբ համարյա հասել ենք արդյունաբերության մինչպատերազմյան մակարդակին»։ Անհասկանալի չե։ Վոչ մի կերպ ծայրը ծայրին չի հասնում և մարդու բանականությունը չի կարող մատնանշել սահմանը, թե վորտեղ ենք մենք տապալվելու հետամնացության շնորհիվ, յերբ ամեն տարի հաղթահարում ենք այդ հետամնացությունը։ Ահա ինչումն ե եյությունը։ (Ն. Ի. Բուխարին, ՀամԿԿ (բ.) XIV համագումարի ամփոփումների վերաբերյալ, եջ 23, ռուս. հրատ.)։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կշռադատեցեք, ինչ է տալիս ձեր գործարանն գյուղացիական տնտեսությունը (հում նյութ, վառելիք, պարեն, անլաշարքով տրանսպորտ) և ինչ է ստանում նրանից գյուղացիությունը։ (Յեթե ինքը գործարանը վոչ մի ապրանք չի արտադրում գյուղացիական շուկայի համար, ապա չի՞ սպասարկում արդյոք ուրիշ գործարանների, վորոնք աշխատում են այդ շուկայի համար)։ Պարապմունքի ժամին զեկուցում տվեք՝ «Մեր գործարանի կապը գյուղացիական տնտեսության հետ» թեմայի մասին, հատկապես նշեք, ինչպես անդրադարձավ Նեպ-ը ձեր գործարանի կապի վրա գյուղատնտեսության հետ, յերկու դիագրամմա կազմեցեք.—1) 1921 թ. սկսած գործարանի գյուղատնտեսության արդյունքների (փթերով, հատերով և այլն) սպառման աճումն ըստ տարիների և 2) 1921 թ. սկսած ձեր գործարանի

գյուղացիական սպառման ապրանքների մշակման աճումն ըստ տարիների։

2. Կշռադատեցեք, ինչու՞ և ինչպես է տեղի ունենում ձեր գործարանի ու կոոպերատիվի կռիվը մասնավոր կապիտալի դեմ, ի՞նչ յեն նրա արդյունքները, և այդ մասին պատմեցեք պարապմունքի ժամանակ։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Համ. ԿԿ (բ.) և խորհրդային իշխանությունը ի՞նչ հիմքերով յեն ձգտում վերաշինել գյուղացիական տնտեսությունը և ինչ են անում նրանք, վորպեսզի շտապեցնեն այդ վերաշինությունը։
2. Ինչու՞ է անհրաժեշտ ինդուստրիացնել մեր յերկիրը։
3. Վորտեղից է աճում մասնավոր կապիտալը Նեպ-ի ժամանակ ԽՍՀՄ և ինչով է վտանգավոր այդ աճումը։ Օրինակներ բերեք։
4. Ի՞նչ միջոցներ ու առավելություններ ունի իր ձեռքում ԽՍՀՄ բանվոր դասակարգը մասնավոր կապիտալի աճման դեմ մղվող կռվում։
5. Ի՞նչպես է հասկանում կուսակցությունը նոր տնտեսական քաղաքականության էությունն ու նպատակը։

ԶՐՈՒՅՑ ՎԵՑԵՐՈՐԴ

ԽՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ինչի մասին է գրույցը

Հինգերորդ գրույցում ցույց է տրված, թե մեր ուղին դեպի սոցիալիզմ գնում է խոշոր հասարակական տնտեսության և առաջին հերթին խոշոր արդյունաբերության զարգացման գծով։ Առանց այդ անհնարին է վերակառուցել գյուղացու հետամնաց տնտեսությունը և մանր տնտեսությունն ընդհանրապես, առանց այդ չի կարելի դուրս մղել մասնավոր կապիտալը, կապ հաստատել պետական արդյունաբերության ու գյուղացիական տնտեսության միջև։

Վեցերորդ գրույցում մեր նպատակն է մանրամասնորեն վերլուծել կուսակցության քաղաքականության հարցերը արդյունաբերության ասպարեզում, մասնավորապես պարզել, թե ինչ է նշանակում յերկրի ինդուստրիացումը, ինչպես է այն հասկանում ու իրագործում ՀամԿԿ (բ.)։

Մասնավորապես մենք պետք է վերլուծենք հետևյալ հարցերը.

1. Ինչու չի մեր յերկրի ինդուստրիացման խնդիրն այժմ առաջին պլանը քաշվում։

2. Վորոնք են մեր յերկրի ինդուստրիացման աղբյուրները։

3. Ի՞նչ միջոցներ է գործադրում կուսակցությունը, վոր հասնի մեր արդյունաբերության լավացմանը (ռացիոնալիզացիային)։

Վերլուծելով այս հարցերը և պարզելով նույնպես, թե ինչու յե մեր պետական արդյունաբերությունը **սոցիալիստական** հանդիսանում, մենք այս գլուխում այն յեզրակացությանը կը հանգենք, թե մեր յերկրի ինդուստրիացումը միակ ճիշտ ուղին է դեպի սոցիալիզմ։

1. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՑ ԴԵՊԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ (ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ)

Նեպի յերկու շրջանը Խորհրդային յերկիրը քաղաքացիական կռվից դուրս յեկավ համարյա բոլորովին քայքայված արդյունաբերությամբ։ 1921 թ. ԽՍՀՄ արդյունաբերությունը 5 անգամ ավելի քիչ ապրանք եր արտադրում, քան մինչև պատերազմը։ Հատկապես ուժեղ եր ծանր արդյունաբերությունը՝ չուգունի ձուլումը պակասել եր 37 անգամ, պողպատի արտադրությունը՝ 25 անգամ։ Այս պատճառով խաղաղ շինարարության առաջին իսկ տարիներից մեր կուսակցությունն իրեն խնդիր առաջադրեց, վերականգնել արդյունաբերությունը, վերստեղծել սոցիալիստական շինարարության այդ հիմքը։

Սակայն Նեպի առաջին տարիներում ժողովրդական տնտեսության դրությունն այնպես եր, վոր արդյունաբերության վերականգնման համար հարկավոր եր **սկսել գյուղատնտեսության վերականգնումից**։ Նեպին անցնելիս Լենինն այդ մասին այսպես եր ասում.

«1921 թ. գարնան դեմ քաղաքական պայմաններն այնպես դասավորվեցին, վոր գյուղացիության դրության լավացման և նրա արտադրողական ուժերի վերելքի համար անհապաղ, ամենավճռական, ամենաարտակարգ միջոցներ ձեռք առնելը դարձավ անհետաձգելի անհրաժեշտություն։

Ինչու գյուղացիության և վոչ թե բանվորների։

Վորովհետև բանվորների դրության լավացման համար հարկավոր են ցորեն ու վառելիք։ Այժմ ամենամեծ հապաղումը. . հենց այս է։ Իսկ մեծացնել ցորենի արտադրությունը և հունձը, վառելիքի մթերումը և մատակարարումն այլ կերպ չի կարելի, քան լավացնելով գյուղացիության դրությունը, բարձրացնելով նրա արտադրողական ուժերը։ Պետք է սկսել գյուղացիությունից»։

Միքանի թիվ մեզ ակնառու ցույց կտա, թե ինչքան ճիշտ եր հենց այն գիծը, վոր նշեց Իլյիչը։ 1922 թ. դեմ գյուղատնտեսական

հում նյութի արտադրությունը մինչպատերազմականի համեմատությամբ **կրճատվել** եր այսպես.

	6 անգամ
Վուշը	17 »
Բամբակը	6 »
Շաքարի ճակնդեղը . .	

Ավելի քիչ եր կրճատվել հացահատիկների արտադրությունը, բայց գյուղում արդեն հացի **ավելցուկներ** չկային, քաղաքները սովում եյին։ Այսպիսի դրության ժամանակ ամբողջ ժողովրդական տնտեսությունը բարձհուսահատ ավերմունքից դուրս բերելու միայն մեկ յելք կար՝ բարձրացնել գյուղատնտեսությունը։ Վորպեսզի բանվորների համար հաց ստանա, ֆաբրիկաների ու գործարանների համար՝ փայտ, վորպեսզի վուշ, բուրդ, բամբակ, շաքարի ճակնդեղ և այլ գյուղատնտեսական հում նյութեր ստանա՝ կուսակցությունն իր ամբողջ ուշադրությունն ուղղեց ավերված գյուղատնտեսության վերականգնմանը։

Այս քաղաքականությունն անպայման ճիշտ դուրս յեկավ — հինգ տարվա մեջ մեզ հաջողվեց դուրս գալ այն փոսից, վորի մեջ ընկել եր մեր տնտեսությունը քաղաքացիական կռվի վերջերին։ 1926/27 թ. մեր գյուղատնտեսությունն արդեն հասավ մինչպատերազմական մակարդակին։ Իսկ գյուղատնտեսության վերելքի հիմքի վրա փոքր քանակից նաև ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունը — նրա արտադրությունը 1925/26 թ. հասավ մինչպատերազմականի 92%։

Սրանով վերջացավ Նեպի **առաջին** **էտապը**։ Դրանից հետո դրությունը փոխվեց։ Այժմ արդեն այն «հապաղումը», վորի մասին խոսում եր Լենինը, վերաբերում է վոչ թե գյուղատնտեսությանը, այլ արդյունաբերությանը։ Յերբ մենք վերականգնեցինք ավերված գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը բարձրացրինք մինչպատերազմական մակարդակին, այն ժամանակ իր ամբողջ սրությամբ յերևան յեկավ **արդյունաբերության այն հետամնացությունը**, վոր մեզ ժառանգություն եր հասել ցարական Ռուսաստանից։ Յերևաց, վոր արդյունաբերությունը չափազանց թույլ է գյուղացու պահանջը բավարարելու համար։ Յերևան յեկավ ապրանքի սովը, վոր ամենամեծ սրության հասավ 1925/26 թ.։ Այժմ ամբողջ ժողովրդական տնտեսության հետագա աճումը կախված է առաջին հերթին արդեն այն բանից, թե ինչքան արագ կերպով մեզ կհաջողվի կառուցել **նոր ֆաբրիկաներ** ու **գործարաններ**, հիմնել նոր հանքահորեր (շախտաներ) ու հանքավայրեր, շինել նոր ելեքտրակայաններ, գցել նոր յերկաթուղիներ։

Առանց այդ չի կարողանա այլևս զարգանալ նաև գյուղատնտեսությունը։ Ահա վոր մինչև այժմ այն աճում եր, գլխավորապես, ավերման տարիներում անխնամ թողած ցանքի տարածության լայնացման հաշվին։ Հետագայում դրությունն այլ կլինի՝ գյուղատնտե-

թյունը կզարգանա լավագույն մեքենաների ու պարարտանյութերի կիրառման, գյուղատնտեսական արդյունքները վերամշակող ձեռնարկությունների կազմակերպման ոգնությամբ և այլն։ Իսկ այդ հնարավոր է միայն խոշոր արդյունաբերության հզոր վերելքի պայմաններում (տես № 2 դիագրամման)։



Դիագրամմա № 2. Ինչպես է արդյունաբերության աճումն առաջ ընկնում գյուղատնտեսության աճումից։

Ահա թե ինչու Նեպի նոր էտապում կուսակցությունն ամբողջ ծավալով դրել է յերկրի ինդուստրիացման խնդիրը, այսինքն ժողովրդական տնտեսության մեջ խոշոր արդյունաբերության և, մասնավորապես, մեքենաների, դազգահների, և մեր գործարանների ու գյուղատնտեսության այլ սարքավորման արտադրության տեսակարար կշռի մեծացումը։ Ինդուստրիացման այս խնդրին է հենվում այժմ մեր ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացումը։ Միայն մեզ մոտ ԽՍՀՄ արդյունաբերության վերելքի ոգնությամբ է, վոր մենք տնտեսական տեսակետից էլ ավելի քիչ կախված կլինենք կապիտալիստական յերկրներից։

Ժողովրդական տնտեսության վերակառուցումը

1925/26 թ. ընդհանուր առմամբ ու ամբողջովին վերջացավ մեր տնտեսական զարգացման այն էտապը, յերբ մենք վերականգնում էինք ավերվածը։ Այդ ժամանակ մենք համարյա ամբողջովին ոգտագործեցինք

արդյունաբերության այն **հիմնական կապիտալը**, վոր ժառանգություն էինք ստացել բուրժուական կարգից*)։ Բանի չեն գցված չաշխատող ձեռնարկությունները։ Համարյա ամբողջովին բեռնավորված են ֆաբրիկաների ու գործարանների դազգահներն ու մեքենաները։ Վորպեսզի արդյունաբերության զարգացման ասպարեզում առաջ շարժվենք, մենք պետք է արդեն վոչ թե աշխուժացնենք հին ձեռնարկությունները, այլ շինենք նորերը, կամ արմատապես վերասարքավորենք հները։ Հերթի յե կանգնել **նոր** հիմնական շինարարության խնդիրը, արդյունաբերության հիմնական կապիտալի լայնացման խնդիրը (նոր ձեռնարկությունների կառուցում, հին ձեռնարկությունների վերասարքավորում, լայնացում և հիմնական ռեմոնտ)։ Մոտավորապես այդպես է դրությունը նաև յերկաթուղային տրանսպորտում.— այնտեղ էլ համարյա ամբողջովին ոգտագործված են հին կառուցվածքները, այնպես վոր տրանսպորտի աշխատանքը մինչպատերազմական չափերից բարձր ծավալել կարելի յե ամենից առաջ նոր յերկաթուղիների կառուցման, մաշված ուղիների, արհեստանոցների և այլն հիմնական ռեմոնտի միջոցով։

Գյուղատնտեսության մեջ էլ մենք 1925/26 թ. հասանք մինչպատերազմական մակարդակին։ Այս պատճառով այնտեղ էլ հետագայում հնարավոր կլինի արտադրությունը բարձրացնել միայն հողաշինարարության, մելիորացիայի, լավագույն գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների, պարարտանյութերի, հողի մշակման լավագույն յեղանակների և այլն կիրառման ոգնությամբ։

Այս բոլորը մեզ ցույց է տալիս, թե մենք մտել ենք տնտեսական զարգացման այնպիսի էտապ, վորը նոր շինարարության էտապ կը հանդիսանա մեր ժողովրդական տնտեսության բոլոր ասպարեզներում։

Բայց մենք, իհարկե, նորը չենք կառուցի հին նմուշով ու որինակով։ Սոցիալիստական տնտեսությունը կարող է հիմնվել միայն նորագույն տեխնիկայի և այն հասարակական արտադրության մեջ կիրառելու վրա։ Սոցիալիստական տնտեսությունը հիմնված է այն բանի վրա, վոր ամբողջ ժողովրդական տնտեսությունը վարում է ամբողջ հասարակությունը միասնական պլանով։

Նոր ֆաբրիկա-գործարանային ձեռնարկություններ, նոր էլեկտրակայաններ, նոր յերկաթուղիներ և ջրային ճանապարհներ շինելով, մենք հենց մեզ խնդիր ենք առաջադրում վերակառուցել ԽՍՀՄ ժո-

*) Արդյունաբերության հ ի մ ն ա կ ա ն կապիտալին են վերաբերում ֆաբրիկա-գործարանային շենքերը, մեքենաները, դազգահները, կաթսաները և ձեռնարկության մյուս սարքավորումը։

Շ ր ջ ա ն ա ռ ո ւ կապիտալին են վերաբերվում վառելիքը, հում նյութը, մատերիալները, բանվորներին վարձատրելու միջոցները և այլն։

գյուղական տնտեսության տեխնիկական հիմքը, վորպեսզի մեր հետամնաց, ագրար յերկիրը դարձնենք առաջավոր, սոցիալիստական: Վոչ միայն արդյունաբերության, այլև հողագործության տեխնիկայի վերակառուցում—այս է մեր շինարարության նոր էտապի հիմնական խնդիրը: Արորի ու յարուչի փոխարեն—տրակտոր և էլեկտրական գութան. քիչ օգտակար հացահատիկների կուլտուրաների փոխարեն—օգտակար տեխնիկական կուլտուրաներ, յեռադաշտի, ցրված հողաշերտերի և սակավահողության փոխարեն—հողաշինարարություն, բազմադաշտ, ճահիճների չորացում, դաշտերի վոռոգում, միլիոնավոր մարդկային ձեռքերի աշխատանքի փոխարեն—թափվող ջրի էներգիայի օգտագործում, մաշված ու հնացած ֆաբրիկաների ու գործարանների փոխարեն—էլեկտրիֆիկացիայի յենթարկված ու մեքենայացրած ֆաբրիկաներ ու գործարաններ,—ահա մեր հետագա շինարարության ուղիները: Այս պատճառով է տարբերություն մեր տնտեսական զարգացման անցած **վերականգնման** էտապի, այն նոր էտապը, վոր մտել ենք, հանդիսանում է **ռեկոնստրուկցիայի**, այսինքն մեր տնտեսության ամբողջ տեխնիկական հիմքի վերակառուցման էտապ: Իսկ այդ տեխնիկական հեղափոխության կողքին տեղի կունենա նաև մեր յերկրի տնտեսական ձևի վերակառուցումը—մանր տնտեսությունները կոոպերացիայի օգնությամբ կանցնեն խոշոր սոցիալիստական արտադրության:

Էլեկտրիֆիկացիան — ԽՍՀՄ տնտեսության վերակառուցման հիմք

Մեր տնտեսության վերակառուցման պլանի հիմքը հանդիսանում է ԽՍՀՄ **էլեկտրիֆիկացիայի** պլանը, վոր ընկ. Լենինի նախաձեռնությամբ մշակված է 1920—1921 թ. թ.: Այս պլանով ամբողջ յերկիրը պետք է ծածկվի հզոր էլեկտրակայանների ցանցով, վորոնք պետք է էներգիա մատակարարեն արդյունաբերությանը, յերկաթուղիներին և գյուղացիությանը: Առաջին հերթին նշված է 10—15 տարվա ընթացքում 30 ռայոնական էլեկտրակայանների կառուցումը, վորոնցից մինչև այժմ արդեն շինված է և վերջանալու վրա յեն տաս կայան:

Վ. Ի. Լենինը, հսկայական նշանակություն տալով էլեկտրիֆիկացիայի պլանին, այն անվանում էր «կուսակցության յերկրորդ ծրագիր»: Նա ասում էր. «Քանի մենք ապրում ենք մանր-գյուղացիական յերկրում, Ռուսաստանում կապիտալիզմի համար ավելի հաստատուն տնտեսական բազա կա, քան կոմունիզմի համար... Ամեն վոք, ով ուշադիր դիտել է գյուղի կյանքը, համեմատելով այն քաղաքի կյանքի հետ, գիտե, վոր մենք կապիտալիզմի արմատախիլ չենք արել և ներքին թշնամու ֆունդամենտը, հիմքը չենք խախտել: Վերջինս հենվում է մանր տնտեսության վրա, և վորպեսզի խախտենք այն, մեկ միջոց ունենք՝ յերկրի տնտեսությունը, այդ թվում նաև հողագործությունը,

պետք է փոխադրենք նոր տեխնիկական բազայի, ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական բազայի վրա: Այդպիսի բազա հանդիսանում է միայն էլեկտրիֆիկացիան»: Մեզ համար էլեկտրիֆիկացիան կարևոր է ամենից առաջ այն պատճառով, վոր էլեկտրականությունը ժամանակակից տեխնիկայի հիմքն է: Ի տարբերություն անցյալ դարի, վոր կարելի յե անվանել «շոգու դար», ներկա դարը «էլեկտրականության դար» է: Էլեկտրականությունը լայնորեն կիրառվում է տնտեսության ամենաբազմազան ճյուղերում: Այն տալիս է աժան էներգիա, վոր շարժում է ֆաբրիկաների ու գործարանների դազգահները ու մեքենաները: Այն տալիս է հսկայական առավելություններ մետաղագործության մեջ (էլեկտրական վառարաններ) չուգունի հալման, պողպատի արտադրության, ալյումինի, պղնձի, կապարի, արճճի արտադրության, ֆերրոմարգանեցի (մարգանեցի խառնուրդը յերկաթի հետ, վոր հարկավոր է պողպատի արտադրության համար) արտադրության ժամանակ: Էլեկտրականությունը հսկայական հնարավորություններ է բաց անում ածուխից և կրից ու նույնիսկ օդից (կապված բորակածին) պարարտանյութեր արտադրելու գործում: Էլեկտրականությունն ամենալայն հնարավորություններ է բաց անում նաև գյուղատնտեսության առաջ: Ճահիճների չորացումը, կոճղերի արմատախիլ անելը, վոռոգման կառույցները,—այդ բոլորը պահանջում է հսկայական քանակությամբ ձեռքի աշխատանք և այդ շատ ավելի հեշտությամբ կարելի յե անել էլեկտրական էներգիայով ու մեքենայացումով: Էլեկտրամոտորը փոխարինելով ձիուն, հնարավորություն է ստեղծում հողագործության ամենալայն մեքենայացման համար՝ էլեկտրականությունը հաջողությամբ կիրառելի յե հատիկները մաքրող, քամող, տեսակների բաժանող մեքենաների, գութանների, հնձի, կալսելու մեքենաների և այլ աշխատանքներում: Էլեկտրականությունը էներգիա յե տալիս նաև ջաղացներին, ձավարաղացներին, փայտ սղոցելու, կրախմալի, յուղի և այլ գործարաններին:

Յերկաթուղիների էլեկտրիֆիկացիան հսկայական առավելություններ է ստեղծում փոխադրությունների էժանացման և նրանց արագացման իմաստով:

Սոցիալիզմ կառուցող յերկրի համար՝ էլեկտրականությունը հանդիսանում է նոր տնտեսական կարգի հիմքը, էլեկտրիֆիկացիան հնարավորություն է տալիս ստեղծել պլանաչափ կազմակերպված տնտեսություն, վոր էներգիա յե ստանում ամբողջ յերկիրն ընդգրկող և մի միասնական ամբողջություն կազմող էլեկտրակայանների ցանցից: Հողագործության համար էլեկտրիֆիկացիան իր հետ բերում է մանր տնտեսությունների միացումը խոշոր հասարակական արտադրության մեջ:

Մենք տեսնում ենք, թե ինչպիսի մեծագույն հնարավորություններ են բացվում մեր առաջ շինարարության այն մեծ եղրախայում, վոր մենք թևակոխում ենք: Այդ շինարարության հիմքը հանդիսանում է ինդուստրիացումը, վորովհետև հենց խոշոր արդյունաբերությունն է, վոր իր հետ բերում է նոր տեխնիկա ամբողջ ժողովրդական տնտեսության համար:

ՀԱՐՑ

Ինչո՞վ է տարբերվում Նեպի վերականգնման շրջանը վերակառուցման շրջանից:

2. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ—ԻՆԴՈՒՍՏՐԻԱՑՄԱՆ ՀԻՄՔ

Կառուցել նոր գործարաններ, ֆաբրիկաներ, ելեքտրակայաններ, հիմք դցել նոր հանքասրահների և հանքավայրերի, վերասարքավորել հին ձեռնարկությունները,—այս է ինդուստրիացման ուղին: Այս **հիմնական շինարարությունը** հսկայական միջոցներ է պահանջում: Յերբ մենք ունեյինք չգործող կամ չքեռնավորված հին ձեռնարկություններ, այն ժամանակ նրանց աշխատացման, արտադրության լայնացման միջոցներ պահանջվում եյին գլխավորապես ընթացիկ սեզոնի կատարելու, վառելիք, հում նյութ, մասերիալներ մթերելու, բանվորներին վարձատրելու համար: Ուրիշ խոսքով, միջոցներ պահանջվում եյին առավելապես արդյունաբերության **շրջանառու** կապիտալը վերստեղծելու համար:

Այժմ, յերբ ստիպված ենք նոր ձեռնարկություններ կառուցել, հարկավոր են միջոցներ նաև **հիմնական** կապիտալի ստեղծման՝ ֆաբրիկա-գործարանային շենքերի կառուցման, սարքավորման համար: Հարկավոր են շատ ավելի մեծ միջոցներ, քան առաջ:

Առաջիկա 5 տարում 1926/27 թ. մինչև 1930/31 թ. արդյունաբերության զարգացման մոտավոր պլանով սպասվում է պետական արդյունաբերության աճում 80%: Վորպեսզի իրագործենք արդյունաբերության այդպիսի ծավալումը, հարկավոր է հիմնական շինարարության մեջ դնել մեն միայն արդյունաբերության ապարիկում մոտ 5 միլիարդ 600 միլիոն ռուբլի, իսկ յեթե հաշվենք նաև ելեքտրիֆիկացիան, ապա մոտ 7 միլիարդ ռուբլի: Բայց ժողովրդական տնտեսության ինդուստրիացման համար հարկավոր է կառուցել վոչ միայն գործարաններ ու ֆաբրիկաներ, այլև յերկաթուղիներ, բանվորների բնակարաններ և այլն:

Ժողովրդական տնտեսության այն մասում, վոր պատկանում է պետությանը, ամբողջ հիմնական շինարարության համար 5 տարում կպահանջվի 16 միլիարդ ռուբլի:

Կգանի՞նք արդյոք այսպիսի հսկայական միջոցներ: Վորտեղից ենք ճարելու այդ միլիարդները: Բուրժուազիան առաջներում Ռուսաստանում արդյունաբերության զարգացման համար միջոցներ էր գտնում բանվորների ու գյուղացիների ամենադաժան շահագործման ճանապարհով, տարբերկրյա փոխառությունների միջոցով, վորոնք յերկիրն ստրկացնում եյին տարբերկրյա կապիտալին: Հարկավ, բանվոր դասակարգը չի կարող այդպիսի միջոցների դիմել: Բայց բանվոր դասակարգն ինդուստրիացման համար միջոցների աղբյուրներ ունի, այդ **սոցիալիստական կուտակման** աղբյուրներն են:

սոցիալիստական պետական արդյունաբերության ցա-

Այդպիսի առաջին աղբյուրը պետական արդյունաբերության ծախ-**խույթն** է: Բուրժուազիան իր շահույթները հսկայական մասը կուտակում էր շքեղ ապրելու վրա: Պրոլետարիատը շահույթը կուտակում է ինդուստրիան առաջ շարժելու համար: Պետարդյունաբերության այս շահույթն ամեն տարի, արդյունաբերության աշխատանքի լավացման հետ, աճում է: 1925/26 թ. այն կազմում էր 450 միլիոն ռուբլի, 1926/27 թ.—580 միլիոն ռուբլի, իսկ առաջիկա 5 տարում պետարդյունաբերությունից շահույթ է սպասվում ընդամենը 3—3¾ միլիարդ ռուբլի:

Ինդուստրիայի զարգացման միջոցների յերկրորդ խոշորագույն աղբյուրը պետական բյուջեն է: Պետությունն իր բյուջեն կազմում է ամբողջ ժողովրդական տնտեսությունից ստացած հարկերի, ակցիզների և այլ յեկամուտների հաշվին: Պետական բյուջեյի մի մասն ուղղվում է արդյունաբերության զարգացմանը: Այսպիսով բյուջեյի միջոցով տեղի յե ունենում վերաբաշխումն այն միջոցների, վորոնք կուտակվում են ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ—արդյունաբերության, գյուղատնտեսության, ներքին և արտաքին առևտրի, բանկերի և այլն:

1926/27 թ. ԽՍՀՄ պետական բյուջեն հասավ 5 միլիարդ ռուբլու: Ի տարբերություն բուրժուական յերկիրների բյուջեների, մեր բյուջեն ծառայում է վոչ միայն բանակ, կառավարման ապարատ և այլն պահելու համար, այլև ժողովրդական տնտեսության այն ճյուղերի պաշտպանության, վոր պետությունը ջանում է ամեն կերպ զարգացնել: Առաջիկա 5 տարում ժողովրդական տնտեսությունը պետական բյուջեյի միջոցներից կստանա մոտ $4\frac{1}{2}$ միլիարդ ռ.:

Վերջապես, ինդուստրիացման միջոցների ամենակարևոր աղբյուրներից յերրորդը **վարկն** է: Բանկերի, խնայողական գանձարկղների միջոցով, հավաքելով բնակչության ցաք ու ցրիվ փոխառությունների շնորհիվ հնարավորություն ունի այդ միջոցներն ուղղել արդյունաբերության զարգացմանը:

Այսպես ուրեմն, մենք տեսնում ենք, թե ինչպես պրոլետարական պետությունը իր ձևով, պրոլետարական ձևով է լուծում սոցիալիստա-

կան կուտակման խնդիրը: Արդյունաբերության, արտաքին առևտրի, ներքին առևտրի մեծ մասի, բանկային ապարատի պրոլետարիատի ձեռքն անցնելը բանվորական պետությանը հնարավորություն ե տալիս միջոցներ ստանալ ինդուստրիայի զարգացման համար:

Մենք՝ բուրժուական կարգի համեմատությամբ՝ ունենք դեռ այն հսկայական առավելությունն էլ, որ չենք կերակրում պարազիտներին—**խոշոր կապիտալիստներին, կալվածատերերին** և նրանց բազմաթիվ ծառաներին, որոնք առաջ նստած էին աշխատավորների վզին և ուտում էին ժողովրդական յեկամուտի մի հսկայական մասը:

Խորհրդային իշխանությունը փրկվեց **օտարերկրյա պարտքերից**, որոնց միայն տոկոսները կազմում էին հարյուրավոր միլիոն ռուբլիներ: Վերջապես, մենք ունենք և այն առավելությունը, որ մեր պետական տնտեսությունը **պլանով** ենք վարում՝ մենք կարող ենք պլանաչափ զարգացնել արդյունաբերությունը ոչ միայն հենց իր մեջ յեղած կուտակումների, այլև տնտեսության այլ ճյուղերի հաշվին: Պլանային տնտեսությունը մեզ փրկում ե նաև միջոցների այն իզուր վատնումից, որ անխուսափելի յե բուրժուական տնտեսության մեջ նրա ոչ-պլանային լինելու պատճառով (կրիզիսներ, մրցություն և այլն):

Մեր այս առավելությունները յերևան են գալիս իրական ձևով: Չնայած այն բանին, որ մենք պատերազմից ամենից ավելի քայքայված դուրս յեկանք, որ մենք ապրեցինք ոչ միայն իմպերիալիստական պատերազմի, այլև քաղաքացիական կռվի տարիներ, այնուամենայնիվ մենք արտադրության մինչպատերազմական մակարդակին ավելի վաղ հասանք, քան պատերազմող բուրժուական յերկրները: Իսկ առաջիկայում մեր առաջ բացվում ե տնտեսության շատ ավելի արագ աճման հնարավորություն, քան այդ տեղի յե ունենում կապիտալիստական յերկրներում:

Ի հարկե, հին ձեռնարկությունների վերականգնումից ու աշխուժացումից նորերի կառուցմանն անցնելիս անխուսափելիորեն կը դանդաղի մեր արդյունաբերության աճման տեմպը (արագությունը): Որովհետև շատ ավելի հեշտ ե աշխուժացնել հին ձեռնարկությունը և այդպիսով միանգամից շուկա հանել ահագին նոր ապրանք, քան նոր ձեռնարկություն կառուցել:

Արդեն այլևս չեն կարող կրկնվել այնպիսի փաստեր, ինչպես արդյունաբերության աճումը մեկ տարում 50 % (1924/25 թ.) կամ 40 % (1925/26 թ.): Այժմ արդեն ստիպված ենք շատ ավելի դանդաղ շարժվել: Բայց այս այնուամենայնիվ շատ ավելի արագ աճում կը լինի, քան կապիտալիզմի ժամանակ:

Ցարական Ռուսաստանում լավագույն տարիներում արդյունաբերությունը մեկ տարում աճում եր 4 %, Անգլիայում—1,6 %, Ամերիկայում—4 %: Մեզ կը հաջողվի կապիտալիստներից **ավելի արագ** առաջ շարժվել՝ 1926/27 թ. մեր արդյունաբերությունն աճեց 20 %, 1927/28 թ. սպասվում ե 13 %, իսկ հետևյալ տարիներում—9-10 % տարեկան: Այս պատճառով մեր կուսակցությունը հաստատ համոզված ե, որ մեզ կը հաջողվի հասնել, ապա և առաջ ընկնել կապիտալիստական յերկրներից:

Ինչպես ենք մենք պրակտիկայում իրականացնում յերկրի ինդուստրիացումը

Բանվորական պետությունը հսկայական միջոցներ ե դնում ինդուստրիայի զարգացման գործում: Ինչպես մենք վերևը տեսանք, այդ միջոցներն այժմ գլխավորապես գործադրվում են հիմնական շինարարության վրա (հին ձեռնարկությունների վերասարքավորում և նորերի կառուցում):

Թե ինչպես ե աճել վերջին տարիներում արդյունաբերության հիմնական ներդրումների գումարը (ելեկտրիֆիկացիայի և բանվորական բնակարանային շինարարության հետ միասին), տես № 3 դիագրամման:



Դիագրամմա № 3. Ինչպես են աճում հիմնական ներդրումներն արդյունաբերության և ելեկտրիֆիկացիայի մեջ: (Միլիոն չերվոն ռուբլիներով և % % 1923/24 թ. վերաբերմամբ): (Ըստ Պետպլանի տվյալների)

Արդյունաբերական շինարարության այդպիսի աճումը մեզ հնարավորություն կտա 1930/31 թ. դեմ վերաշինել մեր արդյունաբերության յերեք հինգերորդը:

Ներդրած միջոցների մեծ մասը գործադրվում ե գոյություն ունեցող ձեռնարկությունների հիմնական ռեմոնտի, վերասարքավորման

և լայնացման վրա։ Մի շարք ձեռնարկություններում շինվում են նոր բաժանմունքներ (ցեխեր), հին մաշված դազգահներն ու մեքենաները փոխարինվում են նորերով, մտցվում են աշխատանքի ավելի կատարելագործված յեղանակներ և այլն։ Դրա հետ միասին մենք դիմել ենք նաև նոր լայն շինարարության։ Մի քանի օրինակ ցույց կտա մեզ, թե ինչպիսին է այդ շինարարությունը։

Կերչում շինվում է խոշորագույն մետաղագործական գործարան։ Այն կարժենա 45 միլիոն ռուբլի, այնպես է հաշված, որ գործարանը պետք է տարեկան մոտ 50 միլիոն փութ մետաղ արտադրի։

Նախապատրաստական աշխատանք է կատարվում Կրիվոյ Ռոգում մետաղագործական ֆաբրիկա շինելու, որ տարեկան արտադրելու յե 40 միլիոն փութ մետաղ, նաև Տելբեսում, որ տարեկան արտադրելու յե 25 միլիոն փութ մետաղ, Մագնիտի սարում (Ուրալ), որ արտադրելու յե 40 միլիոն փութ։

Ռոստովում կառուցվելու յե գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների խոշորագույն գործարան, որի արժեքը լինելու յե 57 միլիոն ռուբլի։ Ստալինգրադում շինվելու յե տրակտորի խոշոր գործարան, որ տարեկան տալու յե մոտ 10,000 տրակտոր։

Շինվում են՝ հինգ էլեկտրոտեխնիկական գործարան, 18 գործարան նավթարդյունաբերության մեջ (նավթաթորիչ, գազոլինի և այլ գործարաններ), 18 քիմիական գործարան, 26 տեքստիլ գործարան և այլն։

Սկսված է Դնեպրի հոյակապ էլեկտրակայանի կառուցումը (Դնեպրոստրոյ), որ կը նստի 150 միլիոն ռուբլի։ Այն ուժեղ զարկ կը տա արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմանը Պրիդնեպրովիեյում, որ հարուստ է յերկաթե հանքանյութով և մարգանեցով։ Այն նավարկելի կը դարձնի Դնեպրը։ Այն հնարավորություն կտա լայնորեն իրականացնելու մելիորացիան այդ յերկրի գյուղատնտեսության մեջ։

Գլխավոր ուշադրությունը — արտադրության միջոցների արտադրությանը

Հիմնական շինարարության հատկացրած միջոցների առյուծի բաժինը ներդրվում է արդյունաբերության այն ճյուղերը, որոնք մշակում են արտադրության միջոցներ։ Դրանք են մետաղագործությունը, մեքենաշինությունը, էլեկտրական արդյունաբերությունը, շինարարականը, ածխինը, նավթինը, հանքանյութինը, քիմիականը և այլն։ Այսպես, 1926/27 թ. արդյունաբերության հիմնական շինարարության վրա ծախսված 947 միլիոն ռուբլուց 675 միլիոն ռուբլին դրված է արտադրության միջոցներ արտադրող ճյուղերում։ Այդ հասկանալի յել է։ Մետաղագործությունը, մեքենաշինությունը, վառելիքի ու շինարարական արդյունաբերությունները հանդիսանում են յերկրի ինդուստրիացման հիմքը։

Հարկավոր է կառուցել մտածված ու պլանով

Բանվորներին ու գյուղացիներին մեծ լարումով է հաջողվում ժողովրդական տնտեսության միջոցներից հարյուրավոր միլիոններ հատկացնել արդյունաբերական շինարարությանը։ Կուսակցությունը ձգտում է այն բանին, որպեսզի շինարարության վրա ծախսված ամեն մի ռուբլին ծախսվի ամենանպատակահարմար ձևով, որպեսզի այն ամենամեծ արդյունքներ տա։ Այս հնարավոր է միայն այն ժամանակ, յերբ ամենահոգատար, ամենաուշադիր ձևով մոտենանք ամեն մի նոր շինարարության։ Նոր շինարարության ամեն մի սխալ շատ թանկ է նստում յերկրին։

Իսկ այդպիսի սխալներ լինում եյին։ Յեղել են դեպքեր, յերբ նոր ձեռնարկությունները այնպես են շինվել, որ նրանց մեջ դրվել է արդեն հնացած սարքավորում։ Յեղել են դեպքեր, յերբ շինվել են հում նյութով չապահովված ձեռնարկություններ։

Կուսակցությունն այդպիսի սխալների դեմ մի շարք վճիռներ ընդունեց։ Նոր շինարարության վերաբերմամբ գլխավոր պահանջն այն է, որ խնամքով մշակվեն նախագծերն ու դաժան պլանայնություն հաստատվի։ Չի կարելի շտապով շինել։ Չի կարելի ամեն ինչ, ամեն տեղ և ամեն մեկի ուզածով շինել։ Հարկավոր է նոր շինարարության հաստատուն պլան և խիստ պլանային կարգապահություն։

ՀԱՐՑ

Որտեղից է խորհրդային իշխանությունը միջոցներ գտնում յերկրի ինդուստրիացման համար։

3. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱՆ

Արտադրության ռացիոնալիզացիան — մշակման մեծացման ու էժանացման ուղի

Արդյունաբերության հաջողությունների մասին ամենից լավ կարելի յե դատել մշակման (выработка) մեծացումով ու նրա էժանացումով։ Առաջին խնդիրը — մշակումը մեծացնելը — մենք մինչև այժմ վատ չենք լուծել, հետագայում էլ, ինչպես տեսանք, բավական արագ կը ծավալենք արտադրությունը։ Ավելի վատ է գործն արտադրության էժանացման խնդրում։ Մեր ձեռնարկություններում արտադրվող ապրանքների ինքնարժեքը դեռ շատ բարձր է — համարյա յերկու անգամ ավելի բարձր, քան մինչպատերազմականը։ Գործը բարդացավ նաև այն բանով, որ 1925/26 թ. սպասված էժանացման փոխարեն, մենք ունենք արդյունաբերական ապրանքների ինքնարժեքի թանկացում։

Մինչդեռ առանց ապրանքների ինքնարժեքի անընդհատ պակասման՝ մենք չենք կարողանա իջեցնել նաև ապրանքների մանրածախ գները, չենք կարողանա գյուղացուն և բանվորին էժան ապրանք տալ:

Ահա ինչու **կուսակցությունը մարտական խնդիր է դրել — լավացնել արդյունաբերության աշխատանքը, էժանացնել նրա պրոդուկցիան:** Արտադրությունն էժանացնելու գլխավոր միջոցն այն է, որ լավացնենք արտադրության տեխնիկան և լավացնենք ձեռնարկությունների աշխատանքի կազմակերպությունը, **ռացիոնալացնենք** արտադրությունը:

Մեր ձեռնարկությունների հսկայական մեծամասնությունն աշխատում է մաշված, պղպղված և հնացած սարքավորման օգնությամբ: Աշխատանքի յեղանակները և ձևերը հեռու չեն կատարյալ լինելուց: Դեռ ամենևին ամբողջ աշխատանքը մեքենաների ու մեխանիզմների միջոցով չէ — ձեռքի աշխատանքը դեռ մեծ տեղ է բռնում արտադրության մեջ: Աշխատանքի բաժանումը բավականաչափ իրագործված չէ: Աշխատանքի վատ կազմակերպման պատճառով ձեռնարկության մեջ շատ ընդմիջումներ են լինում — ժամանակին չեն տալիս հում նյութը, գործիքը, վատ է կազմակերպված նյութերի և կիսաֆաբրիկատների դազգահից դազգահ, բաժնից բաժին տալը. սխալ են դասավորված դազգահները և այլն: Ամեն մի ձեռնարկության մեջ կան բազմաթիվ մանր թերություններ և անհարթություններ: Արտադրության ռացիոնալիզացիայի խնդիրը, որ դրել է կուսակցությունը, հենց նշանակում է, թե մենք պետք է վերակառուցենք արդյունաբերության աշխատանքը նոր լավագույն տեխնիկայի և աշխատանքի լավագույն կազմակերպության հիմունքներով:

Թե ինչ է տալիս արտադրության այդպիսի ռացիոնալիզացիան, ցույց են տալիս հետևյալ փաստերը:

Գյուղատնտեսական մեքենաների «Մուրճ և մանգաղ» գործարանում (Ուկրաինա) ցաքանների հավաքման ժամանակ անցան աշխատանքի «ժապավենի սիստեմին» (կոնվեյեր): Կոնվեյերը (պտտվող երկար ժապավեն) ձգվում է ամբողջ բաժանմունքում (ցեխում) մեկ բոպեում 2 մետր արագությամբ: Ժապավենի յերկու կողմը կանգնած են այս կամ այն գործողությունը կատարող բանվորները: Մատերիալը կոնվեյերով անցնում է մեկից մյուսին — մեկը հագցնում է ցաքանի ատամները, մյուսն ամրացնում է պտուտակները, յերրորդն ստուգում է առանձին մասերը և այլն: Աշխատանքի այսպիսի սիստեմի ժամանակ ամեն ինչ հաշված է բոպե առ բոպե — յեթե մեկը հապաղեց, ստիպված են կանգնացնել ամբողջ կոնվեյերը, յեթե նյութը ժամանակին չտվեցին, միանգամից կանգ է առնում ամբողջ բաժանմունքը:

Այսպիսով կոնվեյերն ապահովում է ամեն մի աշխատողի բարձր արտադրողականությունը:

Կոնվեյեր մտցնելու արդյունքներն այս են՝ առաջ մեկ բանվորը հավաքում եր օրական 38 ցաքան, այժմ — 50:

«Կոմմունար» գործարանում կոնվեյերին անցնելն այսպիսի արդյունքներ ավեց՝ առաջ հինգ բանվոր հավաքում եյին օրական 85 հնձի մեքենա, իսկ այժմ — 210: Լենինգրադի «Էլեկտրոսիլա» գործարանում մասերը պատրաստվում են ժապավենի սիստեմի կարգով — մեկ դարպասից մտնում է ձուլվածքը, իսկ մյուսից դուրս է գալիս լիովին պատրաստ մասը: Աշխատանքի այսպիսի կարգը մասերի ինքնարժեքն էժանացրեց 25% և մեծ չափով արագացրեց աշխատանքը:

Հսկայական նշանակություն ունի արտադրության մեխանիզացիան՝ ձեռքի աշխատանքը մեքենայով փոխարինելը և կատարելագործված մեխանիզմներ մտցնելը: «Կրասնայա զվեզդա» գործարանում կատարելագործեցին մեխանիզմները, և այժմ մեկ կալսելու մեքենայի արտադրության վրա գործադրվում է ոչ թե 144 ժամ, ինչպես առաջ եր, այլ միայն 92 ժամ:

Բաքվում ու Գրոզնիում տարտալեչիկների (ժելոնկայի օգնությամբ նավթ դուրս քաշողների) աշխատանքը փոխարինված է մեքենայով, այդ ավեց աշխատանքի արտադրողականության հսկայական աճում և պրոդուկցիայի էժանացում:

Աշխատանքի արտադրողականությունը հսկայական չափով բարձրանում է գործարանի մասնագիտացումով, յերբ ձեռնարկությունն անցնում է փոքր միատեսակ ապրանքի մասսայական արտադրության: Այն ժամանակ հարկ չկա շարունակ վերակառուցել աշխատանքը, հարմարվել նոր պատվերներին և այլն: Ահա ինչ է գրում «Տրյոխգորնի մանուֆակտուրայի» (Մոսկվա) բանթղթակիցը:

«Մենք արտադրում ենք 715 տարբեր նախշերով չիթ: Այս նշանակում է, որ մենք պետք է 715 անգամ փոխենք տպագրող մեքենաների գլանները, նույնքան անգամ էլ նոր ներկեր շինենք ու մեքենան հարմարացնենք դրանց: Մեն միայն գլանները փոխելու վրա վատնվում է անարտադրողական աշխատանքի 2000 ժամ»:

Լենինգրադի մեքենաշինական գործարաններից մեկում անցան մեկ իրի մշակման մասսայական արտադրության կարգով, և մշակումը մեծացավ հինգ անգամ, պրոդուկցիան էժանացավ 40%, իսկ աշխատավարձը 5—8%: Հսկայական նշանակություն ունի ջերմաուժական (теплосилевой) տնտեսության ճիշտ դնումը: Շոգու տնտեսությունը ճիշտ վարելիս՝ շոգու մեկ տոննան պետք է արժենա մոտ 4 ռուբլի, իսկ այժմ այն մեզ նստում է 6 ռ. 20 կ., յերբեմն էլ՝ ավելի շատ:

Հում նյութի խնայողություն, արտադրության թափթփուկների ու թերմայքների օգտագործում, պահեստի տնտեսության լավ դնում և այլն,— այս բոլորը հսկայական նշանակություն ունի: Ահա մի օրինակ՝ «Զարյա Վոստոկա» նավթահանքում (Բաքու) գրված է պարզորոշ, որ հնարավորություն է տալիս ամսական խնայել 15,000 ռուբլի: Այն գազը, որ առաջները ցնդում էր օդի մեջ, այժմ օգտագործվում է նավթ մշակող գործարաններում: Հոկտեմբերյան շրջանի թուղթը «Պրոլետարական գործարանում» կազմակերպեցին փայտի սղոցուքի և մյուս թափթփուկների օգտագործումը և ամսական 10,000 ռ. խնայողություն ստացվեց:

Արտադրության ռացիոնալիզացիան պահանջում է նաև աշխատանքի պայմանների լավացում (ավելի լավ շենք, ավելի շատ օդ, լույս և այլն), աշխատանքի կարգապահության ամրացում և արդյունաբերությունը ղեկավարող վարչական օրգանների աշխատանքի լավացում: Հատկապես կարևոր է ձգձգումները վերացնել ֆաբրիկաների ու գործարանների աշխատանքի համար կարևոր հարցերի լուծման ժամանակ, ինչպես՝ արտադրական պլանների հաստատման, հում նյութի մատակարարման և այլն:

Արտադրությունը ռացիոնալ կերպով դնելու գլխավոր արգելքը մեր ձեռնարկությունների սարքավորման հնացած ու մաշված լինելն է: Այս պատճառով հիմնական շինարարությունը հատկացրած միջոցների մի հսկայական բաժինը ծախսվում է մեր ֆաբրիկաների ու գործարանների վերասարքավորման վրա, հիմնական ուժերի վրա: Այս վերասարքավորումն էլ կը հանդիսանա տեխնիկայի լավացման, նոր մեքենաներ ու գազգահներ մտցնելու և աշխատանքի կազմակերպման լավացման ամենահզոր միջոցը:

Սոցիալիստական ու կապիտալիստական ռացիոնալիզացիա

Կապիտալիստներն էլ իրենց մոտ արտադրության ռացիոնալիզացիա չեն անցկացնում: Բայց այնտեղ ռացիոնալիզացիայի նպատակն է մի բուռն կապիտալիստների հարստացումը և այդ պատճառով այն ուղղված է բանվոր դասակարգի դեմ: Կապիտալիստական ռացիոնալիզացիան հասցնում է աշխատավարձի ցածրացման, գործազրկության մեծացման, աշխատանքի պայմանների վատացման: Այն կրիզիսի պայմաններում, որի մեջ է բուրժուական երկրների տնտեսությունը, աշխատանքի կատարելագործված յեղանակներ մտցնելը հասցնում է ամենից առաջ բանվորների թվի կրճատման:

Բոլորովին այլ բան է մեզ մոտ, մեր սոցիալիստական ռացիոնալիզացիայի ժամանակ: Մենք օգտագործում ենք կապիտալիստական տեխնիկայի նորագույն նվաճումները վոչ թե շահագործողների շահերի համար, այլ աշխատավորների ամբողջ մասսայի համար—գների իջեցման, սոցիալիստական կուտակման, արտադրության լայնացման, աշխատավարձի բարձրացման համար: Գերմանիայում, որտեղ հատկապես յեռանդուն էր անցկացվում կապիտալիստական ռացիոնալիզացիան, այն մինչև 3 միլիոնի հասցրեց գործազուրկների թվի աճումը: Մեզ մոտ, ընդհակառակը, շարունակ աճում է պետական արդյունաբերության բանվորների թիվը, արդյունաբերության մեջ է քաշված 1925/26 թ. մոտ 480,000, իսկ 1926/27 թ. 130,000 նոր բանվոր: Միևնույն ժամանակ անընդհատ աճում է աշխատավարձը—պետական արդյունաբերության մեջ 1925/26 թ. այն բարձրացել է 24%, իսկ 1926/27 թ.—10%:

Մեզ մոտ էլ դեռ գործազրկություն կա, բայց դրա արմատները գործարաններում աշխատողների թվի կրճատումը չէ, այլ բանվորական ձեռքերի մշտական հոսանքը գյուղից, որտեղ նրանք մեր հետամնաց գյուղատնտեսական արտադրության մեջ գործադրություն չեն գտնում:

Ռացիոնալիզացիայի դժվարությունները

Բայց չի կարելի կարծել, որ ՍՍՀՄ էլ հեշտ գործ է արտադրության ռացիոնալիզացիան: Կարող են դեպքեր լինել, յերբ տեխնիկայի լավացումը և արտադրության կազմակերպումն առանձին ձեռնարկություններում ու առժամանակ կպահանջի բանվորների մի մասը՝ նրանց ավելորդ կը դարձնի արտադրության համար: Յեթե վերցնենք պետական արդյունաբերությունն իր ամբողջությամբ, ապա նրա մեջ արտադրության ռացիոնալիզացիան ապահովում է սոցիալիստական կուտակման աճումը: Բայց առանձին տեղերում, այս կամ այն ժամանակ կարող է անհրաժեշտ լինել բանվորների քանակի կրճատումը:

Բանվոր դասակարգն անում է այդ ժամանակավոր դժվարությունները, որպեսզի բարձրացնի իր արդյունաբերությունը, վերաշինի տեխնիկան, կառուցի սոցիալիստական տնտեսություն: Միևնույն ժամանակ կուսակցությունը տնտեսական օրգանների առաջ խնդիր է դրել՝ այդ ժամանակավոր դժվարությունների ծանրությունը թուլացնել: Մասնավորապես անհրաժեշտ է կազմակերպել մի ձեռնարկությունից, որտեղ բանվորների ավելցուկ է գոյանում, բանվորների պլանային արագ տեղափոխությունը մի այլ ձեռնություն, որը նոր է շինված կամ լայնացրած:

Արտադրության ռացիոնալիզացիան բանվոր դասակարգից լարում է պահանջում նաև աշխատանքի կարգապահության ամրացում, բանվորական ուժը խնայում, մշակման ճիշտ նորմաների հաստատման, խոտանի (брак), աշխատանքից բացակայելու դեմ մղվող կռիվ ասպարեզում:

Բոլորովին պարզ է, վոր արտադրության ռացիոնալիզացիայի ամբողջ աշխատանքն անհնար է առանց ամեն մի բանվորի ակտիվ մասնակցության արտադրության լավացմանը։ Ամեն մի բաժնի (ցեխի), ձեռնարկության, արդյունաբերության ճյուղի ռացիոնալիզացիայի պլանը պետք է քննության առնվի բանվորների կողմից, նրանց կարծիքները, խորհուրդները և մատնանշումները պետք է օգտագործվեն ժողովների, արտադրական խորհրդակցությունների, թերթերի միջոցով։ Հատկապես կարևոր է բանվորների վորակման ու տեխնիկական գրագիտության բարձրացումը և հնարիչ-բանվորներին ամեն տեսակ աջակցություն ցույց տալը։

Չի կարելի արտադրությունը լավացնել առանց գիտական-տեխնիկական ուժերի օգտագործման՝ առանց նորագույն նվաճումների օգտագործման, առանց գիտական-տեխնիկական հիմնարկությունների, գործարանային լաբորատորիաների և այլն աշխատանքի լավացման։ Այս պատճառով, բանվորների վողջ մասսան ռացիոնալիզացիայի գործի մեջ գրավելու կողքին, հարկավոր է պայմաններ ստեղծել, վորանց ժամանակ և՛ ինժեներները, և՛ մյուս մասնագետները յեռանդագին ու անձնվեր դիմեն այդ աշխատանքին։

ՀԱՐՑ

Ինչումն է արտադրության ռացիոնալիզացիայի ասպարեզում մեր աշխատանքի զանազանությունը կապիտալիստական ռացիոնալիզացիայից.

4. ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Մեր ձեռնարկությունների աշխատանքի լավացումը ԽՍՀՄ բանվոր դասակարգի գործն է, վորովհետև պետական արդյունաբերությունը բանվորների հարազատ, **սեփական** գործն է։

Լենինը և Համ. ԿԿ (բ) XIV համագումարը մեր պետական ձեռնարկությունները կոչում են «հաջորդական-սոցիալիստական տիպի ձեռնարկություններ»։ Հողը, վորի վրա դրանք շինված են, շենքերը, գործարանները և ֆաբրիկաները, դրանց սարքավորումը, արտադրած ապրանքները, — այս բոլորը պատկանում է վոչ թե կապիտալիստներին, այլ Խորհրդային պետությանը։ Իսկ ինչ է մեր պետությունը։ Այդ — բանվորական պետություն է։ Բանվորական պետությանը պատկանող մեր ձեռնարկություններում չկա յերկու տարբեր դասակարգ — բանվորներ ու կապիտալիստներ, նշանակում է, նրանց մեջ չկա նաև դասակարգային պայքար։ Այնտեղ միևնույն դասակարգը և՛ աշխա-

տում է, և՛ կառավարում արտադրությունը։ Իսկ այդ սոցիալիստական ձեռնարկության **հիմնական** տարբերությունն է կապիտալիստականից։

Պետական ձեռնարկություններում շահագործում չկա

Յերբեմն վորևե անգիտակից բանվոր, մատնանշելով մեր ձեռնարկությունների խոցերի վրա, ասում է. «Կապիտալիստներին քշել ենք, բայց շահագործումը մնացել է»։ Այս դատողությունն սկզբից մինչև վերջ սխալ է։

Շահագործումը նույնը չէ, ինչ աշխատանքի ծանր պայմանները. Շահագործումը — այդ կապիտալիստների դասակարգի կողմից բանվորների աշխատանքի ստեղծած արժեքների յուրացումն է։ Յերբ շահույթը հանում է անհատական կապիտալիստն և ծառայում է այն բանին, վորպեսզի ստրկացվեն բանվորների շարունակ նոր մասսաներ, կերակրվի պարազիտ-կապիտալիստների դասակարգը, ապա այդ շահագործում է։ Յեթե աշխատանքի արտադրողականության ամեն մի բարձրացում ավելի յե հարստացնում կապիտալիստին և մեծացնում նրա և բանվորի տարբերությունը, ապա այդ շահագործում է։ Իսկ մեզ մոտ պետական ձեռնարկություններում արտադրողականության բարձրացումը լավացնում է բանվոր դասակարգի դրությունը։ Մեզ մոտ պետական արդյունաբերության շահույթն անցնում է բանվորական պետության տնօրինությանը և գործադրվում է սոցիալիստական արդյունաբերության լայնացման, բանվորների ու աշխատավորների կյանքի լավացման վրա։ Մեր պետական արդյունաբերության մեջ շահագործում չկա հենց այն պատճառով, վոր կապիտալիստներ չկան, իսկ բանվոր դասակարգը չի կարող ինքն իրեն շահագործել։

Ոպպոզիցիայի սխալը, վոր մեր ձեռնարկությունները անվանում է պետական կապիտալիստական

Այլ բան են, իհարկե, կոնցեսսիոն և վարձակալած կապիտալիստական ձեռնարկությունները։ Այնտեղ շահույթը հանում է կապիտալիստին, այնտեղ կա, ինչպես և մյուս մասնավոր ձեռնարկություններում, բանվորների շահագործում։ Այնտեղ կուսակցությունը և արհմիությունները գլխավորում են բանվորներին կապիտալիստների դեմ մղվող դասակարգային պայքարում։ Ահա ինչու չի կարելի շփոթել մեր պետական ձեռնարկությունները կոնցեսսիաների հետ և թե մեկն ու թե մյուսը պետական կապիտալիստական անվանել։ Իսկ այսպիսի սխալ անում էյին ոպպոզիցիային պատկանող ընկերները Համ. ԿԿ (բ) XIV համագումարում։

Այս մեծ ու կոպիտ սխալ է, կապված այն բանի հետ, վոր ոպպոզիցիան չի հավատում մեր յերկրի սոցիալիստական շինարարությանը։ Այս սխալն ամբողջովին հակասում է Վ. Ի. Լենինի ուսմունքին։ Վ. Ի. Լենինը պետական կապիտալիզմ էր անվանում այն-

պիսի կապիտալիզմը, որ վերահսկողության է չենթարկվում ու կանոնավորվում պետության կողմից: Իսկ կապիտալիզմի ժամանակ գոյություն ունեին նաև կապիտալիստներ: Իսկ ո՞ւր են այն կապիտալիստները, որոնք նստած են պետական ձեռնարկություններում: Նրանք չկան: Իսկ եթե չկա կապիտալիստ, ապա էլ ինչ պետական կապիտալիզմ է այս:

Ով ասում է, որ մեր պետական ձեռնարկությունները — պետկապիտալիզմ է, նա այն միտքն է առաջ քաշում, որ իբր թե մեր պետական ձեռնարկություններում շահագործում և դասակարգային պայքար կա: Իսկ ո՞ւմ է ձեռնտու այս: Մենշևիկներին ու էսէռներին, որոնք քնում ու երազում տեսնում են, թե ինչպես գրգռեն բանվորական մասսային բանվորական պետության դեմ, ինչպես խախտեն բանվոր դասակարգի համոզմունքը, որ մենք ԽՍՀՄ սոցիալիզմ ենք կառուցում:

Ահա թե ինչու հարկավոր է պայքարել այն սխալ ու վնասակար կարծիքի դեմ, որ իբր թե պետական արդյունաբերությունը — պետական կապիտալիստական է: Այն — սոցիալիզմի բազան է, այն — սոցիալիզմի կառուցման ամբողջ գործի հիմքն է մեր երկրում:

ԿՏՈՐՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱԼԻԶԱՑԻԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ

Հնարավո՞ր է արդյոք մեր երկրի ինդուստրալիզացիան սոցիալիստական կուտակման հիմքի վրա:

Ունե՞նք արդյոք նման կուտակման աղբյուրներ, բավարար նրա համար, որպեսզի ապահովեն ինդուստրալիզացիան:

Այո, հնարավոր է: Այո, մենք ունենք այդպիսի աղբյուրներ:

Ես կարող եմ մատնանշել այնպիսի փաստի վրա, ինչպիսին կալվածատերերի ու կապիտալիստների էքսպրոպրիացիան է (սեփականազրկումը) մեր երկրում Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով, մասնավոր սեփականության վերացումը հողի, ֆաբրիկների ու գործարանների և այլն նկատմամբ և նրանց համաժողովրդական սեփականություն դարձնելը: Հազիվ թե կարիք լինի ապացուցելու, որ այդ փաստը կուտակման բավականին պատկառելի աղբյուր է ներկայացնում:

Ես ապա կարող կլինեի մատնանշել այնպիսի փաստի վրա, ինչպիսին ցարական պարտքերի վերացումն է, որ ժողովրդական տըն-

տեսության ուսերից միլիարդների պարտք է գլորում: Չպետք է մոռանալ, որ ճանաչելով պարտքերը՝ մենք ստիպված պիտի լինեինք յուրաքանչյուր տարի ի վնաս արդյունաբերության, ի վնաս մեր ամբողջ ժողովրդական տնտեսության մի քանի հարյուր միլիոն միայն տոկոս վճարել: Ավելորդ է ասել, որ այդ հանգամանքը խիստ հեշտացնում է մեր կուտակման գործը:

Ես կարող կլինեի մատնանշել մեր ազգայնացրած արդյունաբերության վրա, որ վերականգնվել է, որ զարգանում է և տալիս է արդյունաբերության հետագա զարգացման համար անհրաժեշտ որոշ շահույթ: Դա էլ է կուտակման աղբյուր:

Ես կարող կլինեի մատնանշել մեր ազգայնացրած արտաքին առևտրի վրա, որ տալիս է որոշ շահույթ, և ուրեմն հանդիսանում է կուտակման աղբյուր: Կարելի է մատնանշել մեր առավել կամ պակաս կազմակերպած ներքին առևտրի վրա, որ նույնպես որոշ շահույթ է տալիս և այդպիսով կուտակման որոշ աղբյուր է ներկայացնում:

Կարելի էր մատնանշել կուտակման մի այնպիսի լծակի վրա, ինչպիսին մեր բանկային սիստեմն է, որը որոշ շահույթ է տալիս և ըստ կարողության սնում մեր արդյունաբերությունը:

Վերջապես, մենք ունենք մի այնպիսի զենք, ինչպիսին պետական իշխանությունն է, որը տնօրինում է պետական բյուջեն և որը մի փոքր գումար է հավաքում ընդհանրապես մեր ժողովրդական տնտեսության և մասնավորապես մեր ինդուստրիան զարգացնելու համար:

Հիմնականում սրանք են մեր ներքին կուտակման գլխավոր աղբյուրները:

(Ի. Ստալին՝ «Խորհրդային Միության տնտեսական վիճակի մասին», էջ 13—14, ռուսերեն):

2. ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱՆ — ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԶԱ

...Որպեսզի առաջ շարժվենք, զարգացնենք ինդուստրիան, ամրացնենք ժողովրդական տնտեսությունը և պահենք կապը գյուղացիության հետ, — անհրաժեշտ են աշխատանքի արտադրողականության աճում և արդյունաբերական ապրանքների գների սիստեմատիկ իջեցում: Բայց արդյունաբերական ապրանքների գների իջեցման քաղաքականություն վարել անկարելի է, առանց նոր տեխնիկա մտցնելու և սիստեմատիկաբար լավացնելու արտադրության աշխատանքի կազմակերպությունը: Լենինն ասում էր.

«Աշխատանքի արտադրողականություն — այս վերջին հաշվով, ամե-

նակարևորն է, ամենագլխավորը նոր հասարակական կարգի հաղթանակի համար։ Կապիտալիզմն ստեղծեց աշխատանքի արտադրողականություն, որ տեսնված չէր ճորտատիրության ժամանակ։ Կապիտալիզմը կարող է վերջնականապես պարտվել և վերջնականապես կը պարտվի այն բանով, որ սոցիալիզմը կստեղծի նոր, շատ ավելի բարձր աշխատանքի արտադրողականություն»։ (Լենին. «Մեծ նախաձեռնություն»)...

Այս նկատումով բանվոր դասակարգի բոլոր կազմակերպությունները, հատկապես կուսակցական կազմակերպությունները և արհմիությունները, պետք է կրկնակի ուշադրություն նվիրեն արտադրության տեխնիկայի ու կազմակերպության լավացմանը, հաշվառելով դրանց վճռական նշանակությունը սոցիալիստական շինարարության գործում։

Պրոլետարական պետության սոցիալիստական ռացիոնալիզացիան (տեխնիկայի լավացում և արտադրության կազմակերպություն) արմատապես զանազանվում է կապիտալիստական ռացիոնալիզացիայից։ Կապիտալիստները ռացիոնալիզացիա անցկացնելով, դրա ամբողջ ծանրությունը գցում են բանվոր դասակարգի ուսերին, որի հետևանքով արտադրության կապիտալիստական ռացիոնալիզացիան հասցնում է բանվորական օրվա յերկարացման, գործազրկության աճման, բանվոր դասակարգի կենսական մակարդակի ցածացման և լայն աշխատավոր մասսաների աղքատացման։ Ի տարբերություն կապիտալիստական ռացիոնալիզացիայի սոցիալիստական ռացիոնալիզացիան նպատակ ունի մեծացնել բանվոր դասակարգի թիվը, բարձրացնել նրա նյութական ու կուլտուրական մակարդակը, բավարարել լայն աշխատավոր մասսաների աճող պահանջները, ամրացնել պրոլետարիատի ու գյուղացիության կապը և նյութական բազա ստեղծել մեր տնտեսության սոցիալիստական տարրերի հետագա զարգացման համար։

Տեխնիկայի լավացումը և արտադրության կազմակերպությունը պետք է ընթանան յերեք հիմնական ուղղությամբ.

1) Նոր ձեռնարկությունների ստեղծում գիտության և տեխնիկայի նվաճումների հիման վրա։

2) Գործող ձեռնարկությունների արմատական վերասարքավորում լավագույն տեխնիկական սարքավորում մտցնելու և աշխատանքն ավելի ճիշտ կազմակերպելու միջոցով.

3) Մի շարք գործնական միջոցառումների իրագործում առձեռն սարքավորման մաքսիմալ օգտագործության և արտադրության վերակառուցման նպատակով։

(Համ. կկ(բ) վորոշումներից արտադրության ռացիոնալիզացիայի մասին)։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործարկումում ծանոթացեք ձեր ձեռնարկության արտադրության ռացիոնալիզացիայի աշխատանքին, գրեցեք հիմնական թվերը՝ ա) ռացիոնալիզացիայի հետևանքով աշխատանքի արտադրողականության բարձրացման մասին և բ) ռացիոնալիզացիայի ազդեցության մասին պրոդուկցիայի ինքնարժեքի վրա։ Միաժամանակ հարց ու փորձ արեք այն դժվարությունների մասին, որ հանդիպել են ռացիոնալիզացիայի աշխատանքն իրագործելիս։ Բոլոր հավաքած նյութերը քննեք հաջորդ պարապմունքի ժամանակ։

2) Գործարկումում իմացեք, թե ըստ ամիսների ինչպես է փոխվել բանվորի օրական միջին աշխատավարձը 1926/27 թ. ընթացքում ամբողջ գործարանում և ձեր բաժնում (ցեխում)։ Գծեք դիագրամմա և համեմատեցեք աշխատավարձի փոփոխությունը աշխատանքի արտադրողականության փոփոխման հետ։ Դրանից հետո քննության առեք այն հարցը, թե արդյոք ձեր ձեռնարկության մեջ ճիշտ է աշխատավարձի ու աշխատանքի արտադրողականության հարաբերակցությունը։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ կուսակցությունը 1924/25 թ. յերկրի ինդուստրիալիզացիայի կուրսը բռնեց և որն է այդ կուրսի էությունը։

2. Ի՞նչ է սոցիալիստական կուտակումը և ինչո՞ւմն է նրա տարբերությունն այն կուտակումից, որ տեղի յեր ունենում մինչհեղափոխական Ռուսաստանում։

3. Ինչի՞ յե հետամուտ կուսակցությունը, յերբ առաջ է քաշում արտադրության ռացիոնալիզացիայի լոզունգը։

ՅՈԹՆԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Ինչի մասին է զրույցը

Գյուղացիական տնտեսության հետ պետական արդյունաբերության կապի խնդիրներն այն են, որ՝

1. Կենդանի և անմիջական ապրանքափոխանակություն սկսվի պետական արդյունաբերության ու գյուղացիության միջև։

2. Պետական արդյունաբերությունը և տրանսպորտը կառուցվի գյուղատնտեսության զարգացման ընթացքին համապատասխան։

3. Աստիճանաբար վերակառուցվեն մանր գյուղացիական տնտեսությունները, վերափոխվեն ու դառնան խոշոր հասարակական, կոոպերատիվ տնտեսություններ և դրանով գյուղը մղվի դեպի սոցիալիզմ։

Այս բոլորի մասին մենք խոսել ենք նախորդ զրույցներում։

Յոթներորդ զրույցում մենք կանգ կառնենք այն ուղիների վրա, վորոնք տանում են պետական արդյունաբերությունից դեպի գյուղացիական տնտեսությունը, այն միջոցների վրա, վորոնցով Խորհրդային իշխանությունն ոգտվում է, վորպեսզի ամրացնե կապը, հաղթահարե մասնավոր կապիտալը, ինդուստրացնե յերկիրը և գյուղն առաջնորդե դեպի սոցիալիզմ։

Դրա համար քննության կառնենք.

1. Ինչ նշանակություն ունի ԽՍՀՄ ինդուստրիացումը կապի ամրացման համար։

2) Ինչ նշանակություն ունի առևտուրը դրա համար։

3) Ինչպես են պետությունն ու կոոպերացիան տիրում առևտրին և կապ հաստատում պետական արդյունաբերության ու գյուղացիական տնտեսության միջև։

4) Ինչպես է պետական առևտրի ու կոոպերացիայի ամրացումն ոգնում պետական արդյունաբերությանը, վորպեսզի նա իր յետևից տանե ու վերակառուցե գյուղացիական տնտեսությունը սոցիալիստական նոր ձևով։

և 5) Ինչպես է պետությունը պետական առևտրի, կոոպերացիայի և արդյունաբերության ամրացման համար ոգտագործում արտաքին առևտուրը, բանկերը, ամուր դրամը, հարկերն ու տրանսպորտը, ինչպես նրանց ոգնությամբ վերակառուցվում է գյուղի տնտեսությունը։

1. ԻՆԴՈՒՍՏՐԻԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Ինդուստրիացումը — բանվոր դասակարգի յեվ գյուղացիության կապի ամրացման ուղի

Նախորդ զրույցում մենք խոսեցինք այն մասին, թե Նեպ-ի այն նոր շրջանում, վորի մեջ մտել ենք, ինդուստրիայի աճումը վորոշում է ամբողջ ժողովրդական տնտեսության աճումը։ Այս ամենևին չի նշանակում, վոր մենք մոռանում ենք գյուղացիության կարիքները, գյուղատնտեսության վերելքի գործում նրան ոգնելու անհրաժեշտությունը։ Խոշորագույն սխալ կը լիներ, կործանարար սոցիալիստական շինարարության և հենց ինդուստրիացման գործի համար, յեթե մենք արդյունաբերության զարգացումով այնպես վոգևորվեինք, վոր մոռացության մատնեինք գյուղատնտեսությունը։

Ոպպոզիցիոն բլոկը ը. ը. Տրոցկու և Զինովյեվի գլխավորությամբ փորձեց այդ կործանարար ուղիով տանել կուսակցությունը։ Ոպպոզիցիան իր մեղադրանքները կուսակցության դեմ հենում էր այն բանին, վոր իբր թե կուսակցությունը չափազանց քիչ ուժեր ու միջոցներ է նվիրում արդյունաբերության։ Այս մեղադրանքը, ինչպես ամեն մեկի համար պարզ է, զրպարտություն է կուսակցության հասցեին, և այդ զրպարտությունը հերքվում է ամենից առաջ մեր արդյունաբերության բուռն աճման փաստով վերջին տարիներում։ Ոպպոզիցիայի հետ ունեցած վեճը հանգում էր ըստ էության այն հարցին, թե վորտեղից գտնել յերկրի ինդուստրիացման համար անհրաժեշտ միջոցները, և ինչքան միջոցներ հատկացնել ինդուստրիային։ Ոպպոզիցիան առաջարկում էր մեծացնել գյուղացիների հարկերը և բարձրացնել արդյունաբերության արտադրած ապրանքների գները։ Ահա այն ուղին, վոր առաջարկում էր ոպպոզիցիան ինդուստրիացման «արագացման» համար։

Մեր կուսակցությունը մերժեց այդ ուղին, այն ճանաչեց վնասակար ու անպետք։ Ընդ սմին կուսակցությունը յելակետ ուներ Լենինի ուսմունքի հիմնական սկզբունքները սոցիալիզմ կառուցող պրոլետարիատի քաղաքականության մասին։ Լենինը կուսակցությանը սովորեցնում էր, վորպեսզի «առաջ շարժվի վոչ այլ կերպ, բայց յեթե գյուղացիության հետ միասին»։ Յերբ Իլյիչը կուսակցությանը գյուղացիության հետ կապ հաստատելու լոզունգը տվեց, ասաց. «Մենք պետք է այնպես անենք, վորպեսզի խոշոր արդյունաբերության և գյուղատնտեսության ասպարիզում մեր սոցիալիստական աշխատանքի և այն աշխատանքի միջև, վորով զբաղված է ամեն մի գյուղացի, կապ լինի... Հարկավոր է ցույց տալ այդ կապը, վորպեսզի մենք տեսնենք այն, վորպեսզի ամբողջ ժողովուրդը տեսնի այն և վորպեսզի ամբողջ գյուղացիական մասսան տեսնի, վոր իր այժմյան ծանր, անլուր կերպով քայքայված, չլսված չափով աղքատ տանջալի կյանքի և այն աշխատանքի միջև, վոր կատարում են հանուն հեռավոր սոցիալիստական իդեալների, կապ կա»։

Ոպպոզիցիայի առաջարկությունները չեյին ընթանում գյուղացիության հետ կապ հաստատելու լենինյան այս գծով։ Նրանք սպառնում եյին խզում առաջացնել գյուղացիության հետ։ Այս պատճառով էլ կուսակցությունն այնպես համերաշխությամբ մերժեց այդ առաջարկությունները։

Գների բարձրացումը և գյուղացիության վրա ընկած հարկային բեռի ծանրացումը կխանգարեր և վոչ թե կարագացներ ինդուստրիացումը։ Չե՞ վոր այդպիսի քաղաքականությունը կհասցներ գյուղի քայքայմանը և գյուղատնտեսության անկմանը։ Գյուղը կկրճատեր արդյունաբերական ապրանքների իր պահանջը։ Գյուղը կսկսեր կրճատել իր պրոդուկցիան։ Իսկ առանց աճող գյուղացիական շուկայի, ա-

տանց վուշի, բամբակի, կաշու, շաքարի ճակնդեղի և այլ գյուղատնտեսական հում նյութերի **աճող** արտադրություն չի կարող աճել նաև արդյունաբերությունը: Չէ՞ վոր մեր ամբողջ արդյունաբերության մոտ կեսն զբաղված է գյուղատնտեսական հում նյութերի վերամշակումով:

Մենք մեր սեփական սխալների փորձով բոլորովին ակնառու համոզվեցինք, թե ինչքան կարևոր է արդյունաբերության և գյուղատնտեսության տնտեսական միությունը: Յերբ 1923 թ. արդյունաբերությունը՝ իր ապրանքների բարձր գների օգնությամբ՝ սկսեց չափազանց արագ կուտակում կատարել, վրա հասավ վաճառահանության կրիզիս—ապրանքները վաճառել չէր լինում: Կրիզիսից մի յելք կար—գները իջեցնել, գյուղացիական պահանջը լայնացնել: Յերբ մեզ մոտ 1924—26 թ. թ. հացի ու արդյունաբերական ապրանքների գների համեմատությամբ հում նյութերի չափազանց ցած գներ հաստատվեցին, գյուղացիները դադարեցին տեխնիքական կուլտուրաների ցանքերն ընդարձակել, իսկ վորոշ կուլտուրաներ նույնիսկ կրճատեցին: Այդ իսկույն ևեթ ազդեց արդյունաբերության վրա, վորն սկսեց հում նյութի պակաս զգալ և նույնիսկ վորոշ տեղերում այս պատճառով ստիպված էր արտադրությունը կծկել:

Այսպիսով և՛ քաղաքականապես, և՛ տնտեսապես արդյունաբերական ապրանքների բարձր գների քաղաքականությունը կհասցներ մեր ամբողջ սոցիալիստական շինարարության խափանմանը: Այն կհարվածեր և գյուղատնտեսությունը, հատկապես չքավորի տնտեսությունը, և արդյունաբերությունը: Մեր յերկրում չի կարելի սոցիալիզմ կառուցել առանց գյուղացիության միլիոնավոր մասսաների պաշտպանության, առանց նրա մասնակցության այդ շինարարությանը: Չի կարելի նաև ինդուստրիացում իրագործել **ընդդեմ** գյուղացիության—այդպիսի ինդուստրիացումը կը հասցներ մեր ամբողջ գործի կործանումին:

Կուսակցության գիծն այլ է—զարգացնել ինդուստրիան գյուղատնտեսության աճման հետ միասին, արդյունաբերության այդ հում նյութերի բազայի աճման հետ միասին, գյուղացիության բարեկեցության և ապրանքների պահանջի աճման հետ միասին:

Ոպպոզիցիան նայում է գյուղացիությանն իբրև բանվորական պետության «գաղութի» *), վորը պետք է շահագործել: Այդ—լենինյան հայացք չէ, այդ հակասում է լենինյան ուսմունքի հիմքերին, թե մենք կարող ենք չքավորին ու միջակին տանել դեպի սոցիալիզմ, կա-

*) Գաղութ—մի յերկիր, վոր քաղաքականապես ու տնտեսապես ստրկացված է իմպերիալիզմի կողմից, շահագործվում է նրանից (Հնդկաստան, Յեգիպտոս, [illegible] չափով Չինաստանը և այլն):

րող ենք նրա հետ միասին սոցիալիստական տնտեսություն կառուցել:

Ահա ինչու մեր կուսակցությունը վոչ միայն մերժեց ոպպոզիցիայի առաջարկները, այլև, ընդհակառակը, յեռանդագին սկսեց արդյունաբերական ապրանքների գներն իջեցնելու, չքավորի ու միջակի վրա ընկնող հարկերը թեթևացնելու, վարկով, մեքենաներով, հողաշինարարությամբ և այլն գյուղին օգնություն ցույց տալու աշխատանքը:

ԽՍՀՄ ինդուստրիացումն անհնար է առանց խնայողության ռեժիմի

Յեթե վոչ գյուղից, բայց էլ վորտեղից վերցնենք այն հարյուրավոր միլիոնները և միլիարդները, վորոնք հարկավոր են յերկրի ինդուստրիացման համար,—այսպես էր դնում հարցը ոպպոզիցիան: Դրան կուսակցությունը պատասխանում է՝ ամբողջ յերկիրը, ամբողջ ժողովրդական տնտեսությունը պետք է հայթայթեն այդ միջոցները: Ի հարկե, արդյունաբերության զարգացումով շահագրգռված է և գյուղը, առանց հզոր ինդուստրիայի մենք վոչ միայն չենք հասնի սոցիալիզմին, այլև չենք բարձրացնի գյուղատնտեսությունը, չենք ամրացնի մեր ռազմական հզորությունը և չենք կարողանա դիմակայել ոտարերկրյա իմպերիալիստներին, վորոնք հենց այն են յերազում, թե ինչպես ստրկացնեն մեր յերկիրը և իրենց գաղութը դարձնեն այն: Գյուղը **շահագրգռված է** ինդուստրիացումով, այս պատճառով էլ մասնակցում է արդյունաբերության զարգացմանը միջոցներ հատկացնելուն, գյուղից առած հարկերի և ակցիզների մի մասը գործադրվում է արդյունաբերության կարիքների վրա: Բայց չի կարելի միայն գյուղի վրա գցել բոլոր ծանրությունները—այդ միայն կը խափաներ ամբողջ գործը:

Արդյոք մենք կարո՞ղ ենք այդ միջոցները գտնել մեր ժողովրդական տնտեսության մեջ: **Կարող ենք**, յեթե ճիշտ ու լավ տնտեսավարենք՝ յեթե ռացիոնալիզացիայի յենթարկենք արդյունաբերությունը և մեծացնենք նրա կուտակումը, յեթե բարձրացնենք գյուղատնտեսությունը, յեթե սովորենք հավաքել բանկերում և խնայողական գանձարկղներում բնակչության ազատ միջոցները, յեթե, վերջապես, իրականացնենք ամենադաժան խնայողություն ամբողջ տնտեսության մեջ:

Մենք կարող ենք միլիոնավոր ռուբլիներ տնտեսել, յեթե սկսենք խնայել խորհրդային ամեն մի կոպեկը: Հենց այս ուղին է կտակել Լենինը: Իր վերջին հոդվածներից մեկում՝ «Ավելի լավ է քիչ, բայց լավ» նա գրել է. «Յեթե մենք պահենք բանվոր դասակարգի ղեկավարությունը գյուղացիության վերաբերմամբ, ապա մենք հնարավորություն կստանանք տնտեսության մեծագույն ու մեծագույն խնայողության գնով մեր պետության մեջ հասնել այն բանին, վորպեսզի ամեն մի փոքրիկ խնայողություն պահվի մեր խոշոր մեքենային ինդուստրիայի

զարգացման համար, էլեկտրիֆիկացիայի, հիդրոտորֆի *) զարգացման համար, Վոլխովստրոյի կառուցման համար և այլն» (Վ. Ի. Լենին, Աշխատությունների ժող. հատոր XVIII, 2-րդ մաս)։

Խնայողության այս ուղիի վրա չել կանգնել և կուսակցությունը։ Մենք միայն առաջին քայլերն ենք արել խնայողության համար մղվող պայքարում։ Ահա փաստեր, վորոնք ցույց են տալիս, թե ինչպիսի հնարավորություններ են բացվում մեր առաջ այս ուղիում։ Մի քանի ամսվա ընթացքում Բանվորա-գյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատը՝

Փակեց 200 ավելորդ բանկային բաժանմունքներ (տարեկան 68 միլիոն ռուբլու խնայողություն),

Փակեց 95 բորսա (տարեկան 10 միլիոն ռուբլու խնայողություն),

Վոչնչացրեց գավառական կազմակերպությունների 645 ներկայացուցչություն (տարեկան 14 միլիոն ռուբլու խնայողություն)։

Կրճատեց 4—5 անգամ խորհրդային տնտեսությունների և գյուղատնտեսական տրեստների ապարատը (2 միլիոն ռուբլու խնայողություն),

Վոչնչացրեց տրանսպորտի ավելորդ որգանները (տարեկան 4 միլիոն ռուբլու խնայողություն),

Կրճատեց Ֆինժողկոմի ապարատը 550 մարդով (մեկ չերրորդականով), հասավ ստորին խորհրդային որգանների հաշվետվության հսկայական կրճատման և այլն։

Բանգյուղտեսչությունը հաշվեց, վոր մեր ամբողջ պետական ու տնտեսական ապարատում մենակ հաշվետվությունը նստում է, մոտավորապես, 600 միլիոն ռուբլի։ Սրան պիտի ավելացնել փքուն շտատները, միևնույն գործը կատարող ավելորդ հիմնարկությունների գոյությունը, անտեղի գործուղումները, գողությունը, վատնումները և այլն։ Ահա թե վորտեղ է, վոր կարող ենք լրացուցիչ միջոցներ գտնել արդյունաբերության համար։

Խնայողության համար մղվող պայքարը կարևորագույն խնդիր է։ Նրա լուծմանը պետք է մասնակցեն բոլոր բանվորները, բոլոր աշխատավորները, իսկ կոմունիստները պետք է նախամարտիկներ լինեն այդ պայքարում։

ՀԱՐՑ

Վո՞րն է ԽՍՀՄ տնտեսության մեջ խնայողության ռեժիմի իրագործման հիմնական խնդիրը։

---

*) Հիդրոտորֆ—տորֆի մեքենայացրած արդյունահանություն ուժեղ ջրային հոսանքի ոգնությամբ։

2. ԿԱՊԻ ՈՒՂԻՆ ԱՌԵՎՏՐԻՆ ՏԻՐԱՆԱԼՆ Է

Պետական առևտրի ու կոոպերացիայի դերը արդյունաբերության ու գյուղատնտեսության, քաղաքի ու գյուղի կապի մեջ

Վորպեսզի ամուր տնտեսական կապ պահենք գյուղացիության հետ, քիչ է շատ ապրանք արտադրել և էժան գնով արտադրել—հարկավոր է այդ ապրանքները գյուղ հասցնել։ Այդ կարելի յե անել միայն պետական առևտուրը և կոոպերացիան ճիշտ հիմքի վրա դնելով։ Մի որինակով պարզենք այս։ Չթի գինը և գյուղի համար չթի մատչելի լինելը կախված է մեծ չափով Թուրքմեն գյուղացիներից բամբակ գնելուց, այն բանից, թե ինչ գնով բամբակը գործարան կը հասնի։ Յեթե մեր առևտուր անել չկարողանալու պատճառով մասնավոր առևտրականը բամբակն իր ձեռը գցի, ապրանքը պահի և գներն ուռցնի, ասենք՝ չերկու անգամ, ապա այդ հարված կը լինի կապի համար։ Թուրքեստանի գյուղացին բամբակն էժան է վաճառել, իսկ չիթը թանգ գնով է հասնում նրան ու ընդհանրապես գյուղ, հատկապես յեթե այդտեղ էլ խցկվի մասնավոր առևտրականը, չիթը գնի և գինն էլ ավելի բարձրացնի։ Վորպեսզի կապը հարթվի, հարկավոր է արդյունքը գյուղացուց գնել առանց մասնավոր միջնորդների և մասնավորին թույլ չտալ սողոսկել գյուղի և քաղաքի միջև բացվող ճեղքը։

Մի ուրիշ որինակ։ Պետությունը ջանում է գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով տրակտորներ տալ չքավորների ու միջակների կոլեկտիվներին ու ընկերություններին։ Նա չի ցանկանում շահվել այդ գործում։ Խորհրդային իշխանությունը տրակտորները վաճառում է հնարավոր չափով էժան և վարկով, վորպեսզի սակավազոր գյուղացիները կարողանան միացյալ ուժերով գնել այն։ Այս նպաստում է մանր տնտեսությունից ընդհանուր խոշոր արտադրության անցնելուն և կապ է ստեղծում պետական արդյունաբերության և գյուղացիական տնտեսության մեջ։ Մասնավորը տրակտորները կը վաճառեր շահվելու համար։ Նա կոգտվեր դրանց պակասից, վորպեսզի գներն ուռցներ և կը վաճառեր ուղղակի կանխիկ դրամով։ Տրակտորը մատչելի կը լիներ միայն կուլակներին։ Իսկ կուլակը տրակտորը գնելով, այն վարձու կը տար հարևաններին, կկրփի նրանց ու կը հարստանար։ Հետևանքը կը լիներ կապի խզումը։

Հարկավոր է հասնել գների իջեցման

Բայց դժբախտությունը մենակ մասնավոր առևտրականը չէ։ Դեռ մենք ինքներս պետական առևտրում և կոոպերացիայում չենք սովորել, ինչպես հարկն է, առևտուր անել։

Առևտրական ծախքերը դեռ շատ մեծ են։ Առևտրական ապարա—

րատը դեռ շատ աննպատակահարմար է կառուցված — ապրանքը գնորդի ձեռն ընկնելուց առաջ անցնում է շատ կազմակերպություններով։ Իսկ նրանցից ամեն մեկն ունի իր ծառայողները, իր ծախքերը։ Հետևանքն այն է լինում, վոր ապրանքը գնորդին հասնելու ճանապարհին այնքան է «աճում», վոր նրա գինը բարձրանում 40, իսկ յերբեմն էլ 60 և ավելի տոկոսով։

Մանրածախ առևտրում գները հաճախ աճում են և այն պատճառով, վոր շատ առևտրական կազմակերպություններ օգտվում են շուկայի ապրանքի պակասից, վորպեսզի վաստակեն, շահույթ կուտակեն։ Շատ կոոպերատորներ այսպես են դատում՝ մեր կապիտալները փոքր են, շահույթ հարկավոր է, մեղք չէ, յեթե ապրանքի գնին ավելացնենք մեկ կամ մի քանի տասնյակ կոպեկ։

Առևտրական ապարատի այսպիսի թանգության և նրա այսպիսի չափազանցված շահույթների ձգտման հետևանքով մենք ունենք մեծ տարբերություն ձեռնարկությունների բաց թողման գների (այն գների, վորոնցով ապրանքը վաճառվում է տրեստում) և մանրածախ գների միջև (այն գների, վորոնցով ապրանքը վաճառվում է սպառողին)։ Մանրածախ գները 1925—26 թ. և 1926—27 թ. սկզբին փոխվեցին։

Մեր կուսակցությունն իրեն նպատակ խնդիր է դրել իջեցնել արդյունաբերական ապրանքների մանրածախ գները։ Այս խնդրի լուծումից է կախված մի շարք կարևորագույն քաղաքական ու տնտեսական խնդիրների լուծումը։

Ամենից առաջ բարձր մանրածախ գները հարվածում են կապը։ Մեզ մոտ էլ գյուղատնտեսական ապրանքների նորմալ գներ են հաստատված, իսկ արդյունաբերական ապրանքների գները բարձր են։ Ստացվում է այսպես ասած «մկրատը» (գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գների մեծ տարբերությունը)։ Գյուղացին այժմ պետք է արդյունաբերական ապրանքներին յերկու անգամ ավելի վճարի, քան մինչև պատերազմը։ Այսպիսի հարաբերակցությունը թուլացնում է բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը, հարվածում է գյուղատնտեսությունը։

Բարձր մանրածախ գները հարվածում են նաև բանվորին, ցածրացնելով նրա իրական աշխատավարձը։ Ինչքան էլ ավելացնենք անվանական (ռուբլիներով հաշված) աշխատավարձը, բանվորի դրությունը չի լավանա, յեթե դրա կողքին կատարվում է ապրանքների գների բարձրացում։

Ահա թե ինչու մեր կուսակցությունն այնքան մեծ նշանակություն է տալիս մանրածախ գների **իջեցման** համար մղվող պայքարին։

Սրա համար կատարվում է նաև բաց թողման գների իջեցում, վորոնցով ապրանքը վաճառում են ձեռնարկությունների տրեստներն ու սինդիկատները։ Սրա համար մեծ աշխատանք է կատարվում առևտրական ապարատի ռացիոնալիզացիայի, առևտրական ծախքերի կրճատման ասպարեզում։ **Սահմանային** գներ են հաստատված առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքների համար — այդ գներից բարձր վաճառել չեն կարող պետական առևտուրը և կոոպերացիան։ Շահույթի սահմանային չափ է հաստատված պետական առևտրի ու կոոպերացիայի համար։

Առևտրի ժողկոմատը և նրա օրգանները, տեղական խորհուրդները, Բանգյուղտեսչությունը հետևում են այս միջոցառումների կատարմանը։ Բայց այս բոլորը լիովին և գործով կիրականանա միայն այն ժամանակ, յերբ **իրենք սպառողները**, կոոպերացիայի անդամները, կը հետևեն իրենց կոոպերատիվի աշխատանքներին, կստուգեն, թե արդյոք ճիշտ է աշխատում կոոպերատիվը։

Սպառողի կողմից կոոպերացիայի ու պետական առևտրի գների այս մասսայական ստուգումը պետք է կատարվի թերթերի, խանութների հանձնաժողովների, փայատերերի ժողովների միջոցով, բանվորների ու գյուղացիների կողմից առևտրի մասսայական հսկողությունը պետք է կատարվի խորհուրդների, Բան-գյուղտեսչության միջոցով և այլն։ Կարևոր է ամեն մի գնորդի սովորեցնել, թե **իջեցված** հետևի գներին և ինչպես պայքարի գները խախտողների դեմ (գանգատի գրքերի օգտագործում, պրեյս-կուրանտներով գների ստուգում և այլն)։

Փորձը ցույց տվեց, վոր շատ պետական առևտրական ու կոոպերատիվ կազմակերպություններ դիմադրում են գների իջեցման գործին։ Նրանք հաճախ խեղաթյուրում են կուսակցության ցուցմունքները։ Սակավ չեն դեպքեր, յերբ առևտուր են անում հաստատված գներից բարձր, վատացնում են ապրանքների վորակը, վաճառում են ստորին տեսակի ապրանքը բարձր տեսակի գներով, իջեցնում են պուդրայի կամ դուխիների գները, սելյոդկայի, կոշկի և **մասսայական** սպառման այլ ապրանքների եժանացման փոխարեն։

Այսպիսի խեղաթյուրումների դեմ պայքարելու լավագույն միջոցը մասսայական վերահսկողությունն է, գների մասսայական ստուգումը բոլոր աշխատավորների կողմից։

Այս բոլոր միջոցառումներն արդեն հասցրել են այն բանին, վոր 1927 թ. փետրվարից գների շարժման մեջ բեկում է տեղի ունեցել — վոչ միայն դադարել է նրանց աճումը, այլև նրանք սկսել են իջնել։ Կուսակցությունն աշխատավորների ամենալայն մասսաների աջակցությամբ համառորեն կը շարունակի այս աշխատանքը։

Պայքար մասնավոր կապիտալի դեմ առևտրում

Ցած գները և ընդհանրապես պետական առևտրի ու կոոպերացիայի ճիշտ հիմքերի վրա դնելը հանդիսանում է լավագույն միջոցն առևտրում մասնավոր կապիտալի դեմ պայքարելու համար:

Նույնիսկ բանվորական կոոպերատիվներում այնպես է լինում, վոր հայելի, դուխիներ, կանանց թանկարժեք կոշիկներ կան, բայց այն, ինչ հարկավոր է բանվորին՝ հասարակ կոշիկներ, լուցկիներ, կրուպաներ և այլ ապրանքներ, պակասում է: Չայ կա, իսկ շաքար չկա, կամ շաքարն առատ է, իսկ չայը պակասում է: Ի հարկե, այսպիսի դրության ժամանակ, յեթե կողքի խանութում մասնավորի մոտ ամեն ինչ կա, ուր վոչ մի ուշացում չի լինում, և բացի այդ մեկ-մեկ էլ կարելի յե պարտքով վերցնել, ապա բանվորը կերթա մասնավոր առևտրականի մոտ: **Պետական առևտրի ու կոոպերացիայի այս բոլոր թերությունները պետք է ջնջել ըստ հնարավորին արագ վերջացնել: Միայն այս ճանապարհով կարելի յե հաղթահարել, ապա յեվ վերջնականապես դուրս մղել մասնավոր առևտրականին, լայնացնել փոխանակությունը կոոպերատիվ ու պետական խանութներում:**

Կուսակցությունը շատ մեծ ուշադրություն է նվիրում առևտրի ու մասնավորի դեմ մղվող պայքարի հարցերին: Յեվ զարմանալի չէ: 1923 թ. մարտին ցուցակագրության յենթարկվեցին ԽՍՀՄ բոլոր առևտրական հաստատությունները և յերևաց, վոր մեծածախ առևտրում մասնավոր վաճառականը վաճառում է ապրանքների 51%, իսկ մանրածախում ապրանքների—82%: Այս պատճառով կուսակցությունը XIII համագումարում իրեն խնդիր դրեց աստիճանաբար դուրս մղել մասնավոր առևտուրը, զարգացնել պետական առևտուրն ու կոոպերացիան: Թե այդ ուղղությամբ ինչքան հաջող է գործել Համ. Կկ (բ), ցույց են տալիս հետևյալ թվերը.

Մեծածախ առևտրում հաջողվեց մասնավոր առևտրականին հետին պլանը մղել, 1927/28 թ. Նրա ձեռքում է մեծածախ շրջանառության մեկ տասնմեկերորդ մասից էլ պակասը: Մանրածախում էլ պետական առևտուրն ու կոոպերացիան արդեն խոշոր գերակշռություն ունեն մասնավոր կապիտալի հանդեպ: Մասնավոր կապիտալն այժմ վաճառում է բոլոր ապրանքների մանրածախի ընդամենը միայն մոտ մեկ յերրորդը (35%): Մնացած 65% վաճառում են պետական առևտուրը և կոոպերացիան:

Մեր նվաճումներն առևտրի ասպարեզում անկասկածելի յեն: Մենք հաղթահարում ենք մասնավոր կապիտալը, տիրում ենք առևտուրը և այդպիսով ապահովում ենք գների ճիշտ քաղաքականությունը,

պետական արդյունաբերության կապը գյուղացիական տնտեսության հետ:

Պետական արդյունաբերությունն առևտրի միջոցով ղեկավարում է գյուղացիական տնտեսությունը

Բանի գնա, այնքան ավելի Խորհրդային իշխանությունը հաջող կը ղեկավարի գյուղացիական տնտեսությունը պետական առևտրի ու կոոպերացիայի միջոցով: Մի օրինակով ցույց տանք, թե ինչպես կարելի յե հասնել դրան: Ասենք, մենք ուզում ենք ընդարձակել ճակնդեղի ցանքերը մեր պետական շաքարի գործարանների ռայոնում, իսկ գյուղացիները շարունակում են ցորեն ցանել: Յեթե մենք կրճատենք այդ ռայոնի գյուղացիներից ցորենի գնումն ու մթերումը, իսկ, ընդհակառակը, ճակնդեղի գինը բարձրացնենք, յեթե սրա հետ մենք ճակնդեղի էժան սերմեր տանք, անհրաժեշտ ինվենտար ու պարարտանյութեր տանք, ապա գյուղացին ինքը կանցնի ճակնդեղի ցանքին, այդ նրան ավելի շահավետ կըլինի:

Վուշի, բամբակի, կաշու, յուղաբեր սերմերի, բրդի պետական մթերումը խրախուսում է, վոր գյուղն արտադրի հենց այդ արդյունքները:

Էլ ավելի մեծ նշանակություն ունի գյուղում մեքենաներ, պարարտանյութեր, մեխեր, տանիքի թիթեղներ, շինարարական նյութեր և ինվենտար անմիջականորեն վաճառահանելը: Պետությունը ձգտում է այդ բոլորը տալ արտոնյալ պայմաններով չքավորներին ու միջակների ընկերություններին և կոոպերատիվներին, գրգռում է գյուղացիության մասսային անցնել ընդհանուր և խոշոր մեքենայական տնտեսության:

Մի օրինակ էլ բերենք: ԽՍՀՄ շատ վայրերում հողագործությունը—հացահատիկների ու կարտոֆիլի ցանքը—չի կարող բարձրացնել գյուղի տնտեսությունը: Ասենք, Սմոլենսկի նահանգում իշխանությունն այս պատճառով խրախուսում է կաթնատնտեսության անցնելը և կաթից յուղ, պանիր, սերուցք, խաճո (տվորոգ) պատրաստելը: Սակայն, գյուղացիությունը միանգամից չի համաձայնում թողնել սովորական ցանքը: Պետարդյունաբերությունը կարող է այստեղ Սմոլենսկի գյուղն առաջ տանել, լայնորեն վաճառելով այն բոլորը, ինչ անհրաժեշտ է կաթնատնտեսության համար: Մեքենաշինական գործարանները պատրաստում են սեպարատորներ (սերը կաթից բաժանող մեքենաներ) և խնոցիներ: Կոոպերացիան ստանում է այդ և էժան գներով տալիս գյուղացիներին: Յերբ հենց այստեղ, ձեռքի տակ, գյուղի խանութում կաթնատնտեսության անցնելու համար ամեն անհրաժեշտ բան կա, գործն ավելի արագ առաջ կը շարժվի: Բավական է մեկն սկսի, մյուսներն էլ կը հետևեն նրան: Մանր սեպարատորներին

ու խանութներին կը հասնեն խոշորները, մեխանիկականները: Այդ ար-գին մենակ գնել չի կարելի: Այդ մեքենաները կանցնեն գյուղատնտեսական կոոպերատիվներին ընկերական կաթնարաններ կառուցելու համար: Ցանկանալով ոգտվել խոշոր արտադրության շահավետ կողմերից, գյուղացիները կստեղծեն շատ նոր կոոպերատիվներ, կսկսեն կաթը միասին մշակել: Այս արդեն հասարակ ղեկավարություն չէ, այլ գյուղացիական տնտեսության վերակառուցում:

Այսպիսով, պետական արդյունաբերությունն առևտրի միջոցով ղեկավարում է գյուղացիական տնտեսությունը:

Պետական արդյունաբերությունը և կոոպերացիան պրոլետարական պետության հրամայող բարձունքներն են կապի իրականացման, մասնավոր կապիտալի դեմ մղվող պայքարի, սոցիալիզմի շինարարության գործում:

ՀԱՐՑ

Ինչո՞ւմն է կայանում պետական արդյունաբերության կապը գյուղացիական տնտեսության հետ և ինչ նշանակություն ունի առևտուրն այդ կապի համար:

3. ՄՅՈՒՍ ՀՐԱՄԱՅՈՂ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ ԿԱՊՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԽՆԴՐՈՒՄ

Ներքին ու արտաքին առևտրի կապը

Պետական արդյունաբերության կապը գյուղացիական տնտեսության հետ կախված է վոչ միայն ներքին, այլև արտաքին առևտրից: Յեթե դադարի արտաքին առևտուրը, ապա տեղ չի լինի սպառելու գյուղացիական հացը, և նրա գինը կընկնի: Յեթե գյուղատնտեսական արդյունքների արտահանում չլինի՝ միջոց էլ չենք ունենա ուրիշ յերկրներում հում նյութեր ու սարքավորում գնելու մեր արդյունաբերության համար, կը դանդաղի արտադրության զարգացումը, շուկայում բավարար քանակով ապրանք չի լինի, գները կբարձրանան և գյուղացին անկարող կլինի արագությամբ բարձրացնել իր տնտեսությունը:

Արտաքին առևտրի մոնոպոլիայի անհրաժեշտությունը.

Արտաքին առևտուրն ապահովում է մեր կապը գյուղի հետ և հաղթությունը մասնավոր կապիտալի դեմ: Այստեղ ամենից առաջ կարեվոր է հասկանալ, թե ինչ ծառայություն է մատուցում մեզ արտասահմանի հետ ազատ առևտրի արգելումը: Այդ առևտուրը մեզ մոտ ամբողջովին գտնվում է պետության ձեռքին: Բացի պետությունից, պետության վերահսկողությամբ արտաքին առև-

տուր կարող է անել միայն նա, ով դրա համար ստանում է հատուկ թույլտվություն: Այս կոչվում է արտաքին առևտրի մոնոպոլիա (մենաշնորհ):

Յեթե այլ կերպ լիներ, և ամեն վոք կարողանար առևտուր անել արտասահմանի հետ — ապա մասնավոր կապիտալը հաղթահարելը շատ ավելի դժվար կլիներ: Ոտարերկրյա կապիտալիստները մասնավոր առևտրականներին ուրախությամբ ապրանք կը վաճառեն, նրանց ամեն մի դյուրություն կը տան: Նրանք ապրանքը պարտքով կտան նրանց, փոխ կտան, միայն թե խախտեն պետական առևտուրն ու արդյունաբերությունը, խախտեն Խորհրդային իշխանությունը և իրանց ձեռքը գցեն ռուսական շուկան: Արտասահմանի՝ ավելի եժան ապրանքների առևտրի մեջ մասնավորը կը շահվեր ու կուռճանար: Նա իր կողմը կը գրավեր գյուղացուն, կը խախտեր մեր արտադրությունը: Իսկ այժմ արտաքին առևտրի շահույթներն ամրացնում են Խորհրդային իշխանությունը, ոգնում են ծավալելու արդյունաբերությունը:

Պետությունն իր ձեռքում է պահում արտաքին առևտուրը, վորպեսզի զարգացնե արդյունաբերությունը և հաղթե մասնավոր կապիտալը: Կապի շահը պահանջում է արտաքին առևտրի մոնոպոլիա:

Միայն մոնոպոլիայով կարելի չէ լուծել այն խնդիրները, վոր դրվում են մեր արտաքին առևտրի վրա: Մենք գիտենք, վոր ԽՍՀ Միության մեջ գերակշռում է գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսական արդյունքների առատությունը և արդյունաբերականի սակավությունը յերկրի ներսում միշտ էլ զգացնել պիտի տա իրան, մինչև վոր չիրագործենք մեր յերկրի ինդուստրիացումը: Արտաքին առևտուրը մեզ ոգնում է վերացնելու արդյունաբերության ու գյուղատնտեսության անհամաչափությունը: Սարքավորում ներմուծելով՝ մենք ընդարձակում ենք արդյունաբերությունը, ավելացնում ենք գործվածքների քանակը յերկրի ներսում: Այսպիսով արտաքին առևտրի մոնոպոլիան ոգտագործվում է ԽՍՀՄ ինդուստրիացման համար: Իսկ յեթե մեր սահմանները բացենք կապիտալիստական յերկրների ապրանքների ազատ ներմուծման համար, շուկաները իսկույն կլցվեն արտասահմանի ապրանքներով, պետական արդյունաբերությունը կը խափանվի, նրան կը հարվածե այդ յերկրների խոշոր, մերից ավելի լավ սարքավորված արդյունաբերության մրցությունը:

Այժմ պարզ է արտաքին առևտրի նշանակությունը: Նրա միջոցով է տեղի ունենում պետական արդյունաբերության կապը գյուղացիության հետ: Արտաքին առևտրի միջոցով ամրանում է պետական արդյունաբերությունը, ինդուստրիավորվում յերկիրը, վերանում արդյունաբերության ու գյուղատնտեսության անհամաչափությունը, բավարարվում են գյուղացիական կարիքները:

Պետական վարկավորումը ապահովում է կապը

Բանվորական պետության ձեռքում կարևոր հրամայող բարձունք են հանդիսանում բանկերը։

Բանկերը ավանդ են ընդունում, ժողովում գյուղացիական խնայողությունները, պետական ձեռնարկությունների ու մասնավոր անձերի ազատ միջոցները։ Պետական Պլանային Հանձնաժողովի հաշիվներով բանկերն ու այլ վարկային հիմնարկությունները 1927/28 թ. իրենց ձեռքում ունեն 4 միլիարդ 700 միլիոն ռ. մի հսկայական գումար (1923/24 թ. կար միայն 1 միլիարդ 140 միլ. ռ.)։

Այդ միջոցները ժողովրդական տնտեսության վերելքին և կապի ամրացման գործին են ծառայում հետևյալ կերպով. առաջին՝ փոխառություններ տալով զարգանում է արդյունաբերությունը. երկրորդ՝ գյուղատնտեսական բանկի և գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով էժան վարկ է տրվում գյուղացությանը, գլխավորապես, սակավահողներին ու միջակներին, որպեսզի նրանք մեքենաներ, անասուններ գնեն, բազմադաշտյան ցանքի անցնեն, հողերը բարելավեն (ճահիճների չորացում, արհեստական ոռոգում և այլն)։ Ինչպես միշտ, նախապատվությունը տրվում է գյուղացիական ընկերություններին ու կոոպերատիվներին, որպեսզի գյուղում աճի ընդհանուր խոշոր տնտեսությունը։ Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. գյուղացիության և գյուղական կոոպերատիվների պարտքը կազմում էր 411 միլիոն ռուբլի։ Երրորդ՝ բանկերն աջակցում են պետական առևտրին ու կոոպերացիային ընդդեմ մասնավոր առևտրականի։ Մասնավորը վարկ է ստանում միայն բացառիկ դեպքերում (օրինակ՝ եթե առևտուր է անում մեր սահմանած գներով)։

Բանկերն օգնում են պետական արդյունաբերության, պետական առևտրի ու կոոպերացիայի աճման. նրանց աջակցությամբ բարձրանում է գյուղացիական տնտեսությունը և հեշտանում պայքարը մասնավոր կապիտալի դեմ։ Ուրեմն, Խորհրդային իշխանության ձեռքում բանկն ու վարկը կապն ամրացնելու և զարգացնելու գործին են ծառայում։

Հաստատուն դրամի դերը կապն ամրացնելու խնդրում

Բայց առանց հաստատուն դրամի չեն կարող զարգանալ ոչ Պետական բանկը, ոչ պետական և ոչ էլ կոոպերատիվ առևտուրը։ Երբ դրամի գինն ընկնում է՝ այն ոչ ոք չի կարող կուտակել առանց վնասի։ Արժեզուրկ դրամն իմաստ չունի բանկ դնել։ Բանկերին էլ այդ ժամանակ ձեռնտու չէ իրենց ձեռքին մեծ գումարներ պահել։ Դրա մեջ նրանք վնասվում են։ Այլ է խնդիրը հաստատուն դրամի ժամանակ.— ամեն մեկին ձեռնտու է իր խնայողություններն ու ազատ փողերը պահել բանկում և դրա դիմաց տո-

կոս ստանալ։ Հաստատուն դրամը հենց նրանով է օգնում կապին, որ նպաստում է բանկերի աճմանը։ Բայց նրանց նշանակությունը, իհարկե, շատ ավելի մեծ է։

Կարևորագույնն այն է, որ այժմ գյուղացիները վնաս չեն կրում դրամի անկումից։ Գյուղացին ստիպված է փողը երկար պահել՝ քիչ-քիչ է նա փող հավաքում գութանի, ձիու, կովի համար։ Իսկ ընկնող դրամի ժամանակ կուտակել անկարելի է։ Ռուբլու անկումով գյուղացիներն անչափ շատ էին կորցնում։ Իսկ հաստատուն դրամի ժամանակ գյուղացին կարող է փող հավաքել թե իր տնտեսությունը բարելավելու և թե խոշոր գնումներ կատարելու համար։

Հաստատուն դրամն անհրաժեշտ է նաև արդյունաբերության համար։ Նրա գոյությամբ է միայն հնարավոր ուղիղ հաշվել գործվածքների ինքնարժեքը, հետևել աշխատանքի արտադրողականության ու ձեռնարկության շահութաբերությանը, ամենուրեք խնայողություն մտցնել, ստույգ հաշիվ ու հաշվառում։ Իսկ առանց ստույգ հաշվի ու հաշվառման անկարելի է ամրացնել ու զարգացնել արտադրությունը։

Մի խոսքով, հաստատուն դրամը հիմնական տեղ է բռնում կապն ամրացնելու խնդրում։ Ահա ինչու բոլոր ուժերով պետք է մեր դրամն անկումից պաշտպանենք, ինչպես որ անում է կուսակցությունը։

Հարկերի նշանակությունը կապն ամրացնելու խնդրում

Մի ծառայություն էլ է մատուցում մեզ հաստատուն դրամը։ Նրա գոյությամբ հեշտ է հաշվառել յուրաքանչյուր գյուղացու և յուրաքանչյուր ձեռնարկության գույքն ու եկամուտը։ Ուրեմն հեշտ է հաշվել ու բաշխել հարկերը։ Իսկ հարկերը Խորհրդային իշխանության համար էլի նույն նպատակին են ծառայում — ամրացնել մեր կապը գյուղի հետ և ինդուստրիացման ենթարկել երկիրը։

Հարկերի միջոցով մենք կարգավորում ենք գյուղատնտեսության աճումը, խրախուսում ենք հողագործության բարելավումները։ Ահա, օրինակ, գյուղատնտեսական հարկի մեջ արտոնություններ են տրվում առաջավոր տնտեսություններին, որոնք բազմադաշտ և այլ բարելավումներ են մտցնում։ Այդ նույն հարկը միջոց է ծառայում վերցնելու կուլակի եկամուտների մի մասը և արդյունաբերության զարգացմանը հատկացնելու։ Իսկ չքավորների տնտեսություններն ազատվում են հարկից, որպեսզի բարձրանալու հնարավորություն ունենան։

1926/27 թվին գյուղի ունևոր ու կուլակ մասը վճարեց ամբողջ

հարկի համարյա կեսը, իսկ ամենաչքավոր մասը (վորջ գյուղացության մոտ մի հինգերորդ մասը)—խսպառ ազատվեց հարկից:

Ել ավելի մեծ է հարկերի նշանակությունն առևտրի ու արդյունաբերության մեջ մասնավոր կապիտալի դեմ պայքարելու գործում: Դրանցով մենք մասնավոր կապիտալը սեղմում ենք ամեն կողմից: Կապիտալիստը մեզ վճարում է, յերբ պատենտ է վերցնում ձեռնարկություն բանալու իրավունքի համար, վճարում է համապատասխան տուրքը, շրջանառության տոկոսներ: Յեկամուտից ու գույքից նա վճարում է յեկամտագույքային հարկ.—ինչքան շատ է յեկամուտն ու գույքը, այնքան շատ մասն էլ պետք է պետությանը տա: Վերջապես կապիտալիստը բարձր կապալավարձ է վճարում թե պետությունից առևտրական շինություն վարձելիս և թե բնակարանի համար: Այդ հարկերի շնորհիվ խոշոր միջոցներ ժողովելով, պետությունն այդ միջոցները գործադրում է արդյունաբերությունը զարգացնելու և գյուղացիական տնտեսությունը պաշտպանելու վրա: Հարկերով մենք սանձահարում ենք մասնավոր կապիտալը, համապետական պահանջների և արդյունաբերության զարգացման համար յուրացնում ենք նրա շահույթի մի մասը, խրախուսում ենք չքավորների ու միջակների տնտեսության զարգացումը և գյուղատնտեսության բարելավումները:

Ահա թե ինչու մենք տեսնում ենք, վոր հարկերը հեշտացնում են պետական արդյունաբերության կապը գյուղացիական տնտեսության հետ:

Տրանսպորտի դերը կապի խնդրում

Խոսելով կապն ամրացնելու, քաղաքի և գյուղի միջև ապրանքաշրջանառությունն ուժեղացնելու մասին՝ չի կարելի աչքաթող անել տրանսպորտը, մանավանդ յերկաթուղին: Տրանսպորտն արդյունաբերական ապրանքները տեղից տեղ է փոխադրում ամբողջ յերկրում սկսած Մինսկից մինչև Վլադիվոստոկ, Արխանգելսկից մինչև Ղրիմ և Անդրկովկաս: Յեթե կանգնեն յերկաթուղիները՝ կխզվի պետական արդյունաբերության կապը գյուղացիական տնտեսության հետ: Չի կարելի հո կենտրոնական արդյունաբերական (Մոսկվայի) շրջանից կամ Լենինգրադից սայլաշարով, ձիով ապրանքներ հասցնել Սիբիրի գյուղերը: Ամեն վոք հիշում է, վոր իմպերիալիստական պատերազմի ու քաղաքացիական կռվի ժամանակ տրանսպորտի փլուզման պատճառով Սիբիրում մթերած հացը փթում էր, իսկ ՌՍՖՍՀ քաղաքներում սովն էր թագավորում:

Միայն յերկաթուղիների լավ աշխատանքի պայմանում կարող է զարգանալ նաև ժողովրդական տնտեսությունը, կարող է ամրանալ քաղաքի դաշինքը գյուղի հետ:

Հրամայող բարձունքների ամրացումը կապի ու սոցիալիստական շինարարության հաջողության գրավականն

Ամփոփենք այն բոլորը, ինչ մինչև այժմ ասված է զրույցում: Ինչի մասին է խոսում ամբողջ զրույցը: Այն մասին, թե կապը վճռական կարևորության խնդիր է և նրա էությունն է բավարարել գյուղացուն իբրև ապրանք ստացողի, ոգնել նրան արտադրության մեջ, հաղթահարել մասնավոր կապիտալը, պետական արդյունաբերության յետևից տանել ու վերակառուցել գյուղացիական տնտեսությունը, կառուցել սոցիալիզմը:

Բոլոր հրամայող բարձունքներն ոգտագործվում են պետական արդյունաբերության զարգացման համար, արագացնում են գյուղացիական տնտեսության վերակառուցումը: Վորքան հաջող ընթանա պետական առևտուրը, վորքան ավելի լայն ծավալվի փոխանակությունն արտասահմանի հետ, վորքան շատ միջոցներ ժողովվեն բանկերում և պետական գանձարանում, այնքան արագորեն կընթանա յերկրի ինդուստրիացումը՝ դուրս կը մղվի մասնավոր կապիտալը, կընդարձակվի գյուղացիական տնտեսության ոգնությունը, ամուր կսեղմվի նրա հետ պետական արդյունաբերությունը և արագորեն տեղի կունենա գյուղի անցնումը խոշոր ընդհանուր տնտեսության: **Այս՝ կապի ու ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության հաջողության գրավականն է:**

ՀԱՐՑ

Ինչպես է ղեկավարում կուսակցությունը ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացումը՝ հենվելով հրամայող բարձունքներին, և ինչպես է ապահովում նրա շարժումը դեպի սոցիալիզմ:

ԿՏՈՐՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. ԻՆԴՈՒՍՏՐԻԱՑՄԱՆ ՅԵՐԿՈՒ ՈՒՂԻ

Խնայողության ռեժիմը յելնում է այն բանից, վոր մեր ինդուստրիան չի կարող հարկավոր արագությամբ զարգանալ իր սեփական միջոցների հաշվին, վոր նրան հարկավոր են լրացուցիչ միջոցներ: Խնայողության ռեժիմը յելնում է այն բանից, վոր այդ լրացուցիչ միջոցները պետք է վերցվեն մեր յերկրի ներսից: Խնայողության ռեժիմը նշանակում է, վոր տնտեսավարության և կառավարման այժմյան յեղանակների, այժմյան թանկության և մեր ապարատների

բյուրոկրատիզմի պայմաններում մենք չենք ունենա այդ միջոցները։ Խնայողության ռեժիմը նշանակում է, վոր հարկավոր է մաքսիմալ չափերով կրճատել, եժանացնել, պարզացնել մեր արտադրական, տրանսպորտային, առևտրական, կոոպերատիվ, վարչական և այլ ապպարատները, վորպեսզի հենց այժմ և ապագայում ազատենք հարյուրավոր միլիոն ռուբլիներ և տանք յերկրի ինդուստրիացման գործին։

Յերկու ուղի կա այդ հարյուրավոր միլիոնները ճարելու համար։ Մեկ ուղին է՝ մաքսիմալ չափերով գրփել գյուղացիներին, նրանցից քամել մաքսիմալ միջոցներ և քամածը տալ ինդուստրիայի կարիքների համար։ Դեպի այս ուղին են հրում մեզ վորոշ ընկերներ։ Բայց մենք չենք կարող կանգնել այդ ուղիի վրա, վորովհետև այն նշանակում է բանվոր դասակարգի կապերի խզում գյուղացիության հետ, բանվորների ու գյուղացիների դաշինքի խզում, պրոլետարիատի դիկտատուրայի խախտում, գյուղացիության աղքատացում, հետևաբար և հենց ինդուստրիայի թուլացում։ Մյուս ուղին է՝ մաքսիմալ չափով վերևից ներքև կրճատել մեր բոլոր տնտեսավարական ու կառավարող ապպարատները, եժանացնել ու պարզացնել այն և այդպիսով ազատել ինդուստրիայի կարիքների համար հարկավոր հարյուրավոր միլիոնները։ Մեր տնտեսավարական ու կառավարող ապպարատները տարեկան մոտ 2 միլիարդ ռուբլի յեն խժռում։ Հիմունքներ չկան կասկածելու, վոր կարելի յեր այդ ծախքերը 300—400 միլիոնով կրճատել և այդպիսով լրացուցիչ միջոցներ ճարել ինդուստրիայի համար։ Այս վոչ միայն հնարավոր, այլև բացարձակորեն անհրաժեշտ է, վորպեսզի, վերջապես, հասնենք մեր ապպարատների պարզացման և լավացման և նրանցից հալածենք բյուրոկրատիզմի ու վատ ունակությունների վոգին։ Սրանք են յերկու ուղին։ **Յերրորդ ուղի** չկա։ Խնայողության ռեժիմը նշանակում է յերկրորդ ուղիի ընտրությունը, իբրև ամենանպատակահարմարը։ Ահա ինչումն է խնայողության ռեժիմի իդեան և քաղաքական իմաստը։

Այս պատճառով խնայողության ռեժիմի հարցը բանվորների ու գյուղացիների դաշինքի պահպանման հարցն է, մեր ինդուստրիայի հետագա զարգացման հարցը, մեր տնտեսական ու վարչական որգանների բյուրոկրատիզմի դեմ պայքարելու յեվ այն հաղթահարելու հարցը։

(Կենտկոմի, ԿՎՀ, ժողկոմխորհի խնայողության ռեժիմին վերաբերող դիմումից, վոր ուղղված է կուսակց. ու խորհ. կազմակերպություններին)։

2. ՈՊՊՈԶԻՑԻԱՅԻ ՍԽԱԼՆԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Կուսակցությունը յելնում այն բանից, վոր «դիկտատուրայի գերագույն սկզբունքն է պահպանել պրոլետարիատի դաշինքը գյուղացիության հետ, վորպեսզի պրոլետարիատը կարողանա պահել իր ղեկավար դերը և պետական իշխանությունը» (Լենին, հատոր XVIII, մաս 1, եջ 331), վոր պրոլետարիատը կարող է և պետք է հեգեմոն լինի գյուղացիության հիմնական մասսայի վերաբերմամբ նույնպես և տնտեսական ասպարեզում, սոցիալիզմի շինարարության ասպարեզում, ինչպես վոր 1917 թ. նա հեգեմոն եր գյուղացիության վերաբերմամբ քաղաքական ասպարեզում, բուրժուազիայի իշխանության տապալման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման գործում, վոր յերկրի ինդուստրիալիզացիան կարող է իրագործվել միայն այն դեպքում, յեթե այն կը հենվի մեր ինդուստրիայի հիմնական շուկան հանդիսացող գյուղացիության մեծամասնության (չքավորների և միջակների) նյութական դրության աստիճանական լավացման վրա, վոր, նկատի ունենալով այս, պետք է այնպիսի տնտեսական քաղաքականություն վարել (գների քաղաքականություն, հարկային քաղաքականություն և այլն), վորն ամրացնում է ինդուստրիայի կապը գյուղացիական տնտեսության հետ և պահում է բանվոր դասակարգի և գյուղացիության հիմնական մասսայի դաշինքը։

Ոպպոզիցիոն բլոկը յելնում է բոլորովին այլ նախադրյալներից։ Գյուղացիական հարցում հեռանալով լենինիզմի հիմնական գծից, չհավատալով պրոլետարիատի հեգեմոնիային գյուղացիության վերաբերմամբ սոցիալիստական շինարարության գործում և գյուղացիությանը դիտելով, գլխավորապես, իբրև թշնամական միջավայր, ոպպոզիցիոն բլոկն առաջարկում է տնտեսական ու ֆինանսական այնպիսի միջոցառումներ, վորոնք ընդունակ են միայն քանդել քաղաքի ու գյուղի կապը, խորտակել բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը և հենց դրանով խախտել իսկական ինդուստրիացման ամեն մի հնարավորություն։ Այսպես են, որինակ՝ ա) ոպպոզիցիայի առաջարկն արդյունաբերական ապրանքների բաց թողման գների բարձրացման մասին, վոր չի կարող չառաջացնել մանրածախ գների բարձրացում, չքավորների ու միջակների նշանավոր շերտերի աղքատացում, ներքին շուկայի տարողության ցածացում, պառակտում պրոլետարիատի ու գյուղացիության միջև, չերվոնեցի կուրսի անկում և վերջի վերջո իրական աշխատավարձի ցածացում. բ) ոպպոզիցիայի առաջարկը գյուղացիության վրա մաքսիմալ հարկային ճնշում գործա-

դնելու մասին, որ չի կարող ճեղք չառաջացնել բանվորների ու գյուղացիների դաշինքի մեջ:

Կոնֆերենցիան համարում է, որ օպոզիցիոն բլոկի քաղաքականությունը գյուղացիության վերաբերմամբ չի համապատասխանում յերկրի ինդուստրիացման և պրոլետարիատի դիկտատուրայի շահերին:

(Համամիութենական XV կուսկոնֆերենցիայի բանաձևից ՀամԿԿ (բ) օպոզիցիոն բլոկի մասին):

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ծանոթացեք ձեր կոոպերատիվի աշխատանքների հետ (այդ կարելի յե անել զրուցելով վարչության կամ խանութի հանձնաժողովի անդամների հետ): Իմացեք կոոպերատիվի շրջանառության աճումը 1925/26 թ. ըստ ամիսների և այդ նույն ժամանակամիջոցի վերադիր ծախսերը շրջանառության մի ռուբլու վերաբերմամբ: Այդ թվանշաններից դիագրամմա կազմեցեք և պարապմունքի ժամանակ զեկուցում արեք՝ «Մեր կոոպերատիվի նվաճումներն ու թերությունները» թեմայով: (Աշխատեցեք նկատել, արդյոք կան զրույցում մատնանշված թերությունները):

2. Իմացեք գործարանի վարչությունից, թե ինչպես է սպառվում ձեր ձեռնարկության (կամ տրեստի) արտադրանքը, յեթե ձեռնարկությունն ինքն է ապրանքները վաճառում, ապա որքան է վաճառվում սինդիկատի, որքան սեփական խանութների, որքան կոոպերացիայի և որքան մասնավոր առևտրականի միջոցով: Իմացեք թե 1925/26 թ. ընթացքում 100 ռուբլու վաճառքից մասնավոր առևտրականի բաժինը որքան է յեղել. ընկնում, թե աճում է նրա բաժինը: Այդ թվանշաններից դիագրամմա կազմեցեք և պարապմունքի ժամանակ զեկուցում տվեք՝ «Մեր արտադրանքը և մասնավոր առևտրականը» թեմայով: Յեթե հնարավոր է, իմացեք, թե ձեր ապրանքն ինչ գնով է վաճառում տրեստը, մասնավոր առևտրականը և կոոպերացիան. մեծ է արդյոք գնի տարբերությունը տրեստի բաց թողածի և մանրածախի, ապա գնի ու կոոպերատիվի գնի միջև: Յեթե մեծ է տարբերությունը, ապա ինչու:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչու պիտի կարգավորենք շուկայի գները և ինչպես հասնել դրան:

2. Ինչումն է վտանգը կապի համար, յեթե մեծ տարբերություն կա մեծածախի ու մանրածախի գների միջև և ինչպես կռվել այդ տարբերության դեմ:

3. Ինչու յեն արդյունաբերության գործվածքների ցածր գներն ավելի օգտավետ կապի համար:

4. Ինչումն է կայանում արտաքին առևտրի մոնոպոլիան և ինչու յե հարկավոր այն:

5. Ինչու կապի համար հաստատուն դրամ է հարկավոր:

6. Ինչ են անում մեր բանկերը կապն ամրացնելու համար:

7. Ինչով է ծառայում մեր հարկային քաղաքականությունը սոցիալիզմին:

ՈՒԹԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԳՅՈՒՂԻ ՈՒՂԻՆ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Ինչի մասին է զրույցը

Յոթներորդ զրույցում մենք պարզեցինք, թե կուսակցությունն ինչ ուղիով է ձգտում կարգավորել պետական արդյունաբերության կապը գյուղացիական տնտեսության հետ: Պրոլետարիատի ձեռքին գտնվող տնտեսական հրամայող բարձունքների օգնությամբ — ասել ենք մենք այնտեղ — կարելի յե հեշտացնել ու արագացնել, որ գյուղացիությունն անցնի հողի մեքենային մշակության, կարելի յե աջակցել, որ գյուղացիական տնտեսությունները միավորվեն խոշոր ընկերությունների, կոլեկտիվ տնտեսությունների մեջ, կոոպերացիայի օգնությամբ գյուղը առաջ մղվի դեպի սոցիալիզմ: Ներկա զրույցում մենք կը քննենք.

1. Թե ինչպիսի վերաբերմունք ունի կուսակցությունը դեպի չքավորը, միջակն ու կուլակը. ում վրա յե հենվում ՀամԿԿ (բ), ում հետ դաշնակցում է և ում դեմ պայքարում, սոցիալիզմ կառուցելով գյուղում:

2. Թե ինչ թեքումներ կան լենինյան ուղիղ գծից կուլակի, չքավորի, միջակի նկատմամբ և ինչպես է կուսակցությունը պայքար մղում այդ թեքումներից յուրաքանչյուրի դեմ, որպեսզի գյուղացության մեծամասնության հետ միասին հաջողությամբ ընթանա դեպի նոր հասարակակարգը:

3. Թե ինչու գյուղի ուղին դեպի սոցիալիզմ ընկնում է կոոպերացիայի միջով:

4. Թե ինչ թերություններ պիտի վերացնի կոոպերացիան, ինչ խնդիրներ պիտի լուծի, որ իրապես գյուղացության համար դառնա ուղիղ ճանապարհ դեպի սոցիալիզմ:

1. ՄԻՋԱԿԸ—ԳՅՈՒՂԱԿԱՆ ՉՔԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱ-ՐԻԱՏԻ ՀԱՍՏԱՏ ԴԱՇՆԱԿԻՑ

Գյուղատնտեսության զարգացումը նեպի տարիներում

Նեպի տարիներում մեր գյուղացիական տնտեսությունը խիստ բարձրացավ։ Ընդարձակվեց ցանքի տարածությունը.— 1913 թ. ընդամենը ցանված էր 107 միլիոն դեսյատին, 1922 թ. ցանքի տարածությունը կրճատվել էր, հասնելով 74 միլիոն դեսյատինի, իսկ 1926 թ. ցանքերն ընդլայնվեցին, հասնելով մինչև 105 միլիոն դեսյատինի։ Հատկապես աճեցին գյուղացու համար ամենաոգտակար տեխնիկական կուլտուրաների ցանքերը՝ վուշի, կանեփի թելի, բամբակի, արևածաղկի, շաքարի ճակնդեղի, ծխախոտի։ Մինչև պատերազմն այդ հում նյութի կուլտուրաները բռնում էին 4 միլիոն 910 հազար դեսյատին տարածություն, իսկ 1926 թ. դրանք ընդարձակվեցին, հասնելով մինչև 5 միլիոն 870 հազար դեսյատինի։ Բարձրացավ նաև անասնապահությունը.— ձիերի, կովերի, խոզերի և այլ անասունների քանակը, վոր խիստ կրճատվել էր պատերազմի տարիներում, 1926 թ. աճեց, հասնելով մինչպատերազմականի 92%։

Գյուղացիությունը վերջին տարիներում նորոգեց իր ինվենտարը, ձեռք բերեց շատ նոր գութաններ, հնձող և կալսող մեքենաներ, սկսեց կիրառել նաև տրակտորներ։ Վերջին չորս տարում գյուղացիությունը ձեռք բերեց 300 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ, նաև 60 միլիոն ռուբլու տրակտորներ։

1926/27 թ. գյուղատնտեսությունը հասավ մինչպատերազմական մակարդակին—այն ամրացավ ու կազդուրվեց իմպերիալիստական պատերազմի ու քաղաքացիական կռիվների հասցրած ավերմունքներից։

Գյուղի շերտավորումը

Իհարկե, բոլոր գյուղացիները միատեսակ չեն բարձրացրել իրենց տնտեսությունը։ Գյուղի հիմնական մասսան, միջակ գյուղացիները, վորոնք ապրում են իրենց աշխատանքով, առանց բատրակ վարձելու, առանց առևտրի և վաշխառության,—նեպի տարիներում ընդհանուր առմամբ ավելի ունևոր են դարձել, սկսել են ավելի շատ ցանել և շատացրել են իրենց անասունների քանակը։

Բայց միաժամանակ բարձրանում էին այն հարուստները, վորոնք գլուխներն ազատել էին քաղաքացիական կռիվներից, նախկին կուլակները։ Հեղափոխությունը կուլակներից խլեց նրանց հողերի մեծ մասը և տվեց չքավորներին ու միջակներին։ Բայց կուլակներին մնաց ինվենտարի, շենքերի, կուտակած փողերի նշանավոր մասը։ Կուլակները «ռազմական կոմունիզմի» տարիներում էլ հնար էին գտնում ծածուկ առևտուր, սպեկուլյացիա անել, ստրկացուցիչ պայմաններով

չքավորներին հաց փոխ տալ։ Իսկ նեպին, ազատ առևտրին անցնելուց հետո, կուլակի աճելն ավելի հեշտացավ՝ նա հող է վարձակալում չքավորից, բատրակ է վարձում, առևտուր է անում, վաշխառությամբ է զբաղվում, ստրկացուցիչ պայմաններով չքավորին ոգտագործելու է տալիս իր ձին, ինվենտարը, սերմերը, կողոպտիչ շահ քամելով նրանից։

Չքավոր-գյուղացիները հեղափոխության ժամանակ հող ստացան։ Բայց նրանք չունեն վոչ ձի, վոչ ինվենտար, վոչ միջոցներ,— իսկ առանց ձիու, առանց գութանի, առանց սերմերի հողը չի կարելի վարել, ցանել։ Այս պատճառով չքավորներից բոլորը չէ, վոր կարողացան բարձրացնել իրենց տնտեսությունը։ Ընդհակառակը, նրանց մի մասը աղքատանում էր և կուլակից կախման մեջ ընկնում։

Գյուղի այս շերտավորումը,—մի կողմից՝ կուլակների աճումը և մյուս կողմից՝ չքավորների աճումը,—վորոշ չափով անխուսափելի յե մեր գյուղի պայմաններում։ Չէ վոր այնտեղ կան միլիոնավոր առանձին, միանձնյա տնտեսություններ, վորոնք աշխատում են շուկայի համար։ Ով ավելի հարուստ է, ավելի յել ճարպիկ, նա աճում է, ամրանում, ստրկացնում չքավորներին։ Ով ավելի աղքատ է, նրա համար դժվար է վոտքի կանգնել, նա հաճախ ստիպված է կուլակի «ոգնությանը» դիմել, այսինքն ստիպված է ստրկանալ։

Սակայն գյուղի այս շերտավորումը մեզ մոտ բոլորովին այնպես չի կատարվում, ինչպես կատարվել է մինչև հեղափոխությունը։ Հարկավոր է պարզ տեսնել այս տարբերությունը։

Կապիտալիզմի ժամանակ կուլակների աճումը կատարվում էր առանց վորևէ զսպումի ու արգելքի։ Բոլոր առավելությունները հարուստների կողմն էին, իսկ չքավորները վոչ մի պաշտպանություն և ոգնություն չունեին։ Վարկեր ստանում էր նա, ով հարուստ էր։ Հարկերը քաշքշում էին չքավորին ու միջակին, իսկ կուլակը հեշտությամբ վճարում էր այն։ Առևտրականների և վաշխառուների կողմն էին և՛ որենքները, և՛ դատարանները, և՛ չինովնիկները։ Բատրակներին կարելի չեր անսահման շահագործել, նրանք անկազմակերպ եյին, իսկ որենքը չեր պաշտպանում նրանց։ Հող կարելի յեր գնել, ինչքան ասես, այսպիսով միլիոնավոր դեսյատին հող անցավ կուլակների ձեռքը վոչ միայն քայքայված կալվածատերերից, այլև քաղաք գնացած քայքայված գյուղացիներից։

Բոլորովին այլ դրություն ստեղծվեց գյուղում **հեղափոխությունից հետո։**

Մեզ մոտ հողը պատկանում է պետությանը—այն չի կարելի գնել ու վաճառել։ Միայն այս հանգամանքը մեծ չափով կտրեց կուլակի աճման արմատները, վորովհետև այժմ արդեն հողը չի կարող կուտակվել վոմանց ձեռքերում։

Մեզ մոտ հարկերն այնպես են բաշխված, որ նրանց գլխավոր ծանրությունն ընկնում է ունևորների ու կուլակների վրա, իսկ չքավորը կամ բոլորովին ազատված է հարկերից, կամ քիչ է վճարում։ Մեզ մոտ վարկեր տրվում են առաջին հերթին չքավորներին ու միջակներին։ Վաշխառության դեմ, ստրկական գործարքների դեմ հրատարակված են օրենքներ, որոնք պաշտպանում են չքավորին աղքատությունից։ Աշխատանքի օրենքները սահմանափակում են բատրակների շահագործումը։ Տեղական իշխանությունը, խորհուրդները, դատարանները—պաշտպանում են չքավորների ու միջակների, և ոչ թե կուլակների շահերը։ Այս բոլորն արմատապես փոխում է դրությունը, այս բոլորն **արգելում է** կուլակի աճումը գյուղում։

Ու այժմ մեզ դեռ չի հաջողվել դադարեցնել գյուղի շերտավորումը։ Մենք դեռ չենք կարող բոլոր չքավորներին ազատել հարկերից։ Մենք դեռ չենք կարող բոլոր չքավորներին վարկեր տալ իրենց տնտեսությունը բարձրացնելու համար։ Մեր պետական առևտուրը և կոոպերացիան գյուղից դեռ դուրս չեն մղել մասնավոր առևտուրը։ Չքավորներն ու բատրակները դեռ այնպես լավ կազմակերպված չեն, դեռ այնքան գիտակից չեն, որպեսզի լիովին պաշտպանեն իրենց շահերը, այս պատճառով հաճախ կուլակին հաջողվում է անտեսել չքավորին ու միջակին պաշտպանող մեր օրենքները։ Այս պատճառով մեզ մոտ դեռ կա կուլակների ու չքավորների բաժանումը։

Գյուղում դրությունը մոտավորապես այնպես է, որ 100 գյուղացուց մոտ 55 միջակ է, մոտ 40 չքավոր և 4—5 ունևոր ու կուլակ։

Սակայն խորհրդային կարգի այն առանձնահատկությունները, որոնց մասին վերևը խոսեցինք, հասցնում է այն բանին, որ մեզ մոտ գյուղի շերտավորումը տեղի չի ունենում հասարակ ձևով։ Կապիտալիզմի ժամանակ միջակներից առանձին անհատներ են կարողանում կուլակ դառնալ, իսկ մեծամասնությունը չքավոր է դառնում։ Կապիտալիզմի ժամանակ չքավորները քայքայվում են և բատրակ դառնում կամ քաղաք գնում։ Մեզ մոտ դրությունն այլ է։ Աճում է կուլակը, առանձին միջակներ լրացնում են կուլակների շարքերը, բայց աճում է նաև միջակ-գյուղացիների ամբողջ մասսան, իր տնտեսությունը բարձրացնում է նաև չքավորների մեծ մասը։ Այսպիսով միջակների խմբակը չի կրճատվում, քայքայվում, այլ մնում է իբրև գյուղացիության գլխավոր խմբակը։ **Ընդհանուր վերելք** է տեղի ունենում գյուղացիության բոլոր խմբակներում։ Այս յերևում է այն բանից, որ անասուն չունեցող և ցանք չունեցող տնտեսությունների թիվը չի մեծանում, այլ **կրճատվում է**։ 1922 թվից մինչև 1925 թ. ցանք չունեցողների թիվը կրճատվել 40 տոկոսով, իսկ անասուն չունեցողներինը՝ 18 տոկոսով։

Խորհրդային իշխանությունը կարող է կանգնեցնել կուլակի աճումը, միացնել չքավոր ու միջակ գյուղացիությանը, առաջնորդել նրան կոոպերացիայի միջոցով, դեպի սոցիալիզմ, դեպի խոշոր կոլեկտիվ արտադրություն, դեպի սոցիալիզմ։

Կուսակցության վերաբերմունքը դեպի գյուղի տարբեր շերտերը

Պետք է միայն կուտակել միջոցներ, ամրացնել մեր տնտեսության հրամայող բարձունքները, տալ գյուղին խոշոր մեքենաներ, օգնել նրան վերակառուցելու իր տնտեսությունը։ Իսկ այդ գործը, ինչպես յերևում է նախորդ գլուխներից, առաջ է ընթանում։

Չքավոր գյուղացիների նշանավոր մասը հասկանում է արդեն, որ մեն-մենակ դժվար է հաղթել տնտեսական թերությունները։ Կուսակցության ու Խորհրդային պետության խնդիրն է բացատրել չքավորներին և գործով հաստատել, թե նրանց վիճակի թեթևացման միակ ուղին ընդհանուր տնտեսությունն է։ Կուսակցությունը պաշտպանում է չքավոր գյուղացիների ձգտումը դեպի միավորում, օգնում է նրանց կազմակերպվելու, Խորհրդային պետությունը կոոպերատիվներին ու կոլեկտիվներին տալիս է լրացուցիչ միջոցներ, վարկ է բաց թողնում մեքենաներ գնելու և խոշոր տնտեսություն անցնելու համար։

Չքավորն իր տնտեսական վիճակի ելքը կոլեկտիվ տնտեսության մեջ է տեսնում։ Այս պատճառով չքավորը հեշտ է յուրացնում յեվ ավելի շուտ է պատրաստ պաշտպանելու պրոլետարիատի յեվ նրա կուսակցության քաղաքականությունը։ Չքավորությունը կուսակցության հաստատուն հենարանն է գյուղում, յեվ ՀամԿԿ (բ.) բոլոր միջոցներով ջանում է չքավորներին կազմակերպել իր շուրջը, օգնել նրանց միավորվելու յեվ կարգավորելու իրանց տնտեսությունները։

Գյուղում պրոլետարիատի ամենահաստատ հենարանը հանդիսանում են բատրակները—գյուղատնտեսական պրոլետարները։ Մեր կուսակցությունն իրեն խնդիր է դնում ամենից առաջ կազմակերպել բատրակներին, միացնել նրանց, որ պաշտպանեն իրենց շահերը կուլակների շահագործման դեմ, բարձրացնել նրանց քաղաքական և կուլտուրական մակարդակը։ Բատրակների կազմակերպման հիմնական գործիքը գյուղատնտեսական ու անտառային բանվորների միությունն է (Համ. Հողանտառմիություն), նրա անդամների թիվը աճում է և այժմ մեկ միլիոնից ավելի է։ Բատրակ-պրոլետարները և չքավոր-կիսապրոլետարները հանդիսանում են կուսակցության հաստատուն հենարանը գյուղում։

Միջակ գյուղացուն ավելի դժվար է առաջնորդել դեպի սոցիալիզմ։ Բայց առանց նրան սոցիալիզմ չես կառուցի։ Միջակներն ամենամեծ ուժն են գյուղում և գյուղատնտեսության մեջ։ Միջակները

դեռ բավարար չափով հավատ չեն տածում դեպի ընդհանուր խոշոր ընկերական տնտեսության հնարավորությունն ու օգուտը: Կուսակցության խնդիրն է գործնականում ապացուցել միջակին կոլլեկտիվ տնտեսության օգուտը: Այն ժամանակ միայնակ հարստանալու կապիտալի հնարավորությունից բարձր կը դասի ընդհանուր տնտեսության վստահելի ուղին:

Միջակը կարող է յեվ պետք է լինի բանվոր դասակարգի յեվ գյուղական չքավորության հաստատ դաշնակիցը սոցիալիզմի շինարարության մեջ:

ՀամԿԿ (բ) խնդիրը գյուղում այն է, վոր կոոպերատիվներում, ընկերակցության կոմիտեներում, արտելներում յեվ կոլլեկտիվ տնտեսություններում աշխատելու համար իր շուրջը կազմակերպի չքավորությանը. համոզի միջակին ընդհանուր տնտեսության օգտավետությունը, նրան այդ գործի մեջ քաշի, միջին գյուղացիությանը դարձնի իր հաստատ դաշնակիցը, վորպեսզի կարողանա հաղթահարել կուլակին: Այն ժամանակ ԽՍՀՄ սոցիալիզմի կառուցումն արագ կավարտվի:

Կուլակի դեմ պայքար, չքավորը հենցուկ, միջակի հետ դաշինք — ահա ՀամԿԿ (բ) գիծը:

XIV կուսկոնֆերենցիայի գյուղի տնտեսական քաղաքականության հարցերին վերաբերող վորոշումների իմաստը

Ասածները նկատի առնելով ընթերցողի մեջ կարող է ծագել հետևյալ հարցը. «Եվ ինչու այս դեպքում XIV կուսկոնֆերենցիան (1925 թվին) թույլ է տվել հողի վոչ-աշխատավորական արենդը և բատրակների վարձկալությունը: Չէ վոր դա կուլակին աճելու հնարավորություն է տալիս»:

Ով այդպես է ասում, մոռանում է, վոր հողի արենդը և բատրակի վարձկալությունը գյուղում **գոյություն ունեյին** XIV կուսկոնֆերենցիայից առաջ էլ: Ձի չունեցող չքավորը ուժ չուներ մշակելու իր հողը: Յեվ նա այս կամ այն կերպ ստիպված էր հողը վարձու տալ կուլակին: Բայց դա գաղտնի յէր տեղի ունենում և կուլակը օգտվում էր արենդի արգելքից, վորպեսզի ավելի ամուր սեղմի չքավորին, չնչին արժեքով վերցնի նրա հողը: Այս նույնը բատրակի վարձման դեպքում: Կուսակցությունը հաշվում էր, թե մեր արդյունաբերությունը չի կարող կլանել մեր Խորհրդային Միության գյուղերի ազատ ձեռքերի ամեն տարվա աճումը:

Գյուղում կա բանվորական ձեռքերի հսկայական ավելցուկ, վորոնք մեր գյուղատնտեսության հետամնացության պատճառով չեն կարողանում գործադրություն գտնել: Հարյուր հազարավոր գյուղացիներ ամեն տարի գյուղից քաղաք են թափվում աշխատանք վորոնելու և ավելացնում են գործադրկությունը:

Յեթե մենք այս պայմաններում շարունակեյինք արգելել բատրակների վարձումը և հողի վարձակալությունը, ապա միայն կը վատացնեյինք չքավորի դրությունը:

Վորպեսզի ավելի հաջող պայքարենք կուլակի դեմ, հարկավոր է միջոցներ կուտակել, պետական արդյունաբերությունը զարգացնել: Իսկ միջոցների կուտակումը պետության ձեռքն ավելի արագ կընթանա հենց այն ուղիով, վոր նշել է XIV կուսկոնֆերենցիան: Գյուղատնտեսությունը կաճի, անմշակ հողերի մշակումը կարագանա, գործադրկությունը կթուլանա, մի խոսքով, կաճի յերկրի արդյունքների քանակը, իսկ եվ ավելի կաճի գյուղացիների արդյունքների վաճառահանությունը: Գյուղն ավելի շատ կը վաճառի և ավելի շատ կը գնի: Արդյունաբերությունն ավելի արագ կը զարգանա: Յերկիրն ավելի շատ հարկ կը վճարի, արդյունաբերությունն ավելի շատ շահույթ կտա — **պետության հզորությունը, նրա ձեռքի հարստությունը կաճի**, չքավորին ու միջակին ցույց տրվող օգնությունն ընդդեմ կուլակի կը մեծանա, գյուղացիների միացումը կոոպերատիվներում ու կոլլեկտիվ տնտեսություններում, սոցիալիստական շինարարությունը գյուղում առաջ կընթանա:

XIV համագումարում այդ վորոշումների սխալ գնահատությունը ոպպոզիցիայի կողմից իբրեվ գիջումներ կուլակ շերտերին

Արդարացի չէ, օրինակ, ընկեր Կամենևը, վոր ասում է, թե XIV կուսկոնֆերենցիայում «զիջում է արված գյուղի կուլակ տարրերին, զիջում, վոր անխուսափելիորեն ընդարձակել է նրանց նշանակությունը և հզորությունը»:

Այս կոպիտ սխալ է: XIV կուսկոնֆերենցիայի վորոշումների նպատակն էր վոչ թե ուժեղացնել կուլակին, այլ շարունակել պայքարը նրա դեմ նոր հիմունքներով: Մեր հրամայող բարձունքներն ամրացված են, պետությունն իր ձեռքով բազմաթիվ միջոցներ ունի ազդելու գյուղացիական շուկայի վրա, օգնելու չքավորներին, — այս պայմաններում կուլակի վորոշ աճումը սարսափելի չէ մեզ համար:

Կուլակները, հարկավ, կօգտվեն հողի վարձակալությունից և բատրակների վարձումից, վորպեսզի կլորացնեն իրենց տնտեսությունը: Իսկ մենք կօգտագործենք ժողովրդական հարստության աճումն եվ ավելի մեծ չափով կամրացնենք հրամայող բարձունքները, նրանց օգնությամբ պայքար կը մղենք կուլակների դեմ միջակների համար: Կուլակների խանութների դեմ կը պաշտպանենք կոոպերատիվները, վաշխառուների դեմ վարկային ընկերությունները: **Այժմ, յերբ պետության ձեռքում արդեն կա զարգացած արդյունաբերություն յեվ առեվտուր, լավ աշխատող տրանսպորտ, խոշոր յեկամուտներ բյու-**

չեզոք. ամուր բանկեր,— կարելի չե հաղթահարել կուլակին յեվ միջակին տանել սոցիալիզմի կողմը:

Յերկու թեքում այս խնդրում—կուլակի վտանգի թերագնահատումը յեվ միջակի դերի ու նրա դաշինքի թերագնահատումը

Մի քանի ընկերներ, օրինակ, դատում են այսպես. «Այդ առաջ էր, որ կուլակն ուտում էր գյուղը: Այժմ խորհրդային իշխանության օրով կուլակին որ չեն տալիս: Այդ պատճառով էլ գյուղում նա չի աճում: Մեր գյուղում համարյա թե չկա նախկին կուլակությունը, վաշխառությունը: Կան միայն իրանց տնտեսությունը սեփական աշխատանքով բարձրացնող ունևոր գյուղացիներ: Կուլակը—դա մոռացածին բան է, խրտվիլակ»: Կուլակի բացակայության մասին չեղած զրույցները միայն շպարում են կուլակի վտանգը, խանգարում են, որ կուսակցությունը տեսնի թշնամուն: Յեթե դրանց լսելու լինենք, ապա վերջիվերջո պիտի հրաժարվենք գյուղում դասակարգային կռիվ մղելուց, պիտի հրաժարվենք այն պայքարից, որ տարվում է կուլակի դեմ և նպատակ ունի միջակին դեպի սոցիալիզմ շրջելու:

Ահա ինչու կուսակցության XIV համագումարը դատապարտել է հիշյալ կարծիքները, իբրև մի թեքում, վոր թերագնահատում են կուլակի վտանգը:

Մյուս կողմից՝ օպոզիցիան կուսակցության XIV համագումարում այսպես էր դատում. «Կուլակն աճում է վոչ թե օրերով, այլ ժամերով: Ամբողջ ուժը կուլակի ձեռքում է՝ նա յե ապրանքների գլխավոր վաճառողը, նա յե ապրանքերի գլխավոր գնորդը, նա յե շուկայի տերը: Միջակները շարունակ պակասում են, չքավորները շարունակ ավելանում: Կուլակն աճել է ու դարձել մի ահեղ ուժ,—հարկավոր է գյուղի ամբողջ քաղաքականությունն ուղղել կուլակների վոչնչացմանը»: Օպոզիցիան չկարողացավ կուլակների դեմ պայքարելու վոչ մի գործնական միջոց առաջարկել: Ուրեմն ինչ էր այդ խոսակցությունների իմաստը: Այն, վոր իբր թե գյուղը զարգանում է կապիտալիստական ձևով, վոր իբր թե կուլակը հարվածում է մեզ: Օպոզիցիան այն պատճառով էր չափազանցում կուլակի վտանգը, վոր կուլակների մեջ էր դցում նաև միջակ-գյուղացիների մի մասը: Օպոզիցիան չի հավատում, վոր միջակը կարող է պրոլետարիատի հաստատուն դաշնակիցը լինել: Օպոզիցիան չի հասկանում Լենինի ուսմունքը, վոր միջակը վոչ միայն մանր տնտեսատեր է, այլև աշխատավոր: Օպոզիցիան չի յուրացրել Լենինի ուսմունքը, վոր մեր գյուղում կենտրոնական դեմքը միջակն է:

Չէ վոր կուլակն ուժեղ է ու սարսափելի միայն այն ժամանակ, յերբ միջակին քաշում է իր կողմը: Յեթե միջակին վերջնականապես

մեր կողմը գրավենք, յեթե ամրացնենք բանվորների և գյուղի չքավորների դաշինքը նրա հետ,—կուլակը սարսափելի չի լինի. նա չի աճի, յեթե գյուղն ընթանա չքավորների ու միջակների կոոպերացիայի ուղիով, յեթե հրամայող բարձունքները մեր ձեռքում լինեն:

Օպոզիցիան ուռցնում էր կուլակի վտանգը, պանիկա յեր դցում կուսակցության շարքերը, փոխանակ այն բանի, վոր իրոք պայքարի կուլակի դեմ, միջակին իր կողմը գրավելով: *Ահա թե ինչու կուսակցության XIV համագումարը դատապարտեց այս թեքումը:*

Միջակին թերագնահատելու թեքումը, կուլակի վտանգը չափազանցելով, կուսակցությանը խանգարում է իրագործել սոցիալիզմի շինարարության ամենադժվար խնդիրը գյուղում, այն է՝ կոոպերացիայի միջոցով իր յետևից տանել միջակ գյուղացիությանը: Հարկավոր է ամբողջ ուշադրությունը դարձնել այս կողմի վրա, սովորել կուլակին հարվածել վոչ թե բռնի վոչնչացմամբ, այլ կոոպերացիայի զարգացումով, չքավորներին ոգնելով յեվ այլն:

Չքավորների կազմակերպումը յեվ պայքար կուլակների դեմ

Փոխանակ շաղակրատելու կուլակի մասին և պանիկա գցելու նրա աճման առթիվ, կուսակցությունն իր առաջ գործնական խնդիր դրեց՝ կազմակերպել չքավորներին կուլակին դիմադրելու համար, ոգնել չքավորությանը վտարել(?) կանգնելու, ազատել չքավորներին կուլակի շահագործությունից:

Չքավորի դժբախտությունը վոչ միայն այն է, վոր նա թույլ տնտեսություն ունի, այլև այն, վոր նա անկազմակերպ է, քիչ գիտակից: Այս պատճառով հաճախ չքավորը չի կարող ոգտվել այն առավելություններից, վոր նրան տալիս է խորհրդային իշխանությունը: Մեր օրենքներով չքավորը լիակատար հնարավորություն ունի պաշտպանելու իր շահերը: Յեվ հարկերը հավաքելիս, և հողաշինարարության ժամանակ, և կոոպերատիվներ կազմակերպելիս, և վարկեր բաց թողնելիս, և փայտ բաց թողնելիս—օրենքով չքավորն ունի բոլոր առավելությունները, բոլոր արտոնությունները: Բայց շարունակ չէ, վոր չքավորը կարողանում է ոգտվել այս խորհրդային օրենքներից: Սրանից էլ ոգտվում է կուլակը. նա հաճախ ձեռք է գցում այն վարկերը, վոր տրված են չքավորին և միջակին: Քիչ չեն այն դեպքերը, յերբ չքավորների ու միջակների կոոպերատիվների համար կանխորոշված տրակտորն էլ է ընկնում կուլակի ձեռքը: Հողաշինարարության ժամանակ կուլակը ջանում է ստանալ լավագույն հողերը: Կուլակները սովորաբար փորձում են իրենց ձեռքը գցել նաև տեղական խորհուրդները և կոոպերացիայի ղեկավարությունը, վորպեսզի ավելի լավ սարքեն իրենց գործերը: Կուլակների այս պահանջներին կարելի չէ

դիմադրել միայն այն ժամանակ, յերբ չքավորներն իրենք ակտիվություն յերևան կը բերեն, կը համախմբվեն և իրենց կողմը կը գրավեն միջակին: Այն ժամանակ կուլակը մենակ կմնա և նրա ուժը կը ջլատվի:

Կուսակցության վորոշումը չքավորներին կազմակերպելու մասին արդեն կենսագործվում է: Գյուղում կազմակերպվում են չքավորների ժողովներ քննելու չքավորների տնտեսության վերելքի և կուլակների դեմ մղվող պայքարի յեղանակները: Խորհուրդներում, կոոպերատիվների վարչություններում չքավորները կազմակերպում են չքավորների խմբակներ: Ահա օրինակներ, թե ինչպես չքավորները, կազմակերպված լինելով, պաշտպանում են իրենց շահերը:

Կալիտվա ստանիցայում, Հյուսիսային-Կովկասյան յերկրում, ունևորները և կուլակները վճռեցին մելիորատիվ ընկերություն[*]) ստեղծել: Ընդհանուր ժողովում նրանց հաջողվեց վորոշում անցկացնել, վոր ընկերությանը հատկացվի 412 դեսյատին հող: Ընկերության վարչությունը կազմվեց գլխավորապես ունևորներից:

Այն ժամանակ չքավորները վճռեցին թույլ չտալ, վոր ունևորները գրավեն հողը: Չքավորների ժողովում վորոշվեց ձգտել այն բանին, վորպեսզի հողը չտրվի ունևորներին: Չքավորներին հաջողվեց իրենց այս վճիռն անցկացնել քաղաքացիների ընդհանուր ժողովով և այդ ճանապարհով ընկերությունն անցավ չքավորների ու միջակների ձեռքը:

Որդինկա գյուղում, Նովո-Սիբիրսկի օկրուգում, չքավորությունը տուժում եր հողի հեռավորությունից, տեղ-տեղ հողը 40 վերստ հեռու յեր գյուղից: Կուլակների համար հողի հեռավորությունը ձեռնտու յեր, վորովհետև չքավորը կամ միջակը չի կարողանում մշակել հեռավոր հողը և այդ պատճառով նրանք ստիպված են չնչին գնով հողը վարձակալության տալ կուլակին: Այսպիսով վերջին տարիներում կուլակներն սկսեցին ցանել 30—40-ական դեսյատին: Կուսակցական բջիջը վճռեց թեթևացնել չքավորների դրությունը և հողաշինարարություն անցկացնել: Բայց դրա համար հարկավոր եյին միջոցներ: Հարկավոր եր հասնել այն բանին, վորպեսզի բոլոր քաղաքացիները հողաշինարարության ֆոնդին միջոցներ մասնատրեյին: Ահա այստեղ է, վոր կուլակները կատաղի պայքար սկսեցին չքավորների «նյութանքների» դեմ: Նրանք կաշառքներ եյին տալիս հողային վարչության աշխատողներին, վորպեսզի խանգարեն հողաշինարարությունը: Բայց բջիջի ղեկավարությամբ չքավորությունը կազմակերպվեց, մի քանի ժողով գումարեց, իր կողմը գրավեց միջակներին, միջոցներ հավաքեց—և կուլակների դիմադրությունը ջախջախվեց:

1) Ընկերություն հողի լավացման աշխատանքների համար — ճահիճների չորացում, արհեստական վոռոգում և այլն:

Տնտեսական օգնություն չքավորներին

Բայց չքավորներին կազմակերպելը քիչ է, հարկավոր է նրանց տնտեսական օգնություն ցույց տալ: Սրա համար խորհրդային իշխանությունը դիմում է մի ամբողջ շարք միջոցառումների: 1926/27 թ. գյուղատնտեսական հարկը վճարելուց ազատվեցին չքավորների մոտ 6 միլիոն տնտեսություն (բոլոր ծխերի ավելի քան մեկ քառորդ մասը): 1927/28 թ. հարկից ազատվում են մոտ 6—7 միլիոն տնտեսություն: Բացի այս, հարցն այնպես է դրված, վոր նրա գլխավոր ծանրությունն ընկնում է ունևորների վրա, իսկ այն չքավորների համար, վորոնք հարկից ազատված չեն, նրա ծանրությունն ամեն տարի թեթևանում է:

Չքավորներին օգնություն ցույց տալու համար կուսակցությունը ձգտում է այն բանին, վորպեսզի գյուղացիների ստացած վարկերն ընկնեն չքավորների ու միջակների ձեռքը: Այսպես, գյուղացիությանը փոխ տրվող ամեն մի 100 ռուբլուց 22 ռ. տրվում է ձի չունեցողներին և 51 ռ. մեկ ձի ունեցողներին, նշանակում է 100 ռուբլուց 73-ն ընկնում է սակավազոր գյուղացիությանը *): Այս վարկերը առայժմ դեռ բավական չեն, վորպեսզի կարելի լինի օգնել բոլոր չքավորներին: Բայց նրանք տարեց տարի աճում են.—գյուղատնտեսական վարկի ասպարեզում գյուղացիությունն առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. պարտք եր վերցրել 163 միլիոն ռուբլի, իսկ առ 1-ն հոկտեմբերի 1926 թ.—415 միլիոն ռուբլի:

Չքավորներին օգնելու համար ստեղծված են չքավորների հատուկ ֆոնդեր, վորոնցից վարկեր բաց են թողնվում բացառապես չքավորներին հատուկ արտոնյալ պայմաններով: Այժմ այդ ֆոնդը հասել է մոտ 25 միլիոն ռուբլու: Բացի այդ, բյուջեյով միջոցներ են բաց թողնված, վոր ձրի հողաշինարարություն կատարվի չքավորների համար:

Չքավորները թույլ մասնակցություն ունեն կոոպերացիային, նրանց ուժերից վեր է փայ մտցնելը: Կուսակցությունն այստեղ էլ օգնության է հասնում չքավորներին փայերի փոքրացումով, փայերի վճարումը տարկետելով (рассрочка), այդ նպատակով փոխատվություններ անելով և այլն:

Վորոշված է ամեն տեսակ պաշտպանություն ցույց տալ (վարկ, գյուղատնտեսական մեքենաների արտոնյալ բաց թողում) չքավորների միացումներին հողի միասին մշակման համար, այն է՝ կոլեկտիվ տնտեսություններին, արտելներին, մեքենային ընկերություններին:

Դրա հետ միասին կուսակցությունը ճանաչեց, վոր չպետք է

*) Այս թվերը հաշված են 3 ½ հազար վարկային ընկերության հետազոտության հիման վրա:

ծռվել դեպի կուլակի բռնի հավասարումը, դեպի 1918 թ. չքավորների կոմիտեների գիծը։

Կուսակցությունը ձգտում ե չքավորներին ոգնելով, նրանց վոտքի կանգնեցնել, վարժեցնել, վոր իրենց շահերի համար ինքնուրույն կերպով պայքարեն կուլակի դեմ խորհուրդներում, կոոպերատիվներում յեվ գյուղկոմներում։ Այն ժամանակ չքավորները կը լինեն կուսակցության քաղաքականության հաստատուն հենարանը, կը կարողանան միջակներին համախմբել պրոլետարիատի շուրջը, յեվ գյուղը կը տանեն սոցիալիստական ուղիով։

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչպես ե տեղի ունենում գյուղի շերտավորումը կապիտալիզմի ժամանակ։

2. Ինչու՞ չի դանդաղում գյուղի շերտավորումը խորհրդային իշխանության ժամանակ։

3. Վորն ե Համ. ԿԿ (բ) գիծը բատրակների, չքավորների, միջակների ու կուլակների վերաբերմամբ։

2. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ—ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԼԱՅՆ ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Լենինը և՛ Նեպին անցնելիս, և՛ իր մահից առաջ գրած հոդվածներում սովորեցնում ե, վոր պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ գյուղի ուղին դեպի սոցիալիզմ ընկնում ե **կոոպերացիայի միջով**։ Հենց կոոպերացիան ե, վոր ընդունակ ե չքավորին ու միջակին գրավել հասարակական կոլեկտիվ տնտեսության մեջ, ոգնել, վոր չքավորների տնտեսությունը վոտքի կանգնի, և հաղթահարել կուլակների ուժեղացումը, գյուղն ուղղել սոցիալիստական զարգացման ուղիով։

Ինչու՞ յե այսքան մեծ կոոպերացիայի դերը գյուղում։

Ամենից առաջ պետք ե հիշել, վոր կոոպերացիան հասցնում ե գյուղացիական տնտեսությունների **միացմանը** ամենապարզ սկզբունքներով, վորոնք հասկանալի յեն ու **ոգտակար ամեն մի գյուղացու**։ Ամեն մի գյուղացիական տնտեսություն շահագրգռված ե, վորպեսզի ըստ հնարավորին շահավետ վաճառահանի իր արտադրության արդյունքները և ըստ հնարավորին շահավետ ու եժան գնի քաղաքի արդյունաբերության արդյունքները։

Ամեն մի չքավոր ու միջակ տնտեսություն շահվում ե տնտեսության ասպարեզում միատեղ աշխատանք կատարելուց, ասենք, միատեղ թանկ մեքենա ձեռք բերելուց, վոր անմատչելի յե առանձին

տնտեսության համար, կամ մելիորացիայի (հողի լավացում, ճահիճների չորացում և այլն) ասպարեզում միատեղ աշխատանք կատարելուց, կամ գյուղատնտեսական արդյունքը վերամշակող հասարակական ձեռնարկության կազմակերպումից (յուղի գործարան, կրախմալի—շարապի (патока) գործարան և այլն)։ Ամեն մի գյուղացիական տնտեսություն շահագրգռված ե այն բանով, վորպեսզի կարիքի դեպքում եժան վարկ ունենա։

Ահա **մասնավոր** գյուղացիական տնտեսության այս շահն էլ դրդում ե գյուղացիությանը կոոպերատիվ **միացման** ուղին բռնել։ Վերցնենք այսպիսի որինակ։ Մեկ բան ե, յերբ ամեն մի առանձին գեղջկուհի շուկա յե գնում իր մի դույլ կաթը կամ մի քանի տասնյակ ձուն ձեռքին, մի այլ բան ե, յերբ գյուղացիք կոոպերատիվ են կազմակերպում իրենց արդյունքների միատեղ վաճառահանության համար։ Կոոպերատիվն ավելի լավ ե ճանաչում շուկան, խնայողություն ե անում փոխադրության մեջ և գյուղացուն փրկում ե ժամանակի ահագին վատնումից։ Բայց ահա գյուղացիները կազմակերպեցին, ասենք, կաթի միատեղ կոոպերատիվ վաճառահանություն։ Նրանք միացման առաջին քայլն արեցին։ Բայց նրանք դրանով չեն բավականանում։ Չե՞ վոր շատ ավելի ոգտակար ե վաճառահանել վոչ թե կաթը, այլ կաթնամթերքները—յուղը, խաձոն (творог) և այլն։ Այն ժամանակ գյուղացիները միատեղ տնտեսավարելու յերկրորդ քայլն են անում—նրանք շինում են յուղի, պանրի կոոպերատիվ գործարաններ և այլն։ Հսկայական ոգուտ ե ստացվում, յուղը խնոցով չեն պատրաստում, այլ սեպարատորներով, այնպես վոր յուղ էլ շատ ե ստացվում, վորակն էլ լավ ե լինում, և այդ յուղը կարելի յե մեծ քանակով վաճառել հեռավոր, մինչև իսկ արտասահմանյան շուկաներում։

Յերբ այս աստիճանի միացման հասել են, ապա միատեղ տընտեսության հետագա քայլերը շատ ավելի հեշտ են հաջողվում։ Այդպիսի կաթի արտելն սկսում ե հոգալ, վոր կովերը շատ կաթ տան, կազմակերպում ե անասունների ցուցադրական կերակրում, միատեղ ձեռք ե բերում կովերի համար լավագույն կեր (ասենք, քուսպ), միատեղ լավացնում ե մարգագետինները, կազմակերպում ե զուգավորման հասարակական կետեր, աճեցնում ե ազնվացեղ անասուններ և այլն։

Այսպիսով աստիճանաբար կոոպերատիվի (արտելի) անդամների ամբողջ տնտեսությունը կոոպերացվում ե, միատեղվում։

Մենք վերցրինք կաթի կոոպերացիայի որինակը։ Բայց միևնույնն ե տեղի ունենում նաև հացահատիկ, վուշ, բամբակ, ծխախոտ, բանջարեղեն, միրգ և այլն արտադրող գյուղացիների մոտ։ Տրակտորի կամ կալսող մեքենայի միատեղ ձեռք բերում. կարտոֆիլ-քերող, կրախմալ-

շաքարի, կոնսերվի և այլ ձեռնարկությունների միատեղ կազմակերպում. մելիորացիայի, հողերի վոռոգման, ելեկտրիֆիկացիայի միատեղ աշխատանք,—այս բոլորը ձեռնտու յե ամեն մի տնտեսության համար, բայց չի փոխում միանգամից միանձնյա տնտեսության ձևը, այլ աստիճանաբար առաջնորդում է գյուղացուն դեպի հասարակական խոշոր արտադրություն:

Հենց կոոպերացիայի այս առանձնահատկություններից յելնելով էլ մեր կուսակցությունը գյուղում իր գլխավոր խնդիրը համարում է՝ կոոպերացնել գյուղացիական տնտեսությունները և կոոպերացիայի միջոցով դրանց առաջնորդել դեպի սոցիալիզմ:

Ինչպես է կոոպերացիան վերակառուցում գյուղը

Մեր կոոպերացիայի կյանքից վերցրած մի քանի փաստեր ցույց կը տան, թե **ինչ** է տալիս կոոպերացիան գյուղացիական տնտեսության և **ինչպես** կոոպերացիայի միջոցով գյուղը գնում է դեպի միատեղ, հասարակական տնտեսություն: Մոսկվայի նահանգի Վոլոկոլամսկի գավառի Ռամենյե գյուղում կոոպերացիան ընդգրկել է գյուղացիական տնտեսության համարյա բոլոր կողմերը: Գյուղացիները միանալով և գյուղատնտեսական ընկերություն կազմելով՝ անցան ութդաշտյան սիստեմին: Հողը հերկում են տրակտորով: Ցանում են բացառապես տեսակավորված սերմեր: Սերմացուի համար հողամասերում ցանում են վարսակի, վուշի և առվույտի ընտիր սերմեր: Սկսել են կիրառել նաև հանքային պարարտանյութեր (սուպերֆոսֆատ): Բերքի հավաքումը յերկու յերրորդականով տեղի յե ունենում մեքենաների միջոցով: Այս բոլորը բարձրացրել է բերքատվությունը շատ անգամ.—հաճարի դեսյատինը տալիս է 85 փութ. վարսակինը—100 մինչև 180 փ., կարտոֆիլինը—1500 փ., առվույտինը—300—400 փութ և այլն: Այժմ հասարակության տրամադրության տակ արդեն կան տրակտոր, կալսող բարդ մեքենա, տեսակավորող և այլ մեքենաներ: Հասարակությունը պահում է ազնվացեղ ձիեր, պահում է ազնվացեղ ցուլեր, իրագործում է անասունների ճիշտ կերակրում: Կաթը վաճառահանվում է կաթի ընկերության միջոցով: Կազմակերպվում է վերահսկիչ միություն, վոր աշխատելու յե բարձրացնել անասնաբուծությունը: Միատեղ է կատարվում նաև ճահճային և անպետք հողերի չորացումը և լավացումը: Հասարակությունը միասին շենք կառուցեց հասարակական մեքենաները պահելու համար, պահեստ ընտիր սերմերը պահելու համար, ապա՝ հացահատիկներ մաքրող կայան: Հրդեհների դեմ պայքարելու համար կազմակերպված է կրակի դիմացող շինարարության ընկերություն, վորն ունի յերկու աղյուսի գործարան: Գոյություն ունի նաև վարկային ընկերություն:

Կոոպերացման և տնտեսության վերելքի ասպարեզում յեղած

արտելի հաջողությունները վոչ միայն լավացրին գյուղացիների դրությունը, այլև բարձրացրին գյուղի կուլտուրան: 400 բնակիչ ունեցող գյուղում մնացին միայն չորս անգրագետ ծերուկ: Կա 1 աստիճանի դպրոց, գյուղացիական յերիտասարդության դպրոց, ակտիվ գյուղատնտեսական խմբակ, մշտական փորձնական-ցուցադրական հողամաս 4 դեսյատին տարածությամբ և այլն:

Կոոպերացիայի մի այլ օրինակ է տալիս Կաշիրայի գավառի Կոլոմնա գյուղը: Յերկու տարվա ընթացքում այս նախկին հետամնաց և ցաք ու ցրիվ գյուղը դարձավ կոլեկտիվ տնտեսություն, «Նոր Կոլոմնա» արտել: Իրոք, մեր առաջ **նոր** գյուղ է. բացի անասուններից ու շենքերից, ամբողջ տնտեսությունը հասարակական դարձավ: Մինչև 1924 թ. այնտեղ թագավորում էր յեռադաշտը: Այժմ արտելը մացրեց յոթնադաշտը առվույտի ու արմատապտուղների ցանքով: Հողի մշակումը և բերքի հավաքումը կատարվում է կոլեկտիվ կերպով: Այդ հնարավորություն տվեց անցնել տրակտորի և լավացրած մեքենաների օգտագործման: Արտելն ունի տրակտոր, կալսող, խոտ հնձող, յերկու հնձող, յերկու ցանող, յերկու քամող և այլ մեքենաներ: Սերմերը լիովին տեսակավորված են: Սկսել են կիրառել նաև հանքային պարարտանյութեր: Հետևանքն այն է, վոր այժմ նոր կոլոմնացիք դեսյատինից ստանում են 100 փութ հաճար (մինչև պատերազմը 48 փութ), 104 փութ վարսակ (մինչև պատերազմը 34 փութ) և այլն:

Կազմակերպվել է նաև մելիորատիվ ընկերություն: Բոլոր գյուղացիները վարկային ընկերության անդամ են: Մնում է հանրայնացնել անասունները, և արդեն գյուղացիներն այդ խնդիրն են դրել իրենց առաջ.—նրանք աշխատում են, վոր իրենց վարկ բաց թողնվի հասարակական գոմեր շինելու համար:

Այսպիսով խորհրդային պետության օգնությամբ ու պաշտպանությամբ գյուղում աճում է կոոպերացիան:

Կոոպերացիայի առանձին տեսակները գյուղում յեվ նրանցից յուրաքանչյուրի դերը գյուղատնտեսության դեպի սոցիալիզմ առաջ տանելու գործում

Կոոպերացիայի յուրաքանչյուր տեսակն իր խնդիրն է հատկացրած սոցիալիստական շինարարության մեջ:

Սպառողական կոոպերացիան՝ անգիտանալով մասնավոր առևտրականին՝ գյուղացուն է հասցնում պետական արդյունաբերության գործվածքները: Նա կռվում է կուլակ-չարչու դեմ, խախտում է նրա ուժը գյուղում, կապում է գյուղացիական տնտեսությունն արդյունաբերության հետ:

Վարկային կոոպերացիան հասարակական միջոցներով և կոմմու-կի ավանդներով, կոոպերատիվ ու պետական բանկերի օժանդակու-

թյամբ հնարավորություն է տալիս իր անդամներին ստանալու էժան վարկ, փոքր տոկոսներով փոխառություններ տնտեսության բարելավման համար: Վարկային կոոպերացիան կռվում է վաշխառության դեմ և ժողովում գյուղացիական խնայողությունները միասին օգտագործելու համար: Յեթե ավելցուկներ են լինում, ապա վարկային կոոպերացիան այն մուծում է պետական բանկը և այդ միջոցներով օգնում է ամբողջ ԽՍՀՄ սոցիալիստական շինարարությանը: Վարկային կոոպերացիայի միջոցով գյուղացիական տնտեսությունը կապվում է բանկերի, պետական վարկի հետ:

Իսկ կարևորագույնը **գյուղատնտեսական կոոպերացիայի** աշխատանքն է: Դրա մասին էլ մենք խոսակես խոսել ենք, յերբ օրինակներ եյինք բերում, թե ինչպես կոոպերացիայի միջոցով խոշոր ընդհանուր տնտեսության են անցնում: Գյուղատնտեսական կոոպերացիան կազմակերպում է հողի հասարակական մշակությունը, անասունների հասարակական հոգատարությունը, գյուղացիների մթերքների ընդհանուր վաճառահանումը, տարածում է խոշոր մեքենաներ, կառուցում է ընդհանուր աղորիքներ, ջինկեր, կաթնատնտեսական գործարաններ, ձու և բուրդ գզելու ֆաբրիկաներ, մի խոսքով միավորում է գյուղացիական արտադրությունը: Նա զբաղվում է նաև վարկային գործառնություններով:

Նույն աշխատանքն է կատարում **տնայնագործական կոոպերացիան**: Իր շարքերում նա կազմակերպում է տնայնագործներին: Այստեղ էլ գոյություն ունի ընդհանուր վաճառահանություն, հում նյութերի և գործիքների ընդհանուր մատակարարություն, վարկ իր անդամներին, ընդհանուր արտելային ֆաբրիկաներ:

Կոոպերացիայի բոլոր տեսակները կռվում են կուլակի, միջնորդի, մասնավոր կապիտալի դեմ, գյուղացիներին ու գյուղական տնայնագործներին վարժեցնում են միասնաբար տնտեսություն վարելու: Կոոպերացիան սկսում է առևտրից, այն բանից, ինչ հասկանալի ու մատչելի յե մանր տնտեսատերերին, իսկ դրանից, պրոլետարական պետության հրամայող բարձունքների օժանդակությամբ, նրան տանում է դեպի ընդհանուր, խոշոր արտադրություն պետական հողի վրա, դեպի սոցիալիզմ:

Կոոպերացիան կապիտալիզմի յեվ պրոլետարական դիկտատուրայի ժամանակ

Ամենակոպիտ սխալ կը լիներ մտածել, որ կոոպերացիան **ամեն տեսակ պայմաններում** տանում է դեպի սոցիալիզմ: Միայն պրոլետարական դիկտատուրայի պայմաններում է, որ կոոպերացիան միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների համար սոցիալիզմի ճանապարհ է դառնում: Կապիտալիզմի ժամանակ բանը բոլորովին այլ կերպ է:

Կապիտալիստական յերկրներում կոոպերացիան անխուսափելիորեն ընկնում է կապիտալիստական տնտեսության ազդեցության տակ. անխուսափելիորեն յենթարկվում է դրան:

Այնտեղ արդյունաբերությունը գտնվում է բուրժուազիայի ձեռքում: Բանկերը գտնվում են մի խումբ հարուստների ձեռքում: Յերկաթուղիները պատկանում են կամ կապիտալիստներին կամ բուրժուական պետությանը: Բացի այդ, գյուղում իշխում են հողատիրական կալվածների տերերը և հարուստ կուլակ-գյուղացիները: Այս պայմաններում ինքը կոոպերացիան դառնում է կապիտալիստական տնտեսության մի **մասը**: Նա ապրանքներ վաճառում է և գնում խոշոր կապիտալիստական ֆիրմաներից: Նա իր կապիտալները դնում է կապիտալիստական բանկերը և նրանցից էլ վարկեր է ստանում: Նա բոլոր թելերով կապված է կապիտալիստական տնտեսության հետ: Այս պայմաններում կապիտալիստներն իշխում են կոոպերացիայի վրա, նրանք իրենց «կապն» են հաստատում նրա հետ և նրան տանում են կապիտալիստական ուղիով: Կոոպերատիվներն իրենք սկսում են դիմել տնտեսավարության կապիտալիստական յեղանակներին — նրանք շահագործում են վարձու աշխատանք, միացնում առավելապես ունևոր գյուղացիներին, կապիտալի գործիք են դառնում չքավորների, բատրակների դեմ: Այս պայմաններում կոոպերացիան ինքը դառնում է կապիտալիստական ձեռնարկություն:

Իսկ յեթե որևէ կոոպերատիվ փորձի այլ գիծ վարել և չենթարկվել բուրժուական ազդեցության, կապիտալիստները իսկույն նրան մեջտեղից կը սրբեն՝ վարկեր չեն տա, կը դադարեն նրա հետ առևտուր անելուց և այլն:

Ահա թե ինչու անհեթեթություն է մտածել, որ իբր թե **մինչև** պրոլետարիատի կողմից **իշխանության գրավումը** կարելի յե կոոպերացիայի օգնությամբ պայքարել կապիտալիզմի դեմ և գյուղը դեպի սոցիալիզմ տանել: Այսպիսի սխալ անում եյին շատ կոոպերատիվ գործիչներ, և կյանքն ակնառու ցույց եր տալիս, որ նրանց պլանները դատարկ յերազանքներ եյին մնում:

Դրությունը բոլորովին այլ է Խորհրդային պետության պայմաններում: Այստեղ կոոպերացիան աճում ու միանում է սոցիալիստական տնտեսության հետ, դառնում է նոր հասարակակարգի մի **մասը**: Մեզ մոտ կոոպերացիան գործ ունի **սոցիալիստական** արդյունաբերության հետ, առևտուր է անում **պետական** առևտրական կազմակերպությունների հետ, վարկեր է ստանում **խորհրդային** բանկերից, ապրանքներ է տեղափոխում **խորհրդային** յերկաթուղիներով և այլն: Այստեղ ամբողջ տնտեսության մեջ ղեկավար դերը պատկանում է ոչ թե կապիտալիստներին, կալվածատերերին, կուլակներին, այլ սոցիալիզմ

կառուցող բանվոր դասակարգին: Պրոլետարական քաղաքն իր յետևից տանում է գյուղացիական կոոպերացիան սոցիալիստական ուղիով, իսկ կոոպերացիան ինքն աճում ու միանում է ամբողջ պետական սոցիալիստական տնտեսության հետ:

Այս պայմաններում կոոպերացիան դառնում է միլիոնավոր գյուղացիների համար լայն ճանապարհ դեպի սոցիալիզմ: Սոցիալիստական արդյունաբերության, խորհրդային առևտրի, խորհրդային բանկերի և այլն պաշտպանությամբ մեզ մոտ աճում է ոչ թե կուլակների, այլ չքավորների ու միջակների կոոպերացիան, որը շարունակ ավելի շատ գյուղացիական տնտեսություններ է միացնում և աստիճանաբար նրանց քաշում է կոլեկտիվ տնտեսության մեջ: Գյուղացիական տնտեսություններն առանձին փոքրացած միավորներից փոխվում են մեկ կազմակերպված ամբողջության: Այս միացման համար հիմք է ստեղծում գյուղատնտեսական մեքենաների, տրակտորների, ելեքտրական ենէրգիայի շարունակ ավելի լայն կիրառումը, գյուղատնտեսական արդյունքների վերամշակումով զբաղված ձեռնարկությունների աճումը: Յեվ ինչքան ավելի ամուր լինեն բանվորական պետության հրամայող բարձունքները, այնքան ավելի շատ վարկեր, շատ ապրանքներ, շատ մեքենաներ կստանան գյուղացիական կոոպերատիվները, այնքան ավելի արագ կավարտվի մեր գյուղի սոցիալիստական վերակառուցումը:

Ահա թե ինչու Լենինն ասում եր. «Նեպ-ի տիրապետության ժամանակ ռուս բնակչության բավականաչափ լայն ու խոր կոոպերացնելն այն բոլորն է, ինչ մեզ հարկավոր է... Իսկապես, պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքում, այդ պրոլետարիատի դաշինքը միլիոնավոր մանր ու մանրագույն գյուղացիների հետ, այդ պրոլետարիատի ղեկավարության ապահովությունը գյուղացիության վերաբերմամբ և այլն—մի՞թե այս բոլորը չէ, ինչ հարկավոր է, որպեսզի կոոպերացիայից, մենակ միայն կոոպերացիայից, որը մենք առաջ արհամարհում էինք իբրև չարչիական բան, և որը որոշ չափով իրավունք ունենք արհամարհելու և այժմ, Նեպ-ի ժամանակ, մի՞թե այս բոլոր անհրաժեշտը չէ լիակատար սոցիալիստական հասարակության կառուցելու համար: Այս դեռ սոցիալիստական հասարակության կառուցումը չէ, բայց այս՝ բոլոր անհրաժեշտն է և բավական է այդ կառուցման համար...»

Օպպոզիցիայի սխալ հայացքները կոոպերացիայի, իբրև պետական կապիտալիզմի զուտ ձևի մասին յեվ նրա կողմից կոոպերացիայի սոցիալիստական դերի թերագնահատությունը

Օպպոզիցիան կուսակցության XIV համագումարում, պնդելով կուլակի աճումը և ուժեղացումը գյուղում, չէր հավատում, թե հնարավոր է կոոպերացիայի միջոցով գյուղն առաջնորդել դեպի սոցիալիզմ: Նա անգիտանում էր ընկեր Լենինի 1923 թ. պնդումը, որ մեր պայմաններում, յերբ ամուր հրամայող բարձունքները բանվորական պետության ձեռքում են, կոոպերացիան գլխովին զուգադիպում է սոցիալիզմին: **Օպպոզիցիան ներկա պայմաններում էլ կոոպերացիան համարում էր պետական կապիտալիզմ, ենթադրում էր, որ իբր թե մեզ մոտ կոոպերացիայում անխուսափելի յե կուլակների տիրապետումը: Այս սխալ է: Մեր տնտեսական ուժը բավական է, որպեսզի կարողանանք թույլ չտալ կուլակին, որ օգտագործե կոոպերացիան:** Բավական է փորձել կուլակային կոոպերատիվի պետական արդյունաբերության գործվածքներ չտանք, վարկ բաց չանենք պետական բանկի միջոցով—և նա կը սնանկանա: Իսկ չքավորների ու միջակների կոոպերատիվը մենք կը պաշտպանենք ոչ թե խոսքով, այլ գործով—վարկով, ապրանքներով և դրամով:



Դիագրամմա № 4: Ինչքան անդամ-փայատեր կար գյուղական սպառողական ընկերություններում:
(«Правда» 31/III 1927 թ.)

Ի հարկե, գյուղական կոոպերացիան, չնայելով իր արագ աճմանը, դեռ հեռու յե գյուղացիների մեծամասնությունն ընդգրկելուց (տես

№ 4 և 5 դիագրամմաները): Մեր խնդիրն է ամրացնել հրամայող բարձունքների կապն այդ կոոպերացիայի հետ, փորփոսքի ավելի արագ զարգացնենք այն, հաղթահարենք և նրանից դուրս քշենք կուլակներին, կոոպերատիվ ճանապարհով ապահովենք գյուղացիության մասսայի անցումը դեպի սոցիալիզմ:



Դիագրամմա № 5: Ինչքան գյուղական ծուխ էր ընդգրկում գյուղատնտեսական կոոպերացիան.
(«Правда» 1/V - 1927 թ.)

Պայքար կուլակ տարրերի դեմ կոոպերացիայի ներսում և կոոպերացիայի պայքար մասնավոր կապիտալի դեմ

Կոոպերացիայի անդամը մեջ տանից խուչընդոտների չի ընթանում և չի ընթանալու: Կուլակները կը ջանան գցել իրանց ձեռքը կոոպերացիան և այն օգտագործել իրանց համար: Ա.գ., սակայն, չի նշանակում, թե նրանց բոլորովին չպետք է թույլ տալ կոոպերացիայի անդամ լինել: Պետք է կոոպերացիայի համար օգտագործել և այն միջոցները, որ կուտակված են կուլակների մոտ: XIV կուսկոնֆերենցիան մատնանշեց այդ:

Բայց այդտեղ էլ VIX կուսկոնֆերենցիան մատնանշել է վտանգը, թե կուլակները կարող են կոոպերատիվի վարչության մեջ ընկնել, և առաջարկել է կոոպերատիվների կանոնադրության մեջ կետեր մտցնել, որով կուլակներին արգելվի մտնել վարչությունների մեջ: Կուլակները, հարկավ, կփորձեն խախտել այդ օրենքը և ստանձնին կոոպերատիվների ղեկավար դառնալ: Բայց մենք արդեն տանք ենք,

թե կուսակցությունն ինչ միջոցներ է ձեռք առնում դրա դեմ կռվելու համար, ինչպես է գրավում չքավորներին դեպի կոոպերացիա, ինչպես է կազմակերպում չքավորների խմբակներ ու ժողովներ, գրավելով միջակներին կուլակի դեմ պայքարելու գործի մեջ:

Այսպես էլ պետք է կռվել կուլակ տարրերի դեմ, թե չէ կոոպերացիան կխուսափի մեր վերահսկողությունից ու ազդեցությունից: Այս դեռ քիչ է, կոոպերացիայի հաջողության համար նա ինքը պետք է վճռական պայքար մղե կուլակի ու մասնավոր առևտրականի դեմ: Նրա կողքին առևտուր է անում մասնավորը, ճորտացնում չքավորին, վաշխառություն է անում կուլակը: Ամրանալու և գյուղացիությանն իր կողմը գրավելու համար՝ կոոպերացիան պետք է առևտուր անի ավելի էժան, քան մասնավորը, նա պետք է օգնե գյուղացուն, փոխ տա նրան և տա ավելի ձեռնտու պայմաններով, քան կուլակը: Այն ժամանակ միայն բնակչության համար ձեռնտու կլինի մասնակցել կոոպերացիային և պաշտպանել այն:

Այն ժամանակ միայն կոոպերացիան կը կատարե իր կոչումը և բազմամիլիոն գյուղացիության համար իրոք կը դառնա այն լայն ուղին, որ դեպի սոցիալիզմ է տանում:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչու կոոպերացիան պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ դառնում է գյուղի գլխավոր ուղին դեպի սոցիալիզմ:
2. Արդյոք կոոպերացիայի ներսում դասակարգային կռիվ մղվում է և որոնք են այդ կռվի ձևերը:

ԿՏՈՐՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. ԼԵՆԻՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ԴԵՊԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՇԵՐՏԵՐԸ

«Չկա վոչ մի դեկրետ (օրենք), խորհրդային իշխանության վոչ մի վորոշում, վորի մեջ տարբերություն չդրվի գյուղացիների չերեք գլխավոր խմբակների միջև: Առաջին խմբակը—չքավորությունն է (պրոլետարներ ու կիսապրոլետարներ, ինչպես ընդունված է ասել տնտեսագիտության մեջ): Այդպիսիները խիստ շատ են: Յերբ տիրում եր կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը՝ ամենից շատ ամբողջ ճնշումն ընկնում եր չքավորության վրա: Աշխարհի բոլոր յերկիրներում իսկական սոցիալիստական շարժման ամենից հաստատ

նեցուկն են հանդիսանում բանվորները և նրանց պաշտպանող գյուղական չքավորները։ Երկրորդ խմբակը — կուլակներն են, այսինքն հարուստ գյուղացիները, վորոնք ոգտագործում են ուրիշի աշխատանքը կամ մշակներ վարձելով, կամ վաշխով փող տալով և նման բաներով։ Այդ խմբակը ներկայացնում է Խորհրդային իշխանության թշնամիների՝ կալվածատերերի ու կապիտալիստների ձեռքը։ Երրորդ խմբակը — միջակ գյուղացիներն են։ Դրանք Խորհրդային իշխանության թշնամիները չեն։ Նրանք կարող են նրա բարեկամները լինել, մենք ձգտում ենք և կը հասնենք դրան։ Սոցիալիզմի բոլոր ուսուցիչները միշտ էլ ընդունել են, թե բանվորները սոցիալիզմն իրագործելու համար պիտի տապալեն կալվածատերերին ու կապիտալիստներին, բայց միջակ գյուղացիների հետ համաձայնությունը հնարավոր է և անհրաժեշտ»։

(Վ. Ի. Լենին՝ Աշխ. ժողովածու, առաջին հրատ. հ. XVI, էջ 29, ռուսերեն)։

2. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ի՞նչ է գյուղացիության շերտավորումը և ինչպես էին հասկանում այդ շերտավորումը հնում։ Գյուղացիության շերտավորման տակ հասկացվում էր միջակների շերտի քայքայումը, նրա բաժանումը երկու ծայրահեղ ֆլանգների, միջակները հալվում են, մի կողմից՝ չքավորների շերտի, իսկ մյուս կողմից՝ ունևոր, կուլակ շերտի աճման հաշվին։ Ներկայումս այսպիսի զուտ, «դասական» ձևով գոյություն չունի գյուղացիների շերտավորման պրոցես։ Մենք ունենք տնտեսության բոլոր խմբակների ընդհանուր վերելք. անտասուն, ցանք չունեցող, քիչ ցանք ունեցող տնտեսությունների քչացում։ Գյուղացիական տնտեսությունների բոլոր խմբակներն աճում են։ Միջակների շերտի հիմնական մասսան վոչ միայն չի քայքայվում, այլև աճում է ու մեծ նշանակություն ձեռք բերում, վորովհետև գյուղում վարած մեր քաղաքականության հիման վրա բարձրացող չքավոր շերտերը լրացնում են միջակների թիվը։

Միևնույն ժամանակ տեղի յե ունենում գյուղացիության ունևոր մասից կուլակների շերտի զատումը, վորն ավելի ագրեսիվ, կործանիչ ու ակտիվ է դառնում...

Գյուղում տեղի ունեցող շերտավորման պրոցեսը կերպարանափոխված է հեղափոխության պայմաններով — հողի ազգայնացումով, մեր խորհրդային քաղաքականությամբ, գյուղատնտեսական վարկի կառուցման քաղաքականությամբ, չքավորների հատուկ ֆոնդի ստեղ-

ծումով, գյուղատնտեսական կոոպերացիայի գործունեությամբ, գյուղատնտեսության կոլեկտիվ ձևերի խրախուսումով և, վերջապես, կուսակցության ու խորհուրդների ամբողջ քաղաքականությամբ։

Համենայն դեպս, անկասկած է, վոր շերտավորման ինչպես բնույթը, նույնպես և տեմպն այլ է, քան մինչհեղափոխական ժամանակինը։ Այս է գյուղում կատարվող դիֆֆերենցիացիայի պրոցեսների հիմնական յուրատեսակությունը։

Մինչև այժմ շարունակվում է այն հողերի յուրացման պրոցեսը, վոր ստացել են չքավորներն ագրարային հեղափոխության հետևանքով։ Մինչև այժմ, միջոցների, կենդանի ու մեռած ինվենտարի բացակայության պատճառով, նրանք հող ունենալով, չեյին կարողանում ոգտագործել այն։ Տնտեսության վերականգնման ընդհանուր հողի վրա շարունակվում է և ուժեղանում հողի յուրացման պրոցեսը գյուղի չքավոր շերտերի կողմից։ Այս պատճառով բոլորովին սխալ են այն հայացքները, վոր շերտավորման մինչհեղափոխական պատկերացումներն ամբողջովին փոխադրում են մեր ժամանակները։

(Ընկեր Ռիկովի Համամիութենական XV կուսկոնֆերենցիայում արած զեկուցումից)։

3. ՊԱՅՔԱՐԵԼ ԿՈՒԼԱԿԻ ԴԵՄ ՆՐԱՆԻՑ ՊՈԿԵԼՈՎ ՄԻՋԱԿԻՆ

Յեթե չքավորները և ամենից առաջ բատրակները գյուղում հանդիսանում են պրոլետարիատի **հենարանը**, ապա միջակը հանդիսանում է և պետք է հանդիսանա նրա **հաստատուն դաշնակիցը**։ Վոչ մի րոպե չի կարելի մոռանալ, վոր կալվածատիրական հողատիրությունը վոչնչացնելու և կալվածատիրական հողը գյուղացիության ձեռքն անցնելու հետևանքով, գյուղում չքավորների կոմիտեների և կուլակների վոչնչացման (раскулачивание) քաղաքականության հետևանքով, վերջապես հողն ապրանքաշրջանառությունից հանելու շնորհիվ (հողի ազգայնացում) գյուղացիության միջակ շերտերը չափազանց ուժեղացել են և վոր այդ շերտերն այժմ կազմում են գյուղացիության հիմնական մասսան, չնայելով դիֆֆերենցիացիայի պրոցեսին։ Չունենալով այդ մասսան իբրև հաստատուն դաշնակից, կամ սահմանափակվելով այդ շերտերի մեն-միայն չեզոքացումով, այժմ, պրոլետարական դիկտատուրայի ամրացումից հետո, չի կարելի սոցիալիզմ կառուցել։ Վորովհետև գյուղում սոցիալիզմի շինարարության հիմնական ուղին այն է, վոր պրոլետարիատի ձեռքում գտնվող սոցիալիստական պետական արդյունաբերության, պետական վարկային հիմնարկությունների և այլ հրամայող բարձունքների աճող տնտեսական ղեկավարությամբ կոոպերատիվ կազմակերպության մեջ քաշենք

գյուղացիության հիմնական մասսան և ապահովենք այդ կազմակերպության սոցիալիստական զարգացումը՝ ոգտագործելով, հաղթահարելով և դուրս մղելով դրա կապիտալիստական տարրերը։ Այս պատճառով միջակի թերագնահատությունը, նրա բացառիկ կարևոր դերի անհասկացողությունը, կուսակցության միջակի հետ հաստատուն դաշինքի լոզունգից նրա չեզոքացման հնացած լոզունգի կողմը շրջելու փորձը, «միջակից վախենալը» ոբյեկտիվորեն հասցնում է պրոլետարական դիկտատուրայի խախտմանը, վորովհետև հենց դրանով քայքայվում է բանվորագյուղացիական բլոկը։

Կուլակների դեմ մղվող պայքարը պետք է ընթանա ինչպես չքավորներին կուլակների դեմ կազմակերպելու ուղիով, այնպես էլ պրոլետարիատի և չքավորների դաշինքը միջակների հետ ամրացնելու ուղիով, վորպեսզի կուլակին մեկուսացնելու նպատակով՝ միջակին պոկենք կուլակներից։

(Կենտկոմի հաշվետվության առթիվ Համ. ԿԿ (բ) XIV համագումարի ընդունած բանաձևից)։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մտածեցեք, թե ինչու խորհրդային իշխանությունը կուսակցության ղեկավարությամբ միայն 1925 թ. հեշտացրեց բատրակների վարձումը և հողի անաշխատ վարձակալությունը գյուղում և ինչու այդ չարեց նեպի առաջին իսկ որերից։ Յեզրակացություններ արեք, գրեք տետրակում և անպայման ստուգեցեք դրանց ճշտությունը կամ ձեր պրոպագանդիստից, կամ ինքնակրթության բյուրոյի միջոցով։

2. Յեթե գյուղի հետ ծանոթ եք, մի որինակ բերեք, թե ինչպես աստիճանաբար կուլակն ստրկացնում է գյուղացուն։

3. Մտածեք, թե ինչու յերբեմն խորհրդային իշխանության համար դժվար է գյուղացիներին պոկել կուլակների ազդեցությունից։ Յեզրակացությունները գրեք և ստուգեցեք պրոպագանդիստից, կամ ինքնակրթության բյուրոյի միջոցով։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչու սխալ է պնդել, վոր XIV կուսկոնֆերենցիան զիջում արեց կուլակին, հեշտացնելով հողի վարձակալությունը և բատրակների վարձումը։

2. Ինչումն է կայանում և ինչու յե վտանգավոր կուլակների վտանգի գերագնահատության և միջակի թերագնահատության թեքումը։

3. Վորոնք են կոոպերացիայի թերությունները գյուղում և ինչպես պետք է ուղղել այդ թերությունները։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Հրատարակչությունից 5

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ

ՀԱՄ. ԿԿ (Բ) ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Առաջին գլուխ.— Կուսակցության շինարարությունը և Համ. Կ Կ (բ) անդամների պարտականությունները . . . 10

Յերկրորդ գլուխ.— Համ. Կ Կ (բ) — բանվորական կուսակցություն 30

ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Յերրորդ գլուխ.— Կուսակցությունն ու արհմիությունները . . 48

Չորրորդ գլուխ.— Կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը 66

ՅԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՀՍԽՀ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հինգերորդ գլուխ.— Կուսակցության տնտեսական քաղաքականության հիմքերը 88

Վեցերորդ գլուխ.— ԽՍՀՄ պետական արդյունաբերությունը սոցիալիզմի կառուցման ճանապարհին 109

Յոթերորդ գլուխ.— Գյուղացիական տնտեսության հետ պետական արդյունաբերության կապը — սոցիալիստական շինարարության հաջողության գրավական 131

Ութերորդ գլուխ.— Գյուղի ուղին դեպի սոցիալիզմ 151

ՀՀ Ազգային գրադարան
NL0182923

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏՀՐԱՏ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

		Գինը
1.	Յարոսլավսկի Եմ.— Դասագիրք քաղգրագիտության	— ռ. 80 կ.
2.	Տայչին, Մ. Ի. յեվ Կոզլով Տ. Տ — Քաղգրագիտություն պրակ Ա.	— ». 85 կ.
3.	» » » » » » Բ.	1 » 25 կ.
4.	» » » » » » Գ.	— » 50 կ.
5.	Գրիշին Մ. Ի.— Լենինյան ուղիով պրակ Ա.	1 » — կ.
6.	» » » » » Բ.	1 » 30 կ.
7.	» » » » (հատոր Բ.) » Գ.	1 » 20 կ.
8.	» » » » » » » Դ.	1 » 25 կ.

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Օբեզիանուզ յեվ Պրոտասով — Կուսգրագիտություն. Բ. մաս

Դիմել Հայգրէի բաժանմունքներին յեվ գրախանութներին

ԳԻՆԸ 1 Ռ.